

ԱՐԾՎԻ ԲԱՆՉԻՆՅԱՆ  
ՀԱԿՈՒ ԱՍԱՏՐՅԱՆ



ՀԱՅԵՐԸ ՀԵՆԻԱՅՈՒՄ ԵՎ  
ՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ



93 (= 319. 51) (94)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԾՎԻ ԲԱՆԶԻՆՅԱՆ  
ՀԱԿՈՔ ԱՄԱՏՐՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ՉԵԽԻԱՅՈՒՄԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ  
(սկզբից մինչև մեր օրերը)

5918114

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԾԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԸԱՐ  
215



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
215

ԵՐԵՎԱՆ – 2021



**INSTITUT HISTORIE NÁRODNÍ AKADEMIE VĚD  
ARMÉNSKÉ REPUBLIKY**

**ARTSVI BAKHCHINYAN  
HAKOB ASATRYAN**

**ARMĚNI V ČESKU A NA SLOVENSKU  
(od začátku až dodneška)**

**JEREVAN – 2021**

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Բ 216

Հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության  
ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ  
Ստեփանյան  
Գրախոս՝ պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես  
Ալեքսանյան

Բախչինյան Արծվի, Ասատրյան Հակոբ

Բ 216 Հայերը Չեխիայում և Սլովակիայում (սկզբից մինչև մեր օրերը):  
Ամփոփումը՝ չեխերեն:- Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,  
2021. – 248 էջ:

Աշխատությունը ներկայացնում է Չեխոսլավակիայում հայության  
ներկայության պատմությունը, հայերի և չեխերի ու սլովակների միջև  
եղած պատմամշակութային կապերը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, քանասերների և ընթերցող  
լայն շրջանների համար:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

..

ISBN 978-9939-892-04-7

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021

## ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովրդի զավակները տարբեր դարերում փոքր ու մեծ համայնքներ են կազմել Արևելյան Եվրոպայի գրեթե բոլոր շրջաններում՝ Ղրիմ, Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Բուլղարիա, որոշ չափով՝ Հարավսլավիայի երկրներ, իսկ Չեխոսլովակիայում գրեթե չեն եղել<sup>1</sup>: Սակայն չեխերն ու հայերը որոշ չափով ճանաչել են միմյանց<sup>2</sup>՝ շնորհիվ մինչև 20-րդ դարը եղած սակավադեպ և պատահական առնչությունների, որոնք մինչ օրս մեծ մասամբ գրեթե անհայտ են մնում՝ նույնիսկ պատմաբաններին<sup>3</sup>:

Այդ բացը լրացնելու ցանկությունը, ինչպես նաև վերջին տարիներին Չեխիայում և Սլովակիայում հայկական համայնքների ստեղծումը և չեխ-հայկական միջպետական կապերի զարգացման միտումները մղեցին մեզ զբաղվել սույն թեմայի հետազոտմամբ:

---

<sup>1</sup> Չեխ հայագիտուհի Լոտմիլա Մոտսլովայի առնչությամբ հայ հեղինակը նկատել է. «Չեխոսլովակիայում հայկական գաղթաբախ չկա: Եվ չի եղել: Չգիտես ինչու՝ հայերը շրջանցել են այդ երկիրը: ... Հայ ընտանիքների բիսը այստեղ մատների վրա կարելի է հաշվել: Այսուհանդերձ, մերօրյա Չեխոսլովակիան բոլոր այդ երկրների կողքին զայրմանալի հարագատ, միայն իրեն վերապահվող ջերմություն է ձեռք բերել հայերի համար... Թերևս «անդալտորը» բանաստեղծական պատկեր մեջբերելով, «սիսրում սրտով Աստծո մի արարածի» գոյությունն էր այնտեղ, որ իր երկրի ու ժողովրդի ազնիւ՝ ու վեհ ձգտումների կերպարանքն էր առել և մեզ համար դարձել խորհրդանիշ անձնագոհությամբ ու նվիրումի, նաև ուժի ու մարտման» (Քաղաքատարյան Գ., Հավերժ ներկա բացական, Երևան, 2006, էջ 13):

<sup>2</sup> 1920-ին Չեխիայի մասին հայերենով գրված առաջին հոդվածներից մեկում կարդում ենք. «Մեզ, Հայերուս բողոքովին անձանօք չէ Չեխ ժողովուրդը, որ իբրև տառապանքի բախտակից, Վայսնպերկի ճակատամարտին մեջ իր անկախությունը կորսնցուցած, կը տառապէր հալապարկեան միապետութեան վայրագ յուժին տակ» (Մարտիրոսեան Ն. Ա., Հայաստան և Չեխոսլովակիան, «Ճալախատմարտ», Կ. Պոլիս, 25.07.1920):

<sup>3</sup> Այլապես «Հայ Սփյուռք» հանրագիտարանի «Չեխիա» բաժնում գրեն համարոտակի կներկայացվեին հայ-չեխական պատմական առնչությունները (տես Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 434-435): Այնտեղ միայն հիշատակվել է 17-րդ դարում Պրահայի առաջին սրճարանատեր դամաուկահայ Գ.Լորգի (Յիլոժի Դեռոդատ) անունը:

Դարեր շարունակ Ավստրո-Հունգարիայի կայսրության գավառական քաղաք Պրահան<sup>4</sup>, 1918-ի Չեխոսլովակիայի անկախությունից հետո միայն, ստանալով մայրաքաղաքի կարգավիճակ՝ ձեռք է բերել որոշակի կարևորություն: Աստիճանաբար այս նորաստեղծ հանրապետությունում սկսել են հաստատվել հայեր, այդուհանդերձ՝ չկազմելով համայնք:

Այսօր Չեխիայում և Սլովակիայում հայության թիվը զգալիորեն աճել է՝ ի հաշիվ 1990-ականներին Հայաստանից, նաև Ռուսաստանից ու ԱՊՀ մյուս երկրներից բնակչության մեծ արտահոսքի: Հայաստանի անկախության հռչակումից հետո սահմանները բացվեցին, և հազարավոր հայաստանցիներ մշտական բնակության եկան եվրոպական տարբեր երկրներ, այդ թվում՝ Չեխիա: Ի տարբերություն ավանդական հայկական համայնքների, այստեղ երբեք չեն եղել քաղաքական կուսակցություններ ու ակումբներ: Սակայն վերջին 25 տարիներին շատ հայ սահմաններ լավագույնս ինտեգրվել են չեխական հասարակությանը, և նրանցից շատերը տեսանելի դեր են կատարում երկրի տնտեսական, մշակութային կամ մարզական կյանքում: Լինելով վերջին 30 տարիներին կազմավորված համայնք՝ այն կարողացել է իր գործունեությամբ և անհատներով ճանաչելի դառնալ եվրոպական հայկական ընտանիքում:

Նյութի ուսումնասիրությունը հիմնականում դրսևորվել է հայ և չեխ հատուկենտ հետազոտողների հայերեն և չեխերեն հոդվածներով: Այս առումով բացառիկ արժեք ունեն չեխաբնակ մտավորական Նշան Մարտիրոսյանի՝ 1920–1930-ական թթ. սփյուռքահայ մամուլում տարտղնված բազմաթիվ հոդվածներն ու թղթակցությունները, որոնք սույն աշխատության հիմնական ատաղձներից են: Միջնադարին վերաբերող հայ-չեխական դրվագային առնչություններին անդրադար-

---

<sup>4</sup> Մենք որդեգրում ենք Պրահա ձևը, թեև Պրագան նույնպես ճիշտ է (երկրորդ ձևը նույնությամբ թողել ենք միայն մեջբերումներում):

ծել են առնվազն երկու չեխ հետազոտող՝ հոգևորական Օտակար Մետող Պեխաչեկը և արևելագետ-պարսկագետ Յիրժի Բեչկան: Հայր Մետող Պեխաչեկը 1933-ին Չեխիայի ժողովրդական կաթոլիկ կուսակցության «Լիդովե լիստի» («Ժողովրդի թերթը») պաշտոնաթերթում հոդված է հրատարակել հայ-չեխական առևտրական և մշակութային հարաբերությունների մասին<sup>5</sup>: Իսկ Յիրժի Բեչկան գրել է «Հայերն ու հայկական մշակույթը Չեխիայում և Սլովակիայում» չեխերեն աշխատությունը, որը ցայժմ մնում է անտիպ<sup>6</sup>: Նմանապես չեխ-հայկական անձանոթ մնացած կապերի վերաբերյալ երևանցի չեխագետ թարգմանիչ Հովհաննես Հարությունյանը 1982-ին հանդես է եկել հրապարակմամբ՝ մասնավորապես անդրադառնալով չեխ գիտնականների հայկական հետաքրքրություններին և Հայաստան այցելած չեխ ճանապարհորդին<sup>7</sup>: Իսկ թեմայի արդիական շրջանը սկսել է հետաքրքրել նաև ոչ հայ ուսումնասիրողներին<sup>8</sup>:

Սույն աշխատությամբ մենք ցանկանում ենք ոչ միայն համակողմանիորեն լրացնել հայ համայնքներից մեկի պատմության վերաբերյալ ուսումնասիրության բացը, այլ նաև մերօրյա չեխահայերին իրազեկ դարձնել այդ երկրում հայկական ներկայության՝ ցարդ գրեթե չուսումնասիրված պատմությանը: Չեխ-հայկական կապերը նոր փուլում են, այնպես որ նրա պատմությունը ճանաչելը միայն դրականորեն կնպաստի այդ կապերի ապագա զարգացումներին:

Մեր ուսումնասիրության առաջին մասում ամփոփված տեղեկատվությունը (հեղինակ՝ Արծվի Բախչինյան) մեծ մասամբ հիմնված է հայ

<sup>5</sup> Տես Փրակազի, Հայ և չեխ հնագոյն և նորագոյն յարաբերութանց մասին, «Արևելք», Ստամբուլ, 22-23.05.1933:

<sup>6</sup> Տես Մատթյան Հ., Յիրժի Բեչկայի անտիպ գիրքը հայկական մշակույթի մասին, «Օրեր», «Գոսիա», 2000, ք. 9-10, էջ 40: Գրքից մեկ հատված լույս է տեսել Պրահայի «Օրեր» ամսագրում (Մինչև 18-րդ դարը, «Օրեր», անդ, էջ 40-41 (թարգմանիչ՝ Իոս Արշակյան):

<sup>7</sup> Տես Հարությունյան Հ., Հայ-չեխական կապերի նորահայտ փաստեր, «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1982, ք. 12, էջ 26-27:

<sup>8</sup> Տես Sergey Sumlenny, Czech Armenians: A Small Community with a Strong Potential, "21st Century," no 1, 2007, էջ 77-90:

մամուլում և գրականության մեջ Չեխոսլովակիայի հայ բնակիչների և հայ-չեխական կապերի մասին առկա փաստերի վրա՝ սկսած միջնադարից, սակայն հատկապես՝ 20-րդ դարի առաջին կեսից մինչև 21-րդ դարը: Երկրորդ՝ և երրորդ մասերը (հեղինակ՝ Հակոբ Ասատրյան) գրված են Չեխիայի հայության հետ անմիջական շփումների արդյունքում: Այսպիսով, առաջին անգամ փորձ է կատարվում տալ հայ գաղթականության և Սփյուռքի պատմության անձանոթ մնացած մի հատվածի հնարավորինս ամբողջական պատկերը՝ բացահայտելով Եվրոպայի այդ անկյունում հայ տարրի առկայության և հատկապես 20-րդ դարի եվրոպահայության պատմության մի անձանոթ երեսը<sup>9</sup>:

---

<sup>9</sup> Սույն թեմայով առաջին հոդվածը հրատարակել ենք տակավին 1999 թվականին (տե՛ս **Ասատրյան Հ., Բախչինյան Ա.**, Չեխահայ ամենահին ընտանիքը. պատմում է կինոսցենարիստ Հայկ Մարտիրոսյանը, «Օրեր», Պրահա, 1999, ք. 1, էջ 10-11): Թեմայի վերաբերյալ Արծվի Բախչինյանը հաղորդումներով հանդես է եկել գիտական մամուլում (տե՛ս Պրահայի հայ ուսանողությունը (1920–1930-ական թվականներ), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2008, ք. 1, էջ 133-148: Հայերը Չեխոսլովակիայում 1900-1940-ականներին, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուք, հտ. ԼԳ., 2013, էջ 117-134: Հայաստանի Հանրապետության և Չեխոսլովակիա (1918–1920). երկու նորանկախ հանրապետությունների առաջին կապերը, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուք, հտ. ԼԳ., 2014, էջ 205-214), ինչպես նաև Պրահայի «Օրեր» ամսագրում 2009–2010 թթ. հանդես է եկել «Հայ-չեխական պատմական առնչությունները» ծավալուն հոդվածաշարով: Թեմայի վերաբերյալ Հակոբ Ասատրյանի տարրեր ժողովածուներում առկա հոդվածներից տե՛ս՝ Չեխիա, «Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները», Երևան, 2011, էջ 40-45, Սլովակիա, անդ, էջ 45-47, Չեխիայի հայ համայնքը. տեղեկատու, անդ, էջ 120-127: Չեխիայի հայերը. նոր ձևավորվող համայնքի առանձնահատկությունները, անդ, էջ 128-153: Սլովակիայի հայ համայնքը. տեղեկատու, անդ, էջ 168: Հարցազրույց Սլովակիայի հայ համայնքի և Եվրոպայի հայկական միությունների ֆորումի ղեկավար, շուտոր Աշոտ Գրիգորյանի հետ, անդ, էջ 169-176: *The Armenians in the Czech Republic: A Community in the Making.* In: **Siekierski K., Troebst S.**, *Armenians in Post-Socialist Europe*, Böhlau Verlag, 2016, էջ 159-169 և այլն:

ՀԱՅ-ՉԵԽԱԿԱՆ ԿԱՊԵՐ. ՄԿՁԲԻՑ ՄԻՆՉԵՎ, 1990-ԱԿԱՆՆԵՐ

Միջնադար և 19-րդ դար

Հայերի ներկայությունն այսօրվա Չեխիայի տարածքում ընդգրկված պատմական շրջաններում (Մորավիա, Բոհեմիա, Միլեզիա) վերաբերում է վաղ միջնադարին<sup>10</sup>: Դրանք եղել են Բալկաններ արտրված հայ պոդիկյանները (պավլիկյաններ), որոնք Բուլղարիայով անցնող առևտրակալ ճանապարհներով Մորավիա են հասցրել տրանսիլվանական աղ, իսկ Կենտրոնական Եվրոպա՝ Կոստանդնուպոլսի ու Փոքր Ասիայի արդյունաբերական ապրանքները<sup>11</sup>:

Ըստ Յիրժի Բեչկայի՝ հայ-չեխական կապերի հնագույն վկայությունը վերաբերում է տակավին 9-րդ դարին: Նա հիշատակել է նաև 16-րդ դարի մի աղբյուր, ըստ որի, մի չեխ իշխանավոր Նեապոլից հրավիրել է մի հայ բժշկի, որպեսզի վերջինս դարմանի իր հիվանդ ուսքերը<sup>12</sup>:

Կարող է արտառոց թվալ, սակայն Չեխիայի հնագույն Բոհեմիա անունը կապվում է մի կիսաառասպելական հայ կերպարի անվան հետ: Հայտնի է, որ հին գերմանական մի շարք աղբյուրներ Բավարիա երկրամասի հիմնադիր իշխան Բավարուսին (Բայոարիոս) համարել են Հայաստանից եկած: Վերջինս ունեցել է երկու որդի՝ Ինգրասն և Բոհեմ (Բոհեմունդ): Ըստ 16-րդ դարի գերմանացի հեղինակ Յոհան

<sup>10</sup> 1956-ին հայ մամուլը, հիմնվելով չեխական քերթերի վրա, գրել է, որ չեխական Մոսոս աղաքի մոտ գտնվող Լոս գյուղաքաղաքում կատարված պեղումների ընթացքում գտնվել են Արշակունիների շրջանի մետաղադրամներ, որոնք պատկանում են Միխրչատ Բ, Գ, Դ, Օրոնդես Ա, Վաղարշակ Գ և անձանոթ թագավորների (Հայ ազգային կեանք, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եօքք, 14.04.1956, էջ 358): Իրականում այդ թագավորները եղել են պարթև Արշակունիներ, իսկ հայ Արշակունիներից դրամներ ցարդ չեն հայտնաբերվել:

<sup>11</sup> Տե՛ս *Obolensky Dimitri*, *The Bogomils: A Study in Balkan Neo-Manichaeism*, 2004, էջ 82:

<sup>12</sup> Տե՛ս Առատրյան Հ., Յիրժի Բեչկայի անտիպ գիրքը հայկական մշակույթի մասին, անդ:

Թուրմայերի «Բավարական ժամանակագրության», Բոհեմիա երկիրը հնագույն գրքերում կոչվել է Հերմինիա, այսինքն՝ Արմենիա: «Եվ ինչպես Բավարիան անվանվել էր Բայոարիուսի անունով, նույն կերպ Բոհեմն է իշխանի անունով Հերմինիա-Արմինիան վերանվանվել է Բոհեմիա»<sup>13</sup>:

Այս տեղեկությունը համարելով կիսով չափ առասպելական՝ հիշենք, որ հայերը և չեխերը միմյանց հանդիպել են 1410 թվականին տեղի ունեցած նշանավոր Գրյունվալդի ճակատամարտում, որտեղ, ինչպես հայտնի է, սլավոնա-լիտվական միացյալ զորքերը հաղթել են դեպի արևելք շարժվող Տևտոնական միաբանությանը: Հայերը եղել են Լեհաստանից և Կիևից, նրանց ջոկատը՝ Կիլիկիայի հայոց թագավորության ասպետների հագուստների գույներով, գլխավորել է Ադամ Դոմանասկիչը: Այնուհետև հայ զինվորները կամ, ինչպես նրանց անվանել են, հայկական սակրատեգավորները, մասնակցել են Չեխիայում մղվող մարտերին: Ուկրաինացի պատմաբան Նիկոլայ Կրիվոնուսը ենթադրել է, որ հայ զինվորները Չեխիա են մեկնել հուսիստական շարժմանն օգնության մեկնած սլավոնական զորաբանակների հետ<sup>14</sup>:

Հայերը հիշված են տակավին 15-րդ դարի չեխ ճանապարհորդ և գրող Մարտին Կաբատնիկի (1428–1503) «Ուղևորություն արևելյան երկրներ» հատորում: Հեղինակը 1490 թվականին ճամփորդել է Փոքր Ասիա, Երուսաղեմ և Եգիպտոս, իր գրառումներում մի քանի անգամ նշել է իրեն հանդիպած հայերին<sup>15</sup>:

15-րդ դարում հայ եկեղեցու հետ համագործակցելու անհաջող փորձ է կատարել Մորավիայի «Unitas Fratrum» («Եղբայրական միություն») արմատական ռեֆորմացիոն եկեղեցին՝ Ռեֆորմացիայի արմատական թևը Բոհեմիայում, որը ձգտել է հաստատել իր տեղը

<sup>13</sup> Տեյյան Ա., Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, Երևան, 2014, էջ 40:

<sup>14</sup> Տե՛ս Գրիգորեան Վ., «Երեսնեան» փողոց Բրակայում, «Արաքս», Ալեքսանդրիա, 22.10.1960:

<sup>15</sup> Տե՛ս Kabátnik Martin, Cesta z Čech do Jerusalema a Kaira r. 1491-92, Světová knihovna. J. Otto, 1894, էջ 35, 38, 85-86:

քրիստոնեական աշխարհում, կապ ստեղծել նաև Հայ եկեղեցու հետ<sup>16</sup>: Մակայն ինչպես հայ, այնպես էլ հույն Եկեղեցու հետ համագործակցության եզրեր գտնել չի հաջողվել<sup>17</sup>:

Հայ մարդու՝ Պրահայում գտնվելու վերաբերյալ առաջին տեղեկությունը վերաբերում է 16-րդ դարի վերջին: 1580-ականների վերջին ճանապարհորդ Փիթգատե Ղափանեցին եղել է Եվրոպայի տարբեր վայրերում, այդ թվում՝ Պրահայում<sup>18</sup>: Նույն ժամանակաշրջանում Եվրոպայում դեգերել է տեր Հակոբ Մարգարյան Ամդեցին՝ որպես էջմիածնի կաթողիկոսի աթոռակալ կամ մվիրակ: Հայտնի չէ նրա առաքելության բուն նպատակը, սակայն հայր Ղևոնդ Ալիշանի կարծիքով այն ունեցել է ավելի քաղաքական, քան կրոնական բնույթ<sup>19</sup>: Անհայտ է նաև, թե ինչ պատճառով է Ամդեցին 1599–1600 թթ. հայտնվել Պրահայի բանտում, որտեղից գրել է. «*Ինձ անարժանիս մէկ բերան Աստուած ողորմի ասայ, որ լի եմ մեղօք տառապեալ անձամբ. ես Ակոր էրէցս Համթեցի՝ զայս քապաստորութիւնս (Պատարագի) ի մէջ բանտին ի Բռակայ քաղաքն գրեցի*»<sup>20</sup>:

17-րդ դարում Բոհեմիայի տարածքում, հավանաբար, եղել է նաև Չաքարիա վարդապետը. համեմայն դեպս, Հռոմ գնալիս, նա իր ձեռքին ունեցել է հանձնարարական մամակներ Լեհաստանից, Հունգարիայից, Բոհեմիայից և Գերմանիայից<sup>21</sup>:

Հայր Մետող Պեխաչեկի վերոհիշյալ հողվածում վկայված է, որ ուշ միջնադարում չեխ հոգևորականները (հատկապես բենեդիկտյանները) իրենց եկեղեցական հագուստները և զանազան առարկաներ գնել

<sup>16</sup> Stů Bohemia in History, ed. Mikulas Teich, Cambridge University Press, 1998, էջ 107:

<sup>17</sup> Stů De Schweinitz Edmund, History of the Church Known as the Unitas Fratrum or the Unity of the Brethren: founded by the followers of John Hus, the Bohemian reformer and martyr, Alpha Edition, 2003, էջ 9:

<sup>18</sup> Ալիշան Կ. Ղ., Հայ-Վենետ կամ Յարընչութիւնք Հայոց և Վենետաց ի ԺԳ-ԺԴ և ԺԵ-ԺԶ դարս, Վենետիկ, 1896, էջ 459:

<sup>19</sup> Անդ, էջ 355:

<sup>20</sup> Անդ, էջ 358:

<sup>21</sup> Գեմմեման Մ. Է., Հայ տպագրութիւնը և Հռոմ (ԺԷ դար), Վենետիկ, 1989, էջ 139:

են հայերից կամ նրանց միջոցով: Այդ առարկաներից նմուշներ մինչև այդ հողվածի գրության ժամանակը պահվել են Չեխիայի, Մորավիայի և Սլովակիայի վանքերում ու թանգարաններում: Նշան Մարտիրոսյանն էլ իր հերթին տեղեկացրել է, որ ինքն անձամբ չեխական վանքերում և թանգարաններում տեսել է հայ վարպետների ձեռագործներ, հյուսվածքեղեն, գորգեր, սեղանի ծածկոցներ, փորագրված կարասիներ, ինչպես նաև Տիգրան Մեծ, Հեթում և Լևոն թագավորների հատած դրամները: 18-րդ դարի վերջին, 19-րդ դարի սկզբին հայերը մեծ քանակով Մորավիա են արտահանել տարբեր ապրանքներ, որոնց մեջ՝ Էսկեշեհիթի նշանավոր ծովափրփուրը՝ սեպիոլիտ հանքանյութը: Մարտիրոսյանը նշել է, որ ներկա ժամանակներում էլ Չեխիայից Մերձավոր Արևելք և այլ ասիական երկրներ չեխական ապրանքներն արտածել են հայ վաճառականները<sup>22</sup>: Հայերը տարբեր արևելյան երկրներից Չեխիա են ներածել նաև ծխական տարազներ<sup>23</sup>:

Ինչ վերաբերում է ձեռագիր մատյաններին, ապա մեզ հայտնի է Չեխիայում գտնվող երեք հայերեն ձեռագիր: 1960-ի տվյալով՝ Կառլովյան համալսարանի ձեռագրատանը պահվել է մի հայերեն կանոնագիրք, որի լուսապատճենն ուղարկվել է Երևանի Մատենադարան<sup>24</sup>: 2018-ի հոկտեմբերին Պրահայի Ստրահովի վանական համալիրի գրադարանում «Հնագույն քրիստոնյա ժողովրդի գանձերը» ցուցահանդեսի բացման նախօրեին վանքի արխիվում հայտնաբերվել է մինչ այդ անհայտ մի հայկական ձեռագիր՝ 1726 թվականի Ստանիսլավով (այժմ՝ Իվանո-Ֆրանկովսկ, Ուկրաինա) քաղաքում գրված հայոց լեզվի քերականության ձեռնարկ՝ «Ստեփանեան Քերականութիւն» վեր-

<sup>22</sup> Փրեւկացի, Հայ և չեխ հնագույն և նորագույն յարաբերութեանց մասին, անդ:

<sup>23</sup> Տես Մարտիրոսեան Հ., Չեխ գիտնականները և հայ մշակոյթը, «Յոսաբեր», Գահիրէ, 21.03.1931:

<sup>24</sup> Տես Գրիգորեան Վ., «Երևանեան» փողոց Բրակայում, անդ:

նագրով: Հայտնի չէ, թե այն ինչպես է հայտնվել Ստրահովի գրադարանում<sup>25</sup>: Իսկ 2020-ին Չեխիայի Արեւմտյան Բոհեմիայի թանգարանում (Պլզեն) մագիստրոս Ստանիսլավ Պետրը հայտնաբերել է մինչ այդ անհայտ մնացած հայկական ձեռագրի պատահիկներ: Ենթադրվում է, որ այն գրվել է 16-րդ դարում, Վասպուրականի վանքերից մեկում:

1707 թվականին Պրահայում դամասկոսցի հայ **Գևորգ Աստվածատուրյանը** (**Յիրժի Դեոդատ**) բացել է քաղաքի առաջին սրճարանը: Որոշ աղբյուրների համաձայն՝ դա տեղի է ունեցել 1714-ին: Մեր կարծիքով, խոսքը երկու տարբեր հաստատությունների մասին է. առաջինը եղել է բացօթյա, իսկ երկրորդը՝ փակ սրճատուն:

Դեռևս 1983 թվականին «Սովետական Հայաստան» ամսագրում ընդգրկվել է Հովհաննես Հարությունյանի համապարփակ հոդվածը Դեոդատի և Պրահայի առաջին սրճարանի մասին<sup>26</sup>: Թե՛ Հարությունյանը, թե՛ Դեոդատի մասին հետագա բոլոր գրողները հիմնվել են չեխական երեք հանրագիտարանների՝ Ֆրանտիշեկ Լադիսլավ Ռիեգերի Չեխական առաջին հանրագիտարանի (1860-1874, 14 հատոր), Յակոբ Մալիի գիտական բառարան-հանրագիտարանի (1873-1885) և Յան Օտտոյի «Օտտոյի գիտական բառարանի» (1888-1909, 28 հատոր) տեղեկությունների վրա: Այնուհետև ավելի լայն հետազոտություն է իրականացրել ամերիկահայ Մաքս Բուդակյանը, որը 2000 թվականին Նյու Յորքի «Արարատ» անգլիալեզու ամսագրում հրատարակել է ուսումնասիրություն՝ նվիրված Պրահայի հայերին և հատկապես Գևորգ Դեոդատին՝ մոտ 17 սկզբնաղբյուրի գործածությամբ<sup>27</sup>: Ըստ

<sup>25</sup> **Ասատրյան Հ.**, Հայկական հնատիպ գանձերը՝ Պրահայի Ստրահովի գրադարանի շքեղ դահլիճում, «Ազգ», Երևան, 26.10.2018:

<sup>26</sup> Տե՛ս **Հարությունյան Հ.**, Պրահայի առաջին սրճարանատերը. «Սովետական Հայաստան», Երևան, 1983, ք. 3, էջ 36:

<sup>27</sup> Տե՛ս **Boudakian Max**, Deodatus from Damascus, "Ararat Quarterly," New York, 2000, Autumn, էջ 22-25: Տե՛ս նաև **Hakob Asatryan**, Gevorg Deodatus (Astvacatryan) – majitel první kavárny v Praze, «Օրեր», Պրահա, 2010, ք. 2, էջ 28-29:

նրա՝ Գևորգ Դեոդատը ծնվել է 1668-ին, վաճառականի ընտանիքում  
 և մահացել 1730-ին: Ծնողներն եղել են հայ քրիստոնյաներ, ինչը  
 նշված է նաև չեխական հանրագիտարանում: Քանի որ Դեոդատի  
 հայրն անընդհատ ճամփորդել է, Գևորգը հոր գործերի բերումով ման-  
 կության և պատանեկության տարիներն անցկացրել է Կահիրեում և  
 Տրիպոլիսում: 1699 թվականին նա արդեն լավ տիրապետել է լատինե-  
 րենին և իտալերենին, ուստի մեկնել է Հռոմ, շարունակել է ուսումը և  
 ընդունել կաթոլիկություն: Պատրաստվել է դառնալ քրիստոնյա քարո-  
 զիչ՝ Անտիոքի պատրիարք Իզնիատիոս Պետրոսի խորհրդով, բայց  
 վերջինիս անապասելի մահից հետո այդ ծրագիրը ձախողվել է: Ընդ  
 որում, Գևորգը տեղեկացել է, որ Անտիոքի պատրիարքին ու Հալեպի  
 պատրիարքին սպանել են թուրքերը: Չորս տարի Հռոմում մնալուց հե-  
 տո նա վճռել է ճամփորդել Եվրոպայում: 1704 թվականին Վիեննայում  
 հանդիպել է բախտակից մի հայի, որի հետ առևտրական շատ համար-  
 ձակ գործ է ձեռնարկել, բայց, խաբվելով գործընկերոջից՝ կորցրել է  
 կարողությունը: Գևորգի՝ Վիեննայի այդ հայ ծանոթը կարող էր լինել  
 Հովհաննես Դեոդատը, որը 1666 թվականին գալով Վիեննա՝ 1685  
 թվականին այնտեղ բացել է սրճարան և կամ Իսահակ դե Լուկան  
 (Սահակ Լուկաշ, Ղուկաս), որը Վիեննա է եկել Երևանից և զբաղվել  
 սուրճի, թեյի և ուտեստեղենի վաճառքով<sup>28</sup>: 1703 կամ 1704 թվականին  
 վեց ամիս մնալով Վիեննայում՝ Գևորգ Դեոդատը որոշել է իր հայրե-  
 նակիցների բիզնեսի հաջողությունը փորձել Հաբսբուրգների կայս-  
 րության մեկ այլ մասում՝ Պրահայում:

Բուդակյանի հետազոտությունը պարզել է, որ Գևորգ Դեոդատը  
 լուրջ դեր ունի այդ տարիների Պրահայի պատմության մեջ: Նա Պրա-  
 հա է եկել 1705 թվականին և հայտնի դարձել իր անվան արաբական  
 ձևով՝ Գորգոս Հաթալահ էլ Դեմշկի (Gorgos Hatalah el Demski) և լա-  
 տինական ձևով՝ Գեորգոս Դեոդատոս Դամասկենոս (Georgius

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 22:

Deodatus Damascenus): Պրահաբնակները նրան անվանել են նաև Յիր-  
ժի Բոհդան Դամաշսկի (Jiri Bohdan Damassky): Երեք անվանաձևերն  
էլ ընդգծել են նրա դամասկոսցի լինելը: Դեռդատը 1689-ին Հռոմ գնա-  
լու ճանապարհին մնացել է նաև Կոստանդնուպոլսում, և ինչպես Պրա-  
հայի պետական կենտրոնական արխիվի տնօրեն Վ. Բաբիչկան է  
փաստել, նա հայտնի է եղել նաև անվան գերմանական ձևով՝ Գրեգոր  
Արմենիեր ֆոն Կոնստանտինոպել (Gregor Armenier von  
Constantinopel), շնայած տարակույս է հարուցում Կոստանդնուպոլսի  
հիշատակումը: Ի դեպ, ըստ Բուդակյանի, Պրահայի ճամփորդական  
գրքույկներում Դեռդատուսի փոխարեն գործածվել է նաև Դամաշան  
ազգանունը, որպեսզի լատիներեն վերջավորությունը շփոթմունք չա-  
ռաջացնի:

Մինչև Գեորգ Աստվածատուրյանի Պրահա գալը, սուրճն այնտեղ  
վաճառվել է դեղատներում (այս պրակտիկան ընդհուպ մինչև 20-րդ  
դարի առաջին տասնամյակները կիրառվել է տարբեր երկրներում):  
Գալով Պրահա՝ Դեռդատն արաբական հանդերձանքով և տուրքանով  
շրջել է ու սուրճ է վաճառել քաղաքի կենտրոնական փողոցներում,  
հիմնականում՝ Ստարե մեստոյում (Հին քաղաքում)՝ ձախ ձեռքում  
պահելով սուրճը տաքացնելու կրակարանը, իսկ աջում՝ բաժակների  
ու շաքարի տուփը: Երբեմն էլ գլխին կապած տուրքանի վրա սկուտեղ  
է պահել: Իր արաբական լայն տաբատի ու տուրքանի պատճառով  
նրան շփոթել են մե'րթ թուրքի, մե'րթ արաբի հետ, և նույնիսկ Կառլովա  
փողոցի այն շենքը, ուր նա բնակվել է, բնակիչներից մեկի վկայու-  
թյամբ կոչվել են «Երկու արաբի մոտ»: Սուրճի վաճառքը Գեորգին ստի-  
պել է վերջնականապես հաստատվել Պրահայում: 1707 թվականին  
նա դարձել է Չեխիայի քաղաքացի և ամուսնացել Աննա Ժինկովայի  
հետ: Նրանք ունեցել են երեք զավակ՝ Վիտը, Լյուդմիլյան և Վիկտոր-  
յան: Այդ ժամանակ Գեորգը Յոզեֆ Առաջին կայսեր կողմից թույլտ-  
վություն է ստացել հիմնելու բիզնեսի մշտական կետ՝ շրջիկ առևտրի  
փոխարեն, որը ստանալով՝ 1708 թվականին «Ռսկե օձի մոտ» շենքին

կից բացել է իր փոքրիկ վաճառատեղին: «Մկզբնական շրջանում Գևորգ Աստվածատուրյանը, որը Պրահայում հայտնի էր Իրժի Դեռդատ, Ջորջոս Հատալահի իլ Դամաշսկի և Գեորգիոս Դամասկենոս անուններով, իր շարժական փոքրիկ սրճարանն առած անցնում էր փողոցից փողոց, բայց շուտով առևտուրն այնքան եկամտաբեր է դառնում, որ նրան հնարավորություն է ընձեռում գնելու Շուշանների ու Ճիզվիտական (այժմ՝ Կառլովա) փողոցների անկյունի «Ոսկե օձի մոտ» կոչվող շենքի գետնահարկը և այստեղ բացելու քաղաքի առաջին սրճարանը: Պրահայի ճիշտ կենտրոնում հիմնված այս հաստատությունը՝ շնորհիվ Գևորգ Աստվածատուրյանի ձեռներեցության ու համակրելի բնավորության, դառնում է քաղաքի ամենանշանավոր հավաքատեղին»<sup>29</sup>:

Իր հերթին Մաքս Բուդակյանը գրում է. «1991 թվականին հրատարակված Թ. Փորթերի «Պրահա՝ արվեստ և պատմություն» գրքում ասվում է, որ Լիլիովա և Կառլովա փողոցների հատման կետում «Ոսկե օձի մոտ» Վերածննդի շենքն է, որը 1714 թվականից առաջին սրճարանն է Պրահայի, և որի տերը հայ Դեռդատոս Դամայանն է»<sup>30</sup>: 1972-1976 թթ. շենքը հիմնովին վերանորոգման է ենթարկվել և առ այսօր գործում է իբրև «Երեք ջայլամի մոտ» հյուրանոց, որի առաջին հարկում կա նաև ռեստորան: Հետևաբար այս 1714 թվականը վերաբերում է երկրորդ սրճարանին, ինչը մի շարք չեխական աղբյուրներ (այդ թվում՝ «Ոսկե օձի մոտ» սրճարանի կայքէջը) համարում են Պրահայի առաջին փակ սրճարանի ստեղծման տարեթիվը:

Այնուհետև Դեռդատն ավելի է ընդլայնել իր գործունեությունը և նույն՝ 1714 թվականին Պրահայի Հին Քաղաքում (Ստարե մեստո), գնել է նոր տուն (հավանաբար՝ Ցելեսնա փողոցում): Նոր սրճարանը հետաքրքիր կահավորում է ունեցել և նույնիսկ սեղաններին դրված են

<sup>29</sup> Հարությունյան Հ., Պրահայի առաջին սրճարանատերը, անդ:

<sup>30</sup> Boudakian M., Deodatus from Damascus, ibid.

եղել շախմատի խաղատախտակներ: Այստեղ նա սուրճի հետ մտաու-  
ցել է նաև կարմիր գինի:

Այդ տարիներին Դեոդատը լրիվ ներգրավվել է Պրահայի հասարա-  
կական կյանքում: 1716 թվականի մայիսին նա իր սրճարանում նշել է  
Կառլ Վեցերոդը կայսեր որդու արքայազն Լեոպոլդի ծննդյան տարե-  
դարձը՝ արժանին մատուցելով իրեն հյուրընկալած երկրին: Բացի այդ,  
սրճարանի երեք պատուհանները զարդարված են եղել արաբերեն լեզ-  
վով Աստվածաշնչյան գրություններով: Եվ բոլոր նրանք, ովքեր ասել  
են «Երկար կյանք կայսեր ընտանիքին», Դեոդատից անվճար ստա-  
ցել են մեկ բաժակ գինի:

Դեոդատը հեղինակություն է ձեռք բերել նաև իր աստվածաբանա-  
կան ու բարոյագիտական բնույթի լատիներեն և գերմաներեն աշխա-  
տություններով: Նրա գրական ժառանգությունը պահվում է Չեխիայի  
պետական արխիվում և Ազգային գրադարանում: Պրահայի առաջին  
սրճարանատերն այնքան է ներգրավվել կայսերական և հասարակա-  
կան կյանքում, որ գրել է գերմաներեն և լատիներեն պամֆլետներ  
տարբեր թեմաներով, որոնք առնչվել են Միջին Արևելքի քրիստոնյա-  
ներին, Պրահայի հրեական համայնքի ղեկավարներին, նրանց քարե-  
գործական հիմնադրամներին, մասնավորապես Բոհեմիայի և Պրա-  
հայի ռաբբիների ղեկավար Դավիթ Բեն Աբրահամ Օփենհեյմերին:  
Վերջինս Երուսաղեմի հրեաների համար Եվրոպայում հավաքվող գու-  
մարների պատասխանատուն էր:

Դեոդատի գրած պամֆլետները դարձել են լուրջ հակամարտու-  
թյան առիթ և նույնիսկ դատական գործ է սկսվել նրա և Դավիթ Բեն Աբ-  
րահամ Օփենհեյմերի միջև: Դեոդատի և հրեաների միջև դատական  
գործի 177 ձեռագիր էջերը գտնվում են Պրահայի պետական արխի-  
վում: Ընդ որում, նման գործեր գրելուն Դեոդատին հրահրել են նրա  
սրճարան այցելող ճիզվիտները: Չայրացած հրեա մեծահարուստնե-  
րը Գևորգին գրկել են վարկերից, տեղի հրեաներն ամեն ինչ արել են,  
որպեսզի Դեոդատը սնանկանա, և աստիճանաբար ուռճացող պարտ-

քերը չքավորության են հասցրել նրան: Չէիս խմբագիր և գրող Յարոմիր Մմեյկալը գրել է, որ Դեոդատն ինչպես արագ հարստացել էր, այնպես էլ արագ կորցրել է ամեն ինչ: Նա թաղվել է պարտքերի մեջ և դատական պատասխանատվությունից խուսափելու նպատակով 1723 թվականի դեկտեմբերին գաղտնի հեռացել է Գերմանիա Լայպցիգ: Այստեղ 1724-ին գրել է իր նոր գիրքը ռաբբինների հետ իր հակամարտության մասին: Վերոհիշյալ հանրագիտարաններում այդ գրքի հրատարակության թիվը նշված է 1734-ը, սակայն Չեխիայի արխիվներում այդ թվագրմամբ գիրք չի հայտնաբերվել. Դեոդատի մեզ հասած աշխատությունների հրատարակման թվականներն ընդգրկում են 1711-ից 1719 թթ.: Դրանցից հինգը լատիներեն է, երեքը գերմաներեն, մեկը արաբերեն (վեցը մնում են անտիպ, պահպանվում են Պրահայի Ազգային գրադարանում և կենտրոնական արխիվում, ինչպես նաև Բոնոն և Օլոմոուց քաղաքների գրադարաններում): Աստվածաբանական և բարոյախրատական բնույթի այդ գործերը սովորաբար շատ երկար անվանումներ ունեն, ինչպես՝

ա) Proverbium Arabicum: Men amanak la tachunoh Vamen chanuk la tamenoh; id est: Qui fidei tuae se committit, fidem serva, et qui fidem frangit, cave ne fidas: Sapiens Magnati Consilium, ut idoneum filio provideat fidumque praefectum, in quodem facto animadversum, quo Tripoli etc. Contigit et antea fuit Arabico descriptum idioma (Praha, 1712),

բ) Der wahre Weegweiser ist die Forcht Gottes etc.: Pure Wahrheit, das it, Erklärung des Kupferstiches, welcher sich in diesem Büchlein befindet, zu Störkung der Einfältigen Christen in dem wahren christlichen Glauben, absonderlich der neugetaufften etc. etc. damit sie leicht capiren, dass die Römisch-Catolische Christen nicht Figuren und Bilder etc. etc. sondern den wahren, nächtigen und barmherzigen Gott Adonaz etc. etc. allein laben prosen und anbethen (Praha u K.J. Hraby 1719),

գ) Speculum veritatis, sive colloquium inter Hebräum et Georgium Deotatum Damascenum, nunc civem Pragensem (Praha 1714),



դ) Kurtze Vorstellung und Erklärung derer drei vornehmsten in der Ganze Welt befindlichen Glauben. Nemlich des Christlichen, Jüdischen und Mohametanischen (Praha 1734 u Jana V. Helma):

Լայպցիգում ապրած տարիներին Գ-Լորզը մի մամակ է հղել Կայսր Կառլ Վեցերորդին և 1726 թվականին նրանից ներում է ստացել: Նրա պարտքերը ներվել են, և նա պարտավորված 130 ոսկի է նվիրաբերել Պրահայի հրեական համայնքին: Ամեն դեպքում, Դեոդատի կյանքն այլևս առաջվանը չի եղել: Ամուսնությունը խարխլվել էր, ինքը՝ մնանկացել: Ըստ Բուդակյանի՝ Դեոդատուսը մահացել է 1730 թվականին (այլ աղբյուրների համաձայն՝ 1740-ին), 62 տարեկան հասակում, ծայր աղքատության մեջ: Մահից մեկ տարի անց նրա սրճարանը փակվել է: Պրահայի հաջորդ սրճարանը բացվել է միայն ինը տարի անց և կոչվել է «Թատերական սրճարան» (Divadelni kafirna v Kotcich):

Սրճարանից և աշխատություններից բացի Դեոդատից հիշատակ են մնացել անհայտ վարպետի ձեռքով արված իր երկու հարթաքանդակները, որոնք մինչև նախանցյալ դարի վերջը պահպանված են եղել, բայց հիմա դրանց տեղն անհայտ է: Ռոշ ժամանակ սրճարանի վրա եղել է նաև հուշատախտակ՝ «Սա Պրահայի ստաջին սրճարանն է, որ 1707 թվականին բացել է դամասկոսցի հայ վաճառական: Իրժի Դեոդատը» մակագրությամբ: Այժմ այնտեղ գործում է «Ոսկե օձի մոտ» ռեստորանը, որի ներսում 2010-ական թթ. մի քանի տարի փակցված է եղել Դեոդատի նկարի պատճենը, որը նվիրել էր Չեխիայի «Միկո ինթերնեշնըլ» (այժմ՝ «Մառլենկա») ընկերության նախագահ Գևորգ Ավետիսյանը, սակայն սեփականատերերի փոփոխությունից հետո նկարը հանվել է: Ի դեպ, Ավետիսյանի հովանավորությամբ Դեոդատի անոխյա ձեռագրերը թվայնացվել են՝ Երևանի Մատենադարան ուղարկելու նպատակով:

Թեև սկսած 19-րդ դարից հայերի և չեխերի միջև եղել են հատուկ ենտ շփումներ, բայց և մինչև 20-րդ դարի 20-ական թվականները երկու ժողովուրդները մեծ մասամբ անձանոթ են մնացել միմյանց: Այս

երևույթի առաջին պատճառն այն է, որ քաղաքական տեսանկյունից հայերը ոչ մի կապ չեն ունեցել չեխոսլովակների հետ, և ապա՝ այդ երկրում չի եղել կազմակերպված հայազաղութ: Երկիրը հիմնականում մինչև անկախություն ձեռք բերելը հայերին ծանոթ է եղել Բոհեմիա անունով<sup>31</sup>, հետագայում հիմնականում շրջամատության մեջ է մտել Չեխո-Սլովակիա ձևը: Հայ մամուլում համդիպում են նաև Չեխաստան, Չեխստան, Չեխոսլավիա և Չեքոսլովակիա, հազվադեպ՝ Մորավիա ձևերը: Չեխոսլովակների անվանումն էլ երբեմն համդիպում է չեխ-սլովաք,<sup>32</sup> չեխ սլավ<sup>33</sup> կամ մինչև անգամ մեր օրերում՝ մորավաքի<sup>34</sup> ձևերով:

19-րդ դարի սկզբին չեխ լուսավորիչներից ոմանք հետաքրքրվել են հայոց լեզվով: Գրող և քարգմանիչ **Անտոնին Յարոսլավ Պուխմայերը** (1769–1820) իր մի նամակում գրել է, որ իրեն հաջողվել է գտնել հայերեն-թուրքերեն-լատիներեն բառարան, որը կօգնի հայերենն՝ ուսումնասիրողներին<sup>35</sup>:

Սլովակ բանաստեղծ **Յան Հոլին** (1785–1849) հին սլավոնական պատմությունից վերցված «Սվյատոպուլկ» ծավալուն պոեմի (1833) վեցերորդ գլխում հիշատակել է նաև Հայաստանը<sup>36</sup>:

Չեխ և սլովակ բանաստեղծ, լուսավորիչ, հնագետ, պատմաբան և բանասեր **Պավել Յոժեֆ Շաֆարիկը** (1795–1861) շփումներ է ունեցել հայ գիտնականների, մասնավորապես՝ Վիեննայի Մխիթարյան միա-

<sup>31</sup> Տե՛ս, օրինակ՝ Խառնակչոքիները Պոհեմիոյ մեջ, «Երիտասարդ Հայաստան», Նիւ Եօրք, 13.05.1918:

<sup>32</sup> Տե՛ս «Չվայ պգտիկ ազգ մը որ Հայաստանն անելի...», «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 10.01.1919:

<sup>33</sup> Տե՛ս Լեհ և չեխ սլաներու հողային համաձայնութիւնը, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 3.02.1919:

<sup>34</sup> Տե՛ս **Իլֆիճեան Հ. սրկ.** Ստեյլա Գրիգորեանի տպադրիչ ելոյքը՝ Դանդոյ Թրակտորական Օփերայի բեմին վրայ, «Օրեր», Պրահա, 2012, թիվ 10-12, էջ 38:

<sup>35</sup> **Պետրոսեան Հ.**, Փրակայի հայ ուսանողները, «Հայրենիք», Պոսթըն, 27.06.2008:

<sup>36</sup> **Ján Hollý**, Hollého Spisy Básnické. So životopisom a zpravou o pomníku i spisoch jeho. sporiadal a vydal J. Viktorin, 1863, s. 64.

բանության անդամների հետ և գործնականորեն հետաքրքրվել է հայոց լեզվով, պատմությամբ, մշակույթով: Չեխիայի Ազգային գրականության գրադարանի արխիվում պահվող Շաֆարիկի արխիվում (թիվ 15/F/28) գտնվում է Մյսիֆարյան միաբանության անդամ հայր Արսեն Կոմիտաս Բագրատունու (1790–1866)՝ 1830 թվականին Նովի Սադ հայր Վարդան Հովսեփյանին (Wardan di Giuseppe) հղած գրաբար մամակը<sup>37</sup>: Դրանից տեղեկանում ենք, որ չեխ գիտնականը որոշակի հետաքրքրություն է ունեցել հայերենի հանդեպ. այդ հարցով դիմել է Վարդան Հովսեփյանին, վերջինս էլ իր մամակում մանրամասն ներկայացրել է հայոց գրերը և հնչյունները, մաս ուղարկել այբուբենը, որով Շաֆարիկը կկարողանար սերտել լեզուն<sup>38</sup>:

1842–1845 թթ. Ռուսաստանում բնակված չեխ-գերմանական ծագումով բուսաբան և կենդանաբան, Պրահայի համալսարանի պրոֆեսոր **Ֆրիդրիխ Աուգուստ Ռուդոլֆ Կոլենատին** (1812–1864) եղել է մաս Հայաստանում, շփումներ ունեցել հայերի հետ: Ռուսաստանում անցկացրած տարիներին Կոլենատին արշավախմբերի կազմում ճամփորդել է Կովկասում, հասել մինչև Արցախ: Հայաստան կատարած այցելության մասին նա գրել է 1858–1859 թթ. հրատարակված իր ուղեգրության առաջին հատորում<sup>39</sup>: Գլուխներից մեկը կոչվում է «Հայաստանում և Քասախում ապրող թաքարները»<sup>40</sup>: Այս գրքում Կոլենատին մաս թուրքիկ հիշել է, որ Հայաստանում հանդիպել է **Շևչիկ** անունով մի չեխի, որի ինքնությունն անհայտ է: Կոլենատին 1843-ին Թիֆլիսում ծանոթացել է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի հետ և իր ու-

<sup>37</sup> Տե՛ս Մարտիրոսյան Հ., Չեխ գիտնականները և հայ մշակույթը, «Յուսաբեր», Գահիրե, 21.03.1931: Փրակացի, Չեխերը մեր մասին, «Արևելք», Ստամպուլ, 7.02.1933 (այստեղ Բագրատունու անունը հիշված չէ, սակայն խոսքն անմիջեղիորեն նրա մամակի մասին է):

<sup>38</sup> Նամակի պատճենը մեզ է տրամադրել Տիգրան Աբրահամյանը (Պրահա):

<sup>39</sup> **Kolenati F. A.**, Die Bereisung Hocharmeniens und Elisabethopols, der Schekinschen Provinz und des Kasbek im Central – Kaukasus, Dresden, 1858.

<sup>40</sup> Անդ, էջ 19-23:

ղեկրության մեջ գրել, որ հանդիպել է «մի հայ ուսուցչի՝ Արուսյան անունով»<sup>41</sup>: Նա գրել է նաև «Ասիական բժշկությունը Կովկասում, Վրաստանում, Հայաստանում և Պարսկաստանում» գերմաներեն աշխատությունը (հրատարակվել է 1852-ին, Պրահայի գերմանալեզու գիտական մամուլում<sup>42</sup>):

Հայաստանում հայտնված հաջորդ չեխը ամենայն հավանականությամբ եղել է գրող, լրագրող **Բոհումիլ Հավլասան** (1852–1877), որը որպես կանավոր 1877-ի ապրիլից մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին՝ դառնալով Ալեքսանդրապոլում տեղակայված Նիժեգորոդսկի դրագունական գնդի անդամ: Երիտասարդ չեխը Հայաստանի տարածքում մարտնչել է ռուսական բանակի շարքերում և երեք թղթակցություն ուղարկել Պրահա՝ «Կռիվ Վիզինի մոտ», «Կռիվ Ղըզըլ-թաբայի մոտ» և «Հաղթանակ Ալաջայի մոտ», որոնք տպագրվել են «Բրոուսեկ» թերթում և արտատպվել այլ պարբերականներում: Իր ռազմական թղթակցություններում Հավլասան երբեմն գեղարվեստական շնչով նկարագրել է հայոց բնաշխարհը: Դժբախտաբար, Բոհումիլ Հավլասան հիվանդացել է տիֆով և վախճանվել 1877-ի նոյեմբերի 25-ին, Ալեքսանդրապոլում՝ ընդամենը 25 տարեկան հասակում: Ալեքսանդրապոլում նրա գերեզմանի վայրը մնում է անհայտ<sup>43</sup>:

Հավլասայից բացի նույն ժամանակաշրջանում Հայաստանում եղել է մեկ այլ չեխ, որի անունը մեզ հայտնի չէ: 1878-ին Պրահայի «Սվետոզար» ամսագրում տպագրվել է Դիլիջանից ուղարկված մի թղթակցություն, որի հեղինակը վրացական գնդի ազգությամբ չեխ կապելմայստերն էր<sup>44</sup>:

---

<sup>41</sup> Անդ. էջ 166:

<sup>42</sup> Տե՛ս **Kolenati F. A.**. Die asiatische Medicin in Caucasus, Iberien, Armenien und Persien. "Vierteljahrsschrift für die praktische Heilkunde", Prag, 1852, [34], 9(2), էջ 1-7:

<sup>43</sup> Տե՛ս **Кишкин Л. С.**, Чешский писатель на армянской земле. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1934. ք. 4, էջ 170-177:

<sup>44</sup> Տե՛ս անդ. էջ 172:

Հայկական հետաքրքրություններ է ունեցել մասնավորապես նույն դարաշրջանում ապրած մտավորական, քաղաքական գործիչ **Վոյտա (Վոյտեխ) Նապրաստեկը** (1826–1894): Նրան մասնավորապես հետաքրքրել են հայոց պատմությունը և լեզուն. հայտնի է, որ անգամ ԱՄՆ կատարած ուղևորության ընթացքում նա իր հետ տարել է հայերեն գրքեր: Պահպանվել է նրա նամակը՝ ուղղված չեխ ճանապարհորդ Յոզեֆ Վունշին, որտեղ խնդրել է իր համար գտնել հայկական երգերի երաժշտություն՝ նշելով հայերեն տողեր այդ երգերից<sup>45</sup>: Վերոնշյալ **Յոզեֆ Վունշը** (1842–1907) 1881–1883 թթ. ուղևորություն է կատարել Արևելք և Ռուսաստան, եղել Արևմտյան և Արևելյան Հայաստանում, կատարել մանրամասն քարտեզագրումներ, թողել ուշագրավ գրառումներ և հանդիպել հայ մտավորականների: Վունշը մասնավորապես եղել է Մալաթիա, Խարբերդ, Էրզրում, Վան, Երևան քաղաքներում: Պատճենել է սեպագիր արձանագրություններ և ուղարկել Վիեննայի համալսարանի ուսուցչապետ Մյուլլերին<sup>46</sup>: Հայաստանից նա իր հետ Չեխիա է տարել զենքեր, որոնք այսօր ցուցադրվում են Վոյտեխ Նապրաստեկի թանգարանում<sup>47</sup>:

Չեխ գրող **Սվատոպլուկ Չեխը** (1846–1908) 1874-ին ճամփորդել է Ռուսական կայսրությունում, եղել մասնավորապես Հայաստանում: Իր հիմնած «Կվետի» («Ծաղիկներ») հանդեսում 1885-ին հրատարակած իր ուղեգրության մեջ նա հիշատակել է Արարատը<sup>48</sup>, Էջմիածինը և Երևանը<sup>49</sup>:

<sup>45</sup> Stů **Հարությունյան Հ.**, Հայ-չեխական կապերի նորահայտ փաստեր, էջ 26-27: Նապրաստեկի նամակների այդ հայերեն հատվածները տես **Křikarová Adéla**, Človek na svém místě (Malé zamyšlení nad stým výročím odchodu Vojty Náprstka), "Nový orient: kulturně-politický měsíčník", tom 49, 1994, էջ 278:

<sup>46</sup> Stů **Kuchař Karel**, Naše mapy odedávna do dneška, Nakl. Československé akademie věd, 1958, էջ 115, **Sklenář Karel**, Biografický slovník českých, moravských a slezských archeologů a jejich spolupracovníků z příbuzných oborů, Nakladatelství libri, 2005, էջ 642:

<sup>47</sup> Stů Annals of the Náprstek Museum, vol. 2, The Museum, 1999, էջ 59:

<sup>48</sup> Stů "Květy", 1885, T. 7, էջ 350:

<sup>49</sup> Stů անդ, էջ 712:

Ի դեպ, խոսելով Բուլղարիայի մասին, նա նշել է հայերի թիվը Պլովդիվում, Բուրգասում, Բագարջիկում և Սլիվենում<sup>50</sup>: Նրանից բացի Կովկաս ճամփորդել է բանաստեղծ Արուֆ Հեյդուկը (1835–1923), որը հայ ժողովրդին հիշել է իր մի քանի գրվածքներում: Կովկասի ժողովուրդների և Հայաստանի վերաբերյալ առաջին անգամ հանգամանորեն գրել է Էմանուել Ֆայաը (1854–1929), որի աշխատությունը լույս է տեսել «Կովկաս» վերնագրով<sup>51</sup>:

Բանաստեղծ Յուլիուս Չեյերը (1841–1901) գրել է «Հայոց Աբգար քազավորի լեգենդը» (“Legende o armenskem krali Abgarovi”) բանաստեղծությունը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ առկա ավանդության հիման վրա: Գրականագետ Ա. Մ. Պիսան այս ստեղծագործությունը համարել է չեխական քնարերգության գոհարներից մեկը<sup>52</sup>: Հավանաբար այս բանաստեղծության և Չեյերի՝ ազգությամբ չեխ շլինելու պատճառով ժամանակին ենթադրվել է, որ Չեյերն ունեցել է հայկական ծագում<sup>53</sup>, սակայն իրականում նա հոր կողմից եղել է ֆրանսիացի, մոր կողմից՝ հրեա:

Աշխարհագրագետ, ուսուցչապետ Ստանիսլավ Նիկոլաուն (1878–1950) Հայաստանին և հայ ժողովրդին բազմիցս անդրադարձել է իր հյուստարակած աշխարհագրության դասագրքերում, «Սիրիմ սվետեմ» («Ամբողջ աշխարհին») պատկերազարդ ամսաթերթում և «Նալոդնի պոլիտիկա» («Ազգային քաղաքականություն») օրաթերթում (եղել է վերջին թերթի խմբագրակազմի անդամ)<sup>54</sup>:

Չեխ ճանապարհորդ, մանկավարժ և գրող Յոժեֆ Կորժենսկին (1847–1938), ի թիվս այլ երկրների, մի քանի ուղևորություն է կատարել

<sup>50</sup> Տես անդ, էջ 709:

<sup>51</sup> Տես Եղիշկա Եա., Ողջոյն հայ ժողովուրդին, «Արար», Ալեքսանդրիա, 6.06.1959:

<sup>52</sup> Տես Փրակացի. Չեխ երաժշտութեան մեծագոյն դէմքերը, «Արեւելք», Ստամպոլ, 4.02.1934:

<sup>53</sup> Տես Մարտիրոսեան Հ..., Չեխ գիտնականները և հայ մշակոյթը, «Յուսարեք», Գահիրե, 21.03.1931:

<sup>54</sup> Տես Ույն տեղում: Տես նաև Հախնազարեան Յ., Չեխական մամուլն ու հայերը, «Ալիք», Թեհրան, 22.10.1933:

Փոքր Ասիա և Պարսկաստան, իր ուղեգրություններն ամփոփել է 25 հատորում՝ դրանցում անդրադառնալով նաև հայ ժողովրդին: Ի դեպ, Կործենսկիի երկու քույրերը ավելի քան 30 տարի հյուրանոց են ունեցել Փոքր Ասիայում և թուրքերենի հետ մեկտեղ իմացել են նաև որոշ չափով հայերեն ու հունարեն<sup>55</sup>:

1895-ին «Ձլատա Պրահա» տարեգրքում լույս է տեսել հոդված հայ մեծանուն դերասան Պետրոս Ալամյանի (1849–1891) մասին<sup>56</sup>:

Ավստրո-Հունգարիայի կայսրության հպատակ չեխերի հետ որոշ շփումներ են ունեցել Վիեննայի Մխիթարյան միաբանները, որոնք ձգտել են չեխերին հնարավորինս ներկայացնել հայ ժողովրդին և նրա մշակույթը: Լեզվին անձանոթ լինելով՝ նրանք համագործակցել են չեխ կրոնավոր Ալոիս Կուդելկայի (1861–1942) հետ, որը հանդես է եկել Օ. Ս. Վետտի ծածկանունով: Կուդելկան տիրապետել է 40 լեզվի, թարգմանություններ կատարել իսլանդերենից, էստոներենից, ֆիններենից, լատվիերենից, հունգարերենից, իսկ հայերեն սովորել է Վիեննայի Մխիթարյանների մոտ և նրանց յոթնամյա կատարել է թարգմանություններ աշխարհաբարից: Նա ձեռք է բերել հայ գրականության բավական հարուստ գրադարան, որն այժմ պահպանվում է Բռնո քաղաքում<sup>57</sup>: 1902-ին Կուդելկայի չեխերեն թարգմանությամբ առանձին գրքով լույս է տեսել Բաֆֆու «Խենթը»<sup>58</sup>, 1903-ին՝ Ավետիս Ահարոնյանի «Խուցը» և «Սև օրերը» պատմվածքները՝ «Պատկերներ Տաճկահայաստանից» վերնագրով<sup>59</sup>: Այս հատորները մեծ ընդունելության են արժանացել չեխ ընթերցողների շրջանում և արագ սպառվել են: Ալոիս Կուդելկայի թարգմանությամբ 1903-ին չեխական «Հլեսա» հատորում

---

<sup>55</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>56</sup> Տե՛ս “Zlata Praha”, Volume 12, 1895, Praha, էջ 606-607:

<sup>57</sup> Տե՛ս **Բոռչկովա Մ.**, Հայ գրականությունը Չեխոսլովակիայում, «Գրական րևիք», Երևան, 30.04.1957:

<sup>58</sup> Տե՛ս **Raffi**, “Chenti”. historický roman z Rusko-Turécké Völky. Přeložil z novo-armenštiny O. S. Vetti. Praze, 1902:

<sup>59</sup> Տե՛ս **Aharonjan A.**, Obrázky z tureckéno Arménska. Z novo-armenštiny přeložil O. S. Vetti (Al. Koudelka), Praha, 1903:

լույս է տեսել նաև Ահարոնյանի «Ռաշիդ»<sup>60</sup>, իսկ 1914-ին՝ Բաֆֆու «Բիբլի Շարաբանի» պատմվածքները:

Հատուկ ենտ հայ անձինք այս ժամանակաշրջանում այցելել են Չեխոսլովակիա՝ որպես գրոսաշրջիկ: 1893-ին Պրահայում է եղել Ավետիք Իսահակյանը, այնտեղ գրել է «Էս ճամփեն ոլոր-մոլոր» բանաստեղծությունը: Որոշ ունևոր հայեր էլ բուժվել են չեխական առողջարաններում, հատկապես Կառլսբադ (չեխական անվանումով՝ Կառլովի Վարի<sup>61</sup>) և Ֆրանցինսբադ (չեխական անվանումով՝ Ֆրանտիշկովի Լազնե) քաղաքներում. վերջինը հայտնի էր որպես կանանց հիվանդությունների և արյան շրջանառության խախտումների բուժավայր: Այսպես, 19-րդ դարի վերջին ականավոր գրական-հասարակական գործիչ, իշխանուհի Մարիամ Թումանյանը կազդուրվել է Ֆրանցինսբադում<sup>62</sup>, իսկ եզիպտահայ իրավաբան Միքայել Խաչատուրյանը (երգչուհի Գոհար Գասպարյանի հայրը) մորը բուժման նպատակով տարել է Կառլսբադ:

Նշենք նաև, որ 19-րդ դարի վերջին Երևանում գործած Խաչատուր Գիլանյանցի լիմոնադի գործարանը, ի թիվս տարբեր հանքային և բուժիչ ջրերի, արտադրել է նաև Կառլսբադյան ջրեր: Գիլանյանցի ար-

---

<sup>60</sup> Տե՛ս **Aharonjan A., Rašid.** Z armenstiny preložel O. S. Vetti, Hleas, 1903, էջ 84-105:

<sup>61</sup> Ի դեպ, ժամանակին խորհրդային որոշ կուրորտաբաններ (Ն. Սլավյանով, Վ. Վլադիմիրյակի) Կառլովի Վարին համեմատել են Ջերմուկի հետ: «Իր ֆիզիկո-քիմիական բաղադրությամբ և բուժիչ հատկություններով Ջերմուկի հանքային ջրերը մնան է Չեխոսլովակիայի համաշխարհային նշանակություն ունեցող «Կարլովի-Վարի»-ի ջրերին: ...Ոչ միայն ջրերի հատկությամբ, այլև իր բնական պայմաններով Ջերմուկը ոչնչով չի զիջում Կարլովի-Վարիին: ...Այսպիսով, Ջերմուկը բոլոր տիպայներն ունի դառնալու Մովեստական Միության Կարլովի-Վարին»,- գրել են հայ կուրորտաբանները՝ միաժամանակ չանտեսելով այն ակնհայտ առավելությունները, որ չեխական առողջարանն ունեցել է հայկականի նկատմամբ (Մահրաթյան Ա., Աբաջանյան Մ., Ջերմուկի հանքային ջրերի օգտագործման հեռանկարները, «Հայաստանի Ժողովրդական տնտեսություն», Երևան, 1959, թ. 5-6, էջ 143-144):

<sup>62</sup> Տե՛ս **Թումանյան Մարիամ.** Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 70:

տաղրած մրգահյութերը 1898-ին Պրահայում կազմակերպված արդյունաբերական ցուցահանդեսում արժանացել են ոսկե մեդալի<sup>63</sup>։ Իսկ Երևանի «Չանգի» գարեջրի գործարանի արտադրանքը հաջողությամբ վաճառվել է նաև գարեջրի արտադրության լավագույն կենտրոններից մեկը համարվող Չեխիայում։

20-րդ դարի սկզբին Չեխիայում հայտնվել են նաև առաջին հայ ուսանողները։ Չեխ հռչակավոր ջութակահար Օտակար Շևչիկը (1852–1934) ունեցել է հայ ուսանողներ, եղել է հայ եկեղեցական և ժողովրդական երաժշտության ու Կոմիտաս վարդապետի մեծ երկրպագու<sup>64</sup>։ Նրա հետ ծանոթ է եղել հայ նվագավար Կոնստանտին Սարաջևը (Սարաջյան, 1877–1954)։ Երևանի Գրականության և արվեստի քանդարանի Սարաջևի ֆոնդում պահվում է հայ և չեխ երաժիշտների համատեղ լուսանկարը, ինչպես նաև Շևչիկի 1902 թվականին Սարաջևին գրած մի ռուսերեն նամակը, որտեղ չեխ երաժիշտը ցավ է հայտնում, որ Սարաջևը թողել է ջութակի պարապմունքները<sup>65</sup>։ Ի դեպ, դրանից առաջ Սարաջևը Մոսկվայի կոնսերվատորիայում աշակերտել էր մեկ այլ չեխ երաժշտի ջութակահար Իվան Հրժիմալիին (1844–1915)։

Շևչիկին է աշակերտել նաև հայ տաղանդավոր ջութակահար Դավիթ Դավթյանը (1880–1911)։ Ժամանակի մամուլի վկայությամբ «...ս. Շևչիկը հիացած է եղել ս. Դաթեանի ջութակահարութեան յարմար մատների դասաորութեան վրայ և նրան մեծ ապագայ է գուշակեր»<sup>66</sup>։ Դավիթ Դավթյանն աշակերտել է նաև մեկ այլ չեխ երաժշտի ջութակահար և կոմպոզիտոր Յան Կուբելիկին (1880–1940)։ Հետաքրքիր է, որ Դավթյանի մի մահախոսականում հայ հողվածագիրը նրան կոչել է «մեր Կուբելիկը»<sup>67</sup>։ Դավթյանը մի քանի անգամ ելույթներ

<sup>63</sup> Տես «Կոան», Երևան, 11.03.1912։

<sup>64</sup> Տես Փրակացի, Օրօգար Շեչիք հիացող մըն էր հայ երաժշտութեան և Կոմիտասի, «Արևելք», Ստամբուլ, 29.01.1934։

<sup>65</sup> Տես Հայաստանի Ե. Թարենցի անվան Գրականության և արվեստի քանդարան, Կոնստանտին Սարաջևի ֆոնդ, քիվ 298։

<sup>66</sup> Artemius, Թատրոն և երաժշտություն. «Մշակ», Թիֆլիս, 17.02.1908։

<sup>67</sup> Ըսի-րսա, «Կավորոշ», Կ.Պոլիս, 1.05.1911։

և ունեցել Պրահայում: Ավետիք Իսահակյանի վկայությամբ, «*նրան ամենից շատ սիրում էին արտասահմանում. օրինակի համար՝ երաժշտական Պրագայում*»<sup>68</sup>: Ի դեպ, Իսահակյանը 1923-ին Վենետիկում ունկնդրել է վերոհիշյալ Յան Կուբելիկի համերգը, այդ մասին հիշել «Լենինի մահվան տպավորությունը» գրվածքում:

Շևչիկի մոտ, Պրահայում, կատարելագործվել է նաև ջութակահար **Հայկ Կյուտենյանը** (1886–1972), որը նաև կոմպոզիցիա է ուսանել չեխ մանկավարժ **Վիտեզլավ Նովակի** (1870–1949) մոտ<sup>69</sup>: Ի թիվս եվրոպական տարբեր քաղաքների՝ Կյուտենյանը մենահամերգներով հանդես է եկել նաև Պրահայում:

Շևչիկի հայազգի ուսանողներից էր նաև ծնունդով վրադիկավկազցի **Բորիս Սիրպոն** (Սիրոբ, Սերոբյան, 1893–1967), որը հետագայում հայտնի երաժիշտ և ջութակի ուսուցիչ է եղել Ֆինլանդիայում և ԱՄՆ-ում:

1910 թվականին Պրահայի համալսարանի երաժշտության բաժինն է ավարտել ծնունդով շուշեցի **Սուրեն Առաքելյանը** (1887–1979). հետագայում երաժշտական գործունեություն է ծավալել Իրանում<sup>70</sup>:

Հայտնի է Պրահայում ուսանած ևս մեկ հայ ջութակահարի անուն. 1905 թվականին թիֆլիսահայ մամուլում տեղ է գտել մի ազդ. «*Ջութակահար (դիրիժոր sic) Պրագի երաժշտական ճեմարանը ատարտած՝ տալիս է դասեր ջութակի վրայ... հարցնել Պետրոս Տէր-Ասատուծատրեանին*»<sup>71</sup> (ընդգծումը մերն է): Եվս մեկ երաժշտական առնչություն 20-

<sup>68</sup> Իսահակյան Ա., Դաիր Դարբեան. «Հորիզոն», Թիֆլիս, 1.05.1911:

<sup>69</sup> Տե՛ս Հ. Կիտենևանի կոմցերտը, «Վտակ», Թիֆլիս, 1.04.1908: Յիցիկյան Ա., Հայկական ուղեղնային արվեստը, Երևան, 1977, էջ 134:

<sup>70</sup> Տե՛ս Լազարյան ժ. Տ., կազմ., Իրանահայոց հանրագիտարան. Անվանի իրանահայերի կենսագրականները, Երևան, 2012, էջ 347:

<sup>71</sup> «Աշակ», Թիֆլիս, 28.01.1906:

րդ դարի սկզբից. 1913-ին Բաքվում ելույթ ունեցած չեխ թավջութակահար **Բոհումիլ Միկոբայի** (1895 – °) համերգին հողվածով անդրադարձել է հայ ճանաչված երաժիշտ Անտոն Մալիլյանը<sup>72</sup>:

Հայ հասարակությունը մամուլի միջոցով պարբերաբար տեղեկացել է Արևելյան Եվրոպայի տարբեր ժողովուրդների, նաև չեխերի վերաբերյալ: Ականավոր հրապարակախոս Աբգար Հովհաննիսյանը 1877–1897 թթ. Թիֆլիսի «Փորձ» և «Արձագանք» պարբերականներում բազմիցս հրատարակել է Չեխոսլովակիայի պատմությանն առնչվող նյութեր, որոնցում նրա ուշադրությունը գրավել են մասնավորապես չեխ ժողովրդի դարավոր պայքարի դրվագներն օտար նվաճողերի դեմ, ազգային լեզվին քաղաքացիական իրավունքներ տալու ջանքերը: Չեխական նյութերի հրապարակումը հետապնդել է մեկ նպատակ՝ օսմանյան բռնապետության մեջ գտնվող հայ ժողովրդին ցույց տալ միասնական պայքարի այն ճանապարհը, որով ընթացել և արդյունքների է հասել չեխ ժողովուրդը<sup>73</sup>: 1877-ին «Փորձը» հրատարակել է «Վյաչեսլավ Հանկա» ծավալուն հողվածը՝ նվիրված չեխ ազգային-ազատագրական շարժման գործիչ Հանկային<sup>74</sup>: Իսկ 1898-ին Թիֆլիսի «Նոր-Դար» պարբերականն անդրադարձել է չեխ մեծ լուսավորիչ Ֆրանտիշեկ Պալացկիին<sup>75</sup>: «19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները արևելահայ վիպասանները, բատերազիրները, խմբագիրները, պատմաբանները և բանաստեղծները սկսեցին ընդօրինակել արևմտյան գրողների ողմանտիզմը՝ փառաբանելով հայրենասիրությունը, արդարությունը և ազատությունը: ...Բալկանների, Լեհաստանի և Բոհեմիայի իրենց սերնդակիցների պես

<sup>72</sup> Տե՛ս Մալեան (sic) Ա., Թաւջութակահար Միկոբայի համերգը, «Բազուի ձայն», Բազու, 8.03.1913:

<sup>73</sup> Այս մասին մանրամասն տե՛ս՝ Մխիթարյան Մ. Հ., Չեխ ժողովրդի ազատագրական պայքարի արտացոլումը հայ մամուլի էջերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1966, ք. 9, էջ 99-103:

<sup>74</sup> Տե՛ս անդ, էջ 99-100:

<sup>75</sup> Տե՛ս Ֆրանտիշեկ Պալացկի, «Նոր-Դար», Թիֆլիս, 12.06.1898:

նրանք նույնպես որդեգրեցին օտար տիրապետության պայմաններում ապստամբության և դիմադրության հայեցակարգը»<sup>76</sup>:

Այս ժամանակաշրջանում չեխերը մեկ անգամ չէ, որ դարձել են օրինակ հայ ժողովրդի համար՝ ամենատարբեր բնագավառներում: 1905-ին դերասան Գևորգ Չմշկյանը, խոսելով հայ թատրոնի վիճակի մասին, մասնավորապես նշել է. «Օրինակ վերցնենք փոքրիկ չէխ ազգին. որը գտնուելով միեւնոյն ճնշուած դրութեան մէջ Աստրիայում, միեւնոյն ձեռով ինչպէս հայերը, ստեղծեց իր համար թատրոնական բեմ և իրականացրեց նրա գոյութիւնը ակցիօներական ընկերութեան միջոցով և ներկայումս Պրագայի չէխական թատրոնը համարում է ի շարս եւրոպական լաւ անուն ունեցող թատրոնների»<sup>77</sup>: Տարիներ անց լրագրող, գրող Համբարձում Առաքելյանը մեկից ավելի անգամներ անդրադարձել է չէխական թատրոնին՝ որպէս դրական օրինակ հայրենակիցներին հիշեցնելով պետականություն չունեցող չեխերի ազգային առաջատար թատրոնի գոյության փաստը և մանրամասն ներկայացնելով Պրահայի թատրոնը<sup>78</sup>: Սկսած 1892 թվականից հայ մամուլում հազվադեպ սկսել են հրատարակվել նմուշներ չէխական գրականությունից<sup>79</sup> և նրա մասին<sup>80</sup>: 1892-ին Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում լույս է տեսել ժամանակի ականավոր չէխ գրողներից Սվյատոսլով

<sup>76</sup> Բռունության Ջ., Հայ ժողովրդի համառոտ պատմություն (ինագոյն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2012, էջ 261:

<sup>77</sup> Չմշկյան Գ., Հովվածների և թատերախոսությունների ժողովածու, կազմեց և խմբագրեց Յա. Խաչիկյանը, Երևան, 2008, էջ 233:

<sup>78</sup> Տե՛ս Առաքելյան Հ., Ազգային թատրոնի հարցը, «Մշակ», Թիֆլիս, 24.03.1917:

<sup>79</sup> Տե՛ս, օրինակ, Որբուհին. ժողովրդական երգ պոեմներու, թարգմ. հ. Ա. Ղազիկեան, «Բազմավեպ», Վենետիկ, 1900, Հոկտեմբեր-Նոյեմբեր, հատոր ԾԸ, էջ 495-496: Հանր Հայինգ. Ժայռեր (Բոհեմիայի ժողովրդական ասանդոթիոններից պատմութեամբ), թարգմ. գերմաներէնից Մ. Ժ. Մարտտեանի, «Լումայ», Թիֆլիս, 1903, ք. 6, էջ 35-53: Չէխական գրականութիւնը, Յ. Արբեա, Առաջին գիշերը մեռելի մօտ, թարգմ. Ս. Հաժեան. «Աշխատատոր», Թիֆլիս, 9-10, 14, 22-23.12.1920:

<sup>80</sup> Տե՛ս Ջարդարեան Ռ., Չէխ գրականութիւն, «Ազատամարտ» շաբաթաթերթ-յաւելում, Կ. Պոլիս, 25.10-7.11.1910, էջ 249-251, 1-14.11.1910, էջ 257-260 (ներկայացված է ժամանակին համբավ վայելող չէխ գրող Սվատոսլով Չելսը, որի անունը, սակայն, գրված է Յէխ ձևով):

Չեխի երկու պատմվածքը<sup>81</sup>: Չեխիայի ներկայի, ինչպես նաև չեխական դրական օրինակների վերաբերյալ հայ մամուլը հանդես է եկել տարբեր կարգի հրապարակումներով<sup>82</sup>: Այսպես, 1911-ին Թիֆլիսի «Կայծեր» պարբերականում թարգմանաբար հրատարակվել է Վ. Վասիլևսկու հոդվածը չեխ ժողովրդի և նրա կրթական համակարգի մասին<sup>83</sup>:

### Հարաբերություններ երկու նորանկախ հանրապետությունների միջև

1918 թվականի սեպտեմբերին Չեխիան, միավորվելով Սլովակիայի և Անդրկարպատյան Ռուսիայի հետ, հիմնել է անկախ Չեխոսլովակիայի հանրապետությունը<sup>84</sup>, որը ճանաչել են Անտանտի տերությունները: Ժամանակավոր կառավարության վարչապետ է դարձել չեխ ազգային պայքարի և անկախության մեծ ռահվիրա, պետական-քաղաքական գործիչ, փիլիսոփայական կրթությամբ Տոմաշ Գալլրիկ Մասարիկը (1850–1937)<sup>85</sup>: Ամիսներ անց, ժամանելով Պրահա՝ Մասարիկը կազմել է ազգային խորհրդարան և դիվանագիտական կապեր հաստատել տարբեր երկրների հետ: Հայ մամուլը, հենվելով միջազգային լրատվական ծառայությունների վրա, տեղեկություններ է հրատարակել նորակազմ պետության մասին: Թիֆլիսի «Մշակը»

<sup>81</sup> Տե՛ս **Չեխ Սենտապլյ (sic)**, Միստեր Պլումպոտլինգը Պրագայում, «Մուրճ», Թիֆլիս, 1892, էջ 1031-1037, Կոմսոսի Բոժենա, անդ, էջ 1040-1044:

<sup>82</sup> Տե՛ս, օրինակ՝ Չեխիայի սնանկությունը, «Բազուի ձայն», Բագու, 5.04.1913:

<sup>83</sup> Տե՛ս **Վասիլևսկի Վ.**, Չեխերի դպրոցական «Մտորիցա» ընկերությունը, «Կայծեր», Թիֆլիս, 15.01.1911:

<sup>84</sup> Անկախ Չեխոսլովակիայի ստեղծման վերաբերյալ առաջին թղթակցություններից մեկը հայ մամուլում տե՛ս **Թահմազեան Գ.**, Կլեմանսոն և Հայաստանը: Նուպար փաշային նամակը ֆրանսացի վարչապետին: Իզձօ-սլանները և չեխօ-սլովակները, «Երիտասարդ Հայաստան», Նիո Եօրթ, 21.08.1918:

<sup>85</sup> 1919-ին հայ մամուլում գրվել է, որ Մասարիկը «*Հայերու անձանօր չէ. քանզի իր մասին ժամանակաւ շատ գրած է ողբասցեսայ Եղիշէ Թօփճեան*» (Մարտենեան Ջ., Հայաստան և Պոհեմիա, «Ազգ», Պօսթըն, 25.09.1919): Յավոր, ակնարկած գրությունները մեզ չեն հանդիպել:

մասնավորապես գրել է. «Հիւս. Կովկասի թերթերը հաղորդում են, որ Չեխիայի անկախութիւնը օրերի խնդիր է: Պրոֆ. Մասարիկը դաշնակիցների հաւանութեամբ Պրագայում գումարում է չեխական պարլամենտ: Խօսում է, որ Կրամարժը լինելու է կառավարութեան նախագահ»<sup>86</sup>:

Հայերն առաջիններից են արձագանքել Չեխոսլովակիայի անկախութեանը: 1918-ի սեպտեմբերի 13-ին Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը Անտանտի պետութիւնների կողմից Չեխոսլովակիայի ճանաչման առթիվ հետևյալ շնորհավորական հեռագիրն է ուղարկել նրա ժամանակավոր կառավարութեանը՝

*«Սեպտ. 13, 1918*

*Չեխո-Սլովակներու Ազգային Խորհուրդին,*

*717, 14 փողոց, Ուաշինկթըն,*

*Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը իր սրտագին շնորհատրութիւնները կը յղէ ձեզի ձեր քաջարի ազգին անկախութեան իրատւոյնքի ճանաչման առթիւ, և կը մատչէ, որ ձեր ազնիւ ճիգերը յաջողութեամբ պատկուտին մեր մեծ Դաշնակիցներու բանակներու գործակցութեամբ»<sup>87</sup>:*

Վերոնշյալ Միութիւնը չեխոսլովակների ժամանակավոր կառավարութեան վարչապետ Մասարիկից ի պատասխան ստացել է հետևյալ նամակը.

*«Հոկ. 16, 1918*

*Հայ Ազգ. Միութիւն Ամերիկայի,*

---

<sup>86</sup> Չեխական պարլամենտ, «Մշակ», Թիֆլիս, 23.01.1919: Տես նաև: Չեխ-սլովակների պահանջը, «Մշակ», Թիֆլիս, 9.02.1919:

<sup>87</sup> Պաշտօնական, «Ազգ», Պոսթըն, 31.10.1918: Նույնը տես՝ Պաշտօնական գեկոյց, «Երիտասարդ Հայաստան», Նիւ Եորք, 2.11.1918:

*Հաճեցէք ընդունիլ իմ սրտագին շնորհակալութիւնները ձեր շնորհատրական հեռագրին համար: Մեր Ազգային բաղձանքներու յաջողութիւնը պիտի նշանակէ բոլոր փոքր և հարստահարուած ազգերու Դատին յաջողութիւնը: Ձեր տառապեալ ազգին ազատութեան և միացման համար կը տաժենք ամենաանկեղծ մաղթանքները:*

*Ձերդ ամենայն անկեղծութեամբ*

*Թ. Ս. ՄԱՍԼԻԻՔ (sic) »<sup>88</sup>:*

1918 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ֆիլադելֆիայում Տոմաշ Մասարիկի ղեկավարությամբ տեղի է ունեցել ճնշված ժողովուրդների կոնֆերանսը, որին, ըստ հրեա պատմաբան Յաիր Աուրոնի, հայերը մասնակցել են հրեա պատգամավոր, Հայ դատի պաշտպան Իտամար Բեն Ավիի առաջարկով («*հենց իր առաջարկով են «կոնֆերանսի մասնակիցների կազմում ընդգրկվել դժբախտ հայ ժողովրդի ներկայացուցիչները, որոնց մասին Մասարիկը մոռացել էր»<sup>89</sup>*):

Չեխաբնակ Նշան Մարտիրոսյանը գրավոր ցանկություն է հայտնել երկու երկրների շուտափույթ մերձեցման վերաբերյալ: «*Ցանկալի է, որ Հայաստանի և Չեխո-Սլովաքեան հանրապետությունները կարելի եղածին չափ շուտ առեստրական և բարեկամական յարաբերութեան մէջ մտնեն և այս երկու երկիրներուն մէջ առեստրական գրասենեակներ բանալով՝ հաստատեն հաղորդակցութիւններ, որոնք կրնան թէ՛ Հայերուն և թէ՛ մեր Չեխո-Սլովաք եղբայրներուն օգտակար ըլլալ: Դանուբ գետը, որ շատոնց է ի վեր նաւարկելի է, արդէն միջազգայնացուած է, և Չեխո-Սլովաքներն ալ իրաւունք ունին իրենց նաւերով մին-*

---

<sup>88</sup> Պաշտօնական գեկոյց, անդ:

<sup>89</sup> Աուրոն Յ., Անընդունելի անտարբերություն. սիոնիզմը և Հայոց ցեղասպանությունը, Երևան, 2013, էջ 216:

չեւ Սեւ ծով գալու Դանուբի ճամբով: Հետեւաբար ապագային կարելիութիւնը և առիթը պիտի ունենանք անոնց հետ առեւտրական կապակցութիւն հաստատելու»<sup>90</sup>:

Չեխոսլովակների՝ անկախություն ստանալուց հետո տարբեր երկրների հայեր սկսել են նոր կարգի համեմատություններ կատարել այդ երկրի և հայության միջև<sup>91</sup>: «Չեխերը Աւստրիոյ Հայերն են,— գրել է Վիեննայում հաստատված մտավորական Չենոք Սուրենյանը:— Դարերու շրջանին մէջ մեզի մնան կաշկանդուած ժողովուրդ մը՝ տուկուն և գործունեայ, գեղարուեստասէր և շինարար, քաղաքակրթութեան ամենաբարձր ոլորտներուն հասած մարդիկ հասցուցած ազգ մը, որ տիեզերական պատերազմին ամբողջ տեսողութեան միջոցին չկորսնցուց բնաւ իր հաւատքը՝ իր անկախութեան ապահովումի մասին: Վեց միլիոն հաշուող այս ժողովուրդը, ճիշդ է, Զիւրտ աշիրէթներու հարստահարութիւններ չի ճանչցաւ, բայց Աւստրիական բռնակալութիւնը Տաճիկ ռեժիմէն շատ ալ չէր տարբերեր»<sup>92</sup> (վերջին կարծիքն, անշուշտ, ավելի քան չափազանցված և անընդունելի է): Եվ ապա՝ «Մենք՝ Հայերս, քիչ ատենէն պիտի կոչուինք անկախ ազգերու ընտանիքին մէկ անդամը ըլլալու: Անմոռանալի Վարուժան կը գրէր տասը տարի առաջ. «Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրագօղ շղթային մէկ ոսկի օղակն ըլլալու համար»: Հայարտ փափաք, փաղաքշական իղծ: Բայց ո՞ր գտնել մեր Մազարիքները...»<sup>93</sup>:

Իրականում սույն համեմատությունները դիպուկ չեն, և ցեղասպանված հայ ժողովուրդն ի վիճակի չէր Մասարիկներ ունենալ, ուստի և նրա ձեռք բերած անկախությունը նույնպես եղավ չափազանց կարճատև ու պայմանական: Սակայն ներաստեղծ Չեխոսլովակիան հա-

<sup>90</sup> Մարտիրոսեան Ն. Ա., Հայաստան և Չեխաստան, անդ:

<sup>91</sup> Տե՛ս, օրինակ, Նուրիան, Օրինակ ամենք Չեխո-Սլովաքներէն, «Պահակ», Պոսթըն, 13.09.1918:

<sup>92</sup> Ստրէնեան Ջ., Հայաստան և Պոնտոսիա, անդ:

<sup>93</sup> Անդ:

յության համար մշտապես եղավ օրինակելի երկրի տիպար: Հայ մամուլը երբեմն հրատարակել է նորաստեղծ պետությանը և նրա ժողովրդին ներկայացնող հայ և օտար հեղինակների գրած հոդվածներ: (Չնայած երբեմն էլ հայ հոդվածագիրները չափազանցության են հասել պատեհ թե անպատեհ առթիներով զուգահեռներ անցկացնելով հայերի և չեխոսլովակների միջև): Այսպես, 1921-ին պոլսահայ մամուլում լույս տեսած Հովհաննես Հակոբյանի հոդվածը ներկայացրել է Չեխոսլովակիայի՝ որպես անկախ երկիր և ազգ կազմավորման կարևոր իրողությունները (հողային հարցը, կազմակերպված ներգաղթն Ամերիկայից, ճարտարարվեստական փորձարկումները, ազգային գաղափարը և այլն<sup>94</sup>): Այս առթիվ հատկանշական են Ամերիկայի Հայ Ազգային Միության «Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագիր Ստեփանոս Սապահ-Գիլեանի՝ հայերի և չեխոսլովակների քաղաքական պայմանները վերլուծող հոդվածի ուշագրավ ընդհանրացումները. «Չեխո-Սլովակների պաշտպան պետական շրջանները և հրապարակագիրները, այդ քաջ և արժանատր ազգի անկախութեան տեսակետից, իրենց գլխատր թեզերից մէկն էլ այն են արել, որ այս ազգը, որպէս անբողջութիւն, պատերազմական դրութեան մէջ է գտնուած եղել տիրող կառավարութեան՝ Աւստրո-Հունգարիայի դէմ: Բն մի առ մի վերյիշում են ո՛չ միայն Չեխո-Սլովակների խաղացած դերը պատմութեան մէջ, նրանց մշակութային ազգ լինելը, այլև թէ ինչ դեր են կատարել ռազմադաշտերի գանազան ճակատներում՝ թէ՛ Արեւելեան և թէ՛ Արեւմտեան: Սրա հետ միասին չեն մոռանում արտացոլացնելու հոգեկան այն դժգոհ վիճակը, ասպտոսմբելու ցանկութեան այն տրամադրութիւնը, որ այս բոսպէխ ունին Չեխո-Սլովակները իրենց մայր երկրի մէջ՝ ճնշողի լուծի տակ կրած: ....Եթէ մի ազգ կայ, որ դարերի ընթացքում պատերազմական վիճակի մէջ է գտնուել իր տիրապետողի դէմ՝

<sup>94</sup> Տես Յակոբեան Յովհ., Անկախ Չեխո-Սլովակիա. նոր ազգի մը կազմաւորումը. ազատագրուած ժողովրդի մը արժանատր առաջնորդը, «Լերջին լուր», Կ. Պոլիս, 7.05. 1921:

դա Հայ Ազգն է, իր ամբողջութեամբ: Իսկ մեր և Թուրքի միջև պատերազմական դրութիւն ստեղծուել է ո՛չ թէ այս պատերազմի ընթացքում. մանաւանդ վերջին օրերում, ինչպէս որ Չեխօ-Սլովակների փոխ-յարաբերութիւնն է եղել. այլ մերը գալիս է էլ աւելի հին բուականներից: Առ նուազն 32 տարի կայ, որ Հայ Ազգը ո՛չ թէ կրատրական, մշակութային կռուի է բռնուել իր հարստահարող, կործանող Պետութեան-Ազգի դէմ, այլ ներգործական: ...Այս իրողութիւններն է, որ մեր բարեկանները բնաւ չեն մատնանշում. երբ համանման իրողութիւններ զովասանքով վեր են հանում Չեխօ-Սլովակների կեանքից: ...Բոլոր նրանք, որոնք Չեխօ-Սլովակների և Իրօ-Սլաւների արդար Դատն են պաշտպանում, մեր լիակատար գնահատանքն ունեն և գտնուում են ուղիղ թէ՛զի վրայ: Բայց երբ հարցը դառնում է Հայերի, Հայկական Դատի վրայ, այդ թէ՛գերը մէջտեղ չեն քաշում և ուժեղ կերպով պաշտպանում. եղածներն էլ այնքան անզոյն, երկչոտ միտումով են երեւան գալիս, որ լիակատարութեան դրոշմ չեն կրում իրենց վրայ»<sup>95</sup>:

Նույն Ամերիկայի Հայ Ազգային Միությունը, ի դեմս Ստեփանոս Սապահ-Գյուլյանի, նամակ է ստացել Ճապոնիայում բնակվող ազգային գործիչ, հրապարակախոս Դիանա Աբգարից, որտեղ նույնպես համեմատություններ կան չեխոսլովակների հետ: Աբգարը մասնավորապես գրել է. «Պտուղն ծառից հասած կախ է, միայն Հայեր ձեռքեր ձգեն և վազեն. ինչո՞ւ չէք ձեռքեր ձգում և վազում, ինչո՞ւ ձեռքեր կցած նստած էք: Չէխերն իրեանց ազատութիւն հռչակեցին Ամերիկայի մէջ և իրեանց դրօշակն բացան, բայց Հայեր պարապ նստին. թէ՛ւ ժամանակն շարժելու հասած է: Մինչեւ ո՞ր աստիճան պարապ նստիք. մի՞թէ Հայն իրաւունք չունի իր Ազատութեան, ինչպէս միւս ազգեր. մի՞թէ Հայաստան Հայի հարազատ Հայրենիքն չէ. ուրեմն ինչո՞ւ չէք Հայաստանի ազատութիւն պահանջում Ամերիկայի մէջ, ինչպէս որ Չէխերն արեցին: Պահանջեցէք Հայ Ազգի Ազատութիւնն և դրօշակն բացէք. այժմ հասեալ է ժամն, մի՞ք կորցնել աջողակ պատեհութիւնն», որին ի

<sup>95</sup> Սապահ-Գյուլան Ս., Սեր բարեկամների պաշտպանողականների առթիւ. «Լեռնասարդ Հայաստան», Նիւ Եօրք, 26.10.1918:

պատասխան խմբագիրը գրել է. «Ազնի Տիկին, Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը ներքին գործերով սաստիկ զբաղուած ըլլալով՝ ժամանակ չունի Հայաստանի Անկախութեան մասին մտածելու...: Չէխո-Սլոնները կրնային ընել, որովհետեւ, իրենց Ազգի Անկախութեան խնդրէն որոս ուրիշ զբաղում չունէին»<sup>96</sup>, ինչն, անշուշտ, թույլ պատրվակ է...

Չէխոսլովակիայից օրինակ վերցնելու մի սպացույց էլ 1920 թվականին Չէխոսլովակիայի սահմանադրության մախազծի հիմնական կետերի թարգմանաբար հրատարակումն է Երևանի «Յառաջ» օրաթերթում<sup>97</sup>:

Ուշագրավ է, որ հայերի և չէխոսլովակների միջև զուգահեռներ կատարել են մաս ոչ հայերը: Այսպես, ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանը «Ինֆորմասիոն» թերթի 1918-ի հոկտեմբերի 30-ի համարում հրատարակած «Հայաստանը պատերազմիկ և ինքնավար» հոդվածում պահանջել է, որ տերությունները հայերին շնորհեն այն, ինչ շնորհեցին չէխոսլովակներին և հարավսլավցիներին<sup>98</sup>: Իսկ Լոնդոնի «Թայմսը», 1919 թվականի օգոստոսի 13-ին խոսելով դաշնակիցներին հայերի ցուցաբերած օգնությունների մասին, մասնավորապես նշել է. «Բոլոր փաստարկները, որոնք կապում են Լեհաստանը, Չէխո-Սլովակիան և Սերբիան ապագայի հետ կապված մեր քաղաքական հույսերին, միևնույն չափով վերաբերում են մաս Հայաստանին», նշելով մաս, որ ինչպես Լեհաստանում և Չէխո-Սլովակիայում, այնպես էլ Հայաստանում կարող են արդարացիորեն մեղադրել դաշնակիցներին, որոնք, ԱՄՆ-ի պես, Հայկական հարցի կարգավորման մեջ ունեն պատասխանատվության իրենց բաժինը<sup>99</sup>:

---

<sup>96</sup> Աղաբեգ Աբգար Գիանա, Նամակ խմբագրութեան, «Երիտասարդ Հայաստան», Նի Եօրթ, 25.01.1919:

<sup>97</sup> Տեն Չէխո-սլովակեան սահմանադրութիւն, «Յառաջ», Երևան, 3.02.1920:

<sup>98</sup> Տեն «Վերածնունդ», Փարիզ, թիվ 21-22, 14.11.1918, էջ 445:

<sup>99</sup> Տեն Կуманян М., Дипломатическая история Республики Армения 1918–1920 гг., Ереван, 2012, էջ 180-181:

Այս ժամանակաշրջանին է վերաբերում մի ուշագրավ ծրագիր հայ-չեխական հնարավոր ռազմական համագործակցության վերաբերյալ: 1918-ի գարնանը հայ հանրային գործիչ Լիպարիտ Նազարյանցը և բժիշկ, ազատագրական շարժման գործիչ Հակոբ Չավրիկը բանակցելու են մեկնել Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հետ և Մոսկվայում հանդիպել են արտաքին գործերի ժողկոմ Լև Տրոցկիին: Վերջինիս Նազարյանցը հիշեցրել է հայերին օգնելու տված խոստումի մասին: Տրոցկին առաջարկել է գործնական քայլերի մի ծրագիր ներկայացնել իրեն: Այդ ժամանակ չեխոսլովակների բանակը (շուրջ 45.000 մարդ) պատրաստվել է Հեռավոր Արևելքից հայրենիք վերադառնալ: Բանակի վարչական մարմնի մեջ եղել է Նազարյանցին ծանոթ մի ռուս, որը վարչապետ Ալեքսանդր Կերենսկիի օրոք պաշտոնավարել է ռազմական նախարարությունում: Ինչպես գրել է Նազարյանցը, ինքը հարցրել է այդ ռուս ծանոթին, թե ո՞րն է չեխերի անմիջական նպատակը: «Տուն երթալ,-- պատասխանեց,-- բայց եթե յարմար գործ մը լինի, կարող են և մնալ»: «Իսկ թիւրքերու դէմ կուելու չե՞ն երթար»: «Ինչո՞ւ չէ. իրենց փափագն է՝ օգտակար լինել դաշնակիցներուն, կուելով ընդհանուր բշնամիին դէմ: Ու քանի որ թիւրքերն ալ դաշնակիցներու բշնամիներն են, վստահ եմ, որ չեխ վարիչները չեն մերժեր ուղարկելու բանակը Կովկաս: Միայն թէ բուլշեիկները չարգիլէին ու միջոց տային Կովկաս անցնելու»: «Իսկ եթէ Տրոցկին համաձայնի՞»: «Այն ատեն գործը եղած է»: Պայմանադրուեցանք, որ ան խօսի չեխերու հետ, իսկ ես՝ Տրոցկիի: Փութացի վերջինիս մօտ ու հարցուցի. թէ ի՞նչ են մտադիր անելու չեխերու նկատմամբ: «Տուն կուզեն երթալ,-- ասաց,-- բայց մեծ դժարութիւններ կը պատճառեն մեզի»: Բացատրեցի իրեն մեր ծրագիրը, ու Տրոցկի հաւանութիւն տուաւ: «Ինչպէս գիտեք,-- նկատեց ան,-- ես կուզէի. որ կովկասեան ճակատը պաշտպանէր թիւրքերու դէմ, ու եթէ չեխերու միջոցով այդ յաջողի, շատ գոհ կը լինեմ»<sup>100</sup>:

<sup>100</sup> Լ. Ն., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և խորհրդային իշխանութեան միջև համաձայնութեան փորձեր, «Իրօշակ», Աթէնք, Օգոստոս-Սեպտեմբեր, 1928, էջ 232:

Տրոցկին, լինելով պատերազմը շարունակելուն կողմնակից և ջմբուցելով, որ այլևս անհնարին է պայքարել գերմանացիների դեմ ռուսական ճակատում, հավանաբար ցանկացել է պահպանել զոհե կոնկասյան ճակատը, մանավանդ որ դա պիտի բուշելիկներին ազատեր չեխերի պատճառած «մեծ դժվարություններից»: Մի քանի օր հետո Ազգային Խորհրդի հրահանգով Նազարյանցն ուղևորվել է Բեռլին: Մեկ ամիս անց վերադառնալով՝ իմացել է, որ չեխերն անցել են Վոլգայի շրջանը, և Տրոցկիի ակնարկած դժվարություններն արդեն սկիզբ են առել: Չեխական բանակի՝ հայերին օգնության հասնելու ծրագիրը հոյս է ցնդել:

Նորանկախ Չեխոսլովակիան, լինելով արդյունաբերական երկիր, միշտ որոնել է նոր և տնտեսապես թույլ ժողովուրդներ՝ նրանց հետ առևտրական հարաբերություններ մշակելու նպատակով: Այդպիսով, Չեխոսլովակիան դարձել է առաջին երկիրը, որը Հայաստան է ուղարկել իր տնտեսական ներկայացուցիչներին՝ հետազոտելու տնտեսական համագործակցության հնարավորությունները:

Չեխոսլովակյան կառավարության ուշադրությունը Հայաստանի հանդեպ սկսվել է Կովկասում գտնվող չեխական տեսչության մայր ֆր. Իտիլիայի՝ 1920-ի փետրվարի 15-ին Թիֆլիսից Չեխոսլովակիայի արտգործնախարարությանը հղած նամակից: Այնտեղ մասնավորապես նշված է, որ Չեխոսլովակիայի կառավարությունը պետք է ուշադրություն դարձնի Հայաստանի հետ դիվանագիտական և առևտրական հարաբերությունների հաստատման վրա, քանի որ Հայաստանում կան իրենց երկրին անհրաժեշտ բնական հումքեր, ինչպես նաև Հայաստանը կարևոր է որպես Պարսկաստանի հետ տարանցիկ երկիր: Իտիլիայն առաջարկել է Երևանում բացել չեխական դիվանագիտական ներկայացուցչություն, որը լիազոր կլինի նաև Բաքվի համար:

Պրահայում գործող Չեխոսլովակիայի կենտրոնական տնտեսական հանձնաժողովը, որը մեծ ծրագրեր է մշակել գյուղատնտեսության

և լեռնային արդյունաբերության ոլորտներում, 1920-ի աշնանը Հայաստան է ուղարկել բանկիր, առևտրական Յարոսլավ Կունին և նրա տեղակալ գյուղատնտես Սլեզակին՝ տեղի դաշտն ուսումնասիրելու և հնարավոր կապեր հաստատելու առաքելությամբ: Նրանց գալու նախօրեին Հայաստանի պաշտոնական օրաթերք «Յառաջը» ծանուցել է. «Երեւան է գալիս Չեխո-Սլովակիայի Հանրապետութեան առևտրական պատուիրակութիւնը, որի նպատակն է տնտեսական յարաբերութիւններ ստեղծել Հայաստանի հետ: Պէտք է ամէն կերպ ջանալ յարաբերութիւն ունենալ Չեխո-Սլովակիայի հետ, որը նոյնպէս Հայաստանի նման նոր է կազմակերպուում և իբրև նոր ազատագրած երկիր, իր շատ գծերով նման է Հայաստանին: Չեխո-Սլովակիայի պատուիրակութիւնը առաջարկութիւն է բերում ոչ միայն առևտրական յարաբերութիւններ ստեղծելու նկատմամբ, այլ և պատրաստակամութիւն է յայտնում տալ Հայաստանին գործարանային կեանքի մասնագէտներ, նպաստել գործարանային կեանքի զարգացման և նոյնիսկ հիմնել Հայաստանում մի Չեխո-Սլովակեան գաղութ, երկրի տնտեսական ուժերը զարգացնելու համար: Չեխո-Սլովակները նպատակ ունեն յարաբերութիւնների մէջ հնարատր չափով խուսափել սպեկուլեատիւ էլէսէնտներից»<sup>101</sup>:

Կունը և Սլեզակը Հայաստան են ժամանել 1920 թվականի սեպտեմբերի 16-ին, զննցքով, Մոսկվայից վերադարձող Հայաստանի պատվիրակներ Լևոն Շանթի, Հ. Տերտերյանի և Լ. Չարաֆյանի հետ միասին<sup>102</sup>: Հաջորդ օրը նրանք հանդիպում են ունեցել արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանի և ֆինանսների նախարարի օգնական Շաթիրյանի հետ<sup>103</sup>: Հայաստանում նրանք մանրամասն ուսումնասիրել են երկրի տնտեսական ներուժը, գյուղական կյանքը, արտադրությունը: Երևանից բացի չեխ պատվիրակները եղել են նաև

<sup>101</sup> Չեխո-Սլովակիայի պատգամատրութիւնը, «Յառաջ», Երևան, 15.09.1920:

<sup>102</sup> Տե՛ս Լրատու, «Յառաջ», Երևան, 16.09.1920:

<sup>103</sup> Տե՛ս Լրատու, «Յառաջ», Երևան, 17.09.1920:

Կարսում և Կադավանում: Այցելելով «Յառաջ» օրաթերթի խմբագրություն՝ նրանք հայտնել են, որ չնայած ծանր պայմաններին՝ երկրում նկատելի է եռուն ստեղծագործական աշխատանք<sup>104</sup>: Նրանք բացատրել են, որ Չեխոսլովակիայի վերջնական ազատագրումից հետո երկիրը ծրագրել է կապեր հաստատել բոլոր երկրների հետ՝ նաև այդ կերպ տարածելով և ամրապնդելով իր անկախությունը: Իսկ Չեխոսլովակիայի կենտրոնական տնտեսական հանձնախմբի նպատակն է եղել համագործակցական (կոոպերացիոն) հիմունքներով և միջոցներով, արդյունաբերական կոլեկտիվ զարգացմամբ բարելավել ժողովրդի տնտեսական դրությունը: Հանձնախումբը, մասնաճյուղեր ունենալով բազմաթիվ երկրներում, մտադիր են եղել մեկն էլ բացել Երևանում, որ կզբաղվի ապրանքների և աշխատուժի փոխանակմամբ, Հայաստան ուղարկել չեխ մասնագետների և չեխական դպրոցներում կրթության հնարավորություն տալ հայ երիտասարդներին (մասնավորապես՝ լեռնային արդյունաբերության բնագավառում)<sup>105</sup>: Հայաստանի և Չեխոսլովակիայի միջև տնտեսական հարաբերություններ հաստատելու հարցը քննվել է Հայկոոպում Կունի և Սլեզակի հետ կայացած հանդիպման ժամանակ, որին մասնակցել են Հայկոոպի վարչությունը, ֆինանսների նախարարությանը կից կոոպերացիոն բաժնի վարիչ Ա. Վանցյանը և Շիրակի վարչության անդամ Առաքելյանը: Ծրագրվել է, որ Չեխոսլովակիայի կենտրոնական տնտեսական բաժանմունքը ասյրանքափոխանակությունը կիրականացնի Հայկոոպին կից և նրա միջոցով զարկ կտրվի արդյունաբերությանը, Չեխոսլովակիան Հայաստան կուղարկի մեքենաներ, տեխնիկա, կիմնի գործարաններ և կհաստատի մի փոքր չեխոսլովակյան համայնք: Առաջարկվել է Հայաստան ներմուծել շաքար, գյուղական մանուֆակտուրա, կոշիկեղեն, ապակեղեն, երկաթեղեն, իսկ Հայաստանից Չեխոսլովակիա՝ հում

<sup>104</sup>Տե՛ս Չեխո-Սլովակիայի ներկայացուցիչները «Յառաջ»-ի խմբագրատանը, «Յառաջ», Երևան, 30.09.1920:

<sup>105</sup>Տե՛ս Մ. Չեխո-Սլովակները Հայաստանում, «Յառաջ», Երևան, 18.09.1920:

նյութեր, չոր միրգ, աղ և այլն<sup>106</sup>: Հոկտեմբերի 3-ին կնքվել է առևտրական համաձայնագիր Չեխոսլովակիայի և Հայաստանի կառավարությունների միջև<sup>107</sup>:

Չեխսլովակիացիները Երևանից Թիֆլիս են մեկնել հոկտեմբերի 8-ին՝ բժիշկ Իվան Աթաբեկյանի ուղեկցությամբ: Հայաստանի նախարարների խորհրդի նախագահի կարգադրությամբ Երևանի ոգելից խմիչքների «Արարատ» գործարանը նրանց է տրամադրել 60 շիշ հայկական խմիչք՝ Չեխոսլովակիայի նախագահ Մասարիկին հանձնելու համար: Որոշվել է, որ Չեխոսլովակիայի կենտրոնական տնտեսական հանձնաժողովի փոխլիազոր Սլեզակն այդուհետ հաճախ պիտի ճանապարհորդի Հայաստան, ուստիև նրան պետք է մուտքի դյուրություններ տալ: Չեխսլովակիացիներն իրենց հետ տարել են նաև Հայաստանի արտգործնախարար Համո Օհանջանյանի ֆրանսերեն նամակը նախագահ Մասարիկին՝ գոհունակություն հայտնելով չեխական տնտեսական առաքելության վերաբերյալ: Ծրագրել են մեկ և կես ամիս անց իրենց ընկերության բաժանմունքը բացել Երևանում<sup>108</sup>:

Ցավոք, հոկտեմբերի 3-ին կնքված առևտրական համաձայնագիրը Չեխոսլովակիայի և Հայաստանի կառավարությունների միջև ամիսների անց երկրում իշխանությունը նվաճած բոլշևիկները պիտի համարեին իրականությանը չհամապատասխանող և կասեցնեին դրա իրագործումը:

Այս ժամանակաշրջանում ուշագրավ է Հայաստանի Հանրապետության հարաբերությունները չեխերի հետ... Հեռավոր Արևելքում: 1920-ի սկզբին Հեռավոր Արևելքի հայությունը ձեռնամուխ է եղել հանգանակություններ հավաքելու կարիքի մեջ գտնվող հայրենիքի հա-

<sup>106</sup> Տե՛ս: Ղարախանեան Պ., Կօօպերատիվ խորհրդակցութիւն, «Յառաջ», Երևան, 19.09.1920:

<sup>107</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 111, ք. 11-13:

<sup>108</sup> Տե՛ս Ա., Չեխո-Սլովակիայի պատվիրակները մեկնեցին, «Յառաջ», Երևան, 9.10.1920: Տե՛ս նաև՝ Առևտրական դաշինք Չեխո-Սլովաքիոյ հետ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 7.11.1920:

մար: 1920-ի հունվարին Օմսկի հայերը տեղի չեխերի օգնությամբ ապահովել են գնացքի երկու վագոն (մեկ մարդատար և մեկ ապրանքատար) Հայաստան մեկնելու համար՝ դրանցից մեկի մեջ տեղավորելով չեխերից գնված հագուստեղենը, մյուսի մեջ՝ մի քանի հայ ընտանիքների: Գործը ղեկավարող իրավաբան, հանրային գործիչ Գրիգոր Չամոյանը, հասնելով Խարբին՝ գործնական հանդիպումներ է ունեցել տեղի տարբեր երկրների պետական ներկայացուցիչների, նաև՝ չեխոսլովակյան ներկայացուցիչ բժիշկ Կլոսի հետ<sup>109</sup>:

Երևանցի առևտրական Գեղամ Ամատունին, որը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաստատվել էր Վիեննայում, 1920-ի հունիսին այցելել է Պրահա՝ այնտեղ «Հայ-չեխական առևտրական ընկերություն» հաստատելու մտադրությամբ: Ընկերությունը պետք է զբաղվեր Հայաստան չեխական ապրանքներ արտածելով և հայկական ապրանքատեսակներ ներմուծելով Չեխոսլովակիա: Այդ առթիվ Ամատունին 1920-ի սեպտեմբերի 14-ին Վիեննայից նամակ է գրել Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին՝ նշելով, որ գրեթե բոլոր պետություններն էլ առևտրական գրասենյակներ ունեն Պրահայում, ուստիև իրենք պատրաստ են «Հայ-չեխական առևտրական ընկերության» գրասենյակը Պրահայում հաստատել հայաստանյան կառավարության առաջարկած ձևով՝ չժանրանալով Հանրապետության վրա, այլ ընդհակառակը, նրա շահերը պաշտպանելու նպատակով: Ամատունին նաև վկայել է, որ Չեխոսլովակիայում դեռևս կան հայ գերիներ, որոնք ծանր դրության մեջ են և փափագում են հայրենիք վերադառնալ: Նույն բովանդակությամբ նամակ Ամատունին 1920-ի սեպտեմբերի 16-ին գրել է արտագործնախարար Համո Օհանջանյանին: Միաժամանակ, Իվան Աբաբեկյանը և Գ. Տեր-Պետրոսյանը պետական ատյաններին են դիմել Պրահայում

---

<sup>109</sup> Տե՛ս **Յովհաննեսնց Խաչատր** (sic). Հայկ. Հանրապետութեան ներկայացուցիչը Սիբիրում և Տայր. Արեւելքում, «Ասպարեզ», Ֆրեզո, 4.06.1920:

Հայաստանի հյուպատոս ունենալու հարցով: Նշված անձանց տեղեկացվել է, որ դեռևս վաղաժամ է Չեխոսլովակիայում հայկական հյուպատոս ունենալը. դեռ չեն ճշտված այդ երկրի հետ Հայաստանի տնտեսական շահերը, չկան կանոնավոր դիվանագիտական հարաբերություններ<sup>110</sup>: Նկատենք, որ Չեխոսլովակիան 1920-ի օգոստոսի 10-ին երել է Սևրի դաշնագրի ստորագրողներից մեկը, դրանով իսկ իրավական կերպով (*de jure*) ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը, սակայն դիվանագիտական կապեր տակավին հաստատված չէին, ինչը կատարվել է մեկուկես ամիս անց, երբ 1920 թվականի հոկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Գերմանիայի, Ավստրիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի և Լեհաստանի հյուպատոս է նշանակել հայազգի արևելագետ, հանրային գործիչ Ջեյմս Գրինֆիլդին (1873–1939)<sup>111</sup>: Սակայն դրանից մեկ ամիս անց Հայաստանում հաստատվել են խորհրդային կարգեր, և հայ-չեխական պետական կապերի զարգացումն ունեցել է բոլորովին այլ ընթացք:

1922 թվականի հունիսին Պրահայում կայացած Ազգերի լիգայի համաժողովին մասնակցել են հայկական պատվիրակության անդամներ Արշակ Չոպանյանը և Լևոն Կյումյուշկերտանը: Ընդհանուր խորհրդում հայերն ունեցել են երեք, իսկ համագումարում՝ հինգ ձայն: Հունիսի 8-ին հայկական պատվիրակության անդամներին ընդունել է չեխական կառավարության քարտուղարությունը: Չոպանյանը հանդես է եկել «Ջարդի քաղաքականությունը» վերնագրված ֆրանսերեն գեկուցմամբ<sup>112</sup>, որտեղ տարբեր երկրների պատվիրակներին ներկա-

---

<sup>110</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 596, արտաքին գործերի նախարարության՝ սեպտեմբերի 4-ին գրված նամակը:

<sup>111</sup> Տե՛ս. **Hovannisian Richard G.**, *The Republic of Armenia*, vol. III, Berkeley and Los Angeles, 1996, էջ 391:

<sup>112</sup> Ձեկուցման հայերեն շարադրանքը տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց 1, գ. 1245, ք. 13-19:

յացրել է թուրքերի իրականացրած հայերի բնաջնջման քաղաքականությունը: Նախքան Չեխոսլովակիայից հեռանալը՝ Չոպանյանը և Կյունյուշկերտանը մեկական ֆրանսերեն նամակ են հղել երկրի նախագահ Մասարիկին և նախարարների խորհրդի նախագահ, հետագայում՝ Չեխոսլովակիայի երկրորդ նախագահ Էդվարդ Բենեշին՝ հայտնելով իրենց հիացմունքը նորանկախ երկրի հանդեպ և այն համարելով խրախուսիչ հայերի համար<sup>113</sup>:

Հայ ժողովրդի զավակներն իրենց հերթին մոտիկից հետաքրքրվել են նորաստեղծ այդ պետության փորձով՝ հույսեր փայփայելով, որ այն կարող է մի օր օգտակար լինել անկախություն վերստացած հայության համար: Այսպես, հողվածագիր Սեպուհ Ստեփանյանը պոլսահայ մամուլում 1922-ին հանդես է Չեխոսլովակիայում հողային բարենորոգումների փորձի կիրառումը ներկայացնող ակնարկով<sup>114</sup>: Հետագա տասնամյակներին էլ հայ մամուլն ուշադրության կենտրոնում է պահել Չեխոսլովակիան՝ որպես տիպար նորաստեղծ երկիր, որի փորձը միանգամայն ուսանելի է այլ ժողովուրդների համար<sup>115</sup>:

1920 և 1926 թթ. չեխերենով լույս է տեսել Ավրորա (Արշալույս) Մարտիկանյանի «Հոգիների աճուրդը» նշանավոր գիրքը՝ Հենրի Կալոուսեկի անգլերենից կատարած թարգմանությամբ, իսկ 1922 թվականին Պրահայի գրական մի հանդեսում՝ ֆրանսագիր հայ հեղինակ Արմեն Օհանյանի (Սոֆյա Փիրբուդաղյան, 1887–1976) մանկության հուշերը պատմող մի գրվածք<sup>116</sup>:

<sup>113</sup> Այդ նամակները Պրահայի կոնֆերանսին առնչվող այլ փաստաթղթերի հետ տես ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1245:

<sup>114</sup> Տես Ստեփանյան Ս., Հողային բարենորոգումները նորակազմ պետություններում մեջ, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 3.02.1922:

<sup>115</sup> Տես, օրինակ, Հ. Գ., Չեխոսլովաքիա (անկախութեան բանահիմնգամեակին առիթ), «Ազդարար», Ստանպոլ, 18.12.1943:

<sup>116</sup> Տես Ohanian Armen. Vánoce strýce Ter-Barsegha. Topičův sborník. Literární a umelecký. t. 10, 1922, էջ 174:

## Առաջին հայերը Չեխիայում: Կարել Հանսա

Չեխիայի տարածքում հաստատված առաջին հայազգին հավանաբար եղել է իշխանուհի Աննա Լազարևան (1838–1888)՝ ռուսահայ ազնվական Լազարյան տոհմից: 1864 թվականին նա ամուսնացել է ավստրոհունգարական կոմս Վ. Ջեդլնիցկու՝ Յիլավա քաղաքի մերձակա Լուկա դոյակի տիրոջ հետ և իր հետ որպես օժիտ Մորավիա է տարել ընտանեկան գեղանկարչական հավաքածուի մի մասը: Այս մասին չեխական «Ռուդ պրավո» թերթի շաբաթօրյա հավելվածում 1982-ին հրապարակմամբ հանդես է եկել չեխ հեղինակ Կվետա Կրժիժովան՝ տեղեկացնելով, որ այդ հավաքածուում կան գործեր 19-րդ դարի ռուս հայտնի նկարիչներից (Բրյուլով, Օռլովսկի), որոնք պատկերում են տոհմի նշանավոր դեմքեր Հովհաննես Աղազարի Լազարյանին և Եկատերինա Հովհաննեսի Լազարյանին, ինչպես նաև Տուրգենևի և Դոստոևսկու ստեղծագործությունների առաջին հրատարակությունները<sup>117</sup>:

Իսկ երկրում հաստատված առաջին հայը հավանաբար եղել է Պապիկ (Բաբիկ) Գալիկյանը (°–1916), ծնունդով Խարբերդի Խուռնավիլ գյուղից: 1880-ականներին նա տեղափոխվել է Պրահա՝ որպես քարտուղար աշխատանքի անցելով Աթենքում և Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան, հուլանդա-հունական ծագումով կոմս Հայնրիխ ֆոն Քուդենհոլդ-Կալերգիի (1859–1906) մոտ: Շահելով կոմսի վստահությունը՝ Բաբիկ Գալիկյանը նրան ընկերակցել է բազմաթիվ երկրներ, հասել են մինչև Արգենտինա: Երբ 1892-ին Քուդենհոլդ-Կալերգին որպես դեսպան մեկնել է Ճապոնիա, Գալիկյանն ընկերակցել է նրան, որտեղ 1895-ին կոմսը կնության է առել Տոկիոյում բնակվող հնավաճառի դուստր Միցուկո Աոյամային (1874–1941), իսկ Գալիկյանը, իմանալով կնոջ մահվան մասին Խուռնավիլում՝ ամուսնացել է մի 15-

<sup>117</sup> Տե՛ս Բազիլյանց Աշոտ, Լազարյանների դիմանկարներն արտասահմանում, «Սովետական արվեստ», Երևան, 1984, թիվ 10, էջ 54-57:

ամյա ճապոնուհու հետ: Տոկիոյում ծնվել է նրանց որդին, որը տեսքով կատարյալ արմենոիդ է եղել<sup>118</sup>, սակայն նրա մասին ոչինչ հայտնի չէ. հավանաբար վաղ է մահացել: Այսպիսով, կոմս Քուդենհով-Կալերգին և Պապիկ Գալիկյանը եղել են առաջին եվրոպացիները, որոնց հետ ճապոնուհիներ են ամուսնացել: Այդ մասին մույնիսկ առանձին գիրք է հրատարակվել: Իրենց հերթին, այս կանայք Եվրոպայում մշտական բնակություն հաստատած առաջին ճապոնացիներից են: Վերադառնալով Չեխիա՝ չորսով հաստատվել են Ռոնսպերգ քաղաքում, որտեղ Գալիկյանը դարձել է կոմսի կալվածքների կառավարիչը, իսկ 1906-ին վերջինիս վաղաժամ մահից հետո Գալիկյանն է հոգ տարել նրա յոթ զավակներին: Նրանցից ավստրիացի քաղաքագետ, փիլիսոփա Ռիխարդ ֆոն Քուդենհով-Կալերգին (1894–1972) հետագայում դարձել է Եվրոպական Միության հիմնադիրներից և իր հուշագրքում նշել է, որ մի հայ, այսինքն՝ Գալիկյանը, եղել է իր խնամակալը: Գալիկյանը տարիների ընթացքում հավաքել է ճապոնական և չինական արվեստի գործեր, հայկական և օսմանյան գորգեր, որոնք այժմ պահվում են Բռնոյի Շվիլբերգ դղյակում<sup>119</sup>:

Գալիկյանի թոռն է չեխ-հայկական պատմամշակութային կապերի յուրահատուկ կամուրջ դարձած լեզվաբան, հայագետ, գերմանագետ և արևելագետ Նշան Մարտիրոսյանը (1894, Խարբերդի Խուռնավիլ գյուղ – 16.07.1966, Պրահա)<sup>120</sup>: Հաճախել է գյուղի նախակրթարանը: 1908–1910 թթ. Պոլսում ապրել է Եռլիշե արքեպիսկոպոս Դուրյանի տանը: 1910-ին մայրական պապի հրավերով մեկնել է Ռյոմսբերգ, որտեղ ստացել է գերմանական կրթություն: 1916-ին, Գալիկյանի մահից

<sup>118</sup> Տե՛ս Մարտիրոսեան Ն., Խարբերդի շրջանները՝ հայոց հնագոյն օրրանը, արտատպում «Խարբերդ և իր ոսկեդէն դաշտը» յուշամատենէն, 1957, էջ 38:

<sup>119</sup> Տե՛ս Վարդիվառեան Յ., Հանդիպումներ. գաղութները իրենց հայութեամբ, 4, Նիւ Երբզի. 2009, էջ 476:

<sup>120</sup> Նրա մասին տե՛ս Մարտիրոսեան Ն., Խարբերդի շրջանները՝ հայոց հնագոյն օրրանը, էջ 1-2: Բարսեղյան Լ. Ա., Նշան Մարտիրոսյան (մահախոսական), «Պատմաբանասիրական հանդէս», Երևան, 1966, ք. 4, էջ 301-302: Պատմամեծան Գր., Փրոֆ. Նշան Մարտիրոսեան (1894–1966), «Արև», Գահիրէ, 20.08.1966:

հետո, Նշանին իր հովանու տակ է առել կոմսուխի ֆոն Քուդենհոլդ-Կալերգին: 1918-ին ավարտել է դպրոցը և մեկնել է Կ. Պոլիս, որտեղ միայն հանդիպել է իր ընտանիքից միակ ողջ մնացած հորը: Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը նրան խորհուրդ է տվել խեթերեն սովորել: 1920-ին ընդունվել է Պրահայի Կառլովյան համալսարանի պատմագիտական (արևելագիտական) բաժինը, մասնակցել չեխ ականավոր արևելագետ, խեթաբանության հիմնադիր պրոֆեսոր Բեդրժիխ Հրոզնիի (1879--1952) դասընթացներին: 1924-ին մասնակցել է Հրոզնիի խեթագիտական արշավանքին, այդ առթիվ պոլսահայ մամուլում հրատարակել է հոդվածաշար Հեթիդահայ ծածկանվամբ<sup>121</sup>: 1927-ին Մարտիրոսյանը Հրոզնիի թելադրանքով հիմնել է Պրահայի համալսարանի հայագիտական բաժինը, որտեղ հայոց լեզու է դասավանդել 1931-ից<sup>122</sup>:

Մարտիրոսյանը հեղինակ է հայերեն, չեխերեն, գերմաներեն և անգլերեն պատմաբանասիրական բնույթի աշխատությունների («Հայերենի հարաբերությունը խեթերենի հետ»<sup>123</sup>, «Խարբերոյի շրջանները» և այլն): Խեթագիտական պրպտումներ է կատարել Ֆրանսիայում, Թուրքիայում և Եգիպտոսում. վերջինում բնակվել է 1933–1938 թթ.: Հայ իրականության այլևայլ կողմերին, Չեխոսլովակիային և հայ-չեխական կապերին նվիրված հոդվածներով և թրքակցություններով աշխատակցել է չեխական և հայկական գիտական ու զանգվածային մամուլին (Կահիրեի «Արև», «Չահակիր», «Կյանք և գիր», Ստամբուլի «Արևելք», Բեյրութի «Չարթօնք» և այլն)՝ հաճախ Փրակացի ծածկանվամբ<sup>124</sup>: «Արևելքում» Մարտիրոսյանը հրատարակել է Հրոզնիի և նրա

<sup>121</sup> Տե՛ս Հեթիդահայ. Չեխոսլովակիան գիտական առաջին արշաւանքը դէպի Արեւելք, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 4-8, 10-11.09.1924:

<sup>122</sup> Տե՛ս Հայագիտությունը Պրագայի համալսարանում, «Ալիք», Թեհրան, 24.04.1931:

<sup>123</sup> Տե՛ս Մարտիրոսյան Ն., Հայերէնի յարաբերութիւնը հեթերէնի հետ, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1924, ք. 9-10, էջ 413. 1926, ք. 7-8, էջ 369:

<sup>124</sup> Տե՛ս նրա հոդվածներից (մեծ մասամբ՝ Փրակացի ստորագրությամբ)՝ Չեխերը մեր մասին, «Արևելք», Ստամբուլ, 7.02.1933: Չեխոսլովակիա և իր ներկայ ճարտարաբանությունը, անդ, 25.02.1933: Հայ և չեխ հնագոյն և նորագոյն յարաբերութեանց մասին, անդ, 22-23.05.1933: Լուրեր Չեխաստանէն, անդ, 4.06.1933: Փրակայի քատրոնը

խեթագիտական աշխատությունների վերաբերյալ երկու ուսումնասիրություն,<sup>125</sup> իսկ Բոսթոնի «Հայրենիքում» հրատարակած ծավալուն հոդվածաշարով անդրադարձել Հրոզնիի՝ Փոքր Ասիայում կատարած հնագիտական պեղումներին<sup>126</sup>: Մարտիրոսյանն ակտիվորեն աշխատակցել է նաև Կահիրեի «Ազատ միտք» պարբերականին<sup>127</sup>, որի՝ 1936 թվականի հոկտեմբերին լույս տեսած մի համար գրեթե ամբողջությամբ վերաբերվել է Չեխոսլովակիային, նրա պատմությանն ու մշակույթին (բոլոր հոդվածների հեղինակը, բնականաբար, եղել է Նշան

---

(ասիական պարերու ներկայացում չեխ արուեստագետի մը կողմէ), անդ, 19.09.1933: Չեխոսլովաքիոյ ջերմուկները, անդ, 17.08.1933: Փրակայի ցուցահանդէսը, անդ, 27.08.1933: Ակնարկ մը չեխ նորագոյն գրականութեան վրայ, անդ, 14-15.10.1933: Չեխոսլովաքիոյ համրապետութեան տարեդարձին առթիւ, անդ, 28.10.1933: Չեխոսլովաքիոյ տեսակէտը դաշնագրերու վերաբնութեան մասին, անդ, 20.11.1933: Փրակայի չեխ ազգ. քատրոնը և հայ արուեստագէտներ, անդ, 30.11.1933: Փոքր համաձայնութեան Փրակայի համաժողովը, անդ, 16.01.1934: Չեխոսլովաքիոյ ճարտարարուեստը և Փրակայի գարնան ցուցահանդէսը, անդ, 19.02.1934: Չեխոսլովաքիոյ կրթական հաստատութիւնները և անոնց դերը, անդ, 2-3.05.1934: Նախագահ Թ. Կ. Մասարիք իր վերջնորոտեան առթիւ, անդ, 7.06.1934: Չեխաստանի ջերմուկները երբեմն և այսօր, անդ, 16.08.1934, 28-29.08.1934, 22, 24.10.1934: Չեխոսլովաքիոյ Գ. ողիմպիականը, անդ, 20.07.1934: Սլովաքիա և իր բարքերը, անդ, 11.10.1934: Շքոտայի հաստատութիւնները, անդ, 10.11.1934: Չեխաստան երբեմն և այսօր, անդ, 13.12.1934: Ի՞նչ գիտեն չեխերը մեր մասին և մենք անոնց մասին, «Յոսաբեր»։ Գահիրէ, 9-10.09.1935: Չեխոսլովաքիոյ փոքրամասնութիւնները պատերազմէն առաջ և յետոյ, «Արեւ», Գահիրէ, 6.03.1946 և այլն:

<sup>125</sup> Տես **Մարտիրոսեան Ն...**, Ինչպէս լուծեց չեխ արեւելագէտը հիբիդերէնը և ի՞նչ արդիւնք ձեռք բերուեցան, «Արեւելք», Ստանպոլ, 12-14.03.1933, 18-23.03.1933: Նույնի, Հիբիթական սեպագիդ արձանագրութեանց աղբիւրները և հայկական լեզուի հնագոյն պատմութիւնը (14րդ դարէն (Ք. ա.) մինչեւ հայ տառերու գիտը), անդ, 20-22, 24.11.1934: Նույնի, Հայ լեզուի հնագոյն պատմութիւնը, «Արեւ», Գահիրէ, 9.07.1938: Տես նաև նոյն հեղինակի «Աշխարհահոշակ հեթարան Հրոզնի» հոդվածը, «Այսօր-ապագայ», Փարիզ, 15.01.1953: Ե՞րբ եւ որո՞ւ կողմէ հիմնուեցաւ հայագիտութիւնը Չեխոսլովաքիոյ մէջ, «Արեւ», Գահիրէ, 22-23.12.1965 և այլն:

<sup>126</sup> **Մարտիրոսեան Ն...**, Պեղումները Փոքր Ասիոյ մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 28.10-23.11.1932:

<sup>127</sup> Տես **Մարտիրոսեան Ն...**, Չեխոսլովաքիոյ մշակութային ու տնտեսական յարաբերութիւնները հայերու և Արեւելքի հետ, «Ազատ միտք», Գահիրէ, 29.08.1936, 5, 12.09.1936: Շքոտայի հաստատութիւնները (kodovy zavody), անդ, 5.12.1936: Չեխական նկարչական արուեստը. Ֆրանսիշէք Փավէլքա, անդ, 16.01.1937: Այց մը նկարիչ Եարո Հիլպերթի, անդ, 27.03.1937:

Մարտիրոսյանը<sup>128</sup>): Կապեր է ունեցել ժամանակի հայտնի գրողների և գիտնականների (Հրաչյա Աճառյան, Եղիշև Դուրյան, Ֆրանց Վերֆել) հետ: Գերմաներեն և չեխերեն է թարգմանել հայ հեղինակների (Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Չարենց, Արագի), հայերեն՝ չեխ հեղինակների<sup>129</sup>: Յարոմիր Եղիշկայի, Ջորա Պերոգովայի և Յան Ռիբկայի համագործակցությամբ կազմել, թարգմանել և 1951-ին հրատարակել է «Հայ աշխարհի շունչը» 770 էջանոց ժողովածուն, որն ընդգրկում է 23 հայ արձակագիրների ստեղծագործությունների չեխերեն թարգմանություններ<sup>130</sup>: Հանդես է եկել նաև «Գիլգամեշ» հնագույն դյուցազնավեպի հայերեն արձակ թարգմանությամբ (լույս է տեսել Երևանում, 1963-ին): Աշխատակցել է նաև Հայաստանի գիտական մամուլին, մասնավորապես՝ «Պատմաբանասիրական հանդեսին»<sup>131</sup>: Նրա տանը հյուրընկալվել են Պրահա այցելած Վազգեն Ա Վեհափառը, Արամ Խաչատրյանը, Մարիետա Շահինյանը և այլք: Ամուսնացած է եղել ծնունդով եգիպտահայ Արուսյակ Մարտիրոսյանի (1907–1997) հետ, որը 1988-ի Հայաստանի երկրաշարժից հետո նյութական օգնություն է ուղարկել հայրենիք:

<sup>128</sup> Տես Մարտիրոսեան Ն... Թ. Կ. Մասարիք, Է. Պենեշ և «Հոկտեմբեր 28»: Նույնի, Չեխերեն ազգային երգը: Մովսիսյան և իր բարբերը: Չեխօսովագիտյ ճարտարարտեսող և Փրակայի զարման ցուցահանդեսը: Փրակայի Կարողսեան համալսարանը և իր անցեալը: Փրակայի հայ ուսանողները: Ակնարկ մը չեխ գրականութեան վրայ, բոլորն էլ «Ազատ միտք», Գահիրէ, 31.10.1936: Շիրվանզադէի «Քառ» վէպը չեխերէն, «Զուարթնոց», Փարիզ, 1.12.1956:

<sup>129</sup> Տես. օրինակ, Մարտիրոսեան Նշան, Երգի մը հարիրամեակը, «Արեւելք», Ստանպուլ, 18.11.1934, որ ներկայացնում է Յոզեֆ Կայետան Տիլի «Մ'ըր է հայրենիքն ին» ("Kde domov moj") մեծ ժողովրդականություն վայելած չեխական երգի հայերեն թարգմանությունը:

<sup>130</sup> Տես Հայկ. գրականութիւնը չեխերէն, «Յառաջ», Փարիզ, 27.12.1951:

<sup>131</sup> Տես նրա հոդվածները՝ Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» վիպերգությունների հայերեն թարգմանության առթիվ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1958, ք. 2-3, էջ 403: Պրպտուններ փոքրասիական անուններու մասին, անդ, 1961, ք. 3-4, էջ 82-107: Նպաստ մը հեթ և հայ բառաբանության, անդ, 1972, ք. 2, էջ 163-186: Վերջին հոդվածը հետազայում Խաչիկ Թյոյոյանի անգլերեն թարգմանությամբ լույս է տեսել ամերիկահայ գիտական մամուլում (տես **Mardirosoyan Nishan**, A Contribution to Hittite and Armenian Word-Studies, "The Armenian Review," vol. 30, no 4-120, Winter, 1977-1978, էջ 361-383):

Առաջին հայերը Պրահայում և Չեխոսլովակիայի տարբեր քաղաքներում մշտական բնակություն են հաստատել 1910-ականներին: 1895-ի համիդյան ջարդերից հետո Պրահա է տեղափոխվել յոզղաքցի **Արմենակ Ասլանյանը**, որը զբաղվել է արևելյան գորգի առքուվաճառքով<sup>132</sup>: **Արթին Արսլանյանին** (1891–1946) պատկանել է Պրահայի առաջին գորգագործական ֆիրման, որը գտնվել է քաղաքի մեծագույն պողոտայի վրա, մի առաջնակարգ հյուրանոցի շենքում<sup>133</sup>: Արսլանյանն ամուսնացած է եղել հայուհու հետ, ունեցել որդի և դուստր, որոնք թեև օտար կրթություն են ստացել, սակայն վարժ տիրապետել են հայերենին: Արթինի եղբայր **Լևոն Արսլանյանը** նույնպես բնակվել է Պրահայում, գերմանուհի կնոջ հետ. անգալվակ մահացել է 1947-ին<sup>134</sup>: Մեկ այլ հայ վանեցի **Տիգրան Սահակյանը**, հավանաբար 1910-ականներին, Վլտավայի ափին կառուցել է մի մեծ առանձնատուն, թերևս ժամանակին ամենաշքեղը Պրահայում: Հետագայում վաճառել է այն և մոր ու հունգարուհի կնոջ հետ տեղափոխվել է Գերմանիա՝ Հյուսիսային ծովի ափ, որտեղ կառուցել է նմանատիպ մի առանձնատուն<sup>135</sup>: Այս շրջանում չեխաբնակ հայերը զբաղվել են նաև ձիթապտղի, ձիթայուղի, արևելյան քաղցրեղենի (հավլա, ռահաթ-լոխում), աղիքի առևտրով, իսկ մի հայ Պրահայում զբաղվել է պանրագործությամբ<sup>136</sup>:

<sup>132</sup> Տե՛ս **Երուանդ**. Այս ալ մեր հողվրտիքը. «Յառաջ», Փարիզ, 26.11.1950:

<sup>133</sup> Հավանաբար այս վաճառատնից է եղել այն հայկական գորգը, որ պատկանել է չեխ հայտնի նկարիչ Յոզեֆ Լադային (1887–1957): Գրականության մեջ իլշվում է, որ երբ Լադան ծանր հիվանդացել է, նրան խնամել է իր մտերիմ բարեկամ գրող Յարոսլավ Հաշեկը, որը քնել է հատակին՝ վրան գցելով սեփական վերարկուն. «*Իսկ բարձի տեղ օգտագործում էր հայկական այն գորգը, որ Լադային էին տվել ինչ-որ նկարի դիմաց*» (Հաշեկ Յա., Երզիծանքի և հումորի այբբենարան, Երևան, 1983, էջ 144):

<sup>134</sup> Տե՛ս **Երուանդ**. Այս ալ մեր հողվրտիքը, անդ:

<sup>135</sup> Տե՛ս **Եր. Հայկազն**. Հայ կեանքը Փրակայի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 1.01.1924:

<sup>136</sup> Տե՛ս **Փրակացի**. Հայ և չեխ հնագոյն և նորագոյն յարաբերութեանց մասին...: Անշուշտ, սխալվել է կոմպոզիտոր Սիրվարդ Գարամանուկը՝ Բուդապեշտի հայկական ակումբի մասին գրելով, թե. «Հայկական ակումբը Փրակէն եկող գաղթականներ հիմներ էին տասնեակ տարիներ առաջ: Իսկ Փրակի հայերը հարիւրատը տարիներ առաջ Անի քաղաքի կործանումի ժամանակէն գաղթողներ էին» (Մարեան Ա., Երաժշտութեանը

Չեխոսլովակիայի հետ են կապվում Եվրոպայում բնակված մի քանի հայորդիների կյանքի որոշ դրագներ: Այսպես, երգահան Ալեքսանդր Սպենդիարյանի ազգական **Սուրեն Սպենդիարյանը** (1895, Եվպատորիա, Ղրիմ – 1950, Ռոբվայլ, Գերմանիա) բժշկական կրթությունը ստացել է Պրահայի համալսարանում, հետագայում իր ռուս կնոջ և դստեր հետ բնակվել է Գերմանիայում, որտեղ էլ կյանքն ավարտել է ինքնասպանությամբ<sup>137</sup>: Իսկ 20-րդ դարի մեծագույն մաթեմատիկոսներից մեկը՝ Վիեննայում հայ-ավստրիական ընտանիքում ծնված **Էմիլ Արթինը** (Արթինյան, 1898–1962) ինը տարեկանում ընդունվել է հարավային Չեխոսլովակիայում գտնվող փոքրիկ Ստրոբնից քաղաքի դպրոցը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տակավին անկախություն ձեռք չբերած Չեխոսլովակիայի տարածքում հայտնվել են հայ ռազմիկներ և ռազմագերիներ: Նրանց մեջ է եղել նաև երգիչ և թարգմանիչ **Վահան Տեր-Առաքելյանը**, որը սովորել է չեխերեն, և որոշ տեղեկությունների համաձայն, անձամբ ծանոթացել է նշանավոր չեխ գրող Յարոսլավ Հաշեկի (1883–1923) հետ: Հետագայում նա չեխերեն բնագրից հայերեն է թարգմանել «Քաջարի զինվոր Շվեյկի արկածները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» հանրահռչակ վեպը<sup>138</sup>:

Սեծ եղեռնի հետևանքով Չեխիայում հաստատվել են սակավաթիվ հայ գաղթականներ՝ հիմնականում պոլսեցիներ, կեսարացիներ, յոզղաթցիներ և վանեցիներ, ինչպես, **Սարգիս Էկինյանը** (Չմյուռնիայի շրջանից,) որը մեծ հարստություն է կուտակել, սակայն տանուլ է տվել

---

իմաստաւորում կեանք. Սիրվարդ Գարամանուկի կեանքն ու ստեղծագործութիւնը, Երևան, 2007, էջ 103-104): Պրահայի հայերին նա հավանաբար շփոթել է Տրանսիլվանիայի հայերի հետ:

<sup>137</sup> Տե՛ս **Թրքակից**, Հայ բժիշկ մը անձնատպան, «Յառաջ», Փարիզ, 21.02.1950:

<sup>138</sup> Այս վեպում կա հայկական մի անուղղակի հիշատակում: «Շվեյկը ռուս զերիների էշեղնում» գլխում կա հետևյալ նախադասությունը. «Ավագ գրագիրը վերցրեց զինվորական տեղեկագիրքը և սկսեց բերթել. «Ժննտունմեկերտոյ գունդ, Երևանյան, Կովկաս, կադրերը գտնվում են Թիֆլիսում» (տե՛ս Հաշեկ Յա., Քաջարի զինվոր Շվեյկի արկածները, Երևան, 1978, էջ 555):

նախ սպիտակ, ապա՝ կարմիր չեխերին, գորգավաճառ **Չարեն Չատեյանը** (ակնցի, մահացել է 1944-ին), գորգ նորոգող **Եղիա Կոկանյանը** (արմտանցի, ապրել է չեխուիոս հետ, ունեցել երկու դուստր), երկրի մեծագույն գորգավաճառներից **Նուպար Չարզյանը** (պոլսեցի, 1884—1947, մայրը՝ տիկին **Չարզյանը**, մահացել է 1929-ին, Պրահայում), որն ամուսնացած է եղել չեխուեոս հետ. երկու դուստրերը որոշ չափով տիրապետել են հայերենին: 1932-ին Պրահայում է հաստատված գեյթունցի **Անտոն Գունտրաճյանը**, որին Մուրատ-Ռափայելյան վարժարանից հեռացրել էին հիվանդության պատճառով<sup>139</sup>:

Փոքրաթիվ հայ գաղթականներ էլ Չեխոսլովակիա են եկել որպես ռուսական վտարանդիներ՝ 1917-ի բոլշևիկյան հեղաշրջումից հետո: Պրահայում է հաստատվել (և այնտեղ վախճանվել) ռուս-հայկական ծագումով գրող, Թիֆլիսում ծնված, 250 հատոր գրքի հեղինակ, բանավոր և գրավոր հայերենին տիրապետած **Վասիլի Նեմիրովիչ-Դանչենկոն** (1844—1936), որը սերտորեն կապված է եղել հայ կյանքին ոչ միայն զգացումներով, այլև գրական գործերով<sup>140</sup>:

1926-ին Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի Պրահայի խմբի անդամ է եղել հայազգի ռուս դերասան **Նիկոլայ Ապանովը** (1877—1944)<sup>141</sup>: Պետերբուրգում ծնված հայուհի **Սոֆյա Արտեմի Ավանովան**

<sup>139</sup> Տե՛ս **Երուանը**. Այս ալ մեր հողվրտիքը, «Յառաջ», Փարիզ, 26.11.1950:

<sup>140</sup> Տե՛ս **Նազարեանց Լ.**, Վլադիմիր Նեմիրովիչ-Դանչենկոյ (90-ամեակի առթիւ), «Յուսաբեր», Գահիրէ, 19.01.1931: Նեմիրովիչ-Դանչենկոն իր գրական կարողությունները վերագրել է հայկական ծագմանը: Աշխատակցել է Մոսկվայի «Արմյանսկի վեստնիկին»: Անձամբ ծանոթ է եղել գորավար Անդրանիկի հետ: «Մօրը Հայուհի մը ըլլալը պարծանքով չի յիշեր ան: Հանի մը տարի առաջ, էրբ ռուս տարագիրները կը տօնէին իր գրական գործունեութեան 75ամեակը, Ն. Դանչենկօ խորին յուզումով յիշեց իր հայկական ներշնչումները և պարբերաբար բանաստեղծութիւններ կը որկէր «Յուսաբեր»ի» (Նեմիրովիչ Դանչենկոյի (sic) մահը, «Արագ», Պոքրէշ, 1.10.1936): Նեմիրովիչ-Դանչենկոյի՝ Հայաստանին նվիրված բանաստեղծություններից տես՝ Հայաստան, Կարմոյ մօտ. «Յուսաբեր», Գահիրէ, 3, 6.07.1935: Հայրենիքիս, «Հայրենիք», Պօսթըն, 4.03.1936: Տարագրի աղօթքը, «Յուսաբեր», Գահիրէ, 21.03.1936 (վերջին երկուսի թարգմանիչներն են Նիկոլ Աղբալյանը և Մուշեղ Իշխանը):

<sup>141</sup> Տե՛ս Пиражская группа Московского Художественного театра в Париже. «Дни», Париж, 24.10.1926:

(1899–1945), որ Դենիկինի բանակի հետ փախել է Կ.Պոլիս, որոշ ժամանակ ապրել է Պրահայում, որտեղ երգել է ռուսական երգչախմբում<sup>142</sup>: Որոշ ժամանակ էլ Պրահայում է բնակվել ռուս վտարանդիական գրականության հայտնի դեմք Նինա Բերբերովան (1901–1993): Նման անձանց ազգային պատկանելիությունը հաճախ չի էլ նշվել: Ինչպես գրել է Չեխոսլովակիայի ռուսական համայնքի ուսումնասիրող Ելենա Սերապիոնովան. «*Ամենից դժվարը ռուսական տարագիրների ազգային կազմը որոշելն է, որի մասին տվյալները գրեթե ամբողջովին բացակայում են: «Ռուս» բառի ներքո հաճախ հասկացվում էին բոլոր ռուսաստանցիները՝ անկախ ազգային պատկանելիությունից՝ ռուսները, հրեաները, բելառուսները, վրացիները, կալմիկները և այլք: Որոշ դեպքերում առանձին նշվել են հայերը*»<sup>143</sup>: Սերապիոնովան մաս նշել է, որ 1929 թվականին Չեխոսլովակիայի ներքին գործերի նախարարությունը հատուկ հայտարարել է, որ միջազգային համաձայնագրերի սկզբունքները պատրաստվում է կիրառել միայն այն անձանց հանդեպ, ովքեր ունեցել են վավերական ռուսական կամ օսմանյան (հայերի համար) հպատակություն և կորցրել են այն մինչև 1923 թվականի հունվարի 1-ը<sup>144</sup>:

Այս ժամանակաշրջանում հայազգիներ են եղել ինչպես Չեխոսլովակիայում հաստատված ռուս վտարանդիների, այնպես էլ երկրում պաշտոնավարող խորհրդային քաղաքացիների մեջ: Այսպես, 1921–1922 թթ. Պրահայի խորհրդային դեսպանատանը դիվանագիտական աշխատանք է կատարել կուսակցական գործիչ, կինոսցենարիստ Նինա Աղաջանովան (Նունե Աղաջանյան, 1889–1974):

Նոր Չեխոսլովակյան դաշնության մայրաքաղաքի հայությունը, վերոհիշյալ Տիգրան Սահակյանի ղեկավարությամբ, 1919-ից սկսել է

---

<sup>142</sup> Տե՛ս Хисамутдинов А. А., Российская эмиграция в Китае. Опыт энциклопедии. Владивосток, 2002, էջ 87:

<sup>143</sup> Տե՛ս Серапионова Е. П., Российские эмигранты в Чехословакии в межвоенные годы. «Вопросы истории», Москва, 1997, но 5, էջ 128:

<sup>144</sup> Տե՛ս անդ:

առաջին քայլերը կատարել համայնքային միջոցառումների ուղղությամբ: Այս թվականի օգոստոսի 15-ը Պրահայում հայտարարվել է Հայկական օր, կատարվել է հանգանակություն՝ ի նպաստ հայ որբերի, որի ընթացքում հավաքվել է 3000 կրոն: Այդ գումարով գնել են կոշիկներ և ուղարկել մարտնչող հայ զինվորներին ու որբերին: Նույն թվականին, Ցյուրիխի «Արմենիեն» պարբերականի հաղորդմամբ, Պրահայի հայերը 47 հազար չեխական կրոն են փոխանցել Վիեննայում գործող հայ գաղթականների օգնության հիմնադրամին<sup>145</sup>: Համայնքի ջանքերի շնորհիվ չեխական իշխանությունները հայ ռազմագերիներին առանձնացրել են ռուսներից՝ 1920 թվականին մոտ 100 հոգու ուղարկելով Հայաստան<sup>146</sup>:

1920 թվականին Պրահայում բնակվել է 10-15 հայ, բոլորն էլ՝ արևմտահայեր, որոնք զբաղվել են առևտրով: 1920-ի օգոստոսին կազմվել է Հայ Բարեգործական Ընկերության Պրահայի մասնաճյուղը, որը գործել է ընդամենը մեկ տարի՝ նյութական և բարոյական օգնություն ցուցաբերելով Չեխիայում հայտնվող հայերին: «*Բրակայի հայ գաղութը իր ամենափայլուն շրջանին իսկ չէ ունեցած մատուռ և քահանայ, այլ միայն բարեգործական ընկերություն մը, որ քաղաքէն անցնող աղքատ և նիւթականի նեղութեան մատուռած ազգակից ճամբորդներու և գաղթականներու օգնած է*»<sup>147</sup>: Այդ ձեռնարկում գործուն մասնակցություն է ունեցել երիտասարդ **Հակոբ Պարիկյանը** (հետագայում տեղափոխվել է Արգենտինա): Պրահաբնակ հայերը հայանպաստ գերմաներեն հրատարակություններ են ուղարկել Չեխոսլովակիայի Հանրապետության նախագահ Մասարիկին, իսկ վերջինս 1000 չեխական կրոն է նվիրել բարեգործական ընկերությանը<sup>148</sup>: Արդեն այս թվականին

<sup>145</sup> Գաղութներ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 16.08.1919:

<sup>146</sup> **Jovannisian Richard G.**, The Republic of Armenia, p. 390.

<sup>147</sup> **Վարժապետեան Յուլի.** Չեխոսլովաքիոյ հայ գաղութը այսօր, «Արարատ», Պէյրուք, 6.01.1960:

<sup>148</sup> Ի դեպ, նշենք, որ Մասարիկին լուսանկարել է ֆրանսարնակ հայ լուսանկարիչ Հակոբ Մեներճյանը (տե՛ս **Մենճեան Յակոբ**, «Ֆրանսահայ տարեգիրք», Փարիզ, 1926, էջ 187):

Պրահայի հայերը ծրագրել են հիմնել չեխ-հայկական ընկերություն, քանի որ, ըստ ծրագրի նախաձեռնողներից մեկի, «*Հայանպաստ սրահնչելի հող կայ հոն*», ինչը ճշմարիտ էր, քանի որ Հայոց ցեղասպանությունը «*պատերազմի ամենամոլեգին և ամենափափուկ միջոցների*» արձագանք է գտել չեխական մամուլում<sup>149</sup>: Որոշ չեխոսլովակ մտավորականներ (Պրահայի համալսարանի դասախոսներ, արևելագետ պրոֆեսորներ **Կարոլուս, Ռ. Դվորժակ, Ֆիլեր**, նախարարապետ **Դուսար** և քարտուղար, պրոֆեսոր **Պրոխասկա**, «Ռեպուբլիկա» թերթի խմբագիր պրոֆեսոր **Բլեհա** և **Բեդիբեկ**) իրենց կարեկցանքն ու վրդովմունքն են արտահայտել հայերի կոտորածների առիթով, հետաքրքրվել Հայ դատով<sup>150</sup>:

Այս համատեքստում հարկ է առանձնապես անդրադառնալ չեխ գրող, ճանապարհորդ և հումանիստ **Կարել Հանսայի** (1890–1967) հայանպաստ գործունեությանը:

Վիեննայում ծնված Հանսայի մանկության ու պատանեկության տարիները անցել են նախ Ավստրիայում, 1902 թվականից, երբ Հանսաների ընտանիքը Ավստրիայից տեղափոխվել է Չեխիա, Չեսկե Բուդեյովիցե քաղաք: Ինչպես իր հետազոտության մեջ նշել է Աննա Կարապետյանը, Հանսան բավարար գնահատականներով ավարտել է տեղի դպրոցը, ստացել անտառագործի մասնագիտություն, ապա զորակոչվել է բանակ և վիրավորվել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում<sup>151</sup>: Պատերազմից հետո աշխատել է իր մասնագիտությամբ: Հանսայի խմբագրությամբ լույս են տեսել «Անտառի և որսորդների լրագրեր» (1920–1921) ու «Անտառ և մարգագետին» (1922) պարբերականները: Պաշտոնական բոլոր փաստաթղթերում նա ստորագրել է «գրող-ճանապարհորդ»:

<sup>149</sup> Sopp. **Մարտիրոսեան Ն. Ա.**, Հայաստան և Չեխաստան. ...

<sup>150</sup> Անդ:

<sup>151</sup> Տե՛ս **Կարապետյան Ա.**, Կարել Հանսա. զարգացման եւ ինքնակերտման ճանապարհ, «Օրեր», Պրահա, 2020, թ. 7-12, էջ 35-44, **Karapetyan A.**, Karel Hansa: A Journey of Development and Self-Creation, "Parrisia," no 15, 2021, էջ 241-295:

Ժամանակակիցները նրան համեմատել են չեխ հայտնի ճանապարհորդներ Ստանկո Վրազի և Էմիլ Հոլուբի հետ՝ համարելով նրանց արժանի հետևորդը: Չեխոսլովակիայի քաղաքացիություն ստացել է 1932 թվականին: Չեսկե Բուդեյովիցե քաղաքում գտնվող Հանսաների հայրական տունն այժմ պատկանում է նրա ազգականներից մեկին, և նրա ծննդյան 130-ամյակի կապակցությամբ հուշատախտակ է տեղադրվել այդ տան պատին:

1922 թվականի վերջին Հանսան Բեյրութից վերադարձել է Եվրոպա այն նախով, որով 896 հայ որբ էին տեղափոխում Աթենք: Հայրենիքում Հանսան նշանակվել է Կարմիր խաչի ընկերության ներկայացուցիչ Չեխոսլովակիայում: 1923 թվականի գարնանը Պրահայում հանդես է եկել հայերին նվիրված դասախոսությամբ: Ներկաներից ուսանող Երվանդ Քոչյանն այսպես է հիշել Հանսայի դասախոսությունը. «Օր մը ընկերներով լսելու գացինք Պ. Հանգայի (sic) դասախոսութիւնը. ժամերով յուզեց ու խանդավառեց ներկաները: Մոզական լապտերով ցուցուց աղէտի պատկերներ, բոլոր ներկաները տպաստուեցան: Թերթերը միաձայն գրեցին, մանաւանդ Նարոտնի Փօլիթիքան, ազգային ամենամեծ ու տարածուած թերթը, երկար ատեն գրեց այս մասին: ... Դասախոսութենէ վերջ ներկայացանք Պ. Հանգայի. որքան ուրախացաւ: Մեզ իր տունը թէյի հրաւիրեց: «Եկէք միշտ, տունը ձերն է»: Մեղանի վրայ ըսի. – «Պէրլին իր Լէփսիուսը ունի, Հոռմ՝ Լուծաթթին, Փարիզ՝ Օծիստ Կովէնը»<sup>152</sup>, Ամերիկա՝ բազմաթիւ անձեր. երբ Փրակա եկայ՝ ոչ ոք գտայ հոս: Բայց դուք հոս էք: Ուրեմն մինակ չենք մենք»: «Ես հոս եմ, ձերը, պատասխանեց Պ. Հանգա, ու միշտ ձեզի հետ. տեսայ ու ճանչցայ ձեզ, ու նուիրուեցայ ձեզի: Զաղաքական նկատումներ չունիմ, այլ զուտ մարդասիրական և բարեգործական: Դուք խաբուած

---

<sup>152</sup> Յոհաննես Լեփսիուս (1858–1926), գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական, աստվածաբանության դոկտոր, արևելագետ, հայտնի իր հայանպաստ գործունեությամբ: Լուիջի Լուձատտի (1841–1927), իտալացի քաղաքական գործիչ, 1910–1911 թթ. Իտալիայի վարչապետ, նույնպես հանդես է եկել հայանպաստ գործունեությամբ: Օգյուստ Գոլվեն (1861–1931), ֆրանսիացի լրագրող, դիվանագետ:

աշխարհէն, կը տուայտիք թշուառօրէն: Իմ նպատակս՝ բացարձակապէս ձեր ցեղին բեկորներուն օգնել է ու բանալ որբանոց մը Լիբանանի մէջ»<sup>153</sup>: Այդ հանդիպումից հետո Հանսան սկսել է հայոց լեզվի դասեր առնել Երվանդ Քոչյանից:

1923-ի հոկտեմբերի 26-ին Պրահայում Կարել Հանսան Չեխոսլովակիայի Կարմիր Խաչի ընկերությանը կից պաշտոնապէս գրանցել է «Հայ որբերի օգնության Հանսայի հիմնադրամը» (“Hansův fond pro arménské sirotky“ při Československém Červeném kříži v Praze”): Կարել Հանսան ցանկացել էր հավաքել անհրաժեշտ օգնություն Լիբանանի և Սիրիայի հայ գաղթականների համար: Հանսան բանակցել է չեխական Կարմիր Խաչի հետ՝ մի քանի միլիոն չեխական կրոնի դեղեր և պիտույքներ ուղարկելու համար հայ գաղթականներին:

Ըստ այն տարիների որոշ հրապարկումների՝ Հանսայի նպատակն է եղել իր հիմնադրամով միջոցներ հայթայթել և 50 երեխայի համար որբանոց բացել Չեխոսլովակիայում: Հիմնադրամը նախատեսել է ունենալ իր հայերէն և չեխերէն լրագիրը՝ «Արմենիան», որի խմբագրակազմի անդամ են ընտրվել դոկտոր Պանտեկը և ուսանող Ռուբեն Վարդանյանը (հետագայում հայտնի Ռեն գրչանունով): Ոչ թերթը, ոչ որբանոցն իրականություն չեն դարձել:

1923 թվականի նոյեմբերի 25-ին, իր ծննդյան օրը, բազմամարդ լսարանի առջև Հանսան հանդես է եկել երեք ժամ տևած դասախոսությամբ Պրահայի Հանրային տանը՝ ներկայացնելով Արևելք կատարած իր ճամփորդությունները՝ 172 նկարների ցուցադրությամբ: Նույն թվականին չեխական Բերոուն քաղաքում Հանսան Յոզեֆ Շեֆելի միջոցներով հրատարակել է «Արևելքի սարսափները» («Արևելքի արհավիրքները») գիրքը: Երեք բաժնից բաղկացած այդ հատորի առաջին մասը նվիրված է հայոց

---

<sup>153</sup> Քոչյան (sic) Եր., Հայասիրական շարժումը Չեխո-Սլովաքիոյ մէջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 4.05.1923:

պատմությանը և մշակույթին, հայ ժողովրդի ծագմանը, լեզվին ու գրականությանը, քրիստոնեության ընդունմանն ու տարածմանը, հայ թագավորներին ու Կիլիկիայի հայկական թագավորությանը, Նարեկացու գրական ժառանգությանը, Հայաստանի մասին գրած օտար աղբյուրներին, ինչպես նաև հայկական ավանդական կուսակցություններից մեկի՝ Դաշնակցության հիմնադրման պատմությանը: Հանսան հրապարակել է նաև 1908 թ. Դաշնակցության կողմից օսմանյան խորհրդարանին ներկայացրած ծրագրային փաստաթուղթը:

Ի թիվս այլ բնութագրումների, նա ճշգրտությամբ տվել է հայերի ամենադիպուկ գնահատականը, որը 100 տարի անց էլ չի փոխվել. *«Հայ վաճառականն Արևելքում հուսալիության առանձնահատուկ համբավ. վստահություն ու հարգանք է վայելում... Կարծիքը, որ հայերը զբաղվում են բացառապես կամ հիմնականում առևտրով, սխալ է և ձևավորվել է Եվրոպայի խոշոր քաղաքներում բնակություն հաստատած հայերի մեծ մասի վաճառական լինելու պատճառով. ուստիև այս հանգամանքը թյուր տպավորություն է ստեղծել, որ ողջ հայ ազգն է առևտրով զբաղված: Իրականում Փոքր Ասիայի հայ բնակչության 70-80 տոկոսը երկրագործներ են. մնացած 20-30-ի մեջ շատերն իրենց ապրուստը հոգում են ազատ մասնագիտություններով»<sup>154</sup>: Առևտրով զբաղվող բոլոր հայերը 10-15 տոկոսից ավել չեն, սակայն իրենց ունակությունների, ջանասիրության, ձեռներեցության, ինչպես նաև բազմաթիվ լեզուների իմացության և հարմարվելու կարողության շնորհիվ նրանք մեծ ազդեցություն են թողնում ոչ միայն բուն Հայաստանի, Թուրքիայի տնտեսությունների վրա, այլ հասնում են նաև Առաջավոր Ասիայի խորքերը...*

*Ընդ որում, իր առևտրական գործարքներում [հայը] երբեք շփոթմունքի մեջ չի ընկնում և այնպես է իր առևտրից կանխիկ դրամ*

---

<sup>154</sup> Նկատի ունի մտավորականությանը՝ գրողներ, բժիշկներ, իրավաբաններ, նկարիչներ, ուսուցիչներ և այլն:

վաստակում, ինչպես արել ու անում են արևելյան մյուս բոլոր վաճառական ժողովուրդները, եթե, իհարկե, ունեն կամ ունեին այդ ընդունակությունը: Սակայն հայը մյուսներից ավելի խելամիտ է ու ջանասեր. ուստի շահում է այնտեղ, որտեղ մյուսները կորցնում են. հարստանում է այնտեղ. որտեղ մյուսները սնանկանում են»<sup>155</sup>:

Իր գրքում Հանսան բովանդակալից էջեր է հատկացրել Մխիթարյան միաբանությանը, հայ մամուլի սկզբնավորմանը, արևելահայ և արևմտահայ մշակույթին, հայ անվանի գործիչներին: Գրքի ամենաարժեքավոր մասը նվիրված է 19-րդ դարի Թուրքիային և այնտեղ բնակվող հայերի վիճակին: Երկրորդ մասը նվիրված է 1915-ի Ցեղասպանությանը: Հանսան ցավով է գրում հայերի բռնագաղթի ու ջարդերի մասին, տալիս դրանց պատմական գնահատականը, ներկայացնում Թուրքիայում ապրող հայերի թվաքանակի աղյուսակներ՝ ըստ բնակության վայրերի ու նաև ականատեսների բազմաթիվ վկայություններ: Նա չի բավարարվում միայն թվեր ու փաստերի բերելով, այլև քննարկում է այն պատճառները, որի արդյունքում ցեղասպանվել են հայերն ու մյուս քրիստոնյաները Թուրքիայում: Գրքի վերջին մասը վերաբերում է Եղեռնից մազապուրծ հայության բեկորների՝ բազմահազար որբերի և այրիների ողբերգական վիճակին: Հանսան անձամբ այցելած լինելով Սիրիայի և Բեյրութի հայ փախստականների ճամբարները՝ իր գրքում գրել է այնտեղ գտնվող հայ երեխաների ու ծերերի վիճակի, նրանց ապրած սարսափելի օրերի մասին՝ անդրադառնալով նաև հայերին օգնություն ցույց տված օտար միսիոներների գործունեությանը: Հալեպում նրան մեծապես օգնել է սիրիաբնակ Վահան Մելիքյանը: Գիրքը եզրափակվում է 20-ական թվականների մամուլի գնահատականներով, հայ և հույն փախստականների ճամբարների մասին զեկույցով, Լոզանի կոնֆերանսի որոշումներով ու աշխարհում ապրող հայության թիվը ներկայացնող ցանկերով, այդ թվում՝ թե

---

<sup>155</sup> Karel Hansa, *Hrůzy Východu*, Praha, 2006, s. 26.

որքան հայ է մնացել Թուրքիայում: Գրքի վերջում հեղինակը կոչ է արել Չեխոսլովակիայի բնակչությանը իր հիմնադրամի միջոցով օգնություն ցույց տալ Միջին Արևելքում ծվարած հայ որբերին:

Գրքի հարուստ նյութը հազեցած է նաև 60 ինքնատիպ լուսանկարներով՝ Արևմտյան Հայաստանի, Սյրիայի և Լիբանանի, ինչպես նաև հայ հայտնի հոգևորականների, գրողների ու եկեղեցիների լուսանկարներ, բռնագաղթի ու որբանոցների պատկերներ: Դրանց մի մասը հայտնի լուսանկարներ են, մի մասի հեղինակը հենց ինքը՝ Հանսսան է:

Գրքի վաճառքի հասույթը տրամադրվել է Կարել Հանսայի հիմնած հիմնադրամին: Հանսային իր գործունեության համար շնորհակարության և բաջալերության մամակներ են գրել հայ ազգային գործիչներ Ջեյմս Գրինֆիլդը և Ավետիս Ահարոնյանը:

1924-ին Հանսան գրանցել է «Տառապյալ հայ որբերի օգնության Չեխիայի ընկերություն» անունով կազմակերպությունը, որին անդամակցել են ամուսիններ երկրաչափ Կարել Տունկլը և Լուիզա Տունկլովան: Հանսան նախագահն էր, Տունկլը՝ փոխնախագահը, իսկ նրա կինը՝ փոխնախագահը: Այս մասին իր հետագոտության մեջ նշում է Աննա Կարապետյանը՝ ավելացնելով, որ մեկ ամիս անց կազմակերպությունում այնպիսի տարածայնություններ են սկսվում, որ Հանսային հեռացնում են նախագահի պաշտոնից: Հետաքրքիր է, որ մինչ այդ հայ ուսանողները, որոնց Հանսան օգնել էր, չեն ցանկացել անդամակցել այս կազմակերպությանը: Եվ միայն նրա հեռանալուց հետո կազմակերպությանը անդամակցել են առևտրական գորգավաճառ Արթին (Հարություն) Արսլանյանը, ուսանող Ստեփան Կառլապետյանը, ևս չորս հայ ուսանող, վաճառական Տիգրան Մահակյանը և տիկինը, որոնք 1000 չեխական կրոն են նվիրել միությանը: Միությանն անդամակցել է նաև ռուսական բանակի նախկին սպա չեխ Պարալը, որը Կովկասում որդեգրել է Ռաֆայել անունով մի հայի, ընդհանուր դրախտ և հոգացել նրա կրթությունը:

Ինչպես նշել է Հայոց ցեղասպանության ուսումնասիրող Մարեկ Յանդլակը, այս հիմնադրամի հաշվեհամարին հավաքվել է 5000 չեխական կրոն, սակայն Հանսայի և իր տեղակալ Կարել Տունկլի միջև առաջացած վերը նշված տարածայնության պատճառով հիմնադրամի գործունեությունը դադարեցվել է, և այդ ծրագիրն իրականություն չի դարձել: Աննա Կարապետյանն իր հերթին հայտնաբերել է Գերմանիայում Բժշկական առաքելության օգնության հանձնախմբի տնօրեն Արմենակ Պարոնիկյանի գերմաներեն ինն էջանոց նամակն՝ ուղարկված Հանսային, որը վերջինս կցել էր իր պատվի ու արժանապատվության համար հարուցած դատական գործին: Ողջ նամակը Հանսայի աշխատառճի և կուտակված գումարի տնօրինման շուրջ նրան ուղղված կշտամբանքի խոսք է ու հիասթափություն: Պարոնիկյանը Հանսային մեղադրում է, որ նա օգտագործելով հայ որբերի անունը, ապահովել է իր ապրուստի միջոցները: Դատավարությունն ավարտվել է Հանսայի և Տունկլ ամուսինների հաշտությամբ, որի համաձայն պայմանավորվել են, որ Տունկլը չպետք է պահանջի Հանսայից իր հիմնադրամը, իսկ Հանսան էլ՝ «Տառապյալ հայ որբերի օգնության» կազմակերպությունը, որն, ի դեպ, դատավարությունից հետո դադարեցրել է իր գործունեությունը և լուծարվել է 1928 թվականին:

Գրքային հազվագյուտ նմուշ դարձած «Արևելքի սարսափները» (որն, ի դեպ, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նացիստներն ընդգրկել են արգելված գրականության ցանկ) վերահրատարակվել է 2006-ին, Պրահայում՝ Հակոբ Ասատրյանի ջանքերով և առաջաբանով, կիսյրահայ բարերարների ֆինանսական աջակցությամբ:<sup>156</sup> Նկատի ունենալով, որ գիրքը 1923 թվականից ի վեր լույս չի տեսել և ծանոթ չէ չեխական հասարակության լայն զանգվածներին, նաև նպատակ ունենալով հնարավորինս արագ այն

---

<sup>156</sup> Stín Hansa Karel, Hřízy Východu (se 60 původními fotografiemi), 2006, Praha: Գրքից հատվածներն ուսերեն քարզմանությամբ տե՛ս «Черная книга (знаменитые иностранцы о турецких преступлениях и о Геноциде армян)», Ереван, 2012, էջ 669-672:

հասցնել չեխական պետական ատյաններին ու մտավորական լայն խավերին՝ այն տպագրվել է առանց փոփոխությունների և ժամանակակից չեխերենի փոխադրության՝ հուսալով, որ հետագայում այն կունենա նոր խմբագրությամբ այլ հրատարակություններ՝ անհրաժեշտ ծանոթագրություններով ու մեկնաբանություններով: Գիրքը նվիրվել է Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին և Կարել Հանսայի ծննդյան 115-ամյակին:

Թեև այդ տարիների հրապարակումներից մեկում նշվում է, որ գիրքը այլ լեզուներով է թարգմանվել, բայց մինչ այսօր որևէ թարգմանություն չի հայտնաբերվել: 2021-ին մախատեսվում է գրքի հայերեն թարգմանության հրատարակումը՝ Աննա Կարապետյանի թարգմանությամբ և ծավալուն ծանոթագրություններով:

Հանսայի հաջորդ՝ «Դեզերումներ Արևելքով ու հարեմներով» գրքում (1926), հեղինակը նկարագրել է Ասիայի, մասնավորապես Թուրքիայի հարեմները՝ չմոռանալով գրել նաև իր ճամփորդության ընթացքում հանդիպած հայերի ու նրանց ողբերգության մասին: Այս գրքում էլ Հանսան անդրադառնում է հայ որբ երեխաների քարավաններին, որ Ուրֆայից տեղափոխվում էին Հալեպ:

Ցավոք, Կարել Հանսայի կյանքի վերջին տարիների մասին շատ քիչ էր հայտնի, մինչև որ «Օրեր» ամսագրին նրա հարազատները հայտնել են, որ Հանսան մահացել է 1967 թվականի հունիսի 5-ին և հուղարկավորված է Չեսկե Բուդեյովիցեում: Ինչպես վկայում է Հանսայի քրոջ թոռնուհին՝ Յարմիլա Եղլիչկան, երբ գրողի քույրերը՝ Մարիան եւ Ժոզեֆինան, լսել են եղբոր մահվան մասին, մեկնել են Պրահա՝ բերելու նրա աճյունը, հայտնաբերել են, որ Հանսայի բնակարանը լիովին թալանված է, անհետացել են թե՛ արժեքավոր իրերը, թե՛ արխիվը:

## Պրահայի հայ ուսանողները

«Պրահայի հայ ուսանողները» հայ մամուլում, պատմագիտության ու հուշագրության մեջ բավականին հոլովվել են, բայց նրանց պատմությունը քիչ է ուսումնասիրվել<sup>157</sup>: Սույն գլխում մենք առաջին անգամ կփորձենք առկա փաստական նյութի հիմամբ տալ պրահաբնակ հայ ուսանողության պատմությունը՝ հիմնականում սփյուռքահայ մամուլում ցրված տեղեկությունների հիման վրա<sup>158</sup>: Անշուշտ, լրացուցիչ նյութեր կգտնվեն նաև Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության (այսուհետ՝ ՀՅԴ) և չեխական արխիվներում, որոնք մեզ մատչելի չեն եղել:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո նորաստեղծ Չեխոսլովակիան նախաձեռնել է տարբեր երկրների երիտասարդների՝ Պրահայի բարձրագույն ուսումնական հաստատություններում պետական կրթաթոշակով ուսանելու գործը: Ընձեռված հնարավորությունից օգտվել են հատկապես ռուսները, որոնց ամենամեծ արտասահմանյան ուսանողությունը 1920-ականներին եղել է Պրահայում<sup>159</sup>: Վրացիներին հաջողվել է ավելի կանուխ օգտվել այդ հնարավորությունից՝ Պրահա ուղարկելով մի քանի ուսանող՝ պետության հաշվին սովորելու<sup>160</sup>: Ի դեպ, 29 ռուսաստանցի հայերի հաջողվել է որպես ուսանող գրանցվել Պրահայի համալսարանում՝ ներկայանալով իբրև ռուս կամ վրացի: Իսկ 1921-ի աշնանը մի պոլսահայ, իմանալով Չեխոսլովակիայի կառավարության այդ քայլի մասին, հաջողեցրել է յոթ հայ երիտասարդների տեղավորել Պրահայի համալսարանում:

<sup>157</sup> Հայ մամուլում այս թեմայով եղել են հաղորդումներ (տե՛ս Պետրոսեան Հ., նշված հոլովածո):

<sup>158</sup> Հատկապես արժեքավոր է այդ ուսանողներից Ռ. Կարապյանի «Մի տարի Պրագայում» հոդվածը, հրատարակված Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում (17-18, 20-21.01.1925):

<sup>159</sup> 1926-ի տվյալով՝ Պրահայում եղել է մոտ 5000 ռուս և ուկրաինացի ուսանող (տե՛ս Ա. Կ., Русские студенты за границей, «Дни», Париж, 20.08.1926):

<sup>160</sup> Տե՛ս Ս. Մ., Վրացիներ տարագրութեան մեջ, «Հայրենիք», Պոսթրն, 5.08.1925:

1923 թվականին, անկախությունը կորցրած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը տեսնելով, որ Չեխոսլովակիան հազարավոր երիտասարդներ է ընդունել իր սահմաններից ներս և նրանց պետական թոշակով սովորելու հնարավորություն է տալիս, որոշել է իր կողմից եւ դիմում կատարել որոշակի թվով հայ ուսանողների ընդունել տալու համար: Պատվիրակության ներկայացուցիչ Ալեքսանդր Խատիսյանը մեկնել է Պրահա՝ քանակցությունների: Չեխական կողմը նրան արժանացրել է սիրալիր ընդունելության և հոծարել հիսուն հայ ուսանողների պետական հովանավորությամբ Պրահայի համալսարաններում կրթվելու հնարավորություն տալ: Այդ հարցում Խատիսյանին մեծապես աջակցել են Չեխոսլովակիայի Հանրապետության նախագահ Մասարիկը, Կարել Հանսան և տեղացի ուսանողներից մի քանիսը: Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախագահի տեղակալ Կլիրզան հայ պատվիրակությանն ասել է. «*Կը ճանչնամ ձեր ցեղը: Դրո՞ւմ տներ տխուր ճակատագիրը և բարձր արժանիքները: Կարելիս պիտի ընեն, որ հայ ուսանողներն այլ օգտուին այս պատեհությունն պետք եղած չափով, ինչպես վրացիք և ուրիշները*»<sup>161</sup>: Եվ նա կատարել է իր խոստումը: Դիմել են ծոռ հարյուր հոգի, ընտրվել են հիսունը, որոնց 1923 թվականի օգոստոսին պաշտոնապես ընդունել է Կիրզան: Հաջորդել է բոլորի ուսումն էլ ձեակերպել Պրահայում և չուղարկել այլ քաղաքներ: Ամսական նպաստից բացի չեխական կառավարությունը հոգացել է նաև հայ ուսանողների հագուստեղենի, համալսարանական դասագրքերի, այլձանագրությունների և քննությունների ծախսը՝ յուրաքանչյուր ուսանողի վրա ամսական ծախսելով յոթ-ութ հազար չեխական կրոն<sup>162</sup>: Հայ ուսանողների տարեկան ընդհանուր ծախսը կազմել է 300 հազար ֆրանկ, որ ամբողջովին հոգացել է չեխոսլովակյան կառավարությունը<sup>163</sup>: Չեխոսլովակյան կառավարությունը կա-

<sup>161</sup> Եր. Հայկազն, Հայ կեանքը Փրահայի մեջ...

<sup>162</sup> Տե՛ս Տօքթ. Ն. Մ., Փրակայի հայ ուսանողները, «Ազատ միտք», Գահիրե, 31.10.1936:

<sup>163</sup> Տե՛ս 50 հայ ուսանողներ եւ, «Հայրենիք», Պոսթրն, 31.08.1923:

տարել է այս մարդասիրական քայլը, որպեսզի հայ ժողովրդի զավակները ճանաչեն այդ նորանկախ երկիրը և ապագայում իրենց ազգին նույնպես ճանաչել տան Չեխոսլովակիան և չեխերին:

Ռ. Կարապյանի վկայությամբ՝ Խատիսյանն իր բանակցություններն ավարտելուց հետո հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչ է նշանակել մի հայ ուսանողի, որը 1921-ից արդեն ուսանելիս է եղել Պրահայում և ծանոթ է եղել տեղական պայմաններին: Այդ հայ ուսանողը ոչ այլ ոք էր, եթե ոչ վերոհիշյալ Նշան Մարտիրոսյանը: Նա էլ սկզբնական շրջանում հոգ է տարել Չեխոսլովակիա ժամանող հայերին: Վերջիններս եղել են տարբեր երկրներից (Ավստրիա, Բուլղարիա, Գերմանիա, Եգիպտոս, Պարսկաստան, Իրաք, Ռուսաստան, Հնդկաստան, Ռումինիա, Սիրիա, Ֆրանսիա, Թուրքիա) և բոլորն էլ՝ դաշնակցական կամ նրան համակիր և հարող շրջանակներից: Ոմանք ժամանել են ընտանիքի անդամների հետ միասին: Ալեքսանդր Խատիսյանը 1923-ի օգոստոսի 25-ին, Փարիզից նամակ է հղել Աթենքում Հայաստանի Հանրապետության դեսպանատան գործավար Հարություն Գլըճյանին՝ խնդրելով անվճար անցագիր տալ Հունաստանով Չեխոսլովակիա մեկնող հայ ուսանողներին և բարոյական օգնություն ցուցաբերել: Նամակին կից տրվել է Պրահա ուղարկվող հայ ուսանողների ցանկը, որը ներկայացնում ենք ստորև՝ աղբյուրում տեղ գտած հերթականությամբ.

1. Սահակ Տեր-Թովմասյան (շատախոս, Վանի դպրոցից)
2. Երվանդ Ֆրնտրքյան (տրապիզոնցի, Էջմիածնի ճեմարանից)
3. Գարեգին Սարգիսբեգյան (երևանցի)
4. Եփրեմ Սարգսյան (Էջմիածնի ճեմարանից, Երևանի առաջին խորհրդարանի նախկին անդամ)
5. Ռուբեն Վարդանյան (վանեցի)
6. Սուրեն Բարախյան (արևմտահայ)
7. Ահարոն Տատուրյան (օվանդրքցի, բանաստեղծ)
8. Երվանդ Հայրապետյան (շիրակցի, ուսուցիչ)

9. Հրանտ Տևեճյան (հալեպցի)
10. Ստեփան Նավասարդյան
11. Սարգիս Թորոսյան
12. Ռուբեն Գուրգենյան
13. Հարություն Ղարիբյան
14. Շավարշ Մակարյան
15. Գուրգեն Սարգսյան
16. Մանվել Մարության
17. Թադևոս Մուսինյան
18. Բաբկեն Ռաշմաճյան
19. Աշոտ Իսահակյան
20. Վարդան Հովհաննիսյան
21. Անդրե Տեր-Օհանյան
22. Գրիգոր Մխիթարյան
23. Հովհաննես Հախնազարյան
24. Միքրան Ղարիբյան
25. Վարդան Ղարազյոզյան
26. Հրաչյա Աթանասյան
27. Հովհաննես Աբուսյան
28. Մարտիրոս Բարսեղյան
29. Օննիկ Մխիթարյան (վանեցի)
30. Մուշեղ Թամրազյան (շուշեցի)
31. Հայկ Ասատուրյան (սլաշկերտցի)
32. Դավիթ Մելիք-Դադայան
33. Սուրեն Սահակյան
34. Նիկոլ Բաղայան
35. Միքայել Ալիխանյան
36. Օր. Արաքսի Խաժակ (թիֆլիսցի)
37. Հովհաննես Ալինյան
38. Անտոն Մարիմյան
39. Հովսեփ Մակարյան

40. Արշալույս Տեր-Պողոսյան
41. Հովհաննես Կարակ
42. Սուրեն Պապովյան
43. Աղեքսանդր Մովսեսյան
44. Հարություն Աֆրիկյան
45. Դիմիտրի Շիկանյան<sup>164</sup>
46. Սարգիս Մամիկոնյան
47. Սուրեն Բևազյան
48. Էմմանուել Յարայան
49. Ռաֆայել Շիկանյան
50. Բաղդասար Բաղդասարյան<sup>165</sup>

Ժամանակակցի վկայությամբ՝ անհատական ջանքերով և արդեն կազմակերպված հայ ուսանողության միջնորդությամբ հնարավոր է եղել հավելվածաբար ևս 11 հոգու ընդունել: 10 հոգի ևս ընդունվել են ուսական կազմակերպությունների միջոցով, գլխավորապես՝ Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասից դեմիկիսցիների հետ տարագրվածներից: Այդպիսով, 1932-ին հայ ուսանողների թիվը հասել է 71-ի<sup>166</sup>: Իրականում նրանց թիվը եղել է 75-ից ավելի: Հիշենք վերոհիշյալ ցուցակում տեղ չգտած, սակայն տարբեր աղբյուրներում հիշված Պրահայի հայ ուսանողներից մնացյալներին (23 անուն):

Մի փոքր ուշ Պրահա մեկնելու նպատակով Աթենքով են անցել նաև Միհրան Ղարիբջանը, Հակոբ Ազիզյանը և Ջանջիկ Ջաքարյանը: Նրանցից բացի, ուրիշ հինգ ուսանողներ ևս (հիմնականում՝ Պոլսի Կեդրոնական վարժարանից), որոնք այդ ժամանակամիջոցում գտնվելիս են եղել Վիեննայում, իրենց առանձին դիմումների շնորհիվ

<sup>164</sup> Դիմիտրի Շիկանյան բիչ հանդիպող անուն-ազգանունով հայտնի է հայ խորհրդային բալետի ականավոր արտիստներից մեկը, մինչդեռ սա այլ անձնավորություն է:

<sup>165</sup> Հայ ուսանողներ կ'ընդունուին Բրակայի համալսարանը, «Վերջին լույս», Կ.Պոլիս, 22.07.1923: Տես նաև 1923-ին Փրակայի համալսարանը ընդունուած հայ ուսանողներուն ցանկը, Գեորգեան Գ., Ամէնուն տարեգիրքը, Պէյրութ, 1960, էջ 222:

<sup>166</sup> Պրակայի հայ ուսանողութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 23.08.1932:

կարողացել են մինևս այսօր արձանագրվել Պրահայի համալսարանում: Այդ հինգ ուսանողներն էին Վադարշակ Կյուվետերյանը, Երվանդ Զոչյանը (1895–1984), Բարդուխյան Դեմետրիանը, Գեորգի Բյուսեյանը և Գեորգի Երեցյանը<sup>167</sup>:

Մարտիրոս Աղայայանի (Մասունցի) վկայությամբ, իրենից բացի 1922-ին Պրահայի համալսարան է ընդունվել նաև Գարեգին Ասատրյանը<sup>168</sup>: Այս երկու անուններից բացակայում են վերոհիշյալ ցուցակից: Մեզ անհայտ պատճառով բացակայում են նաև Օմնիկ Սյուխարյանի, Ռ. Կարապետյանի և Բաղդասար (Բաղդիկ) Մինասյանի անունները. վերջինս 1923-ին որպես լավ սովորող աշակերտ Թավրիզից ուղարկվել է Պրահա: Բացակայում է նաև մեկ այլ պարսկահայի երաժշտագետ, մշակութային և ազգային հասարակական գործիչ Համբարձում Գրիգորյանի (1893–1975) անունը, որը 1923 թ. ՀՅԴ կուսակցության կարգադրությամբ նույնպես ուսանելու է մեկնել Պրահա: Հայտնի է նաև, որ Պրահայում սովորելու նպատակով եկել է նաև ուսանողական տարիքից վաղուց դուրս եկած գեղասպետ Կոռն Թարխանյանը, որը Չեխոսլովակիա է եկել ընտանյոք հանդերձ: Հայ ուսանողների միության վարչության նախագահ է եղել Հ. Լորիկյանը, քարտուղար-գանձապահ՝ Վ. Նիկողոսյանը: Այս շրջանում Պրահայում են ուսանել նաև Արշալույս Տեր-Աստվածատրյանը, Ներսես Թովմասյանը, Վահան Սինախոսյանը և Վահո՜շ Հախնազարյանը:

1924-ին գրվել է, որ Փարիզից Պրահա ուսումնառության նպատակով պետք է մեկնեն նաև օրիորդներ Հ. Չաքարյանը (վերոհիշյալ Ջանջիկ Չաքարյանի քույրը) և Աղամյանը, պարոնայք Վասիլ Իսահակյանը, Լևոն Մելիք-Դադայանը (1897–1937), Լ. և Վ. Աղամյանները: Այդ կերպ, ըստ քերթի, Պրահայի հայ ուսանողների թիվը կհասնի 47-ի<sup>169</sup>, ինչը միշտ չէ. նախորդ շաբաղարանքում նշվեց, որ հայ ուսանողների թիվն այդ թվականին արդեն անցել էր 60-ը:

<sup>167</sup> Կոյն տեղում:

<sup>168</sup> Տե՛ս Մարտիրոս Մասունցի. Սև օրագիր, Պէրոք, 1957, էջ 265, 267:

<sup>169</sup> Տե՛ս Փրակա գացող նոր ուսանողները, «Հայրենիք», Պոսթրն, 17.12.1924:

Ամբողջովին Պրահայի ուսանողության մեջ է ներառնվել Հայաստանից Պարսկաստան տեղափոխված և 1922-ին Թավրիզում թատերախումբ կազմակերպած ինը հոգիանոց մի խումբ, որի մեջ են եղել վերոնշյալ ցանկից Մանվել Մարությանը (ծն. 1901, Վան, թատերախմբի ղեկավար), Հարություն Ղարիբյանը (ծն. 1895, Իգդիր), Ստեփան Նավասարդյանը (ծն. 1896, Երևան), Ռուբեն Գուրգենյանը (ծն. 1897, Բարու), Սարգիս (Սերյոժա) Թորոսյանը (ծն. 1898, Չանգեզուր), Շավարշ Մակարյանը (ծն. 1898, Ագուլիս), Թաղևոս Մուսիմյանը (ծն. 1900, Երևան), Գուրգեն Սարգսյանը (ծն. 1898, Կարս) և Բաբկեն Ռաշմաճյանը (ծն. 1901, Ալեքսանդրապոլ): Նրանք խմբով ելույթներ են ունեցել Պարսկաստանի, Մերձավոր Արևելքի քաղաքներում (Հալեպ, Բեյրութ, Բաղդադ), այնուհետև անցել են Աթենք, այստեղից էլ Պրահա<sup>170</sup>:

Հատկանշական է, որ ժամանակի ռամկավար մամուլը, անդրադառնալով Պրահայի ուսանողներին, մասնավորապես քննադատել է ՀՅԴ-ին՝ «յայտարարելով որ Դաշնակցականներ որբերու հացը կը խլեն, որ ընտրուած ուսանողները պէխ ու մօրոս ունեցող մարդիկ են»<sup>171</sup>: Ամերիկահայ «Նոր օր» պարբերականը դաշնակցության այդ ձեռնարկը համարել է «տզեղ խաղ մը», քանի որ Չեխոսլովակիայի այդ սարդասիրական քայլն իրականում ուղղված է եղել ընդդեմ այն բանի, որ «Մերձավոր Արևելքի նպաստամատույցի» որբանոցներից հայ որբերին սկսել էին արձակել և նրանց պետք էր որևէ կերպ օգնության էասնել: Ըստ «Նոր օրի» հողվածագրի դիտարկման՝ դաշնակցականները «*լիոխանակ 16-20 տարեկան ընդունակ որբեր նշանակելու եղած կրթական շնորհին համար, երբ մանաւանդ բազմութիւն ընդունակ որբեր սկսած էին անսպաստան և անուսում մնալ, նշանակեցին ամէնքն ալ դաշնակցական գործիչներ, որոնք 35-էն վեր, չափահաս,*

<sup>170</sup> Տե՛ս Փրակայի երբեմնի հայ ուսանողութիւնը, Գեորգեան Ա., Ամէնուն տարեգիրքը, Պէյրութ, 1967-1968, էջ 253:

<sup>171</sup> «Որբերու հացը կը խլեն», «Ասպարէզ», Ֆրեզո, 9.11.1923:

ուսանելու ժամանակը անցուցած ուսուցիչներ, գրողներ, նախկին կառավարութեան անդամներ, փախստականներ եւն. են և ոչ մէկ կերպով յարմարութիւններ ունին կրկին անգամ ուսանող դառնալու: Ծիծաղելիս հոռն է, որ անոնք, ինչպէս կը գրեն Փարիզէն, կ'աշխատին ուրիշ դասընթացք մը առնել, հոգ չէ, թէ ինչ ըլլայ, դիւրին կամ անուանական բան մը վերցնել և կարենտրին նայիլ, այսինքն՝ ուտեստի հոգէն ազատուիլ, տնտեսապէս հոգացուիլ բարեացական կառավարութեան մը մարդասիրական զգացումները շահագործելով: ...Որքերու հացը կը իլէ, անոնց լոյսը կ'իւրացնէ իր քանի մը չափահաս, ուսանող ըլլալէ վաղուց դադարած մարդիկը ապրեցնելու համար միայն»<sup>172</sup>: Անգամ Պոլսի «Ճակատամարտ» դաշնակցական թերթն է քննադատել Խատիսյանի և Փարիզի դաշնակցական բյուրոյի այս քայլը. «Ինչպէս յայտնի է, Չէխօ Սլովաքիոյ կառավարութիւնը տրամադրութիւն յայտնած էր 50 հայ ուսանող ընդունել Փրակայի համալսարանը և այլուր: Թերթերը գրեցին, թէ այդ համեմատութիւնը բարձրացած է 75-ի, շնորհիւ Պ. Խատիսեանի աշխատանքներուն: Յետոյ, ընդունուած ուսանողներու ցանկ մըն ալ հրատարակուեցաւ: Կարելի՞ է հարցնել, թէ Հ. Հ. պատուիրակութիւն, որ այս թանկագին պատեհութիւնը գտած էր, ինչո՞ւ հրապարակային կոչ մը չուղղեց թերթերուն՝ յայտնելով ընդունելութեան պայմանները և ինչո՞ւ, իր իսկ նախածեռնութեամբ, պայման չդրաւ, որ գոնէ հարիւրին 25-ը որքեր ըլլան թեկնածուները: Որքան գիտենք, մինչեւ հիմա դիմում ըրած կամ ընդունուած են այնպիսիներ, որոնք ուսանելու տարիքը կամ ընդունակութիւնն ալ անցուցած են: Ամէն պարագայի մէջ, մենք աններելի զանցառութիւն մը կը դիտենք այս ձեռնարկին մէջ...»<sup>173</sup>: Դաշնակցական մամուլն, անշուշտ, բոլոր կերպով պաշտպանվել է, սակայն պատմութիւնը ցույց տվեց, որ ՀՅԴ-ին ուղղված քննադատությունն անտեղի չէր, ինչի մասին խոսք կլինի հետագա շարադրանքում:

<sup>172</sup> Մ. Փայլակ, Հայ ուսանողներ և Չէխօսլովաք կառավարութիւնը (դաշնակցական տգեղ խաղ մը), «Նոր օր», Կ.Պոլիս, 30.10.1923:

<sup>173</sup> Աններելի թերացում, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 9.09.1923:

Ինչնէ, Պրահայում 1920-ականների կեսին եղել է հայ ուսանողութ-  
յուն, որն ունեցել է երկու վարչություն՝ կուսակցական և չեզոք:

Ուսանողներից շատերի համար Պրահան եղել է իրենց առաջին եվ-  
րոպական փորձառությունը, անձանոթ մի աշխարհ, որտեղ նրանց մեծ  
մասը մուտք է գործել իդեալիզմով և հայրենամկեր զգացումերով տո-  
գորված<sup>174</sup>: Ինչպես նշել է Կարապյանն իր հիշողություններում, «*Երբ  
մտանք Բոհեմական սահմանը, մենք այնպես ուրախ էինք, ինչպես թէ  
Անդրկովկասեան միւս պետութիւններից մտնէինք Հայաստան: Ահա  
մի նոր ազատագրուած ժողովուրդ և երկիր, որ նոյնպէս դարեր շարու-  
նակ հեծել է օտար լծի տակ*»<sup>175</sup>: Սակայն ինչպես նշեցինք, անշուշտ,  
Ավստրո-Հունգարիայի լուծը չեխերի համար նույնը չէր, ինչ որ հայերի  
համար՝ օսմանյանը: Իսկ Մանվել Մարությանը, հետագայում իր հու-  
շերում գրելով, որ չեխական կառավարությունը պետության հաշվին  
ընդունել է ուսանողներ տարբեր ազգերից (ամերիկացի, ռուս, հայ,  
վրացի, ուկրաինացի, գերմանացի), հարց է տվել. «*Նպատա՞կը... Քա-  
ղաքակա՞ն, թէ՞ մարդասիրական: Այդ այնքան էլ կարեւոր չէ: Մօտա-  
տրապէս յիսուն հայ ուսանողներ եկել են զանազան վայրերից, տարի-  
քը քսանից մինչեւ յիսուն*»<sup>176</sup>:

---

<sup>174</sup> Պրահայում ուսանած Երվանդ Քոչյանը մի հոդվածում այսպես է արտահայտվել իր  
ուսանողական քաղաքի մասին. «*Պրակա՛... Նորէն խարտեաշ սլաւ գեղոսիներ, սլացիկ  
հասակով, լոյսերու նման պսպղուն ժպիտներու ցոլքով կ'անցնին բովիկէս: Ահա Պանթոնը  
Սուրբ Վազլավի հրապարակին վրայ ու արձանին բով՛* Համալսարանի անհամար  
տանձարները միշտ վեհ, եւ ուսանողական տունը դողդոջացող յիշատակներու թարշամ  
փունջ սը՛ ձեռքին: Գետը քարատաշ շրջանակին մէջէն կամաց կը սուրայ փորի վրայ»  
(Քոչյանի Ե., Տարեկից, «Յառաջ», Փարիզ, 23.01.1935): Պրահայի վերաբերյալ մի հին  
ավանդություն էլ նա հիշել է իր «Լոռեթթայի զանգերը» հոդվածում (տե՛ս «Յառաջ», Փարիզ,  
8.10.1953):

<sup>175</sup> Կարապետն Ռ., Սի տարի Պրագայում, «Հայրենիք», Պոսթրն, 18.01.1925:  
Հետաքրքրական է, որ տասնամյակներ անց Հայաստան այցելած չեխ հայագետ Վազլավ  
Չեռնիկ էլ ասել է. «*Միջին Եւրոպայի մէջ մեծցած եւ դաստիարակուած մարդը երբ ուրքը  
դնւ Հայաստան. ինքզինք մտերմիկ մթնոլորտի մէջ կը զգայ: Շատ բաներ մեր հայրենի  
աշխարհը կը յիշեցնեն: Տարբեր է միայն լեզուն*» (Սրուխս մէկ մտաւ կը մնայ Հայաստան,  
«Յառաջ», Փարիզ, 4.06.1958):

<sup>176</sup> Մարաքեան Մ., Երբ իջնում է վարագոյրը, Թեհրան, 1972, էջ 5:

Չեխական իշխանությունները ժամանողներից վերցրել են հայկական անցագրերը՝ առանց բացառության և փոխարենը տվել են չեխական վկայական՝ մեկ տարի ժամկետով: Բնակարան վարձելը քաղաքում թանկ է եղել, ուստիև ուսանողները հաճախ միասին են ապրել, ոմանք էլ տուն են վարձել Պրահայից դուրս բնակավայրերում: Ավելորդ է ասել, որ նրանցից ոչ ոք սկզբնապես ծանոթ չի եղել չեխերենին, այդ իսկ պատճառով առաջին տարին զիջում են կատարել հայ ուսանողներին՝ թույլատրելով քննությունները հանձնել եվրոպական որևէ այլ լեզվով՝ դասախոսների համաձայնության դեպքում: «*Առաջին օրերս էին Փրակայի մէջ,–* հետագայում հիշել է ուսանող Երվանդ Քոչյանը:– *Աղետեն հալածական, ինքզինքս հոն կը նետէի ես ալ: Տխուր էի: Հայ չկար գրեթէ, բացի վաճառականներէ, որոնք դժուար բարեկ'անոնն, և կարգ մը ուսանողներէ, որ հայերէն չեն հասկնար»<sup>177</sup>:*

Չեխերը մեծ մասամբ չեն իմացել, թե ինչ ժողովուրդ են հայերը<sup>178</sup>: Նրանք հայերին հաճախ շփոթել են ռուսների և ռումինացիների հետ, և ռուս ուսանողության հանդեպ ունեցած անբարյացակամությունը տարածվել է նաև հայերի վրա: Սակայն ելք նրանց բացատրել են, որ

<sup>177</sup> **Քոչյան Եր.**, Հայասիրական շարժումը Չեխո-Սլովաքիոյ մէջ...

<sup>178</sup> Մարտիրոս Սասունցին վկայել է, որ երբ ինքը դեղագործի պաշտոնով մեկնել է Նովե Բենատկի (այժմ՝ Բենատկի նաղ Յիզերոու) քաղաքը՝ աշխատելու, այդ քաղաքի մարդիկ «*իրենց կեանքին մէջ ոչ յասծ և ոչ ալ որեւէ տեղ կարդացած էին Հայերու մասին: ...Անոնցմէ մէկը կը կարծէ եղեր, թէ Հայերը մոնկոլական տիպի մարդիկ են, ուրիշ մը կ'լաւ եղեր, թէ Հայերը սեւամորթ են, և այսպէս գիտ տեսնելու եկողներէ ամէն մէկը միտք մը յայտնած էր Հայերու մասին: ...Իսկ դեղարանի տէրը կը վախճայ եղեր որ ես այլանդակ մէկը ըլլալու եմ՝ տգեղ, սեւամորթ, աչքերս, բիթ ու բերսնս մոնկոլական... Ասոր համար կը մտածէ եղեր.– Այսպիսի մարդու մը երեսը մարդ չի մայիդ, դեղարանի յաճախողները ուրիշ դեղարան կ'երթան և իրենց գործը կը քանդուի: Այս խօսակցութիւններէն ետք Տոքթ. Պենէշ, զարեջողի գառաբը բարձրացուց, ներկաներուն առաջարկեց, որ իմ կենացը խմեն, ատեցնելով.*

*–Կը տեսնեք, թէ ոչ ոքի ևնքադրութիւնը տեղ չընեց. շատ վայելու է և սիրուն մեր դեղագործը, միայն թէ հասակը քիչ մը կարծ է,– ու բոլորը մէկ լիարորք խնդացին: ... Ես սկսայ աշխատիլ, և կարծ ժամանակէն շորքս հաւաքեցի քաղաքի լաւագոյն տարրերը: Ամէն կիրակի տեղ մը հրաշխուած կ'ըլլայի: Այդ ժողովուրդը ի՞նչ բուռն փափաք ունէր Հայերու և ամբողջ արեւելքի ժողովուրդներու կենցաղի մասին տեղեկութիւններ ունենալու» (Մարտիրոս Սասունցի, Սև օրագիր, էջ 271-272):*

իրենք ուրիշ ազգի ներկայացուցիչներ են, չեխերը փոխել են իրենց վերաբերմունքը՝ դառնալով ավելի սիրալիր, սկսել են հետաքրքրվել հայերով ու Հայաստանով: Հայ ուսանողներին առաջին տարում հոգատարությամբ է շրջապատել անդրկովկասյան երբեմնի կրթական ընդհանուր վերահսկիչ Ռուդոլֆը (պաշտոնավարել է մինչև 1917-ը<sup>179</sup>): Վերջինիս տիկինը մինչև 1924-ը մնացել է Ջալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան), որտեղ աշխատել է որբանոցում և հայ մանուկների հետ իր կապվածության պատճառով չի կամեցել հեռանալ Հայաստանից:

Հակասական կարծիքներ կան հնաբնակ չեխահայերի և ուսանողների միջև հարաբերությունների վերաբերյալ: Մի վկայության համաձայն՝ Պրահայում հաստատված հայ առևտրականներից ոմանք անբարյացակամ են եղել նորեկների հանդեպ և անգամ հալածել են նրանց ամենաանմեղների միջոցներով<sup>180</sup>: Հավանաբար այստեղ խոսքը մի մասնավոր դեպքի մասին է, քանի որ կան նաև հակառակը պնդող կարծիքներ, որ Պրահայի հայ համայնքը ողջունել է հայ ուսանողներին՝ ցուցաբերելով հոգատար վերաբերմունք: 1924-ի նախօրեին Պրահայի հայերը Նոր տարվա երեկոյան ճաշկերույթի սեղանի շուրջն է հավաքել տեղի հայ ուսանողությանը: «Այս հիւրընկալ և սիրելի աշխարհին մեջ, շատ յուզիչ էր և խորախուսիչ տեսնել 4-5 ընտանիք է բաղկացնել այդ փոքրիկ գաղութը շրջապատուած 40-50 հայ ուսանողներով»<sup>181</sup>: Համայնքի անունից ելույթ է ունեցել պարոն **Մաղաքյանը**, ուսանողության կողմից ևս եղել են պատասխան սրտառույ խոսքեր: Ինչպես վկայել է ներկաներից մեկը, «Ընտանեկան շատ մտերիմ իրիկուն մը ապրեցանք, բայց Փրակայի հայ վաճառականներուն այս

<sup>179</sup> Տես Ներքին լուրեր, «Մշակ», Թիֆլիս, 24.03.1917: Այստեղ Ռուդոլֆի պաշտոնը նշված է որպես Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու:

<sup>180</sup> Տես **Անցորդ**, Պրագայի հայ գաղութը, «Ալիք», Թեհրան, 10.02.1948:

<sup>181</sup> Ուսանողներու Կադանդը Փրակայի մեջ, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 23.01.1924:

շարժումները առեկի արժեք ունի, երբ մտածենք, որ նոր և առաջին երեւոյթն է այս, ուր հայ վաճառականն ու ուսանողը քով քովի և սիրտ սրտի միեւնոյն զգացումը և միեւնոյն կարօտը կ'սայրին»<sup>182</sup>:

1920-ականներին Պրահայում ուսանող 60 հայորդիներից ինը եղել են ռուսախոսներ, գործել են միայն ռուսական շրջանակներում և ընկալվել են որպէս ռուսներ, մնացած 51-ը համախմբվել են Հայ ուսանողական միութիւնում: Նրանցից միայն վեց հոգին են եկել ոչ թե Խատիսյանի պատվիրակութեան ցանկով, այլ անհատական դիմումներով: Ռ. Կարապետի բնութագրմամբ՝ իրենց սերունդը, թոթափւած լինելով նախորդների ռոմանտիզմը, ավելի գործնական մասնագիտութիւններ է ձեռք բերել: Նրա մշած հայ ուսանողների սովորած մասնագիտութիւնների ընդհանուր պատկերը հետևյալն է՝

1. գյուղատնտեսություն՝ 10 հոգի, 2. իրավաբանություն (ռուսաց լեզվով)՝ 8 հոգի, 3. փիլիսոփայություն՝ 7 հոգի, 4. բժշկություն՝ 6 հոգի, 5. մեքենագիտություն՝ 6 հոգի, 6. վաճառականություն՝ 5 հոգի, 7. երկրաչափ-կառուցող՝ 4 հոգի, 8. քիմիա՝ 4 հոգի, 9. ճարտարապետություն՝ 1 հոգի: Ընդհանուր՝ 51 հոգի<sup>183</sup>:

Ըստ Կարապետի՝ «մեր ուսանողութիւնը 1923–24 ուսումնական տարին պարզ երես դուրս եկաւ և նոյնիսկ լաւ համարում ստեղծեց իր ընդունակութիւնների մասին, որ պատիւ է բերում հայ ժողովրդին»<sup>184</sup>:

1924 թվականի մայիսի 28-ին Պրահայի հայ ուսանողութիւնը հանդիսավորապէս մշտել է Հայաստանի անկախութեան օրը, որին մասնակցել են բազմաթիվ օտարազգիներ, ինչպէս նաև Պրահայի հայ համայնքի ներկայացուցիչներ, որոնց թվում՝ ՀԲԸՄ նախագահներ Բարիկյանը և Ասլանյանը: Հանդիսութիւնը կատարվել է քաղաքի ամենամանձ հյուրանոցներից մեկում, հայկական եռագույն դրոշի ներքո, բացվել է «Մեր հայրենիք» օրհներգով, որ կատարել է Պրահայի Հայ

<sup>182</sup> Նույն տեղում:

<sup>183</sup> Տես Կարապետի Ռ. Սի տարի Պրագայում, «Հայրենիք», Պոսթըն, 21.01.1925:

<sup>184</sup> Նույն տեղում:

ուսանողների միության քառաձայն երգչախումբը: Ելույթներ են ունեցել Արշալույս Տեր-Աստվածատրյանը, Հայաստանի սոցիալ-հեղափոխական կազմակերպության կողմից՝ Վահան Մինախորյանը (երկուսն էլ՝ ռուսերեն), Սուրեն Բաբախյանը, Մուշեղ Թամրազյանը: Հայ ուսանողական միության վարչության նախագահ Սարգիս Թորոսյանը տեղում հայերեն և ռուսերեն ելույթները թարգմանել է չեխերեն: Ելույթ են ունեցել նաև Պրահայի վրացի ուսանողության անունից Ճանճավան, վրացական համայնքի պաշտոնական ներկայացուցիչ Այոլոն և սոցիալիստ Գ. Մ. Նակաշիձեն: Վերջինս խոսել է հայ-վրացական դարավոր բարեկամությունից, մասնավորապես շեշտել Թամար թագուհու օյրք Իվանե և Չաքարե սպասալարների մեծ դերը, որոնք նպաստել են Վրաստանի փառքին<sup>185</sup>: Հայ ժողովրդի հանդեպ ջերմ ելույթներով հանդես են եկել նաև Պրահայի ուկրաինացիներից չորս հոգի, այդ թվում՝ Եվրոպայում Ուկրաինայի ներկայացուցիչ Մ. Ա. Մլավինսկին, Բելոռուսիայից երկու ներկայացուցիչ, Հյուսիսային Կովկասի լեռնականների կողմից Ահմեդ Տ. Ցալիկովը, ինչպես նաև լիտվացիների, Կուրանի և Արևելյան Եվրոպայի ազգերի ուսանողական կենտրոնական մարմինների ներկայացուցիչները: Վերջում Հայ հեղափոխական դաշնակցության մասին ընդարձակ զեկուցումով հանդես է եկել Ռուսաստանի սոցիալ-հեղափոխական կուսակցության առաջնորդ և Սահմանադիր ժողովի նախագահ Վիկտոր Չեռնովը<sup>186</sup>:

1920-ականներին Չեխոսլովակիայի Հայ ուսանողների միությունից բացի Պրահայում գործել են Հայկական միությունը և Պրահայի Հայ Գյուղատնտեսական ուսանողական միությունը<sup>187</sup>: Նրանք հաճախակի հավաքվել են, կազմակերպել միջոցառումներ, նշել ազգային տոները: Ստացել են տարբեր երկրների ՀՅԴ մամուլ, հատկապես

<sup>185</sup> Տե՛ս Կարապետան Ռ., Հայաստանի անկախությունն սոսնը Պրահայում, «Հայրենիք», Պոսթրև, 26.06.1924:

<sup>186</sup> Չեռնովի մասին տե՛ս հայ մամուլում՝ Վիկտոր Չեռնովը Ամերիկայի մեջ, «Հայրենիք», Պոսթրև, 24.02.1929:

<sup>187</sup> Տե՛ս «Յառաջ», Փարիզ, 1.03.1928:

Բոսթոնի «Հայրենիքը» և Փարիզի «Յառաջը»: Հայ ուսանողներից շատերն աչքի են ընկել քաղաքական ակտիվությամբ: Այսպես, երբ 1924 թվականի ապրիլի 14-16-ին Պրահայում ազգային հարցի վերաբերյալ դասախոսություններ է կարդացել ռուս ականավոր քաղաքական գործիչ և կադետական կուսակցության ներկայացուցիչ Պ. Միլյուկովը, բազմազգ հանդիսասարահում ներկաներից շատերը ելույթ են ունեցել նրա դասախոսությունների առթիվ, հայերից արտահայտվել է Սուրեն Սահակյանը: Նա մասնավորապես կենտրոնացել է Միլյուկովի՝ «Հայերն անվերապահորեն հավատարիմ են եղել ռուսներին» արտահայտության վրա և եզրակացրել, որ այդ անգնահատելի հավատարմության վարձատրությունը եղել է հայ եկեղեցական կալվածների գրավումը, հայկական դպրոցների փակումը, հայ-թաթարական ընդհարումը, հայ հասարակական գործչի համար ռուսական բանտն ու արսուրդ և այլն: Պատասխանի մեջ Միլյուկովը հայկական հարցի ձախողման ողջ հանցանքը բարդել է Մեծ Բրիտանիայի վրա և մասնավորապես նշել, որ իբր «*ռուսական խիղճը հանգիստ է հայերի առջեւ*»<sup>188</sup>: Ակտիվ կուսակցականները հայկական ներկայություն են ապահովել տարբեր միջոցառումների ժամանակ: Այսպես, երբ 1934-ին Չեխոսլովակիայում մահացել է ռուս հեղափոխական շարժման գործիչ, «ռուսական հեղափոխության տատիկ» Եկատերինա Բրեշկո-Բրեշկովսկայան (1844–1934), նրա հուղարկավորությանը ներկա են եղել տեղի հայեր, նաև ՀՅԴ օրգան «Դրոշակի» ներկայացուցիչը<sup>189</sup>:

Ուսանողներից ոմանք աշխատակցել են հայ մամուլին՝ Չեխոսլովակիային և տեղի հայ ուսանողներին նվիրված թղթակցություններով: Այսպես, Նիկոլ Բաղայանը «Դրոշակ»-ում հրատարակել է հոդվածներ Պրագայի ծածկանունով<sup>190</sup>, Հովհաննես Հախնազարյանը Չե-

<sup>188</sup> Ընտերն ու հայերը, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 18.05.1924:

<sup>189</sup> Տե՛ս Մահ Կ. Բրեշկո-Բրեշկովսկայան, «Այիք», Թեհրան, 14.10.1934:

<sup>190</sup> Տե՛ս, օրինակ, Պրագայի, Նոր Արևելքի ընկերվարական միությունը, «Դրոշակ», Աթենք, 1927, թ. 8, էջ 253-255:

խոստովակիային նվիրված նյութերով աշխատակցել է Թեհրանի «Ալիք» օրաթերթին<sup>191</sup>, Փարիզի «Յառաջ»-ում Պրահայից ուղարկած թղթակցությամբ հանդես է եկել ծնունդով երևանցի Լևոն Մելիք-Դադայանը՝ Լ. Նաիրցի ծածկանունով<sup>192</sup>: «Յառաջին» և Բոսթոնի «Հայրենիքին» Ռ. և Ռ. Կ. ծածկանուններով աշխատակցել է վերոհիշյալ Ռ. Կարապյանը (հավանաբար՝ Կարապետյան)<sup>193</sup>: Չեխիայում տեղի ունեցած կարևոր միջոցառումների վերաբերյալ «Հայրենիքին» պարբերաբար տեղյակ է պահել նաև Օննիկ Մխիթարյանը<sup>194</sup>: Ավելի ուշ Չեխոստովակիայի մարզական կյանքի մասին հոդվածով հանդես է եկել սփյուռքահայ մարզիչ Ա. Հաճյանը, որը հավանաբար անձամբ այցելել է երկիր և ուսումնասիրել տեղի փորձը<sup>195</sup>: 1925-ին Կ. Պոլսի «Մարմարայում» տպագրվել են Չեխոստովակիային և չեխահայերին նվիրված հոդվածներ՝ «Մեր սեփական թղթակից են» նշումով, որոնց հեղինակները հանդես են եկել Դ. Ա., Ա. Զօրի, Վ. Ստեփի ծածկանուններով<sup>196</sup>:

1925-ին Չեխոստովակիայի Հայ ուսանողական միությունը նախածռնել է Եվրոպահայ ուսանողության համագումարը Պրահայում, որի

---

<sup>191</sup> Տե՛ս, օրինակ՝ Հախնազարեան Յ. դրքա., Պարսկագիտութիւնը Չեխոստովաքիոյ մէջ, «Ալիք», Թեհրան, 1.05.1932: Հախնազարեան Յ. Չեխական մամուլն ու հայերը, անդ, 22-23.10.1933: Հախնազարեան Յ. դոկտ., Մարզանքը Չեխոստովակիայում, անդ, 13.02.1936:

<sup>192</sup> Լ. Նաիրցի. Չեխական ընտրութիւնները. նախ կ'անարգեն, յետոյ կ'ընտրեն, «Յառաջ», Փարիզ, 4.12.1925:

<sup>193</sup> Տե՛ս Պրահայից նրա ուղարկած թղթակցությունները՝ Նոր Արեւելքի ընկերվարական լիգան և իր նախագիծը, «Հայրենիք», Պոսթըն, 23.08.1927: Նիւ Եորքի ուսանողները Երոպայում, «Հայրենիք», Պոսթըն, 8.10.1925:

<sup>194</sup> Տե՛ս Մխիթարեան Օ., Բանտորական ոլիմպիականը Փրակայի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 13-14.08.1927:

<sup>195</sup> Հաճեան Ա. Չեխիոյ Սոկոլների կազմակերպութիւնները, «Ալիք», Թեհրան, 10-12.11.1936:

<sup>196</sup> Տե՛ս, օրինակ, Դ. Ա., Համայնավարական պայտոթիւնը Փրակայի մէջ. վերջին ցոյցերը ձախողած, «Մարմարա», Կ. Պոլիս, 24.02.1925: Ա. Զօրի. Չեխ համայնավարական կուսակցութեան պառակտումը, անդ, 7.03.1925: Վ. Ստեփի. Դէպքեր Չեխո-Սլոաքիոյ մէջ, անդ, 31.12.1925:

օրակարգի առաջին և զլխավոր կետն է եղել «*Երոպայի հայ ուսանողների մասնակցութիւնը Հայաստանի օգնութեան գործում*»<sup>197</sup>: Այդ առթիվ կոչ է հրատարակվել Փարիզի «Յառաջ» օրաթերթում<sup>198</sup>: Այն չի իրականացել՝ մեզ անհայտ պատճառներով:

1926-ի ապրիլին Հայ ուսանողական միությունն ունեցել է 43 անդամ: Միության՝ ապրիլի 17-ին գումարված ժողովի չեխերեն արձանագրության մեջ նշվել է, որ այդ քիչ թվի պատճառով հայերը չեն կարող մասնակցել Պրահայում կայանալիք ուսանողական միջազգային համագումարին:

Պահպանվել է Պրահայի Հայ ուսանողական միության ժողովներից մեկի չեխերեն արձանագրությունը.

*«Ընդհանուր ժողով*

*Հայ ուսանողական միություն*

*պաշտոնական տեղեկատվություն և ընտրություններ*

*23 հոկտեմբեր, 1926, ժամը 15.30-17.15*

*Պրահա 2, Ուսանողական տուն*

*Մասնակցություն. մոտ 25 հոգի*

*Նախագահ՝ Ե. Ֆրնտըրյան, Պրահա 4, Հոստիվիտովա 3*

*Ելույթներ. Ե. Ֆրնտըրյան, Հար. Ղարիբյան, Ռ. Գուրգենյան.....*

*Ընթացք*

*Փոխնախագահ Ռ. Գուրգենյանը զեկուցեց բացակա գործադիր տնօրենի փոխարեն:*

*Ներկայումս միությունն ունի 35 անդամ:*

*Հայ ուսանողական միությունն այժմ Ֆրանսիայում ունի 46 անդամ:*

*Գանձապահ Հար. Ղարիբյանը նշեց, որ Միության ունեցվածքը կազմում է 700 կրոն, որից անդամներին բաժանված է 300 կրոն.....*

*Նախագահը կոչ արեց ճշգրիտ պահպանել փոխառությունների մարումները.....*

---

<sup>197</sup> Ուսանողական համագումար, «Այազայ», Փարիզ, 26.09.1925:

<sup>198</sup> Երոպայի հայ ուսանողութիւնը, «Յառաջ», Փարիզ, 20.09.1925:

*Ժողովը հայոց լեզվով էր: Ընթացքը և ավարտը՝ հանդարտ»<sup>199</sup>:*

1927 թվականին Պրահայում ստեղծվել է «Նոր արևելքի սոցիալիստական լիգան», որի մեջ մտել են ռուս, ուկրաինացի և բելոռուս էսեռները և ՀՅԴ անդամ հայերը, այդ թվում՝ Հովհաննես Ալիմյանը<sup>200</sup>:

Նույն թվականին Պրահայի ուսանողները հրատարակել են «Փետրվար 18» հատորը՝ նվիրված 1918-ի փետրվարյան ապստամբությանը<sup>201</sup>: Սա այս ժամանակաշրջանում Չեխոսլովակիայում հրատարակված առաջին և թերևս վերջին հայերեն գիրքն է: Ժողովածուում հոդվածներով հանդես են եկել Ս. Արամյանը («Փետրվարյան հեղափոխությունը և բուլշևիզմը»), Օն. Մխիթարյանը («Փետրվարյան ապստամբության աղբյուրները»), Նիկոլ Բադալյանը («Փետրվար 18. հայկական ազատագրական շարժման ամբողջացման մարմնացում»), Գարեգին Երեցյանը («Փետրվար 18-ի նշանակությունը»), Հ. Հարությունյանը («Մեր զոհերը») և Մ. Գրիգորյանը («Վայոց-Ձորի ապստամբական շարժումներից»): Ինչպես նշվել է գրքի նախաբանում. «Այս համեստ գրքոյկի հրատարակումով մեր միակ նպատակը եղած է, վեցերորդ տարեդարձին առիթով, քանի մը յօդածներով Փրակայի դաշնակցական ուսանողութեան անկեղծ ու սրտաբուխ յարգանքը արտայայտել Փետրուարեան Ապստամբութիւնը դարձնող հայ աշխատատր ժողովրդին ու հայ ազատատենչ երիտասարդութեան և անգամ մը ևս ըսել, թէ Փետրուարեան Ապստամբութեան յայտարարած գաղափարներու – Ազատ, Անկախ, Ամբողջական ու Ժողովրդավար Հայաստանի – իրականացման համար աշխատելու և պայքարելու միշտ պատրաստ է դաշնակցական ուսանողութիւնը»<sup>202</sup>:

<sup>199</sup> Այս և նշված նախորդ փաստաթուղթը պահվում է Չեխական ազգային արխիվում. հայերեն թարգմանությամբ մեզ է տրամադրել Տիգրան Արրահամյանը (Պրահա):

<sup>200</sup> Տե՛ս Серапионова Е. П., Российская эмиграция в Чехословацкой Республике (20-30-е годы), Москва, 1995, էջ 47:

<sup>201</sup> Տե՛ս Փետրուար 18: Հրատարակութիւն Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միութեան, Փրակա, 1927:

<sup>202</sup> Անդ. էջ 3-4:

1928-ին Պրահայի ուսանողները կազմակերպել են վիճակախաղ մշակութային-կրթական նպատակով<sup>203</sup>: Նույն թվականին Փետրվարյան ապստամբության յոթերորդ տարելիցի առթիվ Բոսթոնի «Հայրենիք» օրաթերթում Պրահայի ուսանողությունը հրատարակել է բողոքի կոչ՝ ընդդեմ Խորհրդային Հայաստանի «*յասակօրէն հայրենադատ քաղաքականութեան*», որը խեղդում է Հայաստանից անջատված Ալսալքալաքի, Գանձակ-Ղարաբաղի, Շարուր-Նախիջևանի և հայկական Բորչալուի հայ բնակչության՝ Հայաստանին միանալու ձգտումները՝ պահանջելով ազատ արձակել բոլոր այլախոհ բանտարկյալներին և արքորականներին, վերադարձնել ժողովրդին՝ զենքը, իսկ Հայաստանին՝ նրանից խլված տարածքները, ինչպես նաև լայն բացել Հայաստանի դռները տարագիր զանգվածների առջև<sup>204</sup>:

Պահպանվել են տեղեկություններ նույն 1928 թվականին մայիսի 28-ի Պրահայում կայացած տոնակատարության վերաբերյալ: Այս անգամ հանդիսությունը կայացել է Պրահայի Օսլերայի տանը՝ ՀՅԴ Պրահայի ուսանողական միության, տեղի հայ համայնքի և Պրահայի Անկուսակցական ճեմարանական հայ ուսանողների միության նախաձեռնությամբ ու հայ, չեխ, ռուս, ուկրաինացի, բելառուս, վրացի և այլ ազգությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Չնայած վաղուց արդեն Հայաստանի մի մասում հաստատված էին խորհրդային կարգեր, Չեխիայում կղզիացած մի խումբ հայրորդիներն իրենց պարտքն էին համարում այդ օրը ոգեկոչել անկախության և պետականության վերականգնման այդ էջանակալից երկու տարին՝ 1918–1920 թվականները: Հանդիսությունը բացել է Երվանդ-Քոչյանը, ուսանողները կատարել են «Մեր հայրենիքը»: Ելույթներ են ունեցել վերոհիշյալ Վիկտոր Չեռնովը, Պրահայի հայ ուսանողների անունից՝ Նիկոլ Բաղալյանը (հայերեն) և Լևոն Մելիք-Դադայանը (չեխերեն): Մյուս բա-

<sup>203</sup> Տե՛ս Փրակայի վիճակախաղը, «Յառաջ», Փարիզ, 1.03.1928:

<sup>204</sup> Տե՛ս Փրակայի հայ ուսանողութեան բողոքը, «Հայրենիք», Պոսթըն, 13.03.1928:

մսխոսմունքն էին ծերակուտական Վագները (չեխ ընկերվարական կուսակցություն), Շապավալը<sup>205</sup> (ուկրաինական սոցիալ-հեղափոխական կուսակցության ղեկավար), Գուրևիչը<sup>206</sup> (Ռուսաստանի սոցիալ-հեղափոխական կուսակցություն), Չեռչիան (վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցություն և Պրահայի վրացի ուսանողություն), Մագոմաևը (Կովկասի լեռնականների ներկայացուցիչը) և այլք: Բոլորը կատարել են հայ ժողովրդի և ՀՅԴ-ի փառաբանումը: Հանդիսությունն ավարտվել է համերգով, նվագել են քամանչա, ուսանողներ Մարությանը և Վարդգես Հակոբյանը կատարել են հայկական երգեր: Միջոցառմանը ներկա է եղել 100-ից ավելի մարդ, չեխ ուսանող-ուսանողուհիներ: Սույն ձեռնարկին «Չեսկե սլովո» պարբերականում անդրադարձել է նրա խմբագիր Շմեյկալը<sup>207</sup> «Կեցցե Հայաստանը» հոդվածով, «Պրավո լիդո» թերթում Օ. Ա. ստորագրությամբ մի հեղինակ հրատարակել է «Հայկական հանրապետության տասնամյակը» նյութը, իսկ Ստանիսլավ Նիկոլաուս<sup>208</sup> «Նարոդնի պոլիտիկա» թերթում հանդես է եկել «Մայիսյան օրեր» վերնագրված լրատվությամբ<sup>209</sup>:

1930-ին, ինչպես բոլոր երկրների ՀՅԴ և ՀՅԴ-ամետ շրջանակները, Պրահայի հայ ուսանողության վարչությունները ևս տոնել են Ավետիս Ահարոնյանի գրական գործունեության 40-ամյա հոբելյանը: Մայիսի 10-ին չեխական և գերմանական թերթերում հոդվածներ են հրատարակվել Ահարոնյանի կյանքի և գործունեության մասին՝ նրա լուսանկարով հանդերձ, իսկ «Նարոդնի օսվոբոդենի» («Ազգային ազատագրություն») թերթում տպագրվել է նրա «Նագեի օրորը» պատմվածքի

<sup>205</sup> Մ. Շապավալ, 1922–1928 թթ. Պրահայում խմբագրել է «Նովա Ռկրաինա» ուկրաիներեն թերթը:

<sup>206</sup> Վիսարիոն Գուրևիչ (1876–1940), ռուս քաղաքական գործիչ, էսէռ, Պրահայի Ռուսական լիազմարտական ֆակուլտետի պրոֆեսոր:

<sup>207</sup> Հավանաբար գրող և խմբագիր Յարոմիր Վացլավ Շմեյկալը (1902–1941):

<sup>208</sup> Ստանիսլավ Նիկոլաուս (1878–1950), լրագրող, աշխարհագրության ուսուցիչ, կուսակցական գործիչ:

<sup>209</sup> Տե՛ս Թրքակից, Մայիս 28ը Չեխո-Սլովակիոյ մեջ, «Հայրենիք», Պոսքըն, 19-20.06.1928: Տե՛ս նաև՝ Հայաստանի անկախության տասնամյակի տոնակատարություններ, «Դրօշակ», Արենք, Յունիս-Յուլիս 1928, էջ 188-189:

չելխերեն թարգմանությունը: Հանդիսությունը բացել է Ահարոնյանի համագյուղացի (Իգդիի շրջանի գյուղ Մավա) Հարություն Ղարիբյանը, որը ներկայացրել է գրողի կենսագրությունը և տվել նրա գրական գործունեության գնահատականը: Այնուհետև Ահարոնյանի մասին իրենց հիշողություններն են պատմել սոցիալիստ հեղափոխական կուսակցության գործիչ և Ահարոնյանի երբեմնի բանտընկեր Լևոն Մինսխոբյանը, Գեղամ Քյոսեյանը: Երաժշտական կատարումներով հանդես է եկել հայ ուսանողների երգչախումբը, ընթերցվել են Ահարոնյանի բանաստեղծություններից: Վերջում կարդացել են Պրահայի հայ ուսանողների ուղերձը Ավետիս Ահարոնյանին՝ ստորագրված 30 ուսանող-ուսանողուհիների կողմից: Այս պաշտոնական հանդեսից հետո Հայ ուսանողական միությունը ևս մեկ դասախոսություն է կազմակերպել՝ նվիրված Ահարոնյանի գրական գործունեությանը (դասախոս՝ Ռուբեն Վարդանյան-Ռեն<sup>210</sup>):

1931-ին, թեև հայ ուսանողների թիվը սկսել է պակասել Պրահայում, մայիսի 30-ին կազմակերպվել է ընկերական հավաքույթ՝ դարձյալ ոգեկոչելու համար Մայիսի 28-ը: Ներկա են եղել Պրահայում գտնվող բոլոր հայերը՝ բացառությամբ մի քանի տարեց առևտրականների: Հավաքույթը նախագահել է Հարություն Ղարիբյանը, ելույթ են ունեցել Հովհաննես Հախնազարյանը, Գ. Երեցյանը և Նիկոլ Բաղալյանը, ապա ներկաները հերթով պատմել են իրենց հուշերը Հայաստանի և Մայիսի 28-ի մասին<sup>211</sup>:

Թեև Պրահայի հայ ուսանողները ստացել են տարբեր երկրներից հայ մամուլ և կապի մեջ են եղել իրենց բնակած երկրների և մյուս պետությունների հայագաղութների հետ, ի վերջո նրանք իրենց զգացել են կտրված համայն հայությունից («*Լուռ, դանդաղորեն, գուցե ամենփից մոռացուած Փրակայի հայ ուսանողութիւնը իր միտքն է մարզում.*

<sup>210</sup> Տե՛ս Պրագայի Յոթելանը Փրակայի մեջ, «Յառաջ», Փարիզ, 22.05.1930: Նույնը տե՛ս Ա. Ահարոնյանի յոթելանը Փրակայի մեջ, «Յուսաբեր», Գահիրե, 31.05.1930:

<sup>211</sup> Թրակից, Մայիս 28-ը Պրագայում, «Յուսաբեր», Կահիրե, 11.06.1931:

որ միշտ, և մտախիկ ապագայում ասպարեզ պիտի գայ ու իր քաջութեամբ, իր սյայքարով ապացուցի, որ ինքը մահել է իր մեջից թուամորթներին, վատերին ու նուիրում է հայ ազատագրական պայքարին»<sup>212</sup>): Այդ պատճառով երբեմն նրանք այցելել են հարևան երկրների հայազաղութները՝ մասնակցելու տարբեր ազգային միջոցառումների: Այսպես, 1925-ին ուսանողների մի խումբ Բուխարեստում մասնակցել է թատերական բեմադրությունների<sup>213</sup>, իսկ 1927-ին ելույթներ են ունեցել Բեռլինի հայ համայնքի համար: Ի դեպ, Պրահայի հայ ուսանողները հնարավորություն են ունեցել իրենց մշակույթը ցուցադրել նաև ոչ հայկական շրջանակներում: 1920-ականների վերջին Ռժենիցա բնակավայրում երբեմն կազմակերպվել են ներգաղթածների մշակութային միջոցառումներ և դասախոսություններ: Հատկապես հաջողություն է ունեցել կալմիկական երգի-պարի համերգը, իսկ մեկ ուրիշ անգամ էլ տեղի է ունեցել հայ ժողովրդական երգերի համերգ<sup>214</sup>: . .

Պրահայի հայ ուսանողների կյանքի և գործունեության վերաբերյալ որոշակի պատկերացում են տալիս գրող Ռուբեն Վարդանյանի՝ 1920-ականներին Պրահայից «Հայրենիք» ամսագրին ուղարկած նամակները: Նրա վկայությամբ՝ 1930-ի շրջանավարտների թիվը մեկ տասնյակ էր: «*Լինելով «հայ ազգի» սաներ և Հ. Յ. Դաշնակցութեան հովանաատրեալներ, դիմում արին վերջինիս, որ նա մեզ ցրի գաղութներում. ըստ մեր մասնագիտութիւնների, վասն զի կ'ուզէինք «ազգին» օգտակար լինել»*<sup>215</sup>: Այդ նպատակով Պրահա է ժամանել դաշնակցության բյուրոյի ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը, որը շրջանավարտներին տրամադրել է ճանապարհաձախս՝ ուղարկելով տարբեր հայագաղութներ: Մի նամակում էլ Վարդանյանը վկայել է. «*Չեխական յայտնի թանգարանի վերահսկիչ-կառավարիչը մեր պրոֆեսորներից*

<sup>212</sup> Տե՛ս Անրատան ծառը և անոր ծիւերը, «Հայրենիք», Պոսթըն, 26.03.1924:

<sup>213</sup> Ուսանող դերասանները մեր մէջ, «Նաւասարդ», Պոսթըն, 1925, Բ. տարի, Ե. սյրակ, էջ 159:

<sup>214</sup> Տե՛ս Постников С. П., ред., Русские в Праге, 1918-1928 гг., Прага, 1928, էջ 144:

<sup>215</sup> Մեր աշխատակիցներու նամակները, էջ 24:

մէկն է, որի հետ ծանօթացայ այն բանից յետոյ, երբ 14-րդ դարու իրենց հին ժամանակագիրներից մէկի քրոնիկը կարդաց լսարանում և ջերմ խօսքեր ասաց հայերի հասցէին: Թագալար անուն ժամանակագիրը շատ լաւ վկայութիւն է տալիս մեր մասին, երբ խօսում է մահմեդականութեան մասին»<sup>216</sup> (ի դեպ, այս Թագալար անունն անճանաչ է. հավանաբար խոսքը 14-րդ դարի չեխերեն գրված առաջին պատմական երկի՝ «Դաիլիմիլյան ժամանակագրության» մասին է):

Այս շրջանում Պրահայի հայ ուսանողների նախածեռնությամբ գրական «Չին» («Գործ») հանդեսում չեխերեն թարգմանությամբ լույս են տեսել փոքր ստեղծագործություններ հայ բանաստեղծներից, որ կատարել են հայ ուսանողները և հայերեն ուսանած տեղացիները: Վերոհիշյալ Ռուբեն Վարդանյանը չեխերենից հայերեն է թարգմանել Տոմաշ Մասարիկի «Սլավոնները պատերազմից հետո» գրքույկը, որը որպէս թերթոն լույս է տեսել «Հայրենիքում»<sup>217</sup>: Այս աշխատությունը հակիրճ և ամփոփ ներկայացնում է սլավոնական ժողովուրդների ներքին և արտաքին քաղաքականությունը, նրանց հասարակական և տնտեսական կյանքը, մշակութային միտումները, կրոնական և քաղաքական շարժումները, տարածքային վեճերը, նրանց փոխհարաբերություններն ու ազգային գաղափարները: Ի դեպ, իր այդ գրքույկում Մասարիկը, անդրադառնալով Եվրոպայի տարբեր ժողովուրդների և պետությունների, եկել է այն համոզման, որ ի վերջո պիտի ստեղծվեն, այսպէս կոչված, Եվրոպայի Միացյալ Նահանգներ, ինչի շնորհիվ պիտի հաստատվի հավերժական խաղաղություն: Իր թարգմանության առթիվ Վարդանյանը նամակ է գրել Մասարիկին՝ տեղեկացնելով, որ թարգմանում է նրա գրքույկը, միաժամանակ տվյալներ է հաղորդել Պրահայի հայ ուսանողության և մոտ անցյալում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին: Այդ ամենը նա կապել է Մասարիկի գրքի բո-

<sup>216</sup> Մեր աշխատակիցներու նամակները, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1963, ք. 8, էջ 8-9:

<sup>217</sup> Տե՛ս «Հայրենիք», Պոսթըն, 11.03-20.03.1925:

վանդակութեանը, որի նպատակն է աշխարհի ժողովուրդներին առաջադրել հավերժական խաղաղության ծրագիր<sup>218</sup>: Մասարիկի այս աշխատությունը կրթիչ դեր է ունեցել հայ ընթերցողի համար, ուստիև սխալ չէ այն կարծիքը, որ հայ գործիչներից շատերն իրենց հանրային կրթությունն ստացել են Մասարիկի գիտական երկերի շնորհիվ<sup>219</sup>: «...Չեխոյ Մեծ Չաւակը դեր ունեցած է մեր կեանքին մէջ նաև իբրև ուսուցիչ և գաղափարախօս,– գրվել է հայ մամուլում հրատարակված նրա մահախոսականում:– Մասարիքի գլխաւորած պետութիւնն էր – միակը ամբողջ Եւրոպայի մէջ – որ Հայաստանի 50 հայ ուսանողներ հիւրընկալեց և պետական հաշուով անոնց բարձրագոյն կրթութեան տուաւ»<sup>220</sup>: Նույն մահախոսականում նշված էր, որ Մասարիկն անձամբ ծանոթ է եղել հայ ազգային-հասարակական գործիչ Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) հետ և նրա համագործակցությամբ որոշ ժամանակ աջակցել է Հայ Դատին: Մասարիկի մահվան առթիվ նրա մասին հողվածով հանդես է եկել նաև ականավոր բանաստեղծ Վահան Թեքեյանը<sup>221</sup>:

Ի դեպ, 1935-ին Ադել Բրեդինգի «Մասարիկ» աշխատությունը՝ Սիրանուշ Եղիազարյանի ֆրանսերենից կատարած թարգմանությամբ, որպես թերթոն, լույս է տեսել Թեհրանի «Ալիք» օրաթերթում (հուլիսի 21-ից սկսած մինչև օգոստոսի 29-ը ներառյալ): Առաջին համարում «Ալիքը» նաև Մասարիկի մասին կենսագրական տեղեկություններ է տվել՝ քաղված «Խորհրդային Հայաստան» օրաթերթից (1935-ի հունվարի 2-ի համարից):

Հայ ուսանողների ներկայությունը որոշ աշխուժություն է տվել Պրահայի հայ կյանքին: «Բացառիկ կենսունակութիւնով ծաղկել սկսած է հայ կեանքը Փրակայի մէջ. գիտակից այն յոյսերուն, որոնք

<sup>218</sup> Տես Սևր աշխատակիցներու նամակները, էջ 8-9:

<sup>219</sup> Տես Հանգուցեալ Մասարիք և հայերը, «Արագ», Պոքրէշ, 3.10.1937:

<sup>220</sup> Նույն տեղում: Տես նաև՝ Նախագահ Թ. Մասարիք, «Հայրենիք», Պոսթըն, 23.01.1936: Մարտիրոսեան Ն., Մասարիք եւ Պենէշ, «Արեւ», Գահիրէ, 8.12.1936: Նույնի. Թ. Կ. Մասարիք, «Արեւ», Գահիրէ, 22.09.1937:

<sup>221</sup> Տես Թեքեան Վ., Մագարիքի բարոյական կտակը, «Չարթօնք», Պէյրուք, 29.10.1937:

կապուած են իրեն: Մենք գիտենք Դորսպատեն ինչ լույս ցաթեց մեզ: Փրակա՞ն ինչ սյիտի տայ արդեօք»,– հարցրել է հայ ուսանողներից մեկը<sup>222</sup>:

Սակայն Պրահային վիճակված չէր երկրորդ Դորսպատ դառնալ: Հայ ուսանողների մեծամասնությունը չի կարողացել օգտվել այդ բացառիկ հնարավորությունից: Պրահայում ուսանող հայորդիների մի մասը, արդեն ուսանելու երկրորդ տարուց, սկսել է աստիճանաբար հեռանալ Չեխոսլովակիայից: Պատճառները տարբեր էին: Նախ, ուսանողների ընտրությունը ճիշտ չի եղել. ինչպես նշվել է ժամանակի քննադատական հոդվածներում, կուսակցականության չափանիշներով ընտրվել են պատահական մարդիկ, հաճախ արդեն տաքիբով, նախկին զինվորականներ, քչերն են ունեցել երկրորդական կրթություն: Ոմանք չեն հարմարվել Պրահայի կլիմայական պայմաններին և տեղափոխվել են ավելի տաք երկրներ, ոմանք չեն կարողացել հաղթահարել լեզվական պատմեշը (մեծ մասը չի տիրապետել չեխերենին և գերմաներենին), ոմանց նեղել են տնտեսական պայմանները<sup>223</sup>, իսկ ոմանք էլ չեն ցանկացել շարունակել հարկադրյալ ընտրված մասնագիտությունը: Այսպես, Մանվել Մարությանը, գտնելով վիեննաբնակ մի հայ մեկենասի և անսալով իր ճշմարիտ կոչմանը, տեղափոխվել է Ավստրիա՝ թատերարվեստ ուսանելու: Արդեն 1925 թվականին Պրահայից հեռացել են Եփրեմ Սարգիսյանը, Ահարոն Տատուրյանը, Անդ-

---

<sup>222</sup> Եր. Հայկազն, Հայ կեանքը Փրակայի մեջ....

<sup>223</sup> Պրահայի ուսանողներից մեկի՝ Բարդիկ Մյնասյանի դուստրը՝ պատմաբան Բուրիմա Փիրումյանը (ԱՄՆ), 2007-ի նոյեմբերի 13-ին մեզ ուղղած էլեկտրոնային մամակում վկայել է. «Կենսապայմանները շատ խեղճ էին, բոշակները՝ անբավարար և ոչ շատ պարբերական»: Ուսանողներից շատերը եղել են անգամ համեստ սնունդի կարոտ: «Մտրեն Բարախեսան կը պատմէր թէ՛ օր մը, Սհարոն Տատուրեան, այն ատեն ուսանող Փրակայի համալսարանին մէջ, Աստուածամօր ւտջև ծնրադիր կ'արօթ ու կ'ըսէ. «Տէ՛ր Աստուած, ինձի սպիտակ հաց եւ ձիթապտոտ ոտյարկե՛» (ՄօսկօՖեան Վ., Սպիտակ հաց եւ ձիթապտոտ, «Յառաջ», Փարիզ, 15.09.1950):

րն Տեր-Օհանյանը, Կոռո Թարխանյանն ընտանիքով, Սուրեն Սահակյանը և Երվանդ Քոչյանը<sup>224</sup>: 1928-ի հունիսին Ռուբեն Վարդանյանը գրել է. «Կամաց-կամաց Պրագան դատարկում է մեր ուսանողներից<sup>225</sup>: Մէկ տարի յետոյ Պրագայում կարող են մնալ մէկ կամ երկու ուսանող, որոնց դասընթացքները հինգ տարուց աւելի են: Շատ դառնութիւն տեսանք Թարիզից մինչեւ Պրագա, իսկ մեր ուսանողական տարիները անցան օրուայ պէս, արագ ու թեթեւ: Պրագան շատ բան փոխեց այն ուսանողների ուղեղում և սրտում, որոնք իրօք ծարաւ էին գիտութեան կամ զգում էին իրենց անհատական պակասները: Շատերի վրայ Պրագան մեծ ազդեցութիւն թողեց, նրանց կրթեց, մեղմացրեց և դարձրեց ժամանակակից մարդ:

Սակայն, չի կարելի ժխտել, որ Պրագան ունեցաւ նաև շատ բացասական ազդեցութիւն մի քանի հոգու վրայ, որոնք անկեղծ չեն իրենք իրենց հետ, հետեւաբար նաև շրջապատի հետ: Ուրախալի է, որ այդպիսիները շատ քիչ են, մէկ կամ երկու հոգի, նոյն մարդիկ, նոյն կրթութեամբ, նոյն հոգով ու բնատրութեամբ:

Սկզբում մենք բոլորս հաւատացած էինք, որ Պրագան կարող է դառնալ մեզ համար մի նոր Դորքատ (*sic*), որտեղից դուրս պիտի գան նոր վերածնիչներ, նոր և տարբեր մարդիկ, մեր ժողովրդին միշտ օգտակար և նրա ցաւերով ապրող ու տառապող: Հինգ և աւելի տարի յետոյ, բոլորս զգում ենք, որ մենք չարաչար սխալուել ենք և շատ ենք գերզնահատել (*sic*) մեր ուժերը, եւ, եթէ կարելի է այսպէս արտայայտուել մեր յատուկ առաքելութիւնը:

Պրագայում կան մի քանի հոգի, որոնք արդէն հրապարակի վրայ են, այս կամ այն կերպ արտայայտում են: Մնացածներից դուրս կը

<sup>224</sup> Տե՛ս Մեր աշխատակիցներու նամակները, էջ 9:

<sup>225</sup> Այդ իսկ պատճառով մեզ ճշգրիտ չի թվում 1930-ին հրատարակված այն տեղեկությունը, թե Պրահայում բնակվում են հարյուր հայեր, մեծ մասը՝ ուսանողներ, որոնք հետևում են բժշկության, իրավաբանության, փիլիսոփայության և ճարտարաբանության (տես Ուսանողական գաղութ, «Հայրենիք», Պոսթըն, 30.09.1930):

զան միայն օգտակար քաղաքացիներ մեր նոր հայրենիքի ու վերածնունդ հայրենիքի»<sup>226</sup>:

1932-ի տվյալով Պրահայի 71 հայ ուսանողից ավարտել է 39-ը, պատրաստվել են ավարտական քննություն հանձնել ութը, իսկ երկուսը կիսատ թողնելով ուսումը Պրահայում՝ շարունակել են Ավստրիայում: 17 հոգի կիսավարտ հեռացել են Պրահայից՝ ընտանեկան, նյութական, առողջական և կլիմայական պատճառներով: 71 հոգուց Պրահայում մնացել են 21-ը. երկուսը պատրաստվել են միանալ Աթենքից Հայաստան մեկնող քարավանին, ուրիշները ցրվել են Ֆրանսիա, Սիբիրիա, Ռումինիա, Բուլղարիա, Իրան և Միջագետք: «Չեխոսլովակիա հաստատուելու և մնալու ցանկութիւն ունեցող գրեթէ չկայ. թէ՛ նիւթական և թէ՛ ազգային պատճառներով»<sup>227</sup>: Ուսումից բացի, հայ ուսանողները ստիպված են եղել ապրուստ վաստակել այլևայլ զբաղմունքներով: Ինչպես վկայել է նրանցից Վահան Մինախոբյանը 1933-ին գրած մի նամակում. «Այժմ մեր Յարութիւն Ղարիբեանի հետ միասին անուշեղէնների խանութ են բացել. նա ռահաթ-լոխում և այլ բաներ է պատրաստում, ես էլ կրպակում նստած ծախում եմ: Բայց առնող չկայ, որով խանութում ազատ կարելի է ընթերցանութեամբ պարապուել: Մի խօսքով՝ սա գործ չէ, այլ ինքնախաբէութիւն: Տեսնենք ի՞նչ կը լինի վերջը»<sup>228</sup>: Իսկ Հրանտ Տևեճյանն իր հուշերում վկայել է. «... Պրագայում ապրեցի տնտեսական նեղ պայմանների մեջ և ամառները բանվորություն արեցի շենքերի շինության մեջ քար և հող փոխադրելով»<sup>229</sup>:

<sup>226</sup> Մեր աշխատակիցներու նամակները, էջ 20-21:

<sup>227</sup> Պրագայի հայ ուսանողությունը, ամո:

<sup>228</sup> Մեր աշխատակիցների նամակները, «Հայրենիք», Պոսթըն, 1963, թիվ 4, էջ 14:

<sup>229</sup> Տևեճյանի անտիպ հուշերից, որը մեզ է տրամադրել է նրա դուստրը՝ Սեդա Դևեջյանը (Երևան): Վերջինս նաև վկայել է, որ հայրը Պրագայում գոմար վաստակելու նպատակով զբաղվել է նաև շրջիկ գորգավաճառությամբ և ֆրանսերեն է դասավանդել չեխական ընտանիքներում:

Պրահայի հայ ուսանողների ցրվելուն նպաստել է նաև այն հանգամանքը, որ տնտեսական ճգնաժամի պատճառով չեխական կառավարությունը դադարեցրել է օժանդակությունը տարբեր ազգերի տարագիր ուսանողներին (և ոչ միայն՝ հայ<sup>230</sup>): Դրա հետևանքով չորս ուսանող վեց ամսից ավելի մնացել են անելանելի վիճակում՝ չկարողանալով աշխատանք գտնել և միաժամանակ ուսանել: Այս առթիվ Չեխոսլովակիայի Հայ ուսանողների միության վարչության նախագահ Հ. Լորիկյանը և քարտուղար-գանձապահ Վ. Նիկողոսյանը կոչ են հրատարակել սփյուռքահայ մամուլում՝ ներկայացնելով Պրահայի հայ ուսանողների դժվարությունները և հայրենակիցներին խնդրել են սատար կանգնել նրանց<sup>231</sup>:

### Ուշագրավ դեմքեր Պրահայի հայ ուսանողներից

Ավելորդ չենք համարում համառոտ անդրադառնալ Պրահայում ուսանած հայ ուսանողներից մի քանիսի գործունեությանը, որոնք որոշակի կարևորություն են ունեցել Սփյուռքի գրական և հասարակական-քաղաքական պատմության մեջ և որոշ չափով անձանոթ են մնացել հայության գրեթե բոլոր սերունդներին:

Ուսանողների կենսագրացանկը տալիս ենք այբբենական կարգով.

*Հովհաննես Ակինյան* (1905, Բաթում – 30.01.1935, Փարիզ), բանասեր Ներսես Ակինյանի եղբորորդին: 1921-ին տարագրվել է Կ.Պոլիս: 1928-ին ընդունվել է Պրահայի համալսարան՝ քիմիայի գծով: Եղել է Պրահայի Հայ ուսանողական միության եռանդուն անդամներից, նրա վարչության անդամ, ՀՅԴ Պրահայի կոմիտեի անդամ, «Յառաջի» և

---

<sup>230</sup> Այսպես, 1926-ի հունվարին Չեխոսլովակիայի Մրնիստրների խորհուրդը որոշել է տարեցտարի նվազեցնել կառավարական նպատող ուսուսանողներին, իսկ նոր ուսանողներին առհասարակ օգնություն չտրամադրել (Տե՛ս Օ русской эмиграции в Чехословакии. «Лин». Париж. 29.01.1926):

<sup>231</sup> Տե՛ս Փրակայի կարօս ուսանողներու կոչը, «Հայրենիք», Պոսթըն, 9.02.1932:

«Յուսաբերի» թղթակիցը Պրահայում: Բազմաթիվ հողվածներով հանդես է եկել չեխական ամենատարածված թերթերում, սոցիալ-դեմոկրատների «Պրավո լիդա» թերթում ծավալուն հողվածաշար է հրատարակել Հայաստանի անկախության մասին: Մամուլում իր չեխերեն թարգմանությամբ հրատարակել է Լիպյարիտ Նազարյանցի «Համաձայնության փորձեր ՀՅԴ և Խորհրդային Միության միջև» հողվածը: Սերտ կապեր է հաստատել Չեխոսլովակիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ և ծերակույտի նախագահ Ֆրանտիշեկ Սուկուպի (1871–1940) հետ: Հայ համայնքի կողմից հանդիպել է նախագահ Մասարիկին և խոսել Հայ դատի մասին: Մի քանի անգամ էլ այցելել է Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախարար Էդվարդ Բենեշին (1884–1948)՝ զրուցելով հայ-չեխական բարեկամության մասին: Կահիրեի «Յուսաբերում» հանդես է եկել հողվածով՝ նվիրված Մասարիկին: Պատասխանատու պաշտոններ է վարել Պրահայի «Արևելյան Եվրոպա» միջազգային մարմնում: 1931-ին տեղափոխվել է Ֆրանսիա<sup>232</sup>: «Նա Պրագայի հայ ուսանողների ամենէն երիտասարդն էր, մեզ միացնող շաղախն էր, կուսակցական ու հանրային կեանքի շարժիչ ուժն էր, եւ միաժամանակ սիրելի ամենքին. եւ մեծին, եւ փոքրին, եւ առնետրականին, եւ ուսանողին, եւ կուսակցականին, եւ հակառակորդին, եւ Չեխին եւ Սլովաքին. Ռուսին ու Ռուսայնեցուն. Լեռնցուն ու Վրացուն: ...Առանձնապէս հակում ունէր հայ կեանքն ու քաղաքական պահանջները ծանօթացնելու օտարներին»<sup>233</sup>: Ի դեպ, վերոնշյալ Ֆրանտիշեկ Սուկուպը նույնպէս անդրադարձել է Ալիմյանի վաղաժամ մահվանը, նշել, որ նա Պրահայում ապրող կովկասյան

<sup>232</sup> Տես Յովհաննէս Ալիմեան, «Յառաջ», Փարիզ, 1.02.1935, նույնը տես «Յուսաբեր», Գահիրէ, 12.02.1935 և «Ալիք», Թեհրան, 19.02.1935: Նրա մասին տես նաև Ա. Ուրարդեան. Զոհ մը ես, «Յառաջ», Փարիզ, 5.02.1935, Ա. Գիլլիսանդանեան, Խեղճ Յովհաննէս, անդ, 6.02.1935, Դ. Մելիք-Դադայեան. Յովհ. Ալիմեանի մասին, անդ, 24.05.1935:

<sup>233</sup> Դ. Մելիք-Դադայեան, Յովհ. Ալիմեանի մասին....

տարագրության առաջատար դեմքերից էր, որը չէխերենին տիրապետել է կատարելապես, եղել բացառիկ ընդունակությունների տեր, գերազանցորեն կրթված մարդ, հռետոր և լրագրող<sup>234</sup>:

*Հայկ Ասատրյան*, ավաչկերտցի, ուսանել է փիլիսոփայություն: Եղել է ցեղակրոնական շարժման գործիչ, Գարեգին Նժդեհի գաղափարակիցը: Խմբագրել է Բուլղարիայում «Ռ-ազմիկ» թերթը, հրատարակել գրքույկներ ազգային թեմաներով: Երկրորդ աշխարհամարտի տարիներին գրել է հայերի արիական ծագման մասին աշխատություն՝ նպաստելով Գերմանիայի գրավված տարածքներում գտնվող հայերի ֆիզիկական ապահովությանը<sup>235</sup>:

*Մուշեղ Թամրազյան* (1897, Շուշի – 1944, Համադան), լրագրող: 1910-ականների վերջից Թանատոս ծածկանունով աշխատակցել է հայ մամուլին:

*Նիկոլ (Նիկողայոս) Բաղայան*, ծնունդով Անդրկովկասից, ուսանել է Պրահայի համալսարանի առևտրական դպրոցում, Պրագացի և Ն. Բ. ծածկանուններով աշխատակցել է դաշնակցական մամուլին<sup>236</sup>: Աքտրվել է Սիբիր, որտեղ և մահացել է:

*Նիկոլ (Կոռո) Թարխանյան* (Սպարապետ Սուրեն, 1896, Շուշի – 1944, Բուխարեստ), զնդապետ, Փետրվարյան ապստամբության հայկական զորքերի հրամանատարը:

*Սարգիս (Սերժ) Թորոսյան*, դերասան Աշո Շահխաթունու քրոջորդին, երեք տարի ուսանել է Մոսկվայի համալսարանի բժշկական բաժնում, սակայն մեկնելով Չեխոսլովակիա՝ փայտուն կերպով ավարտել է Պրահայի համալսարանի իրավաբանական բաժինը: Մասնակցել է

---

<sup>234</sup> Տես անդ:

<sup>235</sup> Տես Փանիկեան Օ., Լուսաբանություն, Երևան, 2006, էջ 120:

<sup>236</sup> Տես նրա հոդվածներից՝ Ն. Բ., Իրաքի նախային ընկերությունը, «Յուսաբեր», Գահիրե, 11.01.1935, Նախիջևանի շրջանը, անդ, 3-7.09.1935:

հայկական ներկայացումների: Հետագայում Բեռլինի համալսարանում ամբիոնի վարիչ է եղել: Չոհվել է 1962-ին, ավտովթարից, Բեռլինում<sup>237</sup>:

*Հովհաննես Հախնազարյան* (1900, Ագուլիս – 1978, Թեհրան), 1922–1932 թթ. բնակվել է Պրահայում, պատմագիտության և փիլիսոփայության դոկտորի կոչում է ստացել Պրահայի համալսարանում, որից հետո չորս տարի նույն համալսարանում ուսանել է համեմատական լեզվաբանություն և դասական լեզուներ<sup>238</sup>: Երկար տարիներ հայկական դպրոցի տնօրեն է եղել Թեհրանում: Որդին՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը, հրատարակել է հոր «Գողթան գավառ» աշխատությունը (Թեհրան, 1991):

*Հարություն Ղարիբյան* (ծն. 1895, Իգդիր), մշակութային գործիչ և բանաստեղծ: Ի թիվս ժամանակի հայ մամուլում հրատարակած ստեղծագործությունների, մշակել է նաև չեխական բանահյուսության երկու նմուշ՝ «Ծոյլ կինը (չեխական աւանդութիւն)»<sup>239</sup> և «Ճպտուն ու մրջյունը (չեխական առակ)»<sup>240</sup>: Եղել է հայկական թատերախմբի հուշարար: Մնացել է Չեխոսլովակիայում, սոցիալիստական ռեժիմի ժամանակ ձերբակալվել և աքսորվել է Սիբիր, այնուհետև վերադարձել է Պրահա:

*Շավարշ Մակարյան* (ծն. 1898, Ագուլիս), ուսանել է իրավաբանություն, այնուհետև որոշ ժամանակ բնակվել Փարիզում: Հետագայում հաստատվել է Բեյրութում և մինչև մահը եղել հայկական դպրոցի տնօրեն<sup>241</sup>: Նրան աշակերտած գրող Սարգիս Վահագնը այսպես է հիշել իր ուսուցչին. «*միջին տարիքի, պարթևահասակ, առատ բաշերով եւ խորաթափանց աչքերով լուրջ անձնատրուքիւն մը, որ պատկառելի հով մըն ալ ուներ, առաջին իսկ հանդիպումով յարգանք ու ակնածանք*

<sup>237</sup> Տես Մարութեան Մ., Բենական ընկերներս, Անթիլիաս, 1986, էջ 108-112:

<sup>238</sup> Տես Հախնազարեան Յ., Գողթան գաւառ, Թեհրան, 1991, էջ 4:

<sup>239</sup> Տես «Նասասարդ», Պոքրէշ, 1924, Յունուար-Փետրուար, էջ 154:

<sup>240</sup> Տես նույն տեղում, 1925, էջ 344:

<sup>241</sup> Մարութեան Մ., Բենական ընկերներս, էջ 137-138:

պարտադրող: Ան, որպէս խոստմնալից երիտասարդ, Հայաստանի Առաջին հանրապետութեան կողմէ դրկուած էր Բրակա, նշանաւոր Մեծն Գարդլոսի անուան համալսարանը, քաղաքագիտութիւն եւ դիւանագիտութիւն ուսանելու համար: Բայց, առաջին հանրապետութեան անկումէն ետք, կասեցուած ըլլալով ուղարկուելիք վարկը, ան լքելով համալսարանը, քիչ մը հոս հոն թափառելով, վերջապէս հանգրուաններ էր Պէյրութ, ուր իր կուսակցութիւնը (դաշնակցութիւն) գետնդէր էր գինք Նոր Սիս կոչուած թաղի Լուսինեան անշուք վարժարանին որպէս տնօրէն»<sup>242</sup>: Ինչպէս տեսնում ենք, հեղինակի տեղեկությունները հայերին Պրահա ուսման ուղարկելու վերաբերյալ ստույգ չեն: Մակարյանին հիշել է նաև Վահրամ Մավյանն իր «Գու անմեղ ես» գրվածքում որպէս «Զսամական բուսկաններու սկիզբը Հայաստանէն համալսարանական ուսման համար Փրակա դրկուած երիտասարդներու խումբէն»<sup>243</sup>:

Մանվել Մարության (1901, Վան – 1986, Լոս Անջելէս), դերասան, գրող: Պրահայում ուսանել է շատ կարճ ժամանակաշրջան. ընդունվել է գյուղատնտեսական համալսարան, քանի որ պետք է գործնական մասնագիտություն ընտրեր. պետական օրենքն արգելում էր ուսանողներին հետևել իրենց նախասիրած ասպարեզին: Ավարտելով ուսումը Վիեննայի դրամատիկական ակադեմիայում՝ կազմել է սեփական թատերախումբ, շրջել աշխարհի հայաշատ քաղաքներում, ներկայացրել դասական թատերագրության բազմաթիվ նմուշներ՝ ստանձնելով կենդանական դերերը: Նկարահանվել է նաև իրանական կինոյում:

Վահան Մինախոյյան (1884, Գանձակ – 1944, Բելգրադ), հայ մանուկ աշխատակից, գրել է «1915 թվական. արհավիրքի օրեր» (Վենետիկ, 1949) հուշագրությունը: Պրահայում ապրած տարիներին եղել է տեղում հրատարակվող ռուսալեզու մի ամսագրի խմբագրակազմի

<sup>242</sup> Մարգիս Վահագն, Ինքս՝ ինձ հետ. յուշավեպ, Լոս Անջելէս, 2019, էջ 18:

<sup>243</sup> Մաւլեան Վ., Ամէն տեղ հայ կայ, Երուսաղէմ, 1977, էջ 208:

անդամ, որը հրատարակվել է մինչև 1932-ը<sup>244</sup>: Հարավարևմտյան ասիայի տարիներին մտերիմ է եղել Սողոմոն Թեխլիբյանի հետ: Եղել է 1925-ին ստեղծված Պրահայի Ռուսաստանի ուսումնասիրության ինստիտուտին կից ստեղծված կովկասագիտական ընկերության հիմնադիրներից<sup>245</sup>:

*Բաղդասար (Բաղդիկ) Մինասյան* (1903, Ղարադաղ – 1976, Թեհրան), Պրահայում 1923–1930 թթ. ուսանել է բնագիտություն՝ արժանանալով բնագիտության և քիմիայի դոկտորի աստիճանի: Վերադառնալով Իրան՝ պարսկական դպրոցում աշխատել է որպես քիմիայի ուսուցիչ: 1944-ին ձերբակալվել է և արքայի Սիբիր՝ Նորիլսկ: 1954-ին վերադարձել է Թեհրան, շարունակել զբաղվել ուսուցչությամբ, 1960–1971 թթ. եղել «Ալիք» օրաթերթի խմբագիր: ՀՅԴ այս ականավոր գործիչը հեղինակ է «Տասը տարի, տասն ամիս և տասնեօթ օր խորհրդային բանտերում և աշխատանքային ճամբարներում» հուշագրության, որը նրա մահից հետո հրատարակել է դուստրը՝ ամերիկահայ պատմաբան Ռուբինա Փիրումյանը («Հեղափոխական գրադարան» մատենաշար, Աթենք, 1991):

*Օննիկ Մխիթարյան* (1895, Այգեստան, Վան – 1951, Ղազախստան), լրագրող: Ուսանել է Վանի Երամյան միջնակարգ վարժարանում: Եղել է Վանի հերոսամարտի ականատես, հետագայում գրել «Վանի հերոսամարտը» գիրքը: 1915-ի Վանի մեծ նահանջի ժամանակ մեկնել է Երևան, հրատարակել «Աշխատանք» եռօրյա թերթը, 1917-ին որոշ ժամանակ եղել Թիֆլիսի «Ազատամարտ» թերթի խմբագրակազմի անդամ: Հայաստանի առաջին հանրապետության օրոք պաշտոնավարել է Խնամատարության նախարարությունում: 1921-ի Փետրվարյան ապստամբությունից հետո տեղափոխվել է Թեհրան, որտեղ խմբագրել է «Նոր կյանք» թերթը: Պրահայում ուսանել է Կառլովյան համալսարանի փիլիսոփայության բաժնի գրականության

<sup>244</sup> Տե՛ս Մեր աշխատակիցների նամակները, «Հայրենիք», Պուրբլշ, 1963, թիվ 4, էջ 12:

<sup>245</sup> Տե՛ս Дж., Общество кавказоведения, «Дни», Париж, 22.10.1925:

ճյուղում: Այս շրջանում բանաստեղծություններով աշխատակցել է «Հայրենիք» ամսագրին՝ Ֆենիքս ծածկանունով: 1925-ին ընտանիքով տեղափոխվել է Բուլղարիա, 15 տարի եղել Մոֆիայի «Ազատ խոսք» թերթի խմբագիր-հրատարակիչը: 1944-ին, երբ խորհրդային բանակը գրավել է Բուլղարիան, այլ դաշնակցականների հետ արտրվել է Ղազախստան, որտեղ և մահացել է<sup>246</sup>:

*Ստեփան Նավասարդյան* (1896, Էջմիածին, մահ. Ֆրանսիա), մտավորական Լիպարիտ Նազարյանի քրոջորդին: Իրավաբանություն է ուսանել Պետրոգրադում, պատերազմի պատճառով կիսատ թողել: Հայաստանի անկախության շրջանում պաշտոնավարել է Արտաքին գործերի նախարարությունում: 1919-ին Երևանում նրան հանդիպել է ռուս գրող Սերգեյ Գորոդեցկին, որը նրան հիշել է որպես «*բարիտոն և շատ ուժեղ մարդ... անվիճելի հեղինակություն էր վայելում*»<sup>247</sup>: 1925-ին Պրահայում հաջողությամբ ավարտել է իրավաբանական դասընթացը: Եղել է Մանվել Մարությանի Եվրոպահայ թատերախմբի հիմնական անդամներից: Օժտված է եղել երգելու ձիրքով: Պրահայի կոնսերվատորիայի դասախոսները հիացել են նրա ձայնով՝ զարմանալով, թե ինչու հայերը միջոցներ չեն տրամադրում շնորհալի երիտասարդին՝ ձայնը մշակելու համար: Նավասարդյանի երգեցողությամբ հիանալու առիթն են ունեցել Երևանի, Թեհրանի, Բաղդադի, Հալեպի, Բեյրութի և Վիեննայի հայերը, սակայն երգիչը միջոցներ չի գտել՝ զոնե

<sup>246</sup> Տե՛ս Օննիկ Մխիթարեան, «Յառաջ», Փարիզ, 7.12.1957:

<sup>247</sup> **Закарян А.**, Русские литераторы и армянская действительность (10-е гг. XX в.), Ереван. 1994, стр. 176.

երկու տարով Իտալիայում իր երաժշտական կարողությունները զարգացնելու համար<sup>248</sup>: Հետագայում հաստատվել է Փարիզում, եղել կինոթատրոնի տնօրեն<sup>249</sup>: Ի դեպ, Նավասարդյանն է եղել Արարատ Ղարիբյանի բանաստեղծության հիման վրա Համիկ Ենգիբարյանի գրած «Դու անմեղ ես, բո աչերն են մեղավոր» հայտնի երգի առաջին կատարողը<sup>250</sup>:

*Բարկեն Ռաշմաճյան* (1901, Ալեքսանդրապոլ – 1983, Պրահա), մանկավարժ Տիգրան Ռաշմաճյանի որդին: Նախապես Թեհրանում որպես դերասան մաս է կազմել Մանվել Մարությանի թատերախմբին: 1928–1932 թթ. Պրահայում հոր ծախսով սովորել է Չեխսկան տեխնիկական բարձրագույն դպրոցի ճարտարապետության և շինարարական արվեստի բաժնում: Շարունակել է համագործակցել հայ թատրոնին որպես ձևավորող նկարիչ: Ամուսնացել է չեխուհու հետ և հաստատվել Չեխոսլովակիայում: Երկրում սոցիալիստական կարգերի հաստատումից հետո արքայրվել է Սիբիր, ազատվելուց հետո վերադարձել է Պրահա<sup>251</sup>:

*Գորգեն Սարգսյան* (1898, Կարս – 1972, Ֆիլադելֆիա), եղել է Եղիշե Չարենցի դասընկերը Կարսում, ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում<sup>252</sup>: Պրահայում ուսումն ավարտելուց հետո հաստատվել է Կոնստանցայում (Ռումինիա): 1944-ին արքայրվել է Սիբիր, Մտալինի

<sup>248</sup> Տես Հայ ուսանողի մը յաջողութիւնը, «Մարմարա», Կ.Պոլիս, 2.05.1925: Մանվել Մարությանը ևս իր հուշերում գրել է, թե ինչպես մի անգամ Պրահայի Հայ ուսանողական միությունը նամակ է ստացել Վիեննայի հայ համայնքի վարչությունից, խնդրելով երգեցիկ և ասմունքող ուսանողների ուղարկել իրենց մոտ՝ երեկոյք-պարսիսանդեսիմ մասնակցելու: Միությունն ուղարկել է Մարությանին և Մտեփան Նավասարդյանին (տես **Մարտտեան Մ.**, Բեմական ընկերներս, էջ 7):

<sup>249</sup> Տես **Մարտտեան Մ.**, Բեմական ընկերներս, էջ 178-183:

<sup>250</sup> Տես **Մավեան Վ.** Ամեն տեղ հայ կայ, էջ 211:

<sup>251</sup> Նրա վերաբերյալ տես Էմմա Հովսեփյանի հրատարակումը՝ Հայ մտավորականների նամակները Տիգրան Ռաշմաճյանին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2013, ք. 1, էջ 3-12:

<sup>252</sup> ՀԱԱ-ում պահվում է 1926-ին գրված Հովսեփ Գրիգորյանի խնդրագիրն Էջմիածնի Խոզևոր խորհրդին՝ Պրահայում բնակվող Գարեգին Սարգսյանի՝ Գևորգյան ճեմարանի ավարտական վկայականն ուղարկելու վերաբերյալ (տես ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 52:8, էջ 1-2):

մահից հետո վերադարձել Ռուսիայի, այնուհետև հաստատվել է ԱՄՆ-ում<sup>253</sup>: 2021-ին ԱՄՆ Արեւելյան թեմի Ազգային Առաջնորդարանի «Միա» հրատարակչությունը լույս է ընծայել Գորգեն Սարգսյանի «Իմ հուշերը (1914–1921)» հատորը: Շուրջ կես դարից ավելի անտիպ մնացած հուշագրությունը հրատարակվել է հայերեն բնագրով և անգլերեն թարգմանությամբ: Չեռագիրը հրատարակության է պատրաստել, ծանոթագրել և անգլերեն է թարգմանել պատմաբանասեր Վարդան Մատթոսյանը:

*Եփրեմ Սարգսյան* (մահացել է 1970-ին, Լոս Անջելեսում), հաստատվելով ԱՄՆ-ում՝ բանաստեղծություններով և թարգմանություններով աշխատակցել է սփյուռքահայ մամուլին:

*Ռուբեն Վարդանյան* (1893, Վանի Արճակ գյուղ – 1958, Բուենոս Այրես), նույնը՝ արգենտինաբնակ գրող Ռեն, Պրահայի համալսարանն ավարտել է 1929-ին և Չեխոսլովակիայում է մնացել մինչև 1930 թվականը: Մի շարք գրքերի հեղինակ է:

*Վհարոն Տատուրյան* (1887, Նիկոսեդիայի Օվաճըզ գյուղ – 1965, Փարիզ), ճանաչված ֆրանսաբնակ բանաստեղծ: Եղել է Պոլսի «Մեհյան» հանդեսի խմբագիրներից: 1928–1929 թթ. ուսանել է Պրահայի համալսարանի գրական բաժնում:

*Արշալույս Տեր-Աստվածատրյան* (1883, Քանաքեռ – 1973, Բելգրադ), հասարակական գործիչ, աշխատակցել է «Հայրենիք» ամսագրին: 1969-ին հրատարակել է «Մաքդարապատի հերոսամարտին պատմաաշինարարությունը» աշխատությունը, որտեղ ջախջախել է խորերդահայ հեղինակ Հարություն Թուրշյանի «Մարդարապատի հերոսամարտը» (Երևան, 1965) գիրքը:

*Հրանտ Տեեճյան* (1903, Հալեպ – 1949, Երևան), խմբագիր: Ծագումով՝ արաբկիրցի: Ինչպես վկայել է իր անտիպ հուշերում. «1923-ին գնացի Պրագա, ուսանելու Չեխոսլովաք կառավարության նպաստով:

---

<sup>253</sup> Նրա վերաբերյալ տես Հ., Գորգեն Սարգիսեան (Յուլիս 12, 1898 – Ապրիլ 23, 1972), «Հայրենիք», Պոսթըն, 28.04.1977:

Եղբորս... պնդումների վրա արձանագրվեցի բժշկական ֆակուլտետում, ուր մնացի երկուսուկես տարի՝ բոլոր քննությունները հաջողապես տալով: Բժշկությունը չէի սիրում, դրա համար մերժեցի շարունակել բժշկությունը և հետևեցի փիլիսոփայության ֆակուլտետի (սլատմա-հասարակագիտական բաժնում), ուր սովորեցի փիլիսոփայություն, պատմություն, ընկերային գիտություններ: ...1931-ին վերջացրի դպրոցական շրջանը, բայց դրկտորայի քննություններին չմասնակցեցի՝ ներմուծելու անհրաժեշտ գումարը չունենալուս համար»<sup>254</sup>: 1931-ին Տևեճյանը վերադարձել է Հալեպ, ապա՝ Բեյրութ: 1940-ականներին Բեյրութում խմբագրել է «Առավոտ» օրաթերթը: 1947-ին հայրենադարձվել է, աշխատել «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում: 1948-ին նշանակվել է Երևանի քաղխորհրդի կուլտուր-լուսավորական հիմնարկների բաժնի վարիչ: «Կորովի խմբագիր մը, իր բաւ մտաւորական մը, որ հայրենադարձի տարիներուն (1946-1947) Պէյրութի մէջ ներգաղթի կոմիտէին նախագահն էր և ան ո՛չ միայն ժողովուրդը դրկեց հայրենիք, այլ՝ ինք ևս մեկնեցաւ: Երեսանի մէջ առաւօտ մը «Առաւօտ»ի խմբագիրը սպաննուած գտնուեցաւ իր աղքատիկ անկողինին մէջ: Ոչ ոք իմացաւ պատճառը կամ ոճրագործին ինքնուրիշը»<sup>255</sup>:

*Անդրե Տեր-Օհանյան* (1899, Թավրիզ – 1980, Թեհրան), խմբագիր, հրապարակախոս: Անդրե Ամուրյան ծածկանունով աշխատակցել է դաշնակցական մամուլին: Իրանում և ԱՄՆ-ում խմբագրական պաշտոններ է ունեցել, ուսումնասիրել է Օլսրանայի արխիվները Քալիֆորնիայում:

*Գեղամ Բոստեյան* (1901, Երիզայի Մեծ Արմտան գյուղ – 23.01.1934, Պրահա), տնտեսագետ, ուսանել է առևտրական բաժնում: Մինչ այդ ավարտել էր Կ.Պոլսի Կեղրոնական վարժարանը: Գեղամ Շողակաթ

<sup>254</sup> Նյութը մեզ տրամադրել է Տևեճյանի դուստրը՝ հնագետ Սեդա Դևեջյանը (Երևան):

<sup>255</sup> *Թորանեան Թ.*, Ուղեորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, Հալեպ, 2004, էջ 120: Դևեջյանի մահախոսականը տե՛ս՝ Հրանտ Հակոբի Դևեջյան, «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1949, թիվ 7, էջ 48:

ծածկանունով տնտեսագիտական բնույթի հոդվածներով աշխատակցել է ԱՄՆ-ի «Հայ վաստակ» պարբերականին և Չեխիայի հայերի մասին թղթակցություններով՝ Փարիզի «Յառաջին»: Բազմակողմանի ընդունակությունների տեր, լեզուների (ֆրանսերեն, անգլերեն, չեխերեն, գերմաներեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն) հմուտ այդ երիտասարդը բազմիցս դիմում է կատարել՝ Հայաստան վերադառնալու, սակայն միշտ մերժվել է<sup>256</sup>: 1934-ին գրել է «Սոքոլ»ները (չեխերու ազատագրական կեանքեն) հոդվածը<sup>257</sup>: «Փրագեր փրես» (Պրահայի մամուլ) թերթը մտադրություն է եղել ունենալ արևելյան բաժին՝ նրա ղեկավարության ներքո, սակայն երբ չեխական կառավարությունը հարցրել է թուրքական հյուպատոսարանի կարծիքը, թուրքերն ասել են. «Ավելի լավ է այդպիսի բաժին գոյություն չունենա, քան թե մի հայ լինի նրա վարիչը»<sup>258</sup>: Մահացել է 34 տարեկանում, անհաջող վիրահատության պատճառով: Թաղվել է Պրահայի Օլշան գերեզմանատան ռուսական բաժնում. տապանաքարի վրա փորագրված է «Ո՛ տայր ինձ գծուխն ծխանի» Գողթան երգն ամբողջությամբ<sup>259</sup>:

*Երվանդ Ֆրնտրքյան* (1903, Տրապիզոն – 1978, Սան Ֆրանցիսկո), ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1915-ին Միսակ Թռռլաքյանի և ուրիշ ընկերների հետ ապաստանել է լեռներում, բազմաթիվ բախումներ է ունեցել թուրքերի հետ: Ազատվելով՝ անցել է Կովկաս, ապա Թռռլաքյանի հետ՝ Կ.Պոլիս, որտեղ մասնակցել է Յեղասպանության կազմակերպիչների դեմ «Նեմեսիս» գործողությանը: Պրահայի համալսարանում ուսանել է քիմիագիտություն<sup>260</sup>:

<sup>256</sup> Տե՛ս Գեղամ Շողակաթ, «Հայրենիք», Պոսթըն, 18.02.1934:

<sup>257</sup> Տե՛ս Գեղամ Շողակաթ, «Սոքոլ»ները (չեխերու ազատագրական կեանքեն)», «Արեւելյան արգաշխարհ», Հալեպ, 3.02.1962, էջ 1, 10.02.1962, էջ 8-10, 17.02.1962, էջ 10-12, 25.02.1962, էջ 10:

<sup>258</sup> *Երուանդ*, Այս ավ մեր հոգվրտիքը, «Յառաջ», Փարիզ, 26.11.1950:

<sup>259</sup> Տե՛ս անդ:

<sup>260</sup> Տե՛ս Ա. Ամարեան, Պետք է գրել պատմությունը, «Ասպարեզ», Ֆրեզնո, 13.12.1968:

Ցավոք սրտի, ժամանակին յոթ տասնյակից անցնող հայ ուսանողներից հազիվ 15 հոգու է հաջողվել ավարտել համալսարանական ողջ դասընթացը: Պրահայում իրենց կրթությունն ավարտել են հետևյալ հայորդիները՝ Բաղդասար Ճերմակյանը առևտրական դպրոցից, Վարդգես Հակոբյանը, Վասիլ Խահակյանը, Բաբկեն Ռաշմանյանը՝ Չեխական տեխնիկական դպրոցից, Կառլովյան համալսարանում ուսանած Մարտիրոս Աղապապյանը (դեղագործություն), Գարեգին Երեցյանը, Գ. Արարատյանը (բժշկություն), Հայկ Ասատրյանը (փիլիսոփայություն)<sup>261</sup> և այլք:

Արդեն նշվեց, որ ուսանողների մեծամասնության ընտրությունը հաջող չի եղել, ավելին, նրանց շարքերում հայտնվել են նաև բախտախնդիրներ և անազնիվներ: Բացի այդ, հասուն տարիքի ուսանողների, հատկապես նախկին գինվորականների ընտրությունը որպես ուսանող, իրեն չէր արդարացնում: Բնորոշ է ՀՅԴ անդամ Վանուշ Հախնազարյանի պարագան, որը Հայաստանում վեց կոմունիստ էր սպանել և փախել Իրան, իսկ այստեղից էլ իր կուսակցության կողմից ուղարկվել էր Չեխոսլովակիա՝ ուսանելու: Պրահայում Վանուշը մի չելիս վաճառականից 40 հազար չեխական կրոն արժողության ապրանք է գողացել և կրկին փախել Պարսկաստան. չեխական ոստիկանությունը սկսել է որոնել նրան<sup>262</sup>: Նա նաև բացասական դեր է ունեցել 1934–1935 թթ. ուսումնական տարվա սկզբին Պրահայի համալսարանում հայերենի դասավանդումը դադարեցնելու գործում՝ որպես արդյունք Նշան Մարտիրոսյանի հետ մրցակցության<sup>263</sup>:

Պրահայում սովորած հայորդիներից Չեխոսլովակիայում համեմատաբար երկար է մնացել Մարտիրոս Աղապապյանը: Ծնունդով աստուցի, 1915-ին թուրքական բանտերի և Տեր-Ջորի անապատների

<sup>261</sup> Տե՛ս Տօքթ. Ն. Մ. Փրակայի հայ ուսանողները...

<sup>262</sup> Տե՛ս Փրակացի. Չեխոսլովակիոյ հանրապետութեան տարեկարծին առթիւ, «Արեւելք», Ստամբուլ, 28.10.1933:

<sup>263</sup> Տե՛ս Հայերենի ուսումը դադրած Փրակայի համալսարանի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 9.01.1935:

փորձություններին դիմակայած այս հայորդին իր կենսագրությունը ներկայացրել է 1957-ին Բեյրութում Մարտիրոս Սասունցի գրչանունով հրատարակած «Սև օրագիր» գրքում: Այս արժեքավոր հուշագրությունը ներկայացնում է հեղինակի կյանքը Մեծ եղեռնի և հետագա տարիներին մի շարք վայրերում՝ Հայաստան, Կ.Պոլիս, Արմաշի երկրագործական վարժարան, այնուհետև՝ Վիեննա, որի համալսարանի փիլիսոփայության բաժնում կես տարի սովորելուց հետո, չլիմանալով նյութական նեղություններին, իր բարեկամ Երվանդ Քոչյանի միջոցով տեղափոխվել է Պրահա: 1923–1930 թթ. Աղապապյանն ուսանել է Կառլովյան համալսարանի դեղագործական բաժնում: «Առաջին հայ ուսանողն էի, որ հանդիսատրապէս վկայական կ'առնէի Փրահա գացողներուն մէջ՝ «Մագիստրոս դեղագործութեան» տիտղոսով. իմ կեանքիս ամենէն գեղեցիկ և երջանիկ օրն էր այդ օրը: ...85 հոգի աւարտողներուն մէջ առաջինն էի. անկէ ետք չեխուհիները ծանօթ ու անծանօթ զիս ծաղիկներու մէջ թաղեցին՝ շնորհակալական խօսքեր ուղղելով ինձի: Բայց երբ մօտեցայ վկայականս առնելու, համալսարանի գանձանակին մէջ պէտք էր, որ ես կոկիկ գումար մը նետէի ընկալեալ սովորութեան համաձայն: Ինձի հետ աւարտողները 50, հարիւր և ատելի ոսկիների կը նետէին. պետական գանձանակին մէջ: Ես այդ օր գրայանս քսան չեխական քուրօն (կրօն – Ա. Բ.) ունէի... Ես այդ փոքրիկ գումարը այնպէս մը նետեցի գանձանակին մէջ, որ մարդ չտեսներ...: Իսկ այդ իրիկուն ես անօթի փորով քնացայ»<sup>264</sup>: Սի կարճ ժամանակ բախտը փորձելով Ֆրանսիայում և ձախողվելով՝ Աղապապյանը 1928-ին վերադարձել է Չեխոսլովակիա և համալսարանի իր պրոֆեսորների օգնությամբ մասնագիտությամբ աշխատանք է գտել Նովե Բենատկի քաղաքում: Այստեղ նա մնացել է երկու տարի: Չնայած կենսապայմաններին և հարուստ չելի ընտանիքի դստեր հետ ամուսնանալու հեռանկարին՝ Մարտիրոսը, չցանկանալով ապրել հայությունից կտրված, 1930-ին տեղափոխվել է Հալեպ: Այստեղ նրան սպասել են

<sup>264</sup> Մարտիրոս Սասունցի. Սև օրագիր, էջ 268:

նոր փորձություններ, ուստիև երկու տարի Սիրիայում և Երուսաղեմում մնալուց հետո Մարտիրոս Աղապապյանը նորից վերադարձել է Պրահա: Հայորդու վրա հատկապես վատ ազդեցություն է ունեցել երկրի կլիման: Թույլ առողջության պատճառով՝ այստեղ նա նոր հոգեկան և ֆիզիկական տանջանքների է ենթարկվել: «Չմեռուան եղանակին՝ եօթամիս դատապարտուած էի անկողնի մէջ անցընել: Ուրեմն հոգեկան տառապանքիս վրայ աւելցան մարմնական ցաւերը... Բայց Աստուած կեանքս երկարել կ'ուզէր՝ զիս իմ անխոհեմութեանս համար աւելի ևս պատժելու և հասկցնելու, թէ Չեխերու շնորհիւ մարդ եղար, անոնք գործ ու ամէն տեսակ բարիք առաջարկեցին քեզի, դուն մերժեցիր այդ բոլորը, գացիր ազգիդ համար աշխատելու. ազգդ քեզ մերժեց և դուն կրկին եկած ես և Չեխերէն բարիք կը խնդրես»<sup>265</sup>: Մարտիրոսը հանդիպել է իր դասընկերուիի Վերայի հորը, որը եղել է նախարար և հայերին համակիր: Վերջինս նրան ասել է. «Կարդացած եմ Հայերու ջարդերու և անոնց կրած շատ մը տանջանքներու մասին... Ինչո՞վ կրնամ ձեզի օգտակար ըլլալ... Պետական վերջին քննութիւններուն ժամանակ, դուք օտարական մը ըլլալով և նախապէս ալ մեր լեզուին անտեղեակ ըլլալով, 85 քննութիւնը տուող արարտողներուն մէջ դուք առաջինը հանդիսացած էք. այդ ձեր ազգին ընդունակութեան ասպացոյցն է»<sup>266</sup>: Աղապապյանը նրան խնդրել է օգնել՝ չեխահպատակ դառնալ, և ազդեցիկ պաշտոնյայի շնորհիվ 15 օրում կարգադրվել է Մարտիրոս Աղապապյանի՝ Չեխիայի քաղաքացի դառնալու հարցը: 1935-ին նա ամուսնացել է չեխուիի Ալոիսիէի հետ: Ավելի տաք կլիմայով երկրում ապրելու մտահոգությամբ 1937-ին Աղապապյանը կնոջ հետ տեղափոխվել է Իրաք, այնուհետև հաստատվել Բեյրութում: Նրա հետագա ճակատագիրը մեզ անհայտ է. 1967-ի դրությամբ արդեն հանգուցյալ էր: 1965 թվականին չեխ հայագետ Լուդմիլա Մոտալովան Երևանի «Հայրենիքի ձայնին» է հղել մի նամակ, որտեղ գրել է, որ իրեն այցելել

<sup>265</sup> Աճ, էջ 280:

<sup>266</sup> Աճ, էջ 281:

է Մարիե Շտալիկովա անունով մի տարեց չեխուհի և հայտնել, որ փնտրում է իր հայ բարեկամներին՝ Պրահայում դեղագործություն ուսանած Ներսես Թովմասյանին, ծնված մոտավորապես 1905 թվականին, որը Չեխոսլովակիայում ուսանելուց հետո 1934–1935 թթ. գնացել է Հունաստան, այնտեղից՝ Բաղդադ և վերոնշյալ Մարտիրոս Աղայայանին<sup>267</sup>:

Ինչպես վկայել է Մանվել Մարությանը, Չեխոսլովակիայում մնացած մի քանի նախկին ուսանող հայերին հետագայում տխուր ճակատագիր է սպասվել: Մտալինյան վարչակարգի ամենատես աչքից չեն վրիպել այնտեղ հիմնավորված հայերը, որոնք, որպես ՀՅԴ անդամներ կամ համակիրներ՝ ձերբակալվել և արտորվել են Սիբիր կամ գնդակահարվել են:

*«Պատերազմ...»*

*Չեխոսլովաքիան կարմիր պատմուճան է հագնում:*

*Խորհրդային Չեխոսլովաքիա...*

*Մեր մի քանի տղաներ, որոնք մնացել էին այնտեղ, նրանց ձերբակալում են ու տանում... ո՞ր տարան, ի՞նչ եղան՝ անյայտ մնաց...:*

*Ախտոս էին»<sup>268</sup> ...*

### **Համայնքը և հայ-չեխական կապերը 1930-ական թթ.**

Այսպիսով, Պրահայում պետական հովանավորությամբ ուսանած հայորդիներն աստիճանաբար ցրվել են զանազան երկրներ: Սակայն

---

<sup>267</sup> Տե՛ս Մի չեխուհի փնտրում է իր հայ բարեկամներին, «Հայրենիքի ձայն», Երևան, 5.12.1965:

<sup>268</sup> Մարության Մ., Բեմական ընկերներս, էջ 132: Մեկ այլ տեղ Մարությանը գրել է. «Ելք համայնավարները մտան Պրագա, մի քանի հայ ուսանողների հետ նրան (Հարություն Ղարիբյանին – Ա. Բ.) էլ տարան: Նրանք այլևս չվերադարձան: Գուցէ գերեզման էլ չունեցան» (Մարության Մ., Ի՞նչ է պատահում բեմի վրայ, բեմի ետև և բեմից դուրս, Անթիլիաս, 1986, էջ 79): Սակայն հետագա մի վկայության համաձայն՝ Հարություն Ղարիբյանը արտոքից վերադարձել է Պրահա:

երկրում մնացած մի քանի հայ ընտանիքները, ինչպես նաև Հայաստանով և հայոց լեզվով հետաքրքրվող չեխերը շարունակել են ժամանակ առ ժամանակ հիշեցնել հայ ժողովրդի մասին:

Պրահայում մնացած հայերից ոմանք շարունակել են զբաղվել իրենց գործերով, մի քանիսը մտել են պետական ծառայության՝ որպես չեխական քաղաքացիներ: Այս վերջինների մասին Դաշնակցությունը լուր է տարածել, թե իբր «պետական գործի մէջ եղածները չեխ պետութեան հաշտյն, իբրեւ մատնիչ, Արեւելք դրկուած են: Ծիծաղելի բան: Չեխօւլովաքիա ի՞նչ շահ ունի, որ Պարսկաստանի մէջ մատնիչներ պահէ», – հարց է տվել Նշան Մարտիրոսյանը<sup>269</sup>:

Չեխիայում ծնված առաջին հայերից է տնտեսագիտության դոկտոր **Անտոնին Տեր-Մանվելյանցը**: Հայ հոր և չեխուհի մոր զավակ Տեր-Մանվելյանցը ծնվել է 1924-ին, չեխական Վելկե Մեզիրժիցի քաղաքում: Ուսանել է Պրահայի պոլիտեխնիկ ինստիտուտում: Մաթեմատիկա և արդի վիճակագրություն է դասավանդել Պրահայի պոլիտեխնիկ և կառավարման ինստիտուտներում և Մասաչուսեթսի համալսարանում: Մշակել է տնտեսագիտական նոր մեթոդներ և համակարգեր: Զեկուցումներով հանդես է եկել Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, նաև՝ Խորհրդային Հայաստանում (1974–1975 թթ.):

Նմանապես հայ-չեխական ծագում է ունեցել պատմաբան-միջազգայնագետ, սլավոնագետ **Յան Շմերալը** (1929–1990)՝ «Չեխո-Սլովակիայի հանրապետության կրթությունը 1918 թվականին» ռուսերեն աշխատության հեղինակը: Նա որդին էր չեխական և միջազգային բանվորական շարժման գործիչ, Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցության հիմնադիրներից Բոհումիր Շմերալի (1880–1941) և քիֆլիսեցի հայուհի, հաղորդակցական ուղիների ճարտարագետ, քննադատ, չեխերենից ռուսերեն թարգմանչուհի Սոֆյա Շմերալի (Արզուտինսկայա-Արդոսյան, 1893–1971)<sup>270</sup>:

<sup>269</sup> **Փրակացի**, Չեխօւլովաքիոյ հանրապետութեան տարեդարձին առքիւ...

<sup>270</sup> Սոֆյա Շմերալը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կռվել է հայկական կամավորական բանակում թուրքերի դեմ, մասնակցել նաև Ռուսաստանի

1931 թվականին վերոհիշյալ Գեղամ Շողակաթը «Հայ վաստակ» ամսագրում տեղեկացրել է, որ Չեխոսլովակիայում բնակվում են 51 հայեր: Նրանցից 11-ը եղել են պաշտոնյաներ պետական և մասնավոր հաստատություններում, մեկը զբաղվել է արևելյան քաղցրավենիքի արտադրությամբ և վաճառքով, չորս հուզի՝ գորգերի նորոգությամբ, մեկը՝ նստարավաճառությամբ: Մնացածները զբաղվել են գորգերի սուևտրով, աղիքագործությամբ, արևելյան ձեռագործներով և այլն<sup>271</sup>:

1932-ին տպագրված Եվրոպայի հայ բնակիչների հասցեների տեղեկատուում Չեխոսլովակիայի հայերի մեջ հիշված են հետևյալ անունները՝ համապատասխան զբաղմունքով (եթե զբաղմունքը նշված չէ՝ հիմնականում ուսանողներ են). Արթին Արսլանյան (գորգի գործարան), Նիկոլ Բաղայան, Վարդգես Հակոբյան, Ռուբեն Գուրգենյան (երաժիշտներ), Գարեգին Երեցյան, Հովհաննես Հախնազարյան (չեխական թերթերի աշխատակից), Հարություն Ղարիբյան (հրուշակագործ), Ճերմակյան, Գ. Մաղաքյան (գորգի գործարան), Դավիթ Մեյլիք-Դաղայան (գլուղատնտես), Վահան Մինախորյան (քարտուղար), Ալ. Պարիկյան (գորգի գործարան), Բաբկեն Ռաշմսճյան, Գեղամ Բյուսեյան<sup>272</sup>: Վերոնշյալ Ճերմակյանը կա՛մ ուսանող Բաղդասար Ճերմակյանն է, կա՛մ դյորթյուցի Մարտիրոս Ճերմակյանը, որը Կ.Պոլսի և Կորֆուի որբանոցներում անցկացրած տարիներից հետո մեկնել է Չեխոսլովակիա և առաջին կարգի վկայականով ավարտել է Պրահայի համալսարանը և իր բացառիկ կարողությունների համար զմահատվելով՝ անցել է պետական ծառայության: Այդ հանգամանքով 1937-ին դիվանագիտական անձնագրով այցելել է Իրան Չեխոսլովակիայի կառավարության կողմից զենքի հայթայթման համար բանակցելու<sup>273</sup>:

քաղաքացիական կռիվներին և Նյուրոյ աշխարհամարտին: Չեխիայում պրոպագանդել է ժամանակակից ռուս գրականությունը, Մոսկվայում՝ չեխ գրականությունը:

<sup>271</sup> Տես Հայերը Չեխոսլովակիոյ մէջ, «Հայրենիք», Պոսթքն, 7.02.1932:

<sup>272</sup> Տես Մօզգան Լ., կսգւմ., Ամենուն հասցէն, 1932, Փարիզ, էջ 233:

<sup>273</sup> Տես Հայ որբի մը յաջողութիւնը, «Արաքս», Ալեքսանդրիա, 14.08.1937:

Ի դեպ, հավանաբար վերոհիշյալ Արթին Արսլանյանի թոռնուհին է Պրահայում բնակվող օրիորդ **Լուիզա Արսլանյանը**, որը 1950-ին ավարտել է տեղի առևտրական վարժարանը՝ ճարտարապետի դիպլոմով<sup>274</sup>: Իտալահայ Սուրեն Ծովիկյանը, կարողալով մեր հոդվածը Չեխիայի հայերի մասին, մեզ գրած մի նամակում վկայել է. «Փրակայի առաջին հայերու շարքին յիշուած Արսլանեանը հաւանաբար հայ յաջորդներ ունեցած պիտի ըլլայ, որովհետեւ ասկէ երեսուն-քառասուն տարի առաջ Վենետիկ եկաւ և մեզի հանդիպեցաւ Արսլանեան ազգանունով Փրակայէն հայ մը, մօտաւորապէս 35-40 տարեկան, որ լաւ հայախօս էր. թէն, եթէ լաւ կը յիշեն, իրենց ընտանիքը բնիկ Եոզղասոցի էր, ուր հայերը թրքախօս էին»<sup>275</sup>:

1935-ին չեխական մամուլն անդրադարձել է բուլղարաբնակ հայազգի գիտնական, տնտեսագետ, համագործակցական (կոոպերատիվ) շարժման ականավոր գործիչ Վահան Տոտոմյանցի (1875–1957) ծննդյան 60-ամյակին: Տոտոմյանցը ճանաչված է եղել Չեխոսլովակիայի մտավորականության շրջանում: Դեռևս 1921-ին Պրահայում լույս էր տեսել Տոտոմյանցի «Կոոպերացիայի տեսություն» ռուսերեն աշխատությունը: Նա մասնակցել է Պրահայում կայացած սպառողական կոոպերացիայի համաժողովին, պարբերաբար աշխատակցել Պրահայի «Փրագեր փրես» գերմանալեզու պարբերականին, իսկ չեխերենով լույս են տեսել Տոտոմյանցի «Կոոպերատիվ ժողովածու» և «Տնտեսական և ընկերային գիտությունների պատմություն» գրքերը. վերջինի առաջաբանը գրել է Չեխոսլովակիայի նախագահ Մասարիկը<sup>276</sup>: Հայազգի գիտնականը նաև անդամակցել է Սլավոնագիտության ուսումնասիրության չեխական ընկերությանը: Տոտոմյանցի ծննդյան 60-ամյակի առթիվ Պրահայի «Չեմլեդեյսկի դրուժեստովի լիստի» (Երկրագործական ընկերության լրագիր) պարբերականը նրան

---

<sup>274</sup> Տե՛ս Հայ կեանքը Փրակայի մեջ, «Հայրենիք», Պոսթըն, 19.09.1950:

<sup>275</sup> Անձնական էլեկտրոնային նամակ, 8.09.2011:

<sup>276</sup> Տե՛ս Օտար մամուլի գնահատանքը փրոֆ. Վ. Տոտոմեանցի մասին, «Արեւելք», Ստանպոլ, 26.02.1935:

նվիրված հողված է հրատարակել, որտեղ նշվել է, որ մեծանուն տնտեսագետի աշխատությունները թարգմանված են 13 լեզուներով:

Նույն 1935-ին Պրահայում է հաստատվել բժիշկ Սարգիս Կրասիլ-նիկյանը: Բնիկ արցախեցի այս բժիշկն ուսանել է Բեռլինի համալսարանում, գրել բժշկական գիտական ուսումնասիրություններ: Վախճանվել է 1950-ին, Պրահայում<sup>277</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Չեխոսլովակիայում եղել են շուրջ 250 հայեր, որոնցից 150-ը՝ Պրահայում<sup>278</sup>: 1934-ին հայերի թիվը Չեխոսլովակիայում եղել է 100<sup>279</sup>: 1936-ին Նշան Մարտիրոսյանը մանրամասնել է այս վկայությունը, ըստ որի «*Ոսկե Փրակայի մէջ այսօր դեռ 25-30 Հայ կայ: Բաւական Հայեր ալ գաւառները կ'սպրին. Brno, Usti, Bratislava, Most և այլ քաղաքները*»<sup>280</sup>:

1930-ականներին չեխոսլովակյան մամուլը տարբեր առիթներով անդրադարձել է հայ ժողովրդին և Հայաստանին: Ժամանակակցի վկայությամբ «*Բոլոր գլխատր թերթերը միշտ Հայերու համակիր շէշտ մը ունեցած են, ամէն անգամ որ առիթ ունեցած են մեր վրայ խօսելու: Դժուար է տալ տարիներու ընթացքին կատարուած արտայայտութիւններու հաւաքածոյ մը*»<sup>281</sup>: Հայաստանին վերաբերող հոդվածներով անկուսակցական «Նարոդնի պոլիտիկա» («Ազգային քաղաքականություն») թերթին աշխատակցել է հայագետ Յարմիր Եղիշկյան (1901–1965): Հետաքրքրությունը հայերենի հանդեպ նրան անցել է հոլից, որը սկսել է սովորել հայերեն և ունեցել է հայալեզու մի շարք

<sup>277</sup> Տես Հայ կեանքը Փրակայի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 19.09.1950:

<sup>278</sup> Տես Վարժապետեան Յովհ., Չեխոսլովաքիոյ հայ գաղութը այսօր, անդ:

<sup>279</sup> Տես Յովհաննէսեան Եղիա Տօքք., Բանի՞ իողի ենք հայերս, «Բազմավէպ», 1934, Մայիս-Յունիս, բիւ 5-6, էջ 251: Նույնը տես՝ «Ալիք», Թեհրան, 29.07.1934: Նույնը կրկնված է 1935-ին տիպոգրահայ մամուլի մեկ այլ հրատարակման մէջ, որտեղ Հարավսլավիայի և Չեխոսլովակիայի հայերի թիվը սխալմամբ նշված է 600 (Արտասահմանի և Հայաստանի հայերի թիւը, «Ալիք», Թեհրան, 7.03.1935):

<sup>280</sup> Տես Տօքք. Ն. Մ., Փրակայի հայ ուսանողները...

<sup>281</sup> Տես Գեղամ Շաղախաբ, Չեխոսլովաք մամուլը հայերու մասին, «Յառաջ», Փարիզ, 25.02.1933:

գրքեր: Պրահայի համալսարանում սլավոնական և գերմանական լեզուներ ուսանելուց հետո նա 1928-ից հայերեն է ուսումնասիրել Պրահայում ուսանող Հովհաննես Հախնազարյանի և Վիեննայի Մխիթարյանների հետ: 1931-ի մայիսին մի հոդվածով անդրադարձել է Հայաստանի Հանրապետության հիմնադրման 13-ամյակին<sup>282</sup>: 1933-ի փետրվարին հրատարակել է «Հայ մամուլը Չեխոսլովակիայի մասին» հոդվածը, որտեղ տրված են Փարիզի «Յառաջ» և Կահիրեի «Յուսաբեր» թերթերում այդ երկրի մասին լույս տեսած հոդվածների, ինչպես նաև Թեհրանի «Ալիք» օրաթերթում չեխ-սլավոնական հարաբերությունների մասին հոդվածի ամփոփումները: Ըստ Եղիշեկայի՝ հայերն իրենց պատմության դժնդակ ճակատագրի և սփռվածության բերումով եղել են, կան և պիտի մնան մշակույթի ու շինարարության կարևոր մի տարր Արևելքում: «Լիդովե լիտի» պարբերականը 1932-ին հրատարակել է «Քրիստոնեության կղզին Առաջավոր Ասիայում» ծավալուն հոդվածը Հայաստանի մասին: Աշխատակցել է նաև հայ մամուլին<sup>283</sup>:

Չեխական մամուլը բազմիցս անդրադարձել է նաև այդ ժամանակաշրջանում ժողովրդական գրող անգլիագիր Մայքլ Առլենին (Տիգրան Գույումճյան): Նրա ազգային պատկանելիությունը մինչև անգամ եղել է Մասարիկի և Պրահա այցելած մի գերմանացի գրողի խոսակցության թեման: Չեխոսլովակիայի նախագահը չի ուզել հավատալ, թե անգլիական հասարակությունն այդքան վարպետորեն ներկայացնող մի գրող կարող է օտարազգի լինել, սակայն գերմանացի գրողն ի վերջո վստահեցրել է Մասարիկին Առլենի ազգության վերաբերյալ: Այս մասին գրել է Պրահայի գերմանալեզու «Փրագեր թագերթաթ» (Պրահայի օրաթերթ) պարբերականը<sup>284</sup>:

Չեխահայերի համար ոգևորության աղբյուր են եղել հայազգի արվեստագետների հյուրախաղերը Պրահայում: 1920-ականների

<sup>282</sup> Տե՛ս Չեխ թերթ մը Մայիս 28ի մասին, «Հայրենիք», Պոսթըն, 21.07.1931:

<sup>283</sup> Տե՛ս Եղիշեկա Ե. դրքա... Պրագայի Կարլոսեան համալսարանի պատմութիւնը, «Յուսաբեր», Գահիրե, 23-24.08.1931:

<sup>284</sup> Տե՛ս Մայքլ Առլենի մասին, «Հայրենիք», Պոսթըն, 12.03.1933:

սկզբին Չեխոսլովակիայի մայրաքաղաքում համերգներով հանդես է եկել ծնունդով քիֆլիսեցի դաշնակահարուհի Մարգարիտա Միրիմանովան (Միրիմանյան): «Փրագեր վրես» պարբերականը նրա մասին գրել է. «*Երիտասարդ արուեստագիտուհի Մարգարիտ Միրիմանեան մեկն է դաշնակի ամենահամակրելի վարպետներէն, որոնց առիթ ունեցած ենք լսելու Պրագի մէջ*»<sup>285</sup>: 1926-ին Պրահայում և Վիեննայում որպէս խորհրդային սիմֆոնիկ նվագախմբի ղեկավար հանդես է եկել մեկ այլ քիֆլիսեցի երաժիշտ՝ արդեն հիշված նվագավար Կոնստանտին Սարաջևը՝ ունենալով մեծ հաջողություն<sup>286</sup>: Սարաջևի համերգների մասին մամուլում գովեստով է արձագանքել չեխ ականավոր գիտնական, երաժշտագետ, հանրային գործիչ Չդենեկ Նեյեդլին (1878–1962)<sup>287</sup>: Երկու անգամ Պրահայում հյուրախաղերով հանդես է եկել Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի» երգիչ Արման Թոքաթյանը 1931-ին և 1933-ին: Իր ելույթների ժամանակ Թոքաթյանը կատարել է նաև Կոմիտասի «Կռունկը» մեծ խանդավառություն առաջացնելով դահլիճում գտնվող հայերի մեջ: Երգել է նաև Պլզենում և Կառլովի Վարիում<sup>288</sup>: 1933 թվականին չեխահայերը հանդիպել և մեծարել են նաև այդ քաղաքում ծնված գրող Ֆրանց Վերֆելին՝ վերջինիս «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի լույսընծայման կապակցությամբ<sup>289</sup>: Չեխական մամուլը լայնորեն անդրադարձել է Վերֆելի վեպին և այդ առ-

<sup>285</sup> **Տ. Սեան**, Դաշնակահարուհի Մարգարիտ Միրիմանեան, «Հայրենիք», Պոսթըն, 28.07.1927:

<sup>286</sup> Տե՛ս Հայ արուեստագետ մը, «Հայրենիք», Պոսթըն, 21.09.1933:

<sup>287</sup> Տե՛ս Նեյեդլի (sic) Չդենեկ, «Հայ սովետական հանրագիտարան», հատոր 8, Երևան, 1982, էջ 214:

<sup>288</sup> Տե՛ս Փրակացի, Արման Թոգաբեանի յաղթանակը Փրակայի մէջ, «Արեւելք», Ստանալով, 21.05.1933: Տե՛ս նաև՝ Գեղամ Շողակաթ, Փրական կը փառաբանէ հայ երգիչ մը որ ունի միջազգային կարողութիւն, «Յառաջ», Փարիզ, 23.05.1933:

<sup>289</sup> Տե՛ս Գեղամ Շողակաթ, Ֆրանց Վերֆիլ (sic) «Մուսա լեռան քառասուն օրերուն հեղինակը Փրակայի մէջ», «Յառաջ», 29.11.1933:

թիվ նաև հայ ժողովրդին: «Կարելի է ասել, որ չէխոսլովաք հանրութիւնը ցարդ այնքան հարուստ ծանօթութիւններ չէր ստացած հայութեան մասին, որքան Վերֆելի գրքի հրատարակութեան հետեւանքով»: <sup>290</sup>:

1934-ին Չեխիայի ընդհանուր լուսանկարչական ցուցահանդեսում առաջին կարգի վկայականի է արժանացել դամասկոսցի լուսանկարիչ Արամ Էմիրխան Վարժապետյանը, որի արվեստը մինչ այդ գնահատվել է նաև Մադրիդում, Բուդապեշտում, Լյուցեռնում, Կրակովում և Ֆրանսիայի քաղաքներում <sup>291</sup>:

Այս ժամանակաշրջանի սակավաթիվ չեխ մտավորականներ և արվեստագետներ որոշակի հետաքրքրություն են ցուցաբերել հայ իրականության նկատմամբ: Նշան Մարտիրոսյանի վկայությամբ՝ հատկապես Չեխոսլովակիայի անկախացումից հետո չեխերը սկսել են ջերմ համակրանք ցուցաբերել հայ ժողովրդի հանդեպ: Պրահայի համալսարանի պրոֆեսոր, արևելագետ, աստվածաբան Ալոիզ Մուզիլը (1868–1944), որը երկար տարիներ բնակվել է Փոքր Ասիայում, 1922-ին հանդես է եկել հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ընդարձակ հոդվածով <sup>292</sup>: Ինչպես նշվեց սույն աշխատության սկզբում, հոգևորական Մետոդ Պեխաչեկը, որը եղել է Նշան Մարտիրոսյանի ուսանողը, 1933-ին Չեխիայի ժողովրդական կաթոլիկ կուսակցության «Լիդովե լիստի» պաշտոնաթերթում հոդված է հրատարակել հայ-չեխական առևտրական և մշակութային հարաբերությունների մասին <sup>293</sup>: Պրոֆեսոր Կարել Շաֆարը հայոց պատմության մի գիրք չեխերեն է թարգմանել պրոֆեսոր Լեսնիի փափագի համաձայն: Մակայն Մարտիրոսյանը Չեխոսլովակիայի առաջին և ամենահինոտ հայագետը համարել

<sup>290</sup> Ն. Բ., «Քառասուն օր Մոսա լերան վրայ» վեպը չեխերեն, «Յուսաբեր», Գ.ս.հիթ. 3-5.11.1934:

<sup>291</sup> Տե՛ս Հայ արուեստագետ մը կը գնահատուի, «Արևելք», Ստանսլով, 7.02.1933:

<sup>292</sup> Տե՛ս Չեխ գիտնականի մը գնահատումը հայ ժողովրդի մասին, քարգմ. Ն. Մարտիրոսեան, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 4.03.1922:

<sup>293</sup> Տե՛ս Փրակաչի, Հայ և չեխ հնագոյն և նորագոյն յարաբերութեանց մասին, «Արևելք», Ստանսլով, 22-23.05.1933:

է երկրում մեծ սեր և հեղինակություն վայելած պրոֆեսոր **Վիլիելմ Վոչադլոյի**ն (°–1913): Վերջինս գրաբար է դասավանդել Պրահայի համալսարանի փիլիսոփայության բաժնում: Տիրապետել է քսանչորս լեզվի. հայերենից և արևմտաեվրոպական լեզուներից բացի իմացել է նաև հունգարերեն, եբրայերեն, պարսկերեն, արաբերեն, ասորերեն, թուրքերեն, չինարեն, ճապոներեն, մալայերեն, սանսկրիտ և արդի հնդկերեն: Այնքան հմուտ է եղել հայոց լեզվի մեջ, որ անգամ գրել է հայերեն գիտական հոդվածներ, որոնք, 1922-ի տվյալով, տակավին անտիպ են եղել և գտնվել են Կլադնո քաղաքի արխիվում: Վոչադլոն զբաղվել է համեմատական լեզվաբանությամբ, անգիր է իմացել հայերեն Աստվածաշնչից հատվածներ և «Հայր մերը»: «*Համետո գիտուն մը, ինչպէս կ'ըլլան իրական գիտնականները, երբեք չէ հայարտացած իր գիտութեամբ և հմտութեամբ, ու առանձնական ուսումը իր միակ հաճոյքը եղած է: Թէեւ իր պատանեկութեան ժամանակ վարժարանները գերմանական էին, սակայն անկեղծ հայրենասէր մըն էր և կը հաւատար, որ Չեխերուն գերութիւնը երկար չպիտի տեսէ*». այսպէս է նրան հիշել Նշան Մարտիրոսյանը<sup>294</sup>: Հայագիտական հետաքրքրություններ է ունեցել նաև Վիլիելմ Վոչադլոյի որդին՝ լեզվաբան, պրոֆեսոր, Չեխոսլովակյան համալսարանի փիլիսոփայության բաժնի դասախոս **Օտակար Վոչադլոն** (1895–1974), որը նույնպէս հոր նման անգիր է իմացել գրաբար «Հայր մերը» և չեխական թերթերում երբեմն հանդես է եկել հայանպաստ հոդվածներով<sup>295</sup>:

Նշան Մարտիրոսյանը վկայել է նաև, որ նույն ժամանակաշրջանում հայոց լեզվի մասնակի ուսումնասիրությամբ են զբաղվել չեխ հնդեվրոպարան լեզվաբանները և արևելագետները Պրահայի Կարոլինյան համալսարանի նախկին ուսուցչապետներ **Ռուդոլֆ Դվորժակը** (1860–1920), **Ռուդոլֆ Ռուժիչկան** (1878–1957), **Յոզեֆ Չուբատին**.

<sup>294</sup> Մարտիրոսեան Ն. Ա., Սեր անժամօր բարեկամները, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 12.07.1922:

<sup>295</sup> Տես :անդ:

Մաքս Գրյուներտը (1849–1929), տվյալ ժամանակաշրջանում՝ Օլդրիխ Հույերը (1880–1942), վերջինիս ուսանող Պավել Պուչան (1905–1986) և այլք<sup>296</sup>: Նշան Մարտիրոսյանի շնորհիվ Կառլովյան համալսարանի պրոֆեսոր, գերմանական գրականության մասնագետ և գրող, ազգությամբ հրեա Օտակար Ֆիշերը (1883–1938) ծանոթացել է Ավետիք Իսահակյանի պոեզիային և իր «Հայնե» ծավալուն աշխատության մեջ խոսել է նրա որպես Հայնրիխ Հայնեի ազդեցությունը կրած ժամանակի հայ լավագույն բանաստեղծի մասին<sup>297</sup>: Ֆիշերը, լինելով Ֆրանց Վերֆելի մտերիմը, նույնպես որոշակի հետաքրքրություն է ունեցել հայ ժողովրդի և մշակույթի հանդեպ: Իր հերթին Մարտիրոսյանը 1926-ին պոլսահայ մամուլում հրատարակել է Ֆիշերի «Ստրուկները» պիեսի ամփոփ թարգմանությունը<sup>298</sup>: Մարտիրոսյանից լսելով հայոց այբուբենի ստեղծման վերաբերյալ մի ժողովրդական ավանդություն՝ Ֆիշերը գրել է «Հայկական մի գրույց գրերի գեղոն» ներքողը (լույս է տեսել չեխական «Տրիբունա» թերթում, այնուհետև 1931-ին՝ Ֆիշերի «Հորձանուտներ», ժողովածուում): Զերթվածը հայերեն լույս է տեսել դարձյալ Նշան Մարտիրոսյանի թարգմանությամբ<sup>299</sup>:

Հրեական ծագումով չեխ գրող, Հոլոքոսթի գոհ Կարել Պուլաչեկը (1892–1945) իր «Մեր կողմին» գրքում հիշատակել է մի հայ գորգավաճառի<sup>300</sup>, ինչպես նաև Հայկական հարցն Օսմանյան կայսրությունում:

<sup>296</sup> Տես անդ: Նույնը տես՝ Փրակազի, Ի՞նչ գիտեն չեխերը մեր մասին և մենք անոնց մասին...

<sup>297</sup> Տես Չեխերն ու հայերը, «Ալիք», Թեհրան, 20.03.1925: Այստեղ Ֆիշերի անունը սխալմամբ գրված է Օտահոր Տիսկլեր:

<sup>298</sup> Տես Ֆիշեր Օթոքար, Ստրուկները, «Արեւիք», Կ.Պոլիս, 14-16.07.1933: Նույնը տես Նմոյշ մը չեխ արձակ գրականությունն: Ստրուկները, «Արեւ», Գահիրե, 1.06.1938:

<sup>299</sup> Տես Ֆիշեր Օթոքար, Գեղոն տառերու գիտին, «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 19.01.1924: Չեխ բանաստեղծի մը ներքողը հայ տառերու գիտին առթիւ, «Յուսաբեր», Գահիրե, 1.02.1936, նույնը տես՝ «Հայրենիք», 8.03.1936: Ֆիշեր Օթոքար, Գեղոն տառերու գիտին, «Ազգարար», Ստանպոլ, 23.10.1943: Մարտիրոսյան Նշան, Չեխ բանաստեղծի մը զեղօնը Ս. Մեսրոպի այբուբենին մասին, «Արեւ», Գահիրե, 14.08.1962:

<sup>300</sup> Տես Karel Poláček. Okolo nás, Prag, 1927, էջ 77:

Չեխ բանաստեղծ Մամուել Վեռները (1897–1976) հետաքրքրվել է հայ միջնադարյան պոեզիայով, Արշակ Չոպանյանի՝ ֆրանսերեն թարգմանություններից չեխերեն է թարգմանել և տպագրել «Հայկական ծաղկաքաղ» գրքույկը: Այնտեղ ընդգրկված են նմուշներ Ֆրիկի, Առաքել Սյունեցու, Ջիվանիի և այլ հեղինակների բանաստեղծություններից: Մի քանի թարգմանություններ էլ հրատարակել է «Չին», «Ավենախնում», «Գեդեոն» և «Կրեստանսկա ռևյու» (Զրիստոնեական բանբեր) պարբերականներում<sup>301</sup>:

Վերոհիշյալ «Հայկական ծաղկաքաղ» գրքույկի շապիկը հայ մանրանկարչության մոտիվներով պատկերազարդել է չեխ նկարիչ, պոռֆեսոր Ֆրանցիշեկ Պավելկան (1894–1948), որը եղել է հայ ժողովրդի բարեկամ ու հայ արվեստի երկրպագու: Նա ստեղծել է նաև խեթահայ մի տիպարի նկարը<sup>302</sup>: 1933-ին Փարիզում կայացած իր ցուցահանդեսում ներկայացրել է նաև մի յոզղաթցի հայի և երկու հայուհու դիմանկարներ: «Հայուհիներից» մեկը Չեխոսլովակիայի կրթության նախարարությունը գնել է 2000 կրոնով<sup>303</sup>: Նշան Մարտիրոսյանի վկայությամբ՝ Պավելկայի պատկերած հայուհին գյումրեցի է, ամուսնացած մի չեխ պաշտոնյայի հետ, մայր երկու որդիների, «որոնք իրենց ֆիզիքական տիպով «հայ օղլու հայ» են: Դժբախտաբար հայերեն չեն գիտեր»<sup>304</sup>:

<sup>301</sup> Տե՛ս Փրակացի, Ի՞նչ գիտեն չեխերը մեր մասին և մենք անոնց մասին...

<sup>302</sup> Տե՛ս Չեխ մեծ արուեստագետ մը. Փրոֆ. Ֆրանցիշեկ Փավելկա (Pavelka), «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, էջ 133-139:

<sup>303</sup> Տե՛ս Փրակացի, Փրակայի չեխ ազգ. քաւորոնը և հայ արուեստագետներ. «Արեւելք», Ստաւպոլ, 30.11.1933:

<sup>304</sup> Տե՛ս Մարտիրոսեան Նշան, Չեխական նկարչական արուեստը. Ֆրանցիշեկ Փավելկա. «Ազատ միտք», Գահիրե, 16.01.1937:

Իր հերթին, ծնունդով ֆրանսաբնակ սերաստացի նկարիչ Երվանդ Գասպարյանի (Արյան, 1894-1931) դիմանկարներից է «Պոռտրետ-հին»<sup>305</sup>: Նաև այս ժամանակաշրջանի հայ մամուլում ժամանակ առ ժամանակ երևացել են թարգմանություններ չեխ գրականությունից<sup>306</sup>:

Որոշ չեխ երաժիշտներ հետաքրքրվել են հայ երաժշտությամբ: Դաշնակահար Վազյալ Մայդլն իր երկացանկում հաճախ ընդգրկել է հայ կոմպոզիտորների (Կոմիտաս, Սպենդիարյան, Մելիքյան, Սինանյան) ստեղծագործություններից: Պրահայի պետական երաժշտանոցի ուսուցիչ Վիտեռմանը Վիեննայի Միսիթարյանների մոտ ծանոթացել է հայ հոգևոր երաժշտությանը և բարձր գնահատել շարականները կարծիք հայտնելով, որ բյուզանդական երաժշտությունը կրում է հայ եկեղեցական երաժշտության ազդեցությունը<sup>307</sup>: 1932-ին Պրահայի Արևելյան ակադեմիան Չեխական համալսարանում կազմակերպել է հայ երաժշտության մասին դասախոսություն, որի ժամանակ քամանչայով ելույթ է ունեցել Վարդան (Վարդգես) Հակոբյանը: Համերգից հետո չեխ երաժշտական ֆոլկլորիստ Լյուդվիգ Կուբան (1863–1956) Նշան Մարտիրոսյանին ասել է. «Դուք՝ հայերդ, կրնաք պարծենալ, որ այդքան ինքնուրոյն երաժշտութիւն ունիք»<sup>308</sup>: Ի դեպ, Լյուդվիկ Կուբան ուսումնասիրել է հնդկական և հայկական երաժշտությունը, որոնց հիման վրա փորձել է կիրառել կիսաձայն և քառաձայն նոր երաժշտական համակարգ չեխական երաժշտության համար<sup>309</sup>:

<sup>305</sup> Նկարի վերատպությունը տես՝ «Կեանք և արուեստ» տարեգիրք, Փարիզ, Գ. տարի, 1933, էջ 73:

<sup>306</sup> Տես Չապեկ Կարել, Սալիտակ պատուհանը, թարգմ. Հայ Վիր, «Լրաբեր», Նյու Եորք, 17.02.1940:

<sup>307</sup> Տես Հայկական երաժշտութիւնը, «Հայրենիք», Պոսթրն, 5.06.1930: Հայկական երաժշտությունը, «Կեանք և արուեստ», Փարիզ, 1931, էջ 120:

<sup>308</sup> Տես Փրակացի, Ի՞նչ գիտեն չեխերը մեր մասին և մենք անոնց մասին....

<sup>309</sup> Տես Մարտիրոսյան Նշան Տօք., Չեխոսլովաքիոյ մշակութային ու տնտեսական յարաբերութիւնները հայերու և Արեւելքի հետ, «Ազատ միտք», Գահիրէ, 5.09.1936: Այս առթիվ Նշան Մարտիրոսյանը, չլիներով երաժշտագետ, իրավամբ նկատել է. «Մենք յոյս չունենք, որ քառայ և կէս թօներու վրայ իրմնուած երաժշտութիւն մը, որ միայն արեւելեան ազգերու երաժշտութեան յատուկ է, կրնայ Չեխոսլովաքիոյ և կամ Երոսլայի միւս երկիրներուն մէջ մուտք գործել և յարատեւել, տրուած ըլլալով որ Երոսլայի ազգերուն

Պրահայի և Բոնոյի ռադիոկայանները 1936-ին հաղորդել են Դերե-  
նիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար» պիեսը: Այն չեխերեն թարգմանել և  
հաղորդման համար հարմարեցրել էր Ֆրանտիշեկ Պիշեկը, բեմադ-  
րությունն իրականացրել էր Յոժեֆ Բեզդիչեկը, իսկ արևելյան ոգով ե-  
րաժշտության հեղինակն էր Վիլիելմ Տաուսիկը՝ Բոնոյի ռադիոկայանի  
նվագախմբի ղեկավարը<sup>310</sup>:

Հայաստանի, նրա գրականության, ճարտարապետության, երաժշ-  
տության մասին ընդարձակ տեղեկություններ է պարունակում այս  
ժամանակաշրջանում հրատարակված չեխական 30 հատորանոց  
«Օտտոյի գիտական բառարանը» և Տոմաշ Մասարիկի հանրագիտա-  
րանը («Masarykův slovník naučný»): «Հայաստան» բառահոդվածը  
գրել է Նշան Մարտիրոսյանը (լույս է տեսել 1930 թվականի հատո-  
րում)՝ արժանանալով Հովհաննես Հախնազարյանի քննադատությա-  
նը, որը նշել է մի շարք անճշտություններ: Նա մասնավորապես նշել է,  
որ «Օտտոյի գիտական բառարանի» առաջին հրատարակության  
մեջ, տպագրված 40 տարի առաջ, հայոց պատմությունը տրված է եղել  
բավական հաջող և խնամքով, ինչը չի կարելի ասել ներկա հրատար-  
կության մասին<sup>311</sup>:

Հանուն ճշմարտության պետք է նշել նաև, որ այս ժամանակաշր-  
ջանում որոշ չեխեր ինչ-ինչ պատճառներով արտահայտել են հակա-  
հայկական տրամադրություններ: Այսպես, 1934-ին տնտեսագետ դոկ-  
տոր Պիկը Պրահայի «Վիրթսշաֆթ» («Տնտեսություն») գերմանալեզու  
ամսագրում հրատարակած Գալուստ Կյուլպենկյանի մասին մի  
գրության մեջ մատնել է իր հակահայկական տրամադրությունները,  
իսկ 1935-ին «Փրագեր թագերլաթ» սլարբերականում տպագրած իր

---

*ականջը այս քառորդ թօներուն վարժուած շրլլալով թերևս, չի կարենայ զանոնք ըմբռնել և  
ևկանակը միօրինակ նկատել» (անդ):*

<sup>310</sup> Տե՛ս «Քաջ Նազար»ը Փրակայի կայանէն, «Հնարաց», Փարիզ, 12.02.1936, նույնը տե՛ս  
«Յուսաբեր», Գահիրե, 19.02.1936, տե՛ս նաև՝ «Քաջ Նազար»ը Չեխո-Սլովակիայում,  
«Խորհրդային արվեստ», Երևան, 1.06.1936:

<sup>311</sup> Տե՛ս Հախնազարեան Յ., «Օտտոյ»ի չեխական հանրագիտական բառարանի  
«Արմենիա»ն, «Յուսաբեր», Գահիրե, 10, 13-14.07.1931:

«Ձեռքի մաքսանենգություն» թղթակցության մեջ գրել է, որ Փարիզից իրեն հեռագրով հաղորդել են, որ դեպի Եթովպիա գեներ փոխադրող միջազգային ելուզակների խումբը գլխավորապես բաղկացած է հայերից, հույներից և լեանտեններից: «Փրակեր Թակեպլաթ»ը կեղրոնական Ելոուպայի ամենատարածուած գերմաներէն թերթն է: Թերևս թղթակիցը ուզած է միտք պղտորել և գրգռութիւն սերմանել», – գրել է լուրը հայ մամուլին հասցնող թղթակիցը (վստահաբար Նշան Մարտիրոսյանը)<sup>312</sup>:

Հայ-չեխական կապերի հանդիպում ենք նաև այլ երկրներում: Այսպես, 1937-ին Կահիրեի հայ համայնքի և մամուլի կողմից Չեխոսլովակիայի մշակույթի և պետական դեմքերի հանդեպ ցուցաբերած համակրանքի առթիվ Չեխոսլովակիայի Կահիրեի ներկայացուցիչ Ջալառնայ Ստախոն դեսպանատանը ճաշկերույթ է տվել ի պատիվ Կահիրեի հայ մամուլի և Հայ Գեղարվեստասիրաց միության: Ներկա են եղել «Արև» օրաթերթի խմբագիր Հովհաննես Պողոսյանը, երգիծականիչ Ալեքսանդր Սարուխանը, Չեխոսլովակիայից Նշան Մարտիրոսյանը կնոջ հետ<sup>313</sup>:

1930-ականների Չեխոսլովակիային որոշ չափով առնչվել է նաև ճարտարապետ **Մանվել Կապուտիկյանը** (1882–1939): Ծնունդով վանեցի և Մարսելում բնակվող այդ ճարտարապետը 1933-ին հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան կնոջ՝ չեխ նկարչուհի Աննա (Անիտա) Կապուտիկյանի (ծնյալ Չապկովա) հետ: Թողած բարեկեցիկ կյանքը Ֆրանսիայում և կնոջ հայրենիքում՝ Մանվել Կապուտիկյանը հաստատվել է ծանր պայմաններում գտնվող 1930-ականների Երևանում՝ ձգտելով օգտակար լինել հայրենիքին: Այստեղ նրա նախագծով մի բանի շենք է կառուցվել: 1937-ին Աննա Կապուտիկյանը դատեր էրկամյա Մոննա Լիզայի հետ վերադարձել է Պրահա՝ դարձյալ Երևան

<sup>312</sup> Եթովպիա, մաքսանենգութիւն եւ... հայերը, «Յառաջ», Փարիզ, 26.07.1935:

<sup>313</sup> Տե՛ս Պատուիրակութիւն մը չեխօսուօր դեսպանատան մէջ, «Արև», Գահիրէ, 8.07.1937:

վերադառնալու պայմանով: Սակայն քաղաքական իրավիճակի փոփոխության պատճառով Աննա Կապուտիկյան-Չապկովան մնացել է Չեխիայում և այլևս չի տեսել ամուսնուն, որը դարձել է ստալինյան անհատի պաշտամունքի զոհ: Ի լրումն այդ դժբախտության՝ 1942-ին մահացել է յոթնամյա Մոննա Լիզան: Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի՝ հայ-չեխական ծագումով զարմուհու շիրիմն այսօր գտնվում է Չեխիայի Չեսկե Բուդեյովիցե քաղաքում<sup>314</sup>:

### Հայերը Չեխոսլովակիայում 1940-ական թթ.

Երկրորդ աշխարհամարտի տարիներին մի քանի հազար հայորդիներ մասնակցել են ֆաշիզմից Չեխոսլովակիայի ազատագրմանը (1944-ի սեպտեմբեր, 1945-ի մայիս)<sup>315</sup>: Նրանցից շատերը եղել են գերմանական համակենտրոնացման ճամբարներից փախածներ, որոնք միաժեշտ են պարտիզանական շարժմանը<sup>316</sup>:

Պրահայի ազատագրմանը (1945, մայիսի 9) ակտիվորեն մասնակցել է խորհրդային 73-րդ հրաձգային զորակազմը՝ Խորհրդային Միության հերոս, զեներալ-մայոր, Պրահա և Մլադա Բոլեսլավ քաղաքների պատվավոր քաղաքացի **Սարգիս Մարտիրոսյանի** (1900–1984) հրամանատարությամբ<sup>317</sup>: Նրա հրամանատարությամբ կորպուսում է եղել Լյուդվիգ Սվոբոդայի չեխոսլովակյան բրիգադը: Առաջինն է մուտք գործել Մլադա Բոլեսլավ քաղաք: Վերադառնալով Հայաստան՝ Մարտիրոսյանն ընտրվել է Խորհրդա-չեխոսլովակյան

<sup>314</sup> Տես **Հարությունյան Է.**, Դատարարակետ Մանվել Կապուտիկյանի ողիսականը, Երևան, 2005:

<sup>315</sup> Այդ մասին տես **Հարությունյան Է.**, Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944-1945 թթ.), Երևան, 1983:

<sup>316</sup> Չեխոսլովակիայում մարտնչած հայ պարտիզանների մասին տես՝ **Հակոբյան Մ.**, Աստղիքը չեն ընկնում, Երևան, 1970:

<sup>317</sup> Նրանց մասին տես՝ Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, 2010, էջ 568-569:

միության փոխնախագահ և Հայ-չեխոսլովակյան բարեկամության ընկերության նախագահ: Հետագա տարիներին մեծ աշխատանք է կատարել Հայաստանի և Չեխոսլովակիայի միջև մշակույթի, արվեստի, գիտության և այլ բնագավառներում կապերի զարգացման համար: Ի երախտագիտություն Մարտիրոսյանի կատարած աշխատանքի՝ չեխերը նրան նվիրել են նաև Պրահայի խորհրդանշական բանալին: Նա նաև ազատագրել է լեհական Վրոցլավը և ստացել Վրոցլավի պատվավոր քաղաքացու կոչում: Արժանացել է Չեխոսլովակիայի ամենաբարձր շքանշանների և մեդալների: Նրա անունով փողոց է անվանակոչվել Կիևում<sup>318</sup>: Որդին՝ **Բորիս Մարտիրոսյանը**, հետագայում տեղափոխվել է Պրահա:

Հայտնի է եղել նաև **Արտեմ Պետրոսյանի** (1921–1949) անունը, որը 1944-ին Յան Կոզինայի անվան ջոկատի կազմում դեսանտ է իջել Չեխոսլովակիայում և որպես ջոկատի հրամանատարի տեղակալ գործել մինչև պատերազմի վերջը: Նա պարզևատրվել է Չեխոսլովակիայի «Զինվորական խաչ» շքանշանով: Հետագայում Արտեմ Պետրոսյանի մասին Հայաստանում նկարահանվել է «Բարև, Արտյոմ (Մորավիայի արծիվը)» վավերագրական շարժանկարը (1964, բեմադրիչ՝ Գրիգոր Մելիք-Ավագյան):

Չեխիայում է մարտնչել նաև **Արթուր Բաբայանը**, որի մասին նույնպես նկարահանվել է փաստագրական կինոնկար՝ «Նրա անունն Արթուր էր» (բեմադրիչ՝ Պետրոս Խաչատուրով, Ադրբեջան):

Միայն Պրահայի ազատագրման համար 500 հայ ռազմիկներ ու սպաներ պարզևատրվել են խորհրդային և չեխական շքանշաններով ու մեդալներով, շատերը մասնակցել են պարտիզանական կռիվներին, շատերն էլ դարձել են Պրահա, Բոնո և այլ չեխական քաղաքների պատվավոր քաղաքացիներ: Բարձր գնահատելով հայ ռազմիկների

<sup>318</sup> Տե՛ս **Ованнисян А.**, Освободитель Праги. «Свободомыслие». Ереван, 29.07.2009:

սխրագործությունները Պրահան ֆաշիստներից ազատագրելու գործում՝ 1949 թվականին Վրշովիցե նորաստեղծ թաղամասի փողոցներից մեկն անվանվել է Երևանյան<sup>319</sup>:

Տողերիս հեղինակի մոր բեռին՝ Սանահին գյուղի բնակիչ **Անդրանիկ Էվոյանը** (1924–1995), որը խորհրդային զորքի կազմում հասել է մինչև Բեռլին, մասնակցել է չեխական տարածքների ազատագրմանը. հետագայում ընտրվել է Կոմառնո քաղաքի (այժմ՝ Սլովակիայում) պատվավոր քաղաքացի:

Չեխոսլովակիայում մարտնչած ու զոհված շատ հայերի գերեզմաններ այսօր գտնվում են չեխական տարբեր քաղաքներում ու գյուղերում: 2018 թվականին չեխական Սոկոլով քաղաքում հայտնաբերվել է խորհրդային ռազմագերիների գերեզման, բացվել է նրանց հիշատակի հուշարձան, և Հայաստանի դեսպանությունը հուշատախտակի վրա հրապարակված անունների շարքում հայտնաբերել է տասը հայ ռազմուզերու ազգանուն:

Ինչ վերաբերում է Չեխիայում հաստատված հայերին, ապա նրանցից Երկրորդ աշխարհամարտի ժամանակ յոթ կորուստ է եղել: Կովկասահայ **Մեսրոպ Սիմոնյանն** ուղարկվել է համակենտրոնացման ճամբար և զնդակահարվել հաղթանակի նախորդ օրը՝ 1945-ի մայիսի 8-ին: Վնուսնացած է եղել չեխուհու հետ և ունեցել **Արամ** անունով որդի, որը դպրոցում աչքի է ընկել գերազանց առաջադիմությամբ<sup>320</sup>: Ողբերգականորեն զոհվել է Նշան Մարտիրոսյանի վեցամյա դուստրը **Հայկուհին**, որին 1946-ի ամռանը սպանել են չեխերը՝ գերմանուհի կարծելով<sup>321</sup>: Նա հուղարկավորված է Դոմաժիցե քաղաքի մոտ: Անհեթեթություն է պատերազմի ավարտից հետո վեցամյա մանկան սպանությունը, անգամ նախկին թշնամու ազգից...

<sup>319</sup> Տես **Գրիգորեան Վ.**, «Երևանեան» փողոց Բրակայում, անդ:

<sup>320</sup> Տես **Երուսանդ**, Այս ակ մեր հողփափքը, «Յառաջ», Փառիզ, 26.11.1950:

<sup>321</sup> Տես **Անցողը**, Պրագայի հայ գաղութը, «Ակիբ», Թեհրան, 10.02.1948:

1948 թվականին Ֆրանսիայում ստեղծված Թրքական Հայաստանի Դատի Պաշտպան կոմիտեն պատվիրակություն է ուղարկել Չեխոսլովակիա՝ կոմիտեի քարտուղար Մ. Սուրատյանի ղեկավարությամբ, ներկայացնելու հայ ազգային մշակույթը և պահանջատիրությունը թուրքական տարածքների հանդեպ: Այդ առթիվ կոմիտեի նախագահ Արշակ Չոպանյանը շնորհակալական նամակ է հղել Չեխոսլովակիայի տեղեկատվության նախարարությանը<sup>322</sup>: Նույն 1948 թվականին հայերը հրավիրվել են մասնակցելու Պրահայի համալսարանի 600-ամյակի հանդիսությանը<sup>323</sup>:

Այն, որ ի թիվս մյուս սփյուռքահայերի, չեխաբնակ հայերը ևս եղել են Խորհրդային Հայաստանի հետաքրքրությունների շրջանում, վկայում է 1945-ին Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական կոմիտեում կազմված հայկական գաղթավայրերի վերաբերյալ մի գաղտնի փաստաթուղթ, որտեղ, հիմնվելով Չեխոսլովակիայում որոշ ժամանակ բնակված ռումինահայ Նազարյանի տրամադրած տվյալների վրա, մասնավորապես նշված է. «Չեխոսլովակիայում (Պրագայում) ապրող հայերի թիվը շատ չնչին է – մոտավորապես 200-300 հոգի, որոնք մեծ մասամբ զբաղվում են առևտրով. չնչին քանակություն է կազմում հայ ուսանողությունը: Չեխոսլովակիայի հայերը չեն ունեցել թեկուզ աննշան ազգային կյանք և այդ պատճառով ենթակա են եղել ապազգայնացման փտանգին: Այժմ այդ հայերի վիճակն ու կացությունը մնում է չյուսաբանված»<sup>324</sup>:

1948-ի վկայությամբ, Պրահայի հայերից «ոչ հին կայ այնտեղ, ոչ էլ նոր, կամ գրեթե չկայ: Վանեցի Տիգրան Սահակեանի՝ ժամանակին հիմնած քարեգործական Միութիւնն էլ անգոյ և անգործ է: Հները բոլորն էլ մահացան: Նրանցից մնում են իրենց չեխուհի այրիները՝

<sup>322</sup> Տես Զօպանեան Ա., Նամակ Չեխոսլովակիայի մկ մինիստրին, «Լրաբեր», Նիւ Եօրք, 6.04.1948:

<sup>323</sup> Տես Թրքակից, Չեխոյ հայերը պիտի մասնակցին Փրակայի համալսարանին 600-ամեակի հանդէսին, «Ժողովուրդ», Փարիզ, 12.02.1948:

<sup>324</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 147, ք. 49-50:

նստած իրենց հարստությունների վրայ: Մէկը նոյնիսկ կտակ է արել իր չեխ կնոջը, որպէսզի Հայաստանի մէջ երկու գիւղ կառուցանի: Կինը ոչ իսկ մի գիւղ կառուցանելու մասին է մտածում»<sup>325</sup>: Նկատի ունի ծնունդով պոլսահայ գորգավաճառ, արդեն էիշված Չարեհ Չատեյանին<sup>326</sup>: Նույն հեղինակը Պրահայում մնացած հայ ընտանիքներից հիշում է Նշան Մարտիրոսյանի, Էկինյան, Կյուլեսերյան ընտանիքները, խառնամուսնությամբ հինգ ընտանիք և երկու ամուրիների: 1950-ին Երվանդ Քեչյանը վկայել է, որ Պրահայում մնացած հայերը «Չեռքերուս մատներուն չափ [են]: Ոմանք հեռացան վերջերս: Ուրիշներ մեռան: Իրենց օտար կիներէն եղած զաւակները Հայ չենք հաշուեր բնականաբար»<sup>327</sup>: Այս տվյալին հակասում է 1960-ին վերաբերող տեղեկությունը, որ Պրահայում եղել է մոտ 50 հայ չեխուհիների հետ ամուսնացած կամ ամուրի<sup>328</sup>: Նույն Քեչյանը վկայել է, որ Պրահայում մնացել են հինգ կովկասահայեր, չորսը չեխուհիների հետ ամուսնացած, որոնցից երեքը, սակայն, անհայտ կորել են պատերազմի ժամանակ: «Հինա ամբողջ Չեխոսլովաքիոյ մէջ, ընդամենը, քար ճաթի, 35 հայ մնաց: Որովհետեւ վերջին 40 թիւէն երեք հոգի հեռացանք, մէկը Հոլանտա, մէկը Ֆրանսա, միւսը Հարաւային Ամերիկա, եւ երկուքն ալ Անդի աշխարհ»<sup>329</sup>:

<sup>325</sup> Անցորդ, Պրագայի հայ գաղութը, անդ:

<sup>326</sup> Տես Երուանդ, Այս ալ մեր հողվորսիքը, «Յառաջ», Փարիզ, 26.11.1950:

<sup>327</sup> Բոչեան Ե., Ժամուն բակը, «Յառաջ», Փարիզ, 3.09.1950:

<sup>328</sup> Տես Վարժապետեան Յովհ., Չեխոսլովաքիոյ հայ գաղութը այսօր, անդ:

<sup>329</sup> Երուանդ, Այս ալ մեր հողվորսիքը, «Յառաջ», Փարիզ, 26.11.1950:

## Հայագիտությունը սոցիալիստական Չեխոսլովակիայում և Չեխիայում

Ինչպես երևաց նախորդ գլուխներից, Չեխոսլովակիայում հայագիտությունը դրվել է ամուր հիմքի վրա: Երկրում սոցիալիստական կարգերի հաստատումից հետո հայագիտությունը մտել է նոր հունի մեջ: Ավելի են սերտացել հայ և չեխ գիտնականների փոխայցերը և կապերը: Սկսել են չեխերեն թարգմանաբար հրատարակվել հայ գիտնականների և գրողների երկերը: 1959-ին Երևանի պետական համալսարանի գրադարանը Պրահայի համալսարանի հայագիտության ամբիոնին ուղարկել է 325 հայերեն գիրք<sup>330</sup>:

Լեզվաբան **Չեստմիր Լուկուտկայի** (1895–1966)՝ 1946-ին հրատարակված «Գրի զարգացումը» գրքում (լույս է տեսել նաև հայերեն թարգմանությամբ, 1955-ին, Երևանում) խոսվում է նաև հայ գրերի մասին (հայերեն թարգմանության մեջ՝ էջ 182-185): Հեղինակը չի վարանել վրացական գրի ստեղծող համարել Մեսրոպ Մաշտոցին (նույն տեղում, էջ 186):

Արդեն հիշված հայագետ, կովկասագետ **Յարոմիր Եղլիչկան** հայերեն է դասավանդել Պրահայի համալսարանում և հայերեն ու վրացերեն՝ Արևելյան լեզուների դպրոցում (այն հիմնվել է Արևելյան հիմնարկի կողմից, 1945-ին): Ուսումնասիրել է հայերենի և վրացերենի բառային կառույցները, գրել «Հայերենի բարդ բառերը» աշխատությունը<sup>331</sup>: Չեխերեն է թարգմանել նմուշներ հայերեններից, Սայաթ-Նովայի, Դանիել Վարուժանի, Եղիշե Չարենցի, Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններից, Թումանյանի «Գիքորը», Վախթանգ Անանյանի «Հովազաձորի գերիները»<sup>332</sup> և այլն: Նամակագրություն է ունեցել հայ

<sup>330</sup> Տե՛ս Նվեր Պրագայի համալսարանին, «Մովեստական Հայաստան», Երևան, 1959, ք. 5, մայիս, էջ 36:

<sup>331</sup> Տե՛ս Աղայան Ծ. Պ., Չեխ գիտնականների մոտ, «ՀՍՍՌ. ԳԱ. Տեղեկագիր. հասարակական գիտություններ», Երևան, 1959, ք. 6, էջ 111:

<sup>332</sup> Տե՛ս Vakh tang Ananjan, Zajatici Pardáli soutěsky. SNDK, Praha 1959. přeložil Jaromir Jedlička, znovu Albatros, Praha, 1974 a 1988. Անանյանի այլ չեխերեն թարգմանություններից

մտավորականների հետ<sup>333</sup>։ Երևանի Գրականության և արվեստի թանգարանում գտնվող Հրաչյա Աճառյանի ֆոնդում առկա է մեծա-  
նուն գիտնականին ուղղած Եղիշկայի մի հայերեն նամակը։ Չեխ  
գիտնականը երեք անգամ գիտական գործուղման է մեկնել Հայաս-  
տան, ելույթներ ունեցել Պետական համալսարանում, ռադիոյով և հե-  
ռատեսիլով<sup>334</sup>։ 1959-ին «Գրական թերթում» տպագրվել է նրա «Ող-  
ջույն հայ ժողովրդին» գրությունը<sup>335</sup>։

Եղիշկայի և Պրահայի համալսարանի հայագիտության ամբիոնի  
արդյունավետ գործունեության շնորհիվ է, որ հետագա տանամյակնե-  
րին ասպարեզ են իջել չեխ հայագետներ **Լուդմիլա Մոտալովան,**  
**Վացլավ Չեռնին,** **Լադիսլավ Կրժեհլան,** **Բոհումիլ Պալեկը,** **Բոհումիլ**  
**Բարեշը,** որոնք այս կամ այն չափով Հայաստանի գրականությունը և  
մշակույթը ներկայացրել են չեխերին<sup>336</sup>։ Հայ մշակույթին ծանոթանա-  
լու նախատակով Պրահայից հաճախ Երևան են մեկնել դասախոսներ  
լեզվաբան **Վլադիմիր Սկալիչկան (1909–1991),** **Գորալիկը** և **Ստոլի-**  
**կը**<sup>337</sup>։

Դոկտոր Բոհումիլ Բարեշը (1917–1982) տիրապետել է գրաբարին,  
չեխերեն է թարգմանել հատվածներ Խորենացու և Բուզանդի երկերից  
և Գրվագր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկից։

---

տևս՝ Vakh tang Ananjan, Dech arménské země, Praha, 1951, přeložila Zora Beráková, նույնի,  
Na břehu Sevanu, Praha, 1952, přeložila Věra Taucová:

<sup>333</sup> Տե՛ս Կոստան Ջարյանին ուղղած նրա նամակից մի հատված՝ **Մատթեոսեան Վ.**  
Կոստան Ջարեանի շուրջ, Անթիլիաս, 1998, էջ 405:

<sup>334</sup> Եղիշկայի մասին տե՛ս **Մոտալովա Լ.**, Չեխ հայագետ Եարոմիր Եղիշկայի յիշատակին,  
«Այգ», Պէյրուք, 27.10.1965: **Նույնի**, Յարոմիր Եղիշկա, «Պատմաբանասիրական  
հանդես», Երևան, 1965, ք. 1, էջ 292-293: **Քոչարյան Ա.**, Յարոմիր Եղիշկան հարազատների  
ու գործընկերների գնահատմամբ, «Օրել», Պրահա, 2000, ք. 7-8, էջ 28-29:

<sup>335</sup> Տե՛ս արտատպումը՝ **Եղիշկա Նա.**, Ողջույն հայ ժողովուրդին, «Արախս», Ալեքսանդրիա,  
6.06.1959:

<sup>336</sup> Չեխ հայագետների մասին տե՛ս Չեխ և հայ կապերը, «Այգ», Պէյրուք, 8.12.1971:  
Զրույցը շարունակում են չեխ թարգմանիչները. Վացլավ Չեռնի, Լադիսլավ Կրժեհլա,  
Կամիլ Խորբակ, գրի առավ Հ. Հարությունյանը, «Գալուն», Երևան, 1982, ք. 12, էջ 16-17:

<sup>337</sup> Տե՛ս Հայոց լեզուն... Փրակայի մէջ, «Յառաջ», Փարիզ, 23.07.1960:

Պրահայի համալսարանի արևելագիտության բաժնի ուսանողուհի **Մարցելա (Մարսելա) Բոուշկովան** 1957-ին ռուսերեն հողված է գրել Չեխոսլովակիայում հայ գրականության ներկայացվածության մասին<sup>338</sup>: Այստեղ նա վկայել է, որ 1945-ից հետո ռուսերենից չեխերեն են թարգմանվել Չոխրապի, Դեմիքոյանի, Չոբյանի պատմվածքները, բանաստեղծուհի **Յանա Շտրոբրովան** չեխերեն է թարգմանել խորհրդահայ բանաստեղծների (Շիրագ, Մարգարյան, Կապուտիկյան, Կարենց): 1956-ին չեխերեն առանձին գրքերով տպագրվել են Մովսես Արազիի «Արյունոտ ծաղիկներ» և Շիրվանգադեի «Քաոս» գործերը: Հետաքրքրական է, որ վերջին վկայի հասցեին քննադատական կարծիքներ են հնչել, և արևելագիտական բաժնի ուսանողները հանդես են եկել պատասխան հողվածով՝ պաշտպանելով «Քաոսը»: Ի դեպ, Բոուշկովայի շնորհիվ Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացք» գրքի մասին Մերգեյ Դուլյանի գրախոսությունը տպագրվել է Պրահայի «Նովի սվետ» («Նոր աշխարհ») ամսագրում: Բոուշկովան նաև հայերեն գրել է իր տպավորությունները թատերագետ Ռուբեն Զարյանի «Սիրանույշ» աշխատության մասին, որտեղ զուգահեռներ է կատարել հայ և չեխ թատրոնների միջև: «Հասկացա, որ հայ թատրոնի ծագման և զարգացման պայմանները և նրա նշանակությունը հայ ազգի համար գրեթե միատեսակ էին, որպես և չեխ ազգային թատրոնի զարգացումը և նշանակությունը... Մեր ազգային թատրոնը ծագել է գերմանական դաժան տիրապետության տակ՝ անասելի դժվար պայմանների մեջ. մեր առաջին դերասանները ամենաաղքատ մարդիկ էին, բայց ազգային վերածնության համար կատարել են հսկայական գործ... Գուցե հայ թատրոնի զարգացման նյութական պայմանները մի քիչ ավելի լավ էին. որ գրքից պարզվում է, բայց մնացածը շատ մնան է: Հետաքրքրական է, որ հայ բեմը ստեղծել է հենց ճիշտ ողբերգախաղաց դերասաններ, որոնք աշխարհային մակերևույթին<sup>339</sup> են հասել. գուցե

<sup>338</sup> Տես հայերեն թարգմանությունը՝ **Բոուշկովա Ա.**, Հայ գրականությունը Չեխոսլովակիայում, «Գրական թերթ», Երևան, 30.04.1957:

<sup>339</sup> Այսինքն՝ համաշխարհային մակարդակի:

այդ նրա համար, որ հայերը ընդունակ են ունենալու շատ, ուժեղ և խոր  
զգացմունքներ: Ընդհակառակը՝ չեիս քատրոնի և գրականության ամեն-  
նամեծ նվաճումները կոմիքական բնույթն ունեն»<sup>340</sup>: Երիտասարդ չե-  
խուհին նաև հետաքրքրական դիտարկում է կատարել՝ նշելով, որ հայ  
մեծ դերասանուհի Սիրանուշի կյանքն, իր ընկալմամբ, եղել է նրա մեծ  
դերերից մեկը<sup>341</sup>:

Առավել հանրահայտ է չեիս հայագիտուհի **Լուդմիլա Մոտալովայի**  
(1935–1975) գործունեությունը: Յարոմիր Եդլիչկայի այս տաղանդա-  
վոր ուսանողուհին, որը կատարելապես տիրապետել է հայոց լեզվին,  
որոշ ժամանակ գրեթե մենակ իր ուսերին է վերցրել հայ գրականու-  
թյունը չեխերեն թարգմանելու ողջ ծանրությունը: Նա առաջին անգամ  
հանդես է եկել 1956 թ., երբ Կառլովյան համալսարանի արևելագի-  
տության բաժանմունքի դասախոսների և ուսանողների ջանքերով  
«Վվետեն» ամսագրի 9-րդ համարում տպագրել է Իսահակյանի ար-  
ձակ բանաստեղծությունների թարգմանությունները: Մոտալովան ա-  
ռաջաբանում գրել է. «Հայ մեծանուն բանաստեղծ և արձակագիր Ա-  
վետիք Իսահակյանը պատկանում է ժամանակակից գեղարվեստի  
աշխարհի ամենամեծ անձնավորությունների շարքին: Քանի որ Իսա-  
հակյանը մարդկանց ուսուցանում է իրար հասկանալ, այդ իսկ պատ-  
ճառով ամբողջությամբ ծառայում է մարդկանց համաշխարհային եղ-  
րայրությանը»<sup>342</sup>: Մոտալովայի դիպլոմային աշխատանքը նվիրված է  
ևղել Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» վիպերգի լեզվի և ոճի և  
ռանձնահատկություններին: 1964-ին հրատարակել է «Հայ գրակա-  
նության պատմության ակնարկ»<sup>343</sup>: Տարիներ շարունակ Մոտալովան

<sup>340</sup> Բոուշկովա Մ., Տպավորություններ «Սիրանուշի» կարոլալոց հետո. նամակ Պրագայից. «Սովետական գրականություն», Երևան, 1958, թ. 1, էջ 159:

<sup>341</sup> Բոուշկովայի մասին տես՝ Հայագետ չեխուհին, «Զարթոնք», Պեյրուք, 11.06.1958:

<sup>342</sup> Եսայան Հ., Հայ գրականությունը օտար լեզուներով, «Գրական թերթ», Երևան, 11.05.1955:

<sup>343</sup> Տես Մ. Մխիթարյան, Հայ գրականության պատմության ակնարկ՝ չեխերեն, «Գրական թերթ», Երևան, 17.07.1964:

չեխական ռադիոյում ներկայացրել է հայ պոեզիան և երաժշտությունը, չեխական մամուլում՝ հայ մշակույթի վերաբերյալ տասնյակ հոդվածներ (օրինակ, «Չեխոսլովակյան ռադիո» պարբերականի 1973-ի թիվ 21-25-ում հրատարակել է «Հայ ժողովրդական նվագարաններ» հոդվածաշարը), միջազգային հանրագիտարաններում և տեղեկատուներում հանդես է եկել հայ գրողների մասին անզլերեն հոդվածներով, հրատարակել «Խորհրդային Հայաստան» գրքույկը (1966): Թարգմանել է մի շարք հայ գրողների (Թումանյան, Իսահակյան, Չարենց, Բակունց, Սևակ,-Մաքևոսյան, Խալափյան, Գևորգ Արշակյան): Հատկանշական է, որ Մոտալովան մինչև անգամ փորձել է չեխաբնակ հայերին իրենց հարազատներին կապել<sup>344</sup>: Պրահա այցելող հայերը ամեն կերպ վայելել են նրա ընկերակցությունն ու օժանդակությունը: Օրինակ, 1967-ին նա օգնել է «Պրահայի գարուն» վոկալիստների միջազգային մրցույթի դափնեկիր երևանցի Զնարիկ Մալունցյանին ճիշտ արտասանել չեխ մեծ երգահան Դվորժակի երգերի խոսքերը<sup>345</sup>: Մոտալովան սիրված անուն է եղել Խորհրդային Հայաստանի գրողների և գիտնականների շրջանում: Ինչպես նկարիչ Յիրժի Նոսեկն է ասել, նա հայկական հանրագիտարան էր, իսկ նրա տունը՝ հայ մշակույթի յուրատեսակ կենտրոն: 1960-ից Մոտալովայի հետ համագործակցել է Չեխոսլովակիայի նկարիչների միության անդամ Յուլիե Մվորո-

<sup>344</sup> Այսպես, 1967-ին նա գրել է Երևան՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին. «*Խնայում եմ, ուղարկե՛ք ինձ Երովայիայի (Աղյա Աբերայի) հայկական գաղտրի ժող. սովետի նախագահի (Է. Ջեյրախյան?) հասցեն: Այստեղ կան մարդիկ, որոնք այնտեղ բարեկամներ ունեն. իսկ կապը նրանց հետ կտրվեց*» (տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 875, ցուցակ 2, գ. 524, թ. 15): Կոմիտեի աշխատակից Մարո Մարգարյանը նրան գրել է. «*Հայաստանում Դուք ճանաչված ու սիրված էիք նաև գրողների 5-րդ համագումարից առաջ. բայց համագումարի Ձեր կույրից հետո դարձաք բոլորի սիրելին... Դուք մեր ամենապատվալից հայրենակցուհիներից մեկն եք... Շատ գովելի է Ձեզ մոտ եղած հայերին իրենց հարազատների հետ կապելու Ձեր ջանքերը: Դժբախտաբար Աղյա-Աբերայից Ջեյրախյանի հասցեն մենք չունենք. բայց գրում ենք Ձեզ համար երեք լավ մարդու հասցեներ, գրեցե՛ք յուրաքանչյուրին, և նրանք Ձեզ կօգնեն*» (նույն տեղում, թ. 14):

<sup>345</sup> Տե՛ս Առաջին կարգի դիպլոմ, «Արարք», Մեղրի, 9.07.1967:

դավան, որը պատկերագարող է մի շարք չեխերեն գրքեր՝ Թումանյանի «Ախթամարը», Իսահակյանի «Լիլիթը», 1972-ին լույս տեսած Սևակի բանաստեղծությունների ժողովածուն, նույն թվականին տպագրված հայկական հեքիաթների գիրքը (ընդգրկում է 30 գունավոր աշխատանք), Հրանտ Մաթևոսյանի չեխերեն թարգմանությունները<sup>346</sup>: Մոտալովայի անունով է կոչվում Երևանի քաղաքային գրադարաններից մեկը<sup>347</sup>:

Լուդմիլա Մոտալովայի վաղաժամ մահից հետո նրա գործընկեր պարսկագետ Յիրժի Բեչկան (1915–2004) շարունակել է հայագիտուհու աշխատանքը: Նա գրել է «Հայերն ու հայկական մշակույթը Չեխիայում և Սլովակիայում» չեխերեն աշխատությունը, որը, ինչպես նշվեց, ցայժմ մնում է անտիպ: Նրա գրքից մի հատված 2000 թ. տպագրվել է «Օրեր» եվրոպական ամսագրում:

Սլովակ ժայռապատկերաբան Միրոսլավ Կչիցան (1920–) իր «Ճանապարհորդություն դեպի նախնադարյան արվեստը» սլովակերեն աշխատության մեջ (Բռնո, 1984) մի ամբողջ բաժին նվիրել է Հայաստանի ժայռապատկերներին: Գրքի շապիկին պատկերված է Սևարի երկնաղիտարանի գլխավոր քարակոթողը, իսկ Հայաստանին նվիրված բաժնի գլուխներն են՝ «1. Երևանը «հավերժական քաղաք» Հոռմի ժամանակակիցն է, 2. Ժայռերի վրայի նշաններից դեպի գիր, 3. Ուղտասար լեռ, 4. Աստղագիտությունը նախնադարում, 5. Կրակի ու ջրի պաշտամունքի վայրերից դեպի Գեղամա լեռների ժայռապատկերները, 6. Մեծամորի հնադարյան աստղաղիտարանից դեպի Ազատ գետի հովիտ»<sup>348</sup>:

<sup>346</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Չեխ նկարչուհու հայկական գործերը. «Մովետական արվեստ», Երևան, 1973, ք. 11, էջ 60-61:

<sup>347</sup> Մոտալովայի մասին մանրամասն տե՛ս նաև՝ Արիստակեսյան Ա., Լյուդմիլա Մոտալովա. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1975, ք. 3, էջ 254-256: Ըստ հինյան Վ., Ոգևոն՝ն, ոգեղենի՛կ մի աղջիկ... «Գարուն», Երևան, 1999, ք. 8, էջ 75-76:

<sup>348</sup> Այս աշխատության մասին տե՛ս Թոխաթյան Կ., Ժայռապատկերաբան Միրոսլավ Կչիցան Հայաստանում, «Օտարագգի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում» միջազգային գիտաժողովի նյութեր, 28 հոկտեմբերի 2016 թ., Երևան, 2017, էջ 146-151:

Հայագետ-վրացագետ, կովկասագետ, հայ գրականության քարգմանիչ **Վաղլավ Չեռնին** (1931–2017) 1950-ական թթ. հայագիտություն է ուսանել Պրահայի Կառլովյան համալսարանում՝ պրոֆեսոր Եղիշկայի մոտ: Հետագայում նույն համալսարանի Արևելյան գիտությունների բաժնում դասավանդել է իր իսկ հիմնած «Համընդհանուր կովկասագիտություն» առարկան: Տիրապետել է արևելահայերենին և արևմտահայերենին՝ վերջինս սովորած լինելով Չեխիայում ծնված Լուիզա Արսլանյանից: 1958-ին առաջին անգամ այցելել է Հայաստան, որից հետո գրել է «Սրտիս մի մասը մնում է Հայաստանում» հայերեն հոդվածը<sup>349</sup>: Հետագա տարիներին Չեռնին քարգմանել է հայ գրականության դասականներին՝ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի», Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպերը, Ակսել Բակունցի «Սև ցեղերի սերմնացանը» պատմվածքների ժողովածուն (այս քարգմանության համար արժանացել է Չեխիայի քարգմանիչների ընկերության «Տարվա լավագույն քարգմանության համար» մրցանակին), Պերճ Չեյրունցյանի «Ամենատխուր մարդը»: Թարգմանել է նաև Գրիգոր Նարեկացի, միջնադարյան հայրենները (Նահապետ Քուչակի անվամբ), Սայաթ-Նովա, Վարուժան, Չախրատ, Պարույր Սևակ (վերջինին՝ **Յանա Շարոբրդսայի** համագործակցությամբ): 2003 թ. նրա քարգմանությամբ չեխերեն լույս է տեսել անգլուիի հեղինակ Աննա Էլիզաբեթ Ռեդգեյթի «Հայերը» գիրքը<sup>350</sup>:

Լեզվաբան, քարգմանիչ **Բոհումիլ Պալեկը** (ծն. 1936) ուսանել է Կառլովյան համալսարանի բանասիրության բաժնում, Յարոմիր Եղիշկայի մոտ սովորել հայերեն: Դիպլոմային աշխատանք է գրել «Գրաբարի հողը Նոր կտակարանում» թեմայով<sup>351</sup>:

---

<sup>349</sup> Տե՛ս արևմտահայերեն ամփոփումը՝ Սրտիս մ.կ մասը կը մնայ Հայաստան, «Յառաջ», Փարիզ, 4.06.1958:

<sup>350</sup> **Anna Elizabeth Redgateova**, Arméni, Prague, 2003.

<sup>351</sup> Տե՛ս Ադայան Ծ. Պ., Չեխ գիտնականների մոտ, ամդ:

Հայերենին փայլուն տիրապատել է նաև թարգմանիչ **Լադիսլավ Կրժեհլան** (1945–2010), որը 1970–1971 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանում: Ադասի Այվազյանի «Երաժշտական զանգ հին ինտելիգենտի տանը» պատմվածքի թարգմանության համար արժանացել է երիտասարդ թարգմանիչների առաջին մրցանակին: Չեխերեն է թարգմանել նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզները», Ջորայր Խալափյանի, Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործություններից: Կատարել է նաև խորհրդահայ պոետներից սողացի թարգմանություններ, որոնք բանաստեղծականացրել են չեխ առաջատար բանաստեղծ-թարգմանիչներ Յանա Շարոբրովան, Լյուդեկ Կուրիչտան, Յիրժի Ժաչեկը և Պետր Կովարժիկը: Ի դեպ, Լադիսլավ Կրժեհլայի և նրա հայուհի կնոջ՝ Անահիտ Հովհաննիսյանի որդին՝ Նարեկ Կրժեհլան, չեխերեն է դասավանդում Ռոփսալայի (Շվեդիա) համալսարանում:

1984-ին հրատարակվել է Գևորգ Էմինի բանաստեղծությունների ժողովածուն՝ **Ելինեկ** ամուսինների թարգմանությամբ:

Երևանի Գրականության և արվեստի թանգարանում մեծանուն դերասան Հրաչյա Ներսիսյանի արխիվում պահվում է **Պետր Սադեցկիի** (1943–1991) ռուսերեն մամակը, գրված 1960-ի դեկտեմբերի 21-ին, երբ նա Պրահայի կինոյի ակադեմիայի ուսանող էր: Նամակում նա խնդրել է Ներսիսյանին նյութեր ուղարկել իր մասնակցությամբ կինոնկարների մասին, քանի որ ինքն աշխատում է «Հայ ժողովրդի կինեմատոգրաֆիան» հողվածի վրա: Չեխ ուսանողը նաև նշել է, որ հայերեն է պարապում Նշան Մարտիրոսյանի մոտ<sup>352</sup>: Սադեցկին չի կայացել որպես կինոգետ, սակայն հայտնի է դարձել որպես գրող ու արվեստաբան:

---

<sup>352</sup> Տե՛ս ԳԱԹ, Հրաչյա Ներսիսյանի ֆոնդ, թիվ 43: Մենք հրատարակել ենք մամակի բնագիրը (տե՛ս **Бахчинян А., Письмо чешского студента, «Голос Армении»**, Ереван, 29.01 2016) և հայերեն թարգմանությունը (**Բախչինյան Ա.**, Չեխ երիտասարդի մամակը Հրաչյա Ներսիսյանին, «Օրեր», Պրահա, 2014, ր. 9-12, էջ 43):

Երգահան **Ալբերտ Պեկը** (1893–1972) մշակել է մոտ 20 հայկական երգ Պրահայի պետական ռադիոկայանի համար<sup>353</sup>: Նա Նշան Մարտիրոսյանի կնոջ՝ Արուսյակի կատարմամբ ձայնագրել է Խուռնավիլ գյուղի մի քանի երգ («Փչե, հովիկ, փչե», «Վարդենի ըլլայի, դուռդ բուսնեի», «Մեր փեսի գոտին շամեն է եկեր», «Օրոր, օրոր»), որոնք հետո թարգմանել է չեխերեն և ազգային օպերայի մեներգչուհի Շտեպանկա Շտեպանովայի կատարմամբ հաղորդել Պրահայի ռադիոյով: Այդ երգերի կատարմամբ հանդես են եկել նաև ռադիոյի մեներգիչներ Վլաստա Մլեյնկովան, Ս. Ռայզլին, Էվա Գերաուերովան և այլք<sup>354</sup>:

Յոթ տարի Թեհրանի երաժշտական ուսումնարանում դասավանդած թավջութակահար **Յոզեֆ Շմոլիցն** իր հայ գործընկերների միջոցով մոտիկից ծանոթացել է հայ երաժշտությանը և հաճախ կատարել Կոմիտասի ստեղծագործություններից<sup>355</sup>:

Պրահայի կոնսերվատորիայի պրոֆեսոր **Կառլ Պեխը** Պրահայում 1955-ին ներկա է եղել հայ թավջութակահարուհի Մեղեա Աբրահամյանի համերգին, բարձր գնահատել հատկապես Դ-վորժակի ստեղծագործության նրա կատարումը: Մեղեա Աբրահամյանի արխիվում պահվում է նրան ուղղված Պեխի չեխերեն գնահատական մամուլը<sup>356</sup>:

Ծնունդով կիպրահայ **Հայկ Յոթյունյանը** Չեխիայում համրավ ունի որպես սիմֆոնիկ դիրիժոր և երաժշտագետ: Նա Կառլովյան համալսարանի երգչախմբի եւ մվագախմբի դիրիժորն է: Չեխերեն է թարգմանել հայկական շարականներ, եկեղեցական դրոշմի և մկրտության ծեսի շարադրանքը: Տարիներ շարունակ Յոթյունյանն աշխատում է Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» չեխերեն թարգմանության վրա, հանդես է գալիս հայ հոգևոր երաժշտության մասին չե-

<sup>353</sup> Տես **Մարտիրոսյան Հ.**, Չեխական ամենահին երգը արեւելեան ծագում ունի, «Արես», Գահիրե, 25.10.1961:

<sup>354</sup> Տես **Գրիգորեան Վ.**, «Երևանեան» փողոց Բրակայում, անդ:

<sup>355</sup> Տես անդ:

<sup>356</sup> Նամակը թարգմանաբար տե՛ս **Մանվելյան Ս.**, Մեղեա Աբրահամյան, Երևան, 2017, էջ 253:

խերեն և անգլերեն ուսումնասիրություններով: Իր քարգմանական-հետազոտական աշխատանքում հաճախ համագործակցում է պրոֆեսոր Էվժեն Կինդլերի և Մարտինա Պիչմանովայի հետ: Հեղինակ է երեք մենագրության<sup>357</sup> և բազմաթիվ գիտական հոդվածների, քարգմանությունների ու հրապարակումների<sup>358</sup>: Նա 2016 թվականի հոկտեմբերի 11-25-ը Չեխիայի Ազգային գրադարանում բացված «Հայ

<sup>357</sup> Տևս Հ. Utidjian, *The Art of the Armenian Book through the Ages/Arménské knižní umění v průběhu staletí*, Mervart, 2016. **H. Utidjian**, *Treasures of the earliest Christian nation: Spirituality, Art and Music in Mediaeval Armenian Manuscripts / Z pokladu nejstarších Křesťanů: spiritualita, umění a hudba v rukopisech středověké Arménie*, Royal Canonry of the Premonstratensians at Strahov in Prague. **H. Utidjian**, *Tntesean and the Music of the Armenian Hymnal*, Pavel Mervart, 2018:

<sup>358</sup> Տևս, օրինակ, **H. Utidjian, E. Kindler**: Svatý Řehoř z Nareka, “Mezinárodní Report”, 8, červen 2003, č. 6, էջ 30 (s překladem 34. části *Knihy modliteb* Řehoře z Nareku); **Turková B., Utidjian H., Kindler E.**, „Tisíc let od smrti arménskeho básníka svatého Řehoře z Nareka“, “Karmel” 2 (2003), էջ 13-15 (s překladem úryvku z 33. části *Knihy modliteb* Řehoře z Nareku); **B. Turková, H. Utidjian, E. Kindler**, *Matka Boží v arménské duchovní poezii*, “Světlo”, XI, 18, května 2003, č. 20, էջ 13 (s překladem úryvku 80. části *Knihy modliteb* Řehoře z Nareku); **B. Turková, H. Utidjian, E. Kindler**, Tisíc let od smrti arménskeho básníka svatého Řehoře z Nareka, «Օրեր», 2003, ք. 9-11, էջ 23 (s překladem úryvku 30. části *Knihy modliteb* Řehoře z Nareku); **E. Kindler, B. Turková, H. Utidjian**, Ukázka z *Knihy modliteb sv. Řehoře z Nareka*. Slovo 33, «Օրեր», ք. 46, 2009, էջ 46; **Utidjian H., Kindler E.**, „Svatý Řehoř z Nareku. Teologie, motivy a obrazy v díle“, “Parrésia” IV (2010), էջ 135-182; **Utidjian H., Kindler E., Turková B.**, „Ukázky z díla sv. Řehoře z Nareku“, “Parrésia” IV (2010), էջ 255-273; **Utidjian H., Pičmanová M.**, „Ukázky z Hymnafe armenske apoštolske cirkve“, “Parrésia” 5 (2011), էջ 227-244; **Utidjian H.**, *Řehoř z Nareku*“, in: (Ed.) Starowieyski, M., *Slovník raněkřesťanské literatury východu*, Mervart 2012, էջ 260-264; **Utidjian H.**, On the printed sources of the ‘Ode of the Little Cart’. “Parrésia” 7 (2013), էջ 185-203. On the early Venetian manuscripts of the ‘Ode of the Little Cart’, idem, էջ 205-228; Textual observations on St. Gregory of Narek’s ‘Ode of the Little Cart’. «Բանբեր Մատենադարանի», 21 (2014), էջ 487-502; **Utidjian H., Pičmanová, Liška L.**, „Písní podivuhodná“, “Plav”, 4/2015, էջ 21-23; Poezie a hudba sv. Řehoře z Nareku jako zrcadlo arménské historie v druhém tisíciletí“, “Parrésia” 8 (2014), էջ 331-370; **Utidjian H., Pičmanová**, „Oda na sv. Bohorodičku Řehoře z Nareku“, “Parrésia” 8 (2014), էջ 523-530; **Utidjian H.**, *The Art of the Armenian Book through the Ages/Arménské knižní umění v průběhu staletí*, Mervart, 2016; (Book review) «Krikor Pitedjian – Բրիտանիոր Կարա-Մուրզա, “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 551-553; (Book review) «Theo Maarten Van Lint and Robin Meyer – Armenia: Masterpieces from an Enduring Culture», “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 548-551; (Book review) «Armen Kyurkchyan and Hrair I lawk Khatcherian, with an introduction by Aram Sharambeyan – Հայկական դրոշմագրված կտուտ – Armenian block printed fabric», “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 582-585; (Book review) «Comparative Oriental Manuscript Studies: An Introduction».

գրքարվեստը դարերի միջից» հայ հնատիպ գրքի ցուցահանդեսի համակարգողն էր եւ համանուն պատկերագրքի հեղինակը, ինչպես նաեւ 2018-ի հոկտեմբերի 8-ին Պրահայի Ստրահովի վանական համալիրի գրադարանի Աստվածաբանական դահլիճում հանդիսավոր պայմաններում բացված «Հնագույն քրիստոնյա ժողովրդի գանձերը. հոգևորը, արվեստը և երաժշտությունը հայկական միջնադարյան ձեռագրերում» խորագրով ցուցահանդեսի համակարգողը: Ութիճյանը նաև այդ ցուցահանդեսի անգլերեն և չեխերեն պատկերագրքի<sup>359</sup> հեղինակն է:

Վերոնշյալ **Էվժեն Կինդլերը** (1935–2018)՝ աստվածաբան, կիրառական մաթեմատիկայի պրոֆեսոր և դիրիժոր, հայտնի է եղել նաև որպես հայ գրականության եւ հատկապես Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության գիտակ: Նրա հիմնած «Մուզիկա Պոետիկա» երգչախումբը տասնամյակներ շարունակ կատարել է նաև հայկական հոգևոր երգեր՝ մասնակցելով Պրահայի հայկական համայնքի կազմակերպած բազմազան միջոցառումներին: Այն Սուրբ Յիլիի և Սուրբ Հո-

---

“Parrésia” 9-10 (2015-2016), էջ 580-582; (Book review) «Edward G. Mathews, Jr. (ed. and transl.) – The Armenian Prayers (Աղոթք) attributed to Ephrem the Syrian», “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 566-568; (review) «Tore Tvornø Lind – The Past Is Always Present: The Revival of the Byzantine Musical Tradition at Mount Athos», “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 564-566; «On the Armenian Typicon and two new publications», “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 515-518; «Evžen Kindler – Theologian, Musicologist and Armenologist», “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 483-490; «On the legacy of Archbishop Zareh Aznavorean of Blessed Memory», “Parrésia” 9-10 (2015-2016), էջ 519-528; «A brief survey of systems of musical notation in Armenian sacred music», in C. Esche-Ramshom (ed.), *Reflections on Armenia and the Christian Orient: Studies in honour of Vrej Nersessian*, Yerevan 2017, էջ 261-284; «Les Pères mékhitaristes vénitiens et la musique sacrée arménienne: les grandes figures et leur héritage», in B. Outtier – M.K. Yevadian (eds.), *Jubilé de l'Ordre des Pères mékhitaristes – Tricentenaire de la maison mère, l'Abbaye de Saint-Lazare 1717-2017; (Arménie... une histoire. 3), Sources d'Arménie*, Lyon 2017, էջ 145-155; «G. D. Pachtikos on Archimandrite Komitas», “Clavibus unitis” 6 (2017), 1-8. Գեղայի Ա. Գրիգոր Նարեկացու տաղից նոր կրասարակություն. «Բանբեր Մատենադարանի», Երևան, 24 (2018), էջ 30-82 և այլն:

<sup>359</sup> Z. pokladu nejstaršich Křest'anů: spiritualita, umění a hudba v rukopisech středověké Arménie / *Treasures of the Earliest Christian Nation: Spirituality, Art and Music in Mediaeval Armenian Manuscripts*, Royal Canonry of the Premonstratensians at Strahov in Prague, 2018, 336 pp.

գու եկեղեցիներում մատուցվող հայկական պատարագների մշտական երգեցիկ կազմն էր: 2017 թվականին Չեխիայում Հայաստանի դեսպանը Կինդլերին է հանձնել Հայաստանի մշակույթի նախարարության Ոսկե մեդալը, իսկ Չեխահայոց հոգևոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը՝ փայտե խաչքար:

Չեխ հայագետների նորագույն սերնդի ներկայացուցիչներից **Պետրա Կոռոտսկովան (Կոշտալովա, ծն. 1981)** աշխատում է Պրահայի Կառլովյան համալսարանի էթնոլոգիայի և հայագիտության բաժնում: Նա հանդես է եկել հայ միջմասդարյան գրականությանը, Օսմանյան կայսրության հայ բնակիչներին, հայոց Ցեղասպանությանը նվիրված գիտական հրապարակումներով՝ չեխերեն, անգլերեն և ֆրանսերեն<sup>360</sup>: Նրա թարգմանությամբ չեխերեն լույս է տեսել Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունը»<sup>361</sup>: 2017-ին լույս տեսավ Պետրա Կոշտալովայի աշխատությունը 1914–1923 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի և ասորիների ցեղասպանության մասին, որը նա գրել էր Միսալ Ռ-ժոուտիլի և Պետր Նովակի համագործակցությամբ<sup>362</sup>: Պետրան

---

<sup>360</sup> Sluň úpá hnujáděněř: Arměňšti lidoví pěvci a trubadůři – gusaní a ašugovč, “Cesky Lid: Etnologický časopis”, Praha, 2007, Vol. 94 Issue 2, p. 157-176; Obrazy jiných v arměnských historických pramenech 16. - 18. století, idem, Etnologický ústav, 2009 0009-0794. 96, č. 2. (2009), s. 113-130; La Perception de l’Autre dans les textes arméniens de la région d’Anatolie orientale (XVIe au XVIIe s.), “Archiv Orientální: Quarterly Journal of African and Asian Studies Praha” Vol. 78:2 (2010), pp. 105–126; Aux confins de l’Empire ottoman au XVIe-XVIIe siècle: Les Arméniens et les autres communautés religieuses en Anatolie orientale, idem, Orientální ústav AV ČR, 2011 0044-8699 79, č. 1, (2011), s. 1-25; Aghet : genocida Arměnú v roce 1915, Dějiny a současnost Praha : Nakladatelství Lidové noviny, 2015 0418-5129 Roč. 37, č. 4 (2015), s. 38-42; Simeon Polský a jeho Putování: postavení arměnských křesťanů v Polsku a v Osmanské říši, “Slovanský přehled/Slavonic Review : Journal for the History of Central, Eastern and Southeastern Europe.” Praha, I historical ústav AV ČR, 2015 803 s. 0037-6922 Roč. 101, č. 1 (2015), s. 39-67; Travels and Chronicles of Simeon of Poland: Perspectives of Further Research, «Հայաստանը և արևելաբրիտանական քաղաքակրթությունը, զեպուցումներ և զեկուցումների դրույթներ», Երևան, 2016, էջ 107-111:

<sup>361</sup> Putování 1608-1618: cestopis a kroniky arměnského poutníka. Šimon Polský; z arměnského originálu přeložila, k vydání připravila, úvodní studii a poznámkami opatřila **Petra Košťálová**. Vydání první Praha: Argo, 2016.

<sup>362</sup> **Michal Řoutil, Petra Košťálová, Petr Novák**, Katastrofa křesťanů. Likvidace Arměnú. Asyfanů a Řeků v Osmanské říši 1914-1923, Pavel Mervart, 2017.

չելսերեն է թարգմանել նաև Միլվա Կասյուտիկյանի քանաստեղծություններից (հրատարակվել են «Օրեր» ամսագրում, թ. 31, 2004):

Վազլավ Չեռնիի ղեկավարությամբ հայագիտություն են ուսանել երիտասարդ չեխուհիներ **Միլադա Կիլյանովան, Վերոնիկա Մարչիկովան և Աննա Սոխովան**: Վերջինս զբաղվում է 5-րդ դարի հայ գրականության և Հայաստանի ու Ադվանքի քրիստոնեության խնդիրների ուսումնասիրությամբ<sup>363</sup>: 2014 թվականից Միլադան՝ հայոց պատմություն, Աննան՝ հայոց լեզու են դասավանդում Կառլովյան համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի հայագիտական դասընթացներում, իսկ Հայկ Յությունյանն ուսուցանում է գրաբար և հայ հոգևոր մշակույթ: Միլադա Կիլյանովան չեխերեն է թարգմանել ժամանակակից հայ արձակ, այդ թվում՝ Ադասի Ավվազյանի պատմվածքները:

Պրահայի Անվտանգության քաղաքականության կենտրոնում է աշխատում **Պավլինա Բլահովան**, որը զբաղվում է Կովկասի և Բալկանների էթնիկ հակամարտությունների ուսումնասիրությամբ: 2017-ին լույս է տեսել նրա չեխերեն մենագրությունը Արցախի հակամարտության մասին<sup>364</sup>, իսկ 2018-ին «Ասիա Եվրոպա» ամսագրում նույն թեմայով հրատարակել է անգլերեն հոդված<sup>365</sup>:

Ինչպես տեսնում ենք, Չեխոսլովակիայում հայագիտության ավանդույթները կենդանի են, և ասպարեզ իջած նոր անունները հույս են

---

<sup>363</sup> Anna Sochová. Počátky christianizace Arménie a Kavkazské Albánie v kontextu současných arménsko-ázerbájdžánských územních sporů. "Rýžoviště zlata a doly drahokamů..." Sborník pro Václava Huňáčka, 2006, s.121-134; Druhá vlna christianizace Arménie a Kavkazské Albánie. "Parrésia" I, 2007, s.121-130; Arménský teolog 5. století Jezník Koghbaci a jeho výklad perského náboženství, in: Nový Orient I, 2008, s.38-41; Arménský historik Eliše a jeho dílo O Vardanovi a arménské válce v historicko-literárních souvislostech, "Parrésia", II/III, 2008-2009, s. 81-101; Český cestovatel Karel Hansa, očitý svědek následků arménské genocidy, "Parrésia", II/III, 2008-2009, s. 333-339.

<sup>364</sup> Stěu Pavlína Bláhová, Vliv Ruska na rozmrzáni konfliktu v Náhomím Karabachu. Vojenské rozhledy 3/2017:

<sup>365</sup> Stěu Pavlína Bláhová, Nagorno Karabakh: Obstacles to the Resolution of the Frozen Conflict. Asia Europe Journal, 2018:

ներշնչում հայագիտության հանդեպ հետաքրքրության շարունակականության վերաբերյալ...

## Հայերը սոցիալիստական Չեխոսլովակիայում և հայ-չեխոսլովակյան կապերը

Չեխոսլովակիայում սոցիալիստական կարգերի հաստատումից հետո, մինչև 1989 թվականը, երկրում հայկական կյանք չի եղել: Ասպարեզ են իջել նոր հայագետներ, հաստատվել են կապեր Խորհրդային Հայաստանի և սոցիալիստական Չեխոսլովակիայի միջև, որն արտահայտվել է գրոսաշրջային և մշակութային փոխայցելություններով, հայ գրականության ներկայացմամբ Չեխոսլովակիայում և չեխոսլովակյան գրականության թարգմանությամբ Հայաստանում:

Առաջին քայլերը Չեխոսլովակիայի և նորաստեղծ Խորհրդային Հայաստանի միջև կապերի հաստատման գործում կատարվել են դեռ 1920-ական թթ. կեսից: Արդեն 1925-ի աշնանը չեխոսլովակյան բանվորական պատվիրակությունն այցելել է Թիֆլիս, որտեղից ողջույնի և համերաշխության հեռագիր է հղել Հայաստանի աշխատավորներին<sup>366</sup>: 1929-ին Երևանում մենահամերգով հանդես է եկել ԽՍՀՄ-ի քաղաքներում հյուրախաղերով շրջող Պրահայի կոմսերվատորիայի պրոֆեսոր, վիրտուոզ ջութակահար Օտտո Շեյդլերը<sup>367</sup>: 1935-ին Չեխոսլովակիայում ցուցադրվել է «Հայկինոյի» առաջին հնչյունային ժապավենը «Պեպոն» «Հազար ոտրլի կնոջ համար» վերնագրով<sup>368</sup>: Չեխական մամուլը պարբերաբար գրել է Խորհրդային Հայաստանի, հայերի ներգաղթի թեմաներով, «Փրագեր փրեսը» լայնորեն անդրա-

<sup>366</sup> Տե՛ս Չեխո-սլովաքներուն ողջույնը, «Մարմարա», Կ.Պոլիս, 12.11.1925:

<sup>367</sup> Տե՛ս Զութակահար պրոֆ. Օտտո Շեյդլերի համերգի առթիվ, «Խորհրդային Հայաստան», Երևան, 3.11.1929:

<sup>368</sup> Տե՛ս Դգմունի Գ., Որվագիծ Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության, Երևան, Հայպետհրատ, 1961, էջ 92:

դարձել է Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի կաթողիկոս ընտրվելուն՝ զովեստով խոսելով հայ եկեղեցու մասին<sup>369</sup>: 1930-ին Մոսկվայում կայացած երկրաբանական գիտաժողովի մասնակիցներն այցելել են Հայաստան. նրանց մեջ եղել են նաև չեխոսլովակներ<sup>370</sup>: Արևելագետ, խեթագետ, Պրահայի համալսարանի ռեկտոր, արևելագիտության բաժանմունքի հիմնադիր **Բեդրժիխ Հրոզնին** (1879–1952) 1936-ին Հայաստանի լուսավորության բաժանմունքի հրավերով այցելել է Երևան, կարդացել երկու դասախոսություն խեթական մշակույթի վերաբերյալ<sup>371</sup>: Վերադառնալով Պրահա՝ 1937-ի հունվարի 30-ին արևելագիտական համաժողովում Հրոզնին զեկուցել է իր հայաստանյան ուղևորության մասին, դրվատել Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որը հասցրել է կարճ ժամանակամիջոցում մեծ թվով հնություններ հավաքել<sup>372</sup>: 1937-ին Երևանում հանդես է եկել չեխոսլովակյան ջազ-ռեյուն՝ Օտտո Սկուտեցկու ղեկավարությամբ<sup>373</sup>:

Այս նույն ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանի բնակիչների մեջ եղել են չեխոսլովակյան ազգության յոթ ներկայացուցիչ<sup>374</sup>: Ենթադրում ենք, որ այդ չեխերը այիտի լինեն Թիֆլիսից Երևան տեղափոխվածներ (հիմնականում՝ հայերի հետ ամուսնացած կանայք): Նրանցից է եղել **Մարիա Պաժմանովան** (Պրաժակովան), որի սերունդներն այսօր վերադարձել և բնակվում են Չեխիայում<sup>375</sup>:

<sup>369</sup> Տե՛ս **Փրակացի**. Չեխերը մեր մասին...

<sup>370</sup> Տե՛ս Օտար գիտնականներ Հայաստանի մեջ, «Յուսաբեր», Գահիրե, 10.09.1930:

<sup>371</sup> Տե՛ս Փրոֆ. Գրոզնի Երևանի մեջ, «Հայրենիք», Պոսթըն, 8.01.1937: Փրոֆ. Գրոզնի Երևանի մեջ, անդ. 4.02.1937:

<sup>372</sup> Տե՛ս Բրոֆ. Հրոզնիի տպագրությունները, «Ազատ միտք», Գահիրե, 6.03.1937:

<sup>373</sup> Տե՛ս Հայֆիլիարմոնիա, «Մտրիդային Հայաստան», Երևան, 28.08.1937: Տե՛ս նաև Մանր լուրեր, «Հայրենիք», Պոսթըն, 7.10.1937:

<sup>374</sup> Տե՛ս Հայաստանի մեջ... 47 տեսակ ազգեր, «Կեանք և արուեստ» տարեգիրք, Փարիզ, Գ. տարի, 1934, էջ 110:

<sup>375</sup> Նրա մասին տե՛ս՝ **Ասատրյան Հ.**, Վերադարձ արմատներին մեկ դար անց. Հայաստանի չեխոսիին՝ Մարիա Պրաժակովան, «Օրեր», Պրահա, 2008, ք. 4, էջ 43-46:

Հայ-չեխական կապերը հատկապես աշխուժացել են 1950-ականներից սկսած: 1966-ին Երևանում կայացել է չեխոսլովակյան արվեստի տասնօրյակ<sup>376</sup>: 1971-ին Բրատիսլավայի Օպերայի և բալետի թատրոնում աշխատել է Հայաստանի ժողովրդական արտիստ Ֆրունզե Ելանյանը, իսկ Ծովակ Համբարձումյանի «Աղջիկ կակաչներ» մեկ գործողությամբ բալետը 1970-ականների սկզբին բեմադրել է Չեխոսլովակիայի «Պրագա բալետ» դասական պարի խումբը (բեմադրիչ՝ Պավել Շմոկ): 1976-ին Կապյանի երաժշտական ուսումնարանում զետեղվել է մի գերմանական երգեհոն, որն իր մեծությամբ Հայաստանում երկրորդն է Հայֆիլհարմոնիայի երգեհոնից հետո: Այդ երգեհոնը 1914-ին գնվել է Պետերբուրգի Մարիինյան թատրոնի համար և վերաշինվել է Չեխոսլովակիայի Կոնոլ քաղաքի «Ռիգեր Կլոսս» հաստատության մեջ: Մասնագետները՝ Շտեֆելը, Հանգլիկը և Ռիիտան, կատարել են երգեհոնի զետեղումը Կապյանում: Առաջին համերգը կատարել է Վահագն Ստամբուլցյանը<sup>377</sup>: Չեխերեն լույս է տեսել հայաստանցի պատմաբան Փայլակ Ենգոյանի «Հայաստանը անցյալում և ներկայում» գիրքը, իսկ հայաստանցի պատմաբան Սուրեն Հովհանյանը 1963-ին հրատարակել է «Չեխոսլովակիայի սոցիալիստական շինարարության պատմությունից» աշխատությունը: Խորհրդային Հայաստան են այցելել բազմաթիվ մտավորականներ և արվեստագետներ: Նրանցից գրող Վոյտեխ Միհայիկը մասնավորապես գրել է. «Հայաստանը չքնաղ երկիր է: Բավական է փոքր-ինչ նայել, թափանցել հայ ժողովրդի կրքոտ, բոցավառ, տառապալից պատմության խորքը, որպեսզի դառնաս նրա բարեկամը: Ինչ ճանապարհ է անցել ձեր ժողովուրդը, ինչ հրաշալիքներ է նա ստեղծել իր և համայն մարդկության համար»<sup>378</sup>: 1986 թվականին Լիդիցեում կանգնեցվել է հայ քան-

<sup>376</sup> Տե՛ս Խալաթյան Լ., Չեխոսլովակյան նկարիչների Շեքսպիրը, «Թատերական նկարիչների մասին», Երևան, 1983, էջ 193-197:

<sup>377</sup> Տե՛ս Երզնունդ (sic) Ղափանի մեջ, «Յառաջ», Փարիզ, 13.04.1976:

<sup>378</sup> Հովհան Գ., Հանուն վսեմ գաղափարի, Երևան, 1982, էջ 75-76:

ղակագործ Դավիթ Երևանցու «Սայրություն» արձանը: Տեղի սլատկե-  
րասրահում կազմակերպվող միջազգային մանկական մրցույթին 44  
տարի շարունակ մասնակցել են նաև հայաստանցի աշակերտներ և  
շահել մրցանակներ: Իսկ Էջմիածնի փողոցներից մեկը 2015 թվականի  
հունիսի 25-ին անվանակոչվել է Լիդիցեի փողոց: Խորհրդային Հա-  
յաստանում չեխ գրականությունը թարգմանվել է ռուսերենից, միակ  
չեխագետը եղել է արդեն նշված թարգմանիչ Հովհաննես Հարություն-  
յանը<sup>379</sup>: Հետագայում ասպարեզ են իջել այլ չեխագետ թարգմանիչ-  
ներ, որոնց թարգմանությամբ չեխ գրականության նմուշներ են լույս  
տեսել «Գարուն» ամսագրում՝ պրահաբնակ հրապարակախոս և  
«Գարունի» հատուկ թղթակից Շուշան Ղազարյանի ջանքերով: 1999  
թվականին լույս է տեսել ամսագրի հատուկ համարը՝ նվիրված Չե-  
խիային և չեխ գրականությանը: Այստեղ չեխերենից հայերեն կատա-  
րած թարգմանություններով հանդես են եկել Արսեն Քոչարյանը, Սի-  
մոն Մեսրոպյանը, Հովհաննես Հարությունյանի դուստրը՝ Մարիամ  
Հարությունյանը, Հայաստանում ուսանած Յարոսլավ Մարոուշեկը,  
Կառլ-Հայնց Եհենը և Պետեր Չախերը:

Այս ժամանակահատվածում Չեխոսլովակիայում մշտական բնա-  
կության են հաստատվել սակավաթիվ հայորդիներ (հիմնականում՝  
այնտեղի խորհրդային զորամիավորումներում ծառայածներ կամ չե-  
խերի հետ ամուսնացածներ), որոնք, սակայն, համայնք չեն կազմել:

Սոցիալիստական Չեխոսլովակիայում գործած հայազգի գործիչ-  
ներից կարող ենք հիշել հետևյալ անունները:

1928 թվականից Չեխիայում է ապրել ճարտարապետ **Բարկեն  
Ռաշմաճյանը**: Հայաստանի արխիվում պահվող նրա ֆոնդում հարյու-

---

<sup>379</sup> Տե՛ս նրա առաջին թարգմանություններից և փոխադրություններից՝ Արլա Զ., Երկու  
բոթոք, «Շիժեռնակ», Երևան, 1975, ք. 7: Ապրկոտ տղան; Գեղեցիկ ձին, անդ, 1975, ք. 8:  
Չկա ուրիշ մի լեզու, անդ, 1978, ք. 7: Հարությունյանի մասին տե՛ս Ասատրյան Հ., Չեխ  
Հովիկն ու Հաշեկը, «Օրեր», Պրահա, 2002, ք. 7-8, էջ 32-33, 35:

րավոր նամակներ ու բացիկներ կան՝ ուղղված Հայաստանի ազգականներին, գրված 1930-1980-ական թթ. Չեխիայից և Սիբիրից, որտեղ նա աքսորված է եղել 1946–1961 թթ.: Բաբկենի և որդու նամակներում տեղեկություններ կան Չեխոսլովակիայում իրականացած հայկական միջոցառումների մասին (մասնավորապես՝ 1966-ին Լիբերեցում հայկական մշակույթի միասնակի մասին, որի շրջանակներում կայացել են հայ թատրոնի 2000-ամյակին նվիրված ցուցահանդես, Կոնստանտին Օրբելյանի ջազային նվագախմբի համերգը, նաև այն մասին, թե ինչպես է Բաբկենը ցանկացել օգնել Լուդմիլա Մոտալովային Ավետիք Իսահակյանի մասին հողված գրելիս, քանի որ իր մայրը ժամանակին ճանաչել է Իսահակյանին): Բաբկեն Ռաշմաճյանը և իր չեխ կինն ունեցել են երկու զավակ՝ **Ջավեն** (ծն. 1938) և **Աստղիկ** (ծն. 1940-ականներ): Օստրավայում բնակվող քիմիկոս **Ջավեն Ռաշմաճյանը** սովորել է որոշ չափով հայերեն գրել-կարդալ: Ռաշմաճյանների մտերիմներից է եղել չեխ կոմպոզիտոր **Ֆինկեն**, որն իր մանկական օպերան ի պատիվ Ռաշմաճյանի աղջկա՝ **Աստղիկի**, անվանել է «Աստրա»:

Նշան Մարտիրոսյանի որդին՝ **Հայկ Մարտիրոսյանը** (ծն. 1936, Պրահա), կինոգործիչ և լրագրող է: Ուսանել է ժննդավայրի գերմանական դպրոցում, Պրահայի լեզվաբանական բարձրագույն դպրոցում, 1959–1965 թթ.՝ Գեղարվեստի ինստիտուտի կինոյի և հեռատեսիլի բաժնում: Տիրապետում է հայերեն, չեխերեն, գերմաներեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին: Հայկ Մարտիրոսյանը 1960-ականներից զբաղվել է լրագրությամբ, գրել է կինոբեմագրեր, չեխերեն տեսական հոլվածներ կինոյի (Ֆիլմի երկխոսությունների, կինոյում հումորի, համր կինոյի գրոտեսկի) և գերմաներեն հողվածներ՝ չեխական կինոյի մասին: Կինոյի մասին հողվածներով հանդես է եկել «Սլովո», «Ֆիլմ ա դիվադո» և այլ չեխական ու գերմանական պարբերականներում: Աշ-

խատակցել է նաև սփյուռքահայ մամուլին («Ջարթօնք», «Նոր Մարմարա», «Արև»<sup>380</sup>): Սփյուռքահայ մամուլում, որպես թերթոն, Մարտիրոսյանը հրատարակել է Բոհումիլ Ռ-ժիհայի «Հոնգիկի ճանապարհորդությունը» վիպակը, որի արևելահայերեն տարբերակը լույս է տեսել 1961-ին, Երևանում: Չեխերեն է թարգմանել Ջորայր Խալափյանի և այլ հայ գրողների երկեր: Տարիներ շարունակ Պրահայի «Սվետ սովետու» (Խորհրդային աշխարհ) հրատարակչության համար գրել է հայերեն գրքերի ծանուցագրեր: 1965-ից Հայկ Մարտիրոսյանն աշխատանքի է անցել Պրահայի հեռուստատեսությունում՝ որպես սցենարիստ և թատերագիր: Գրել է Վիհանովայի «Ֆուգա սև դաշնամուրով» շարժանկարի և չեխերի նախապատմությունը ներկայացնող չորս մասանոց «Սլավոնական բերդաքաղաքը» (1969–1970) հեռուստաֆիլմի սցենարները: Տարբեր հիմնարկների պատվերով Չեխիայում և Գերմանիայում նկարահանել է մոտ մեկ տասնյակի հասնող վավերագրական կինոնկարներ: 1968–1969 թթ. բնակվել է Գերմանիայի Ուլմ քաղաքում, կինոյին և քաղաքականությանը նվիրված հոդվածներով ու հարցազրույցներով հանդես է եկել տեղի «Սյուդ-վեսթ փրես» («Հարավ-արևմտյան մամուլ») պարբերականում (Բենդակ, Հայել և Մարդի ծածկանուններով): Եղել է Վոլֆ Վոլմարի «Սպայի ֆաբրիկան» ֆիլմի (1988) սցենարի համահեղինակը և արտադրիչի օգնականը:

Խորհրդային ժամանակներում Մարտիրոսյանը բազմիցս եղել է Հայաստանում, մոտիկից ճանաչել է Վազգեն Ա կաթողիկոսին, Պարույր Սևակին, Արամ Խաչատրյանին, Սերգեյ Փարաջանովին, Հովհաննես Շիրազին, նրա դիմանկարը ստեղծել է Մինաս Ավետիսյանը, իսկ Պրահայի նրա տանը հյուրընկալվել է Վիլյամ Սարոյանը: Ամուսնացել է չեխուհու հետ, ունի մեկ դուստր՝ **Քրիստինան**, որը նույնպես ապրում է Պրահայում, խոսում է արևեմտահայերեն<sup>381</sup>:

<sup>380</sup> Տե՛ս, օրինակ, **Մարտիրոսեան Հ.**, Հայկական լուրեր Փրակայն, «Ջարթօնք», Պէրոս, 7.09.1965:

<sup>381</sup> Հայկ Մարտիրոսյանի մասին մանրամասն տես **Բախչինյան Ա.**, Հայերը համաշխարհային կինոյում, Երևան, 2004, էջ 493-494:

1950-ականներից Պրահայում է բնակվել ծնունդով բարվեցի հայազգի գերմանագիր գրող **Ռադա Բիլերը** (Ռաիսա Չախմախչևա, 1930–2019): 1960-ին այստեղ ծնվել է նրա որդին՝ գերմանալեզու գրող **Մաքսիմ Բիլերը**: Նրանք Չեխոսլովակիայում ապրել են մինչև 1968-ը, երբ տխրահռչակ «Պրահայի գարունից» հետո որպես ռուսախոսներ համարվել են անցանկալիներ և տեղափոխվել են Գերմանիա, սակայն կապը Պրահայի հետ պահել են: Ռադա Բիլերը մահացել է Պրահայում:

1960-ականներին Պրահայում է բնակվել **Արտաշես Ավանեսյանը**, որը սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեից ստացել է հայրենի մամուլ:

1970–1980-ական թթ. Չեխոսլովակիայում են բնակվել գործարար **Արմենակ Արսլանյանը**, 1990-ականներին՝ տնտեսագետ, Չեխիայի Էկոնոմիկայի նախարարի խորհրդական **Արամ Միմոնյանը**: Պրահայում է բնակվել նաև մնջախաղի հայտնի վարպետ, ծաղրածու Լեոնիդ Ենգիբարյանի և չեխ նկարչուհի Յարմիլա Հալամկովայի դուստրը՝ **Բարբորան** (1965–2015): Լեոնիդ Ենգիբարյանը շատ սիրված է եղել Չեխոսլովակիայում, չեխ բանաստեղծ Իվան Շտեդրին նրան է ձոնել «Ծաղրածուն Երևանից» բանաստեղծությունը: Բարբորայի որդին՝ **Պետր Պոպերը**, իմանալով իր հայկական արմատների մասին, կապվել է հայ համայնքի հետ, մեկնել Հայաստան և մասնակցել Ենգիբարյանի անվան Մնջախաղի միջազգային փառատոնին: 2012 թվականից աշխատում է Ռուսաստանում՝ տարբեր կրկեսային խմբերում:

Սոցիալիստական Չեխոսլովակիայում աշխատել են նաև տարբեր երկրների հայորդիներ: Այսպես, բուլղարահայ **Պ. Մեսրոպը** 1965-ից աշխատել է Պրահայի Գիտությունների ակադեմիայի բիոքիմիայի ինստիտուտում: Նա կապ է պահպանել Հայաստանի հետ, ակտիվորեն զբաղվել չեխերին հայ ժողովրդի պատմության և մշակույթի ծանոթացմամբ<sup>382</sup>:

<sup>382</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 875, ցուցակ 2, ք. 524, ք. 8, 10:

## ՄԱՍ Բ

### ՉԵՆԻԱՅԻ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԸ

Չեխահայ համայնքի՝ որպես այդպիսին, պատմությունն իրականում սկսվում է 1993 թվականին Չեխիայի և Սլովակիայի բաժանումից հետո, երբ ի հաշիվ հիմնականում հայաստանցիների, սկսել է ձևավորվել մեծ համայնք:

Ինչպես արդեն նշվեց, ներկայիս չեխահայությունը չունի դասական հայ համայնքների կառուցվածքը՝ ավանդական կուսակցություններով ու նրանց հովանու տակ գործող մշակութային և մարզական ակումբներով: Դա ունի իր թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը: Կուսակցությունների առկայության դեպքում, անշուշտ, մարդիկ ավելի ակտիվորեն կմասնակցեին համայնքի կյանքին, իսկ դրանց բացակայության պարագայում պարտադրող կառույցներ չկան և շատերը փորձում են իրենց ազատ ժամանակն այլ տեղերում ու այլ ձևերով կազմակերպել, քան մասնակցել համայնքային ձեռնարկներին: Անտարբերության պատճառներից մեկն էլ այն է, որ չեխահայերը հիմնականում համայնքային կյանքի փորձառություն չունեցող նախկին հայաստանցիներ են:

1990-կանների սկզբներին Չեխիայում հաստատված հայերի թիվն ըստ տարբեր աղբյուրների, հասնում էր տասը հազարի: Չորջ Բուռնությաննի «Հայ ժողովրդի համառոտ պատմություն» գրքում գրված է. *«Չեխիայի Հանրապետությունում ապրում են ավելի քան 13,000 հայեր: Նրանցից գրեթե բոլորը հաստատվել են Խորհրդային Միության փլուզումից հետո: Շատերը աշխատանք փնտրող երիտասարդներ էին կամ արվեստագետներ և արհեստավորներ, որ իրենց ապրանքները վաճառում էին փողոցներում: Աստիճանաբար ձևավորվեց հա-*

մայնք, և Պրահայում վերջերս բացվեց հայկական դպրոց և ռեստորան: Ոմանք աշխատանք են գտել «Ազատություն» ռադիոկայանում, որն «Ամերիկայի ծայնի» հետ մեկտեղ, շարունակում է իր եթերը՝ չնայած ամբողջատիրական վարչակարգերի փլուզմանը Արևելյան Եվրոպայում»<sup>383</sup>:

Հայերի մեծ մասն այստեղ հաստատվել է թե՛ Հայաստանից, և թե՛ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից, հիմնականում օրինական ճանապարհով, մի մասը՝ փախստականների ճամբարներում է իջևանել, իսկ մի որոշ մասն էլ անօրինական կացություն ունենալու կամ տնտեսական պայմաններին չդիմանալով՝ անցել է այլ երկրներ: Չեխիան շատ հայաստանցիների համար տարանցիկ երկիր էր, որը հնարավորություն էր տալիս ընտրել եվրոպական ավելի բարեկեցիկ կենցաղ ապահովող պետություն և տեղափոխվել այնտեղ:

Չեխիայում ապաստանած հայերի շրջանում այդ մեծ հոսունությունը թույլ չտվեց նաև, որպեսզի հայերի համայնքային լիարժեք կյանք ձևավորվի: Շատերն ապրում էին օրվա հոգսերով և ապագայի նկատմամբ անվստահությամբ: Դա է հիմնական պատճառներից մեկը, որ նրանք նախնական շրջանում չէին մտածում ո՛չ համայնքային կյանքի, ո՛չ էլ ինքնակազմակերպման մասին: Մլադա Բոլեսլավում 1993 թվականից հաստատված ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Հրանտ Սարգսյանը 1999-ին նշել է, որ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններից Չեխիայում հաստատված հայեր կային, և նրանց թիվը սկզբնական շրջանում հասնում էր 12-13 հազարի: «Հայերը հավաքական չեն ապրում, հանրապետության ողջ տարածքով ցրված են: Փախստականի կարգավիճակի համար դիմած հայերի միայն մեկ տոկոսն է ստացել դրական պատասխան», – ասել է նա:

1993 թվականից Չեխիայում բնակվող թարգմանչուհի Իռա Արշակյանը նախ դասավանդել է Տրշեբիչ քաղաքի դպրոցում, ապա 1998-ից անցել դատական թարգմանչի աշխատանքին, բազմիցս ներկա

<sup>383</sup> Բուռնության Ջ. Հայ ժողովրդի համառոտ պատմություն, էջ 327:

գտնվել փախստականների ճամբարներում ապրող հայերի հարյուզ-րույցներին ու դատական նիստերին: Նրա ասելով՝ այդ տարիներին, հատկապես 2000-ի սկզբներին, մեծ թիվ էին կազմում Հայաստանից գաղթողները, և նրանց մեջ կային թե՛ ուսուցիչներ ու բժիշկներ, թե՛ շինարարներ ու գյուղատնտեսներ: Հայերը հիմնականում դիմում էին մարդասիրական նկատառումներով՝ ընտանիքի միացում, հիվանդի խնամք և այլն: Իր աշխատած տարիներին ընդամենը մեկ դեպք է եղել, որ Հայաստանի քաղաքացին քաղաքական ապաստան է խնդրել: Հիմնականում մարդիկ դժգոհել են տնտեսական վիճակից:

2002 թվականին Ձնոյճո քաղաքի կաթոլիկ եկեղեցու միաբան քահանա Գերիարդ Վալդերը «Հայկական խաչ» անվամբ հանգստանկոթյուն է կազմակերպել, որպեսզի այդ գումարով վերանորոգեն իրենց շրջանի եկեղեցուն պատկանող տները և փոխանցեն հայ փախստականներին: 1991–2003 թթ. տվյալների համաձայն՝ Չեխիայում փախստականի կարգավիճակի համար դիմած 3093 հայերից ընդամենը 149-ն են ստացել այդ կարգավիճակը:

Ըստ Չեխիայի ներքին գործերի նախարարության տվյալների՝ 2015-ի դեկտեմբեր 31-ի դրությամբ Չեխիայում ապրել է մոտ 1700 Հայաստանի քաղաքացի, որոնցից մշտական բնակություն ունի 430-ը: Այս թիվը չի ներառում արդեն Չեխիայի քաղաքացիություն ընդունած և այլ երկրներից Չեխիայում հաստատված հայերին: 2011–2018 թթ. Չեխիայում Հայաստանի դեսպան **Տիգրան Մեյրանյանի** կարծիքով, երկրում ապրում է մոտ 7000 հայ, որից 2500-ը Հայաստանի քաղաքացիներ են: Իսկ 2016-ին Չեխիայում Հայաստանի հյուպատոս **Աննա Ավետիսյանի** վկայությամբ՝ 2014–2016 թթ. հյուպատոսական հարցերով դեսպանություն և դիմել Հայաստանի մոտ 1000 քաղաքացի:

Չեխիայում հայերը հիմնականում ապրում են **Պրահա, Բոնո, Օստրավա, Ուստի նադ Լաբեմ, Յիհլավա, Պլզեն, Կառլովի Վարի, Կլադնո, Պարդուբիցե, Հրադեց Կրալովե, Տեպլիցե, Մոստ, Ֆրիդեկ Միստեկ, Զլին, Չեսկա Կամենիցե, Չեսկե Բուդեյովիցե** քաղաքներում և շատ այլ փոքրիկ ավաններում և գյուղերում: Ինչպես նշում է Հայ Առաքելական

եկեղեցու Չեխիայի հոգևոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավյանը, չկա Չեխիայում որևէ մեծ քաղաք ու ավան, ուր հայ շինի: Ըստ նրա, բանի որ մարդահամար չեն արել, հայերի մասին միայն մոտավոր տեղեկություններ ունեն: *«Մեր հայրենակիցները, որոնք եկել են շինարարական ընկերությունների հրավերով, տեղաբաշխվել են հիմնականում Պրահայում և Բռնոյում: Իսկ ուլքեր փախստականի կարգավիճակով են եկել, մնացել են այդ ճամբարներին կից գյուղերում: Մարդիկ կան, որ 20 տարի է այստեղ ապրում են, և նրանց նոր ենք ճանաչում: Գրեթե բոլոր ասպարեզներում հայեր կան, միայն քաղաքականության մեջ չունենք, բայց ինձ թվում է՝ երրորդ սերնդի մեջ արդեն այդպիսիք նույնպես կլինեն»:*

Չեխիայում Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանի կարծիքով՝ *«Թեև Չեխիայի հայ համայնքը համեմատաբար փոքր է, սակայն առանձնահատուկ է նրանով, որ գրեթե չկան անօրինական միգրանտներ: Պատճառը, միգրոցե, իշխանությունների քաղաքականությունն է՝ անձանց այս կատեգորիայի սոցիալական նպաստներն այնքան չնչին են, որ շատերը նախընտրում են Եվրոպայի և մյուս աշխարհամասերի այլ պետությունները: Այսպիսով, երկրում մնացել են հիմնականում իրենց ուժերին և ընդունակություններին ապավինող հայեր, նրանց մեծ մասն աշխատանք ունի: Չեխիայում մեծացած սերնդի մի շարք երիտասարդներ իրենց տեղն են գտել նաև պետական կառույցներում: Դեսպանությունն իր բացման օրից բաց դռների քաղաքականություն է վարել այստեղ ապրող հայերի համայնք»:*

Չեխիայում ապրող հայերի շրջանում մեծ թիվ են կազմում շինարարները, այնուհետև՝ միջին և մանր առևտրով զբաղվողները, կան նաև բազմաթիվ հաջողակ գործարարներ, մտավորականներ, հյուրանոցային բիզնեսով զբաղվողներ, նկարիչներ, իրավաբաններ, ուսուցիչներ, բժիշկներ, ատամնատեխնիկներ, ատամնաբույժներ, մարզիկներ, խոհարարներ, վարսավիրներ և այլք:

## ՊՐԱՀԱՅԻ ՀԱՅԵՐԸ

### «Արմենիա ակումբը»

Չեխիայի նկարիչների շրջանակներում որոշակի ճանաչում ունեցող Տիգրան Աբրահամյանը Չեխիայում հաստատվել է 1981-ին: Նա ծնվել է Երևանում, որդին է ճանաչված գրող, հոգեբան Էլրա Գրիմի: Աբրահամյանն ավարտել է Երևանի գեղարվեստի ինստիտուտը, մասնակցել բազմաթիվ եվրոպական ցուցահանդեսների, արժանացել մրցանակների, նաև՝ ՀՀ սփյուռքի մախարարության «Արշիլ Գորկի» մեդալին: Ընտրվել է Պրահայի նկարիչների միության փոխատենապետ: Եղել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ծխական համայնքի խորհրդի ատենապետ: 1988-ի Հայաստանի երկրաշարժից հետո Աբրահամյանը չեխ գործընկերների հետ կազմակերպել է Հայաստանին ուղարկվող մարդասիրական օգնությունը: Նրա պատմելով՝ «1988-ի երկրաշարժի օրերին ես գիտեի, որ այստեղ հայ չկա, և պարտականություն էի զգում ինչ-որ բանով օգնել: Եհմոն Պանենկի, Դանա Մազալովայի, Արմեն Եղիյանի հետ միասին մեծ գործ արվեց: Մենք կարողացանք կազմակերպել, որ Երևանից հատուկ ինքնաթիռով երեխաներ գան Չեխիա՝ հանգստանալու: Այդ օրերին ես զգացի, թե որքան չեխեր գիտեն մեր մասին, աջակցում են»: Նրա ասելով՝ այդ օրերին մոտ 200 միլիոն կրոն հավաքվեց, սակայն քանի որ չեխական թերթերում հոդվածներ էին տպագրվել, որ Երևան ուղարկված օգնությունը գողանում են, այդ պահին մնացած 67 միլիոն կրոնը այլևս չի ուղարկվել և բաժանվել է տարբեր չեխական կազմակերպությունների, իսկ մի քանի միլիոնով ստեղծվել է «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունը (նախ՝ «Էպիցենտրում» անվանումով), որը ներկայումս դարձել է Կենտրոնական Եվրոպայի ամենաազդեցիկ հումանիտար կազմակերպություններից մեկը, հիմնադրել մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված վավերագրական ֆիլմերի «Մեկ աշխարհ» միջազգային կինոփառատոնը:

1990-ին Տիգրան Արրահամյանն իր համակիրներով հիմնել է «Արմենիա ակումբ» հասարակական կազմակերպությունը, որը հետագայում կազմակերպել է ապրիլի 24-ին նվիրված ձեռնարկներ, այդ թվում՝ 2006-ին Չեխիայի սենատում անցկացված միջազգային գիտաժողովը՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը: 2019-ին «Արմենիա ակումբը» դադարել է իր գործունեությունը, սեպտեմբերի 10-ին, Ֆրանց Վերֆելի ծննդյան օրը գրանցվել է նոր կազմակերպություն՝ «Ֆրանց Վերֆելի ընկերակցությունը»՝ դարձյալ Տիգրան Արրահամյանի նախաձեռնությամբ: Այն դրամահավաք է սկսել, որպեսզի Պրահայում կանգնեցվի մեծանուն գրողի հուշարձանը:

Համայնքի ներկա վիճակի մասին Տիգրան Արրահամյանը տալիս է հետևյալ գնահատականը. «Վերջերս հայկական համայնքը դարձել է ավելի համախմբված: Այդ է վկայում մարդկանց ակտիվ մասնակցությունը կազմակերպված միջոցառումներին: Այնհայտ է և շատ կարևոր Հայաստանի դեսպանատան, հայկական «Օրեթ» ամսագրի, հայկական շաբաթօրյա դպրոցի ներկայությունը համայնքային կյանքի համար»:

### **«Հայ-չեխական ընկերությունը» և այլ միությունները**

1990-ականներին Պրահայի հայերն արդեն միավորվելու փորձեր են արել: 1996-ի փետրվարի 5-ին Չեխիայի ներքին գործերի նախարարությունում գրանցվել է «Հայ-չեխական ընկերությունը» (վարչության նախագահ՝ Արարատ Նիկողոսյան): Հրատարակվել է «Հույս» թերթը՝ Վաղարշակ Շահինյանի խմբագրությամբ: Վերջինիս հեղինակությամբ հետագայում լույս են տեսել երկու գրքույկ՝ «Հայաստանի պատմությունը սկզբից մինչև 2000 թիվը» (2001) և «Չեխերեն-հայերեն գրուցարան» (2002, Կառլովյան համալսարանի հրատարակություն):

Ընկերության ջանքերով, 1997-ին իր դռներն է բացել Պրահայի շաբաթօրյա դպրոցը: Հաջորդ տարի ընկերության նախագահ Արարատ

Նիկողոսյանի ողբերգական մահից հետո, թերթը մեկ այլ՝ «Հայաստանն ու մենք» անվանումով, լույս է տեսել որպես «Չեխ-հայկական ընկերության» պաշտոնաթերթ, որը ֆինանսավորել է գործարար Սերգեյ Գրիգորյանը: Այս համարի գլխավոր խմբագիրն էր հայտնի հայագետ, կովկասագետ Վազլավ Չեռնին, խմբագիրը՝ Պրահայի Կառլովյան համալսարանի լրագրության բաժնի շրջանավարտ Արսեն Բոչարյանը, որը հետագայում իր մասնակցությունը բերեց մաս «Օրեր» ամսագրի աշխատանքներին՝ թարգմանաբար ներկայացնելով չեխ դասական պոետների գործերը, չեխ հայագետների գրույցները: Երկու թերթն էլ ունեցել են միայն մեկ համար:

1997-ի սեպտեմբերից Կառլովյան համալսարանի փոխտնօրինության բաժանմունքում վերականգնվեցին հայագիտության դասընթացները՝ պրոֆեսոր Բոհումիլ Պալեկի ջանքերի շնորհիվ: Հայագիտական առարկաների դասախոսն էր Վաղարշակ Շահինյանը: Սակայն մեկ տասնամյակ անց, այս բաժինը նույնպես փակվեց: Միայն 2014-ի հոկտեմբերից Չեխիայում Հայաստանի դեսպանության ջանքերով և Հայաստանի կրթության և գիտության նախարարության ֆինանսավորմամբ Կառլովյան համալսարանում վերականգնվեցին հայագիտական առարկաների դասընթացները: ՀՀ դեսպանության խորհրդական Նունե Չաստուխովայի ասելով, դրանք կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը կֆինանսավորի այդ դասընթացները:

Չեխ-հայկական ընկերությունն այնուհետ ղեկավարեցին նկարիչ Գագիկ Տոնյանը, գործարար Գագիկ Արզարյանը, սակայն ընկերությունը տարբեր պատճառներով այդպես էլ չկարողացավ դառնալ համայնքային կառույց: Այդ ժամանակաընթացքում համայնքի գրասենյակում կազմակերպվում էին մշակութային ձեռնարկներ, սակայն դրանք կրում էին ամենամյա բնույթ: Կազմակերպության գործունեությունն աստիճանաբար մարեց և կորցրեց ազդեցությունը համայնքային կյանքում:

Այդ տարիների մասին դիպուկ բնութագրում է Պրահայում գործող ամերիկյան «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության

նախկին տնօրեն Մարտո Սողոմյանը 1999-ին «Օրեր» ամսագրին տված հարցազույցում. «Չեխահայ համայնքն ինքնակազմակերպման խնդիր ունի: Տեղի դժվարություններից մեկն այն է, որ փորձված սփյուռքահայեր քիչ կան: Հայաստանից Չեխիա եկած հայերը տարիների ընթացքում այդ փորձառությունը ձեռք կրերեն, կսովորեն և կազմակերպություն կստեղծեն: Նրանց համար այնքան էլ օրախնդիր չէ ազգային հարցը»:

Այլ համայնքների հետ կապը և փորձառության փոխանցումը հիմնականում տեղի է ունեցել «Օրեր» ամսագրի միջոցով, որը տարիների ընթացքում կապ է հաստատել Եվրոպայում գործող բոլոր հայկական համայնքների հետ և նրանց մասին հրապարակումներ տեղադրել ամսագրի էջերում:

Համայնքային կյանքի կազմակերպման պատկերը փոխվեց 2011 թվականից, երբ Պրահայում բացվեց Հայաստանի դեսպանություն և դեսպանատան, եկեղեցու ու համայնքային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվեց «Ապրիլ 24 կոմիտեն», որն էլ դարձավ համայնքի ամենատարբեր խնդիրների քննարկման հարթակ՝ կազմակերպելով տարբեր մշակութային ու հասարակական միջոցառումներ (ցույցեր, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, համերգներ և այլն): Կոմիտեի համանախագահներն են ՀՀ դեսպանը և հոգևոր առաջնորդը: Աննախադեպ էր 2015 թվականի ապրիլի 24-ի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ցույցի կազմակերպումը, որին մասնակցեցին 2000-ից ավելի չեխեր ու հայեր, այլ ազգերի ներկայացուցիչներ: Նույն ձևով 2016-ի ապրիլին և մայիսին Կոմիտեն Չեխիայի տարբեր քաղաքներում կազմակերպեց Արցախի օգնության հանգանականության ձեռնարկներ, որոնց ընթացքում հավաքվեց մոտ 700 հազար կրոն:

2012–2017 թթ. Պրահայում գործել է սփյուռքյան «Հայկական վերածնունդ» շարժումը (նախագահ՝ Չեխիայի մասնաճյուղի համակարգող, շարժման կենտրոնական խորհրդի անդամ, տնտեսագետ

**Քազրատ Առաքելյան**): Կազմակերպության հիմքը դրվել է 2012 թ. Փարիզում կայացած հիմնադիր ժողովում: «Հայկական վերածննդի» անդամները նաև անցկացրել են հսկում-ցույցեր՝ բողոքելով Հայաստանում կատարված անօրինական գործողությունների դեմ:

Պրահայում գործել է նաև «**Բեայի Արարատ**» երիտասարդական-հասարակական շարժումը (նախագահ՝ իրավաբան **Դավիթ Վանյան**): Այս խմբի անդամները հանդիպումներ էին ունենում և քննարկումներ կազմակերպում հասարակական ու քաղաքական հնչեղություն ունեցող տարբեր հարցերի շուրջ: Այս խումբն ակտիվ գործունեություն է ծավալել մինչև 2015 թվականը, որից հետո Վանյանը վերադարձել է Հայաստան:

2015ին Պրահայում գրանցվել է նաև «**Չեխ-հայկական բարեկամության միություն**» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ իրավաբան **Արամ Սարգսյան**): Միության հիմնական նպատակը, բացի հայ-չեխական բարեկամությանը նպաստելուց, բարեգործությունն է և մարզական միջոցառումների կազմակերպումը:

2018-ին կազմավորվել է նաև «**Չեխիայի հայ երիտասարդական միությունը**», որը ղեկավարում է հիմն գոգուց բաղկացած խորհուրդը: Երիտասարդները պարբերաբար կազմակերպում են գրական-մշակութային հանդիպումներ, ստեղծել են «Կիլիկիա» պարալիսումբը (ղեկավար՝ **Ալեքսանդր Սարգսյան**), որը մասնակցել է Չեխիայում կազմակերպված բազմաթիվ միջազգային և հանրապետական փառատոների:

Նույն 2018 թվականին գրանցվել է նաև «**Չեխիայի հայ կանանց միությունը**», որը գործել է կարճ ժամանակաշրջանում:

2021 թ. հունվարին արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ տուժած հերոսներին օգնելու նպատակով Պրահայում հիմնվել է «Տո՛ր ինձ հույս» (“Give me Hope”) բարեգործական կազմակերպությունը: Հիմնադիրը վարսահարդար **Սոնա Վարդանյանն** է, որը 44-օրյա պատերազմի ընթացքում իր երեք գործընկերների հետ միասին կազմա-

կերպեց վարսահարդարման բարեգործական ակցիաներ՝ շաբաթ-կիրակի օրերին, որի ընթացքում հավաքված մոտ 24 հազար եվրո գումարը փոխանցվեց Արցախի համար օգնություն հավաքող տարբեր բարեգործական կազմակերպություններին: Կազմակերպությունը դրամահավաք է սկսել սլոթթեզավորման կարիք ունեցող հաշմանդամ զինվորներին օգնելու համար:

Ծիշտ է, չեխական քաղաքական կյանքում հայ չկա, բայց «Չեխիայի Հայրերի միություն-Հայրերը երեխաների իրավունքների համար» կազմակերպությունը ղեկավարում է Վալենտին Փափազյանը: Նրա հայրը՝ ռումինահայ Վալենտին Փափազյանը, դեռևս խորհրդային տարիներին ամուսնացել է չեխուհու հետ և Ռումինիայից տեղափոխվել է Չեխոսլովակիա, որտեղ էլ ծնվել են երկու որդիները և դուստրը: «Հայրերի միության» նախագահը պայքարում է այն երեխաների ու իրենց հայրերի իրավունքների համար, ովքեր ծնողների բաժանումից հետո չեն կարողանում շփվել նրանց հետ: Վալենտինի եղբայրը՝ **Լուսիան Փափազյանը**, նախկինում աշխատել է Պրահայի քաղաքապետարանում, ակտիվորեն հետապնդել հայկական հարցերը սոցիալական ցանցերում:

Պրահայում հայության հետ կապված վայրերից են քաղաքի կենտրոնում գտնվող Սուրբ Հոգի եկեղեցին, խաչքարը, Արմենսկա (Հայկական) և Երևանսկա (Երևանյան) փողոցները, որոնք գտնվում են Վրշովիցե թաղամասում (Պրահա 10): Արմենսկա և Երևանսկա փողոցների կան նաև Կլադնո քաղաքում, իսկ Արմենսկա փողոց՝ նաև Բռնոյում:

## **Հայ առաքելական եկեղեցին Չեխիայում**

Չեխիայում հայկական եկեղեցի կամ եկեղեցական համայնք նախկինում չի եղել: Չեխիան գտնվում է Հայ Առաքելական եկեղեցու Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակության ենթակայության տակ (Վիեննա): Տարիներ շարունակ հոգևորականները

միայն դեպքից դեպք են այցելել Պրահա՝ կատարելով մկրտության, պսակի կամ թաղման արարողություններ: 2004 թ. հոկտեմբերին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի տնօրինությամբ Չեխիայում հոգևոր հովիվ է նշանակվել Հունգարիայի և Սլովակիայի հոգևոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը, որը 2005-ի փետրվարից հոգևոր ծառայություն է մատուցում նաև Չեխիայում: Հայր Բարսեղի՝ Պրահա հաստատմամբ Չեխիայում աշխուժացել է համայնքային և եկեղեցական կյանքը, թեև հիմնականում հայաստանցիներից կազմված համայնքում եկեղեցի հաճախելու ավանդույթն այնքան էլ արմատավորված չէր: Եղել են դեպքեր, երբ Հայր Բարսեղը պատարագ է մատուցել մի քանի հոգու ներկայությամբ: Պատարագները հիմնականում մատուցվել են Հուսովա փողոցի վրա գտնվող Սուրբ Յիլիի (Եդիայի) եկեղեցում: Մեծ ջանքերից հետո, Հայ Առաքելական եկեղեցու Չեխիայի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ծխական համայնքը» պաշտոնական գրանցում է ստացել 2013 թ. մարտի 27-ին Չեխիայի մշակույթի նախարարությունում: 2013 թ. օգոստոսի 3-ին Սուրբ Յիլիի եկեղեցում տեղի է ունեցել առաջին ծխական ժողովը, որտեղ 50 մասնակիցների քվեարկությամբ ընտրվել է յոթ հոգուց բաղկացած ծխական խորհուրդ: Խորհրդի ատենապետ է ընտրվել նկարիչ Տիգրան Աբրահամյանը:

2013-ին եկեղեցու գրանցման կապակցությամբ, Չեխիայի հայ համայնքը Ամենայն հայոց կաթողիկոսից նվեր է ստացել հայկական խաչքար, որը չեխահայ բարերարների աջակցությամբ տեղադրվել է Պրահայի կենտրոնում՝ Յինդրիշսկա փողոցում, Սուրբ Յինդրիխի եկեղեցու հարևանությամբ: Բացումը տեղի է ունեցել 2014 ապրիլի 25-ին:

2015 թվականի հոկտեմբերի 11-ին Չեխիայի կաթողիկ եկեղեցու առաջնորդ, կարդինալ Դոմինիկ Դուկայի որոշմամբ քաղաքի կենտրոնում գտնվող 14-րդ դարի Սուրբ Հոգի եկեղեցին 25 տարի ժամկետով փոխանցվել է Պրահայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ծխական հա-

մայնքին՝ օգտագործման իրավունքով: Կարդինալը եկեղեցու խորհրդանշական բանալին փոխանցել է Հայր Բարսեղին: Այսպիսով, հայ համայնքն ունեցել է իր մշտական եկեղեցին: Հատկանշական են հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև հաստատված ջերմ հարաբերությունները: Կարդինալ Դոմինիկ Դուկան Ամճնայն Հայոց կաթողիկոսի հրավերով 2015-ի նոյեմբերին եղել է Մայր Աթոռում:

Հայր Բարսեղը համայնքին հետևյալ բնութագրումն է տվել. «Մարդկանց համայնքային-եկեղեցական կյանք բերելը շատ դժվար էր: Սկզբնական շրջանում մարդիկ լսում էին համայնք անունը, խրտնում էին, չէին կարողանում զանազանել աշխարհական համայնքը եկեղեցականից: Այս ընթացքում կարողացանք մարդկանց գիտակցության մեջ փոփոխություն մտցնել, որ եկեղեցին այն կառույցն է, որ դարեր շարունակ զբաղվել է հայասպահայանությանը՝ տալով հոգևոր մշակութային, կրթական դաստիարակություն և պահպանում: Այսօր արդեն նոր եկեղեցու պարագայում, մեր հայրենակիցների մեջ մի միտք ձևավորվեց՝ իրենք ունեն իրենց մշտական տունը: Այս հանգամանքը կարծես միացրեց բոլորին և հուսանք, որ մեր աշխատանքները կնպաստեն, որպեսզի մեր համայնքը շարունակի ապրել և իր հայկական ընթացքը շարունակել Չեխիայում»: Եվ ապա. «Չեխիայում հաստատվելուց հետո մենք փորձեցինք երիտասարդությանը հավաքագրել, բավական լավ աշխատանքներ տարվեցին, մոտ 300 երիտասարդ անդամագրվեց Եկեղեցու երիտասարդական կազմակերպությանը: Նրանց ավելի հետաքրքրում էին հավաքույթները, ընկերական հավաքները: Փորձեցինք նաև այդ առումով օգտակար լինել, մասնակցել հավաքներին, բայց ժամանակի ընթացքում դրանք էլ վերացան: Համայնքում ունենք հեռանկարային երիտասարդներ, որոնք թե՛ իրենց կրթական մակարդակով, թե՛ իրենց հայրենասիրությանը չեն զիջում որևէ մեկի», - ասում է հայր Բարսեղը:

Պատարագների ընթացքում Հայր Բարսեղին օգնում է խմբավար, սարկավագ Հայկ Յությունյանը, որի անմիջական ջանքերի շնորհիվ է նաև, որ չեխական «Մուզիկա պոետիկա» երգչախումբը մասնակցում

է հայկական պատարագներին և կատարում է հայկական հոգևոր երգեր (մինչև 2018-ը՝ պրոֆեսոր Էվժեն Կինդլերի գլխավորությամբ):

### Հայկական դպրոցը

1997-ի փետրվարին Պրահայում բացվել է շաբաթօրյա հայկական դպրոց, որի ղեկավարումը ստանձնել է «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության աշխատակից, լրագրող **Արմեն Քոլոյանը**: Դպրոցի բացման որոշումը կայացվել էր 1996 թ., այդ պատճառով 2016-ի փետրվարին նշվել է դպրոցի հիմնադրման 20-ամյակը:

Արմեն Քոլոյանը հիշում է. «*Դպրոցը սկսեց աշխատել 1997 թվականին, երբ ստացանք դասագրքերի առաջին խմբաքանակը, աստիճանաբար սկսեց ձևավորվել ուսուցչական կոլեկտիվը, բայց բուն գաղափարը ծագել էր 1996-ին: Ոչ մի դպրոց, ոչ մի մանկապարտեզ, ոչ մի համալսարան արդյունքի չի հասնի, եթե ընտանիքը չփորձի օգնել, եթե ընտանիքում չգիտակցեն հայոց լեզվի արժեքը: Մենք պայքարում ենք, որ զավակի համար հայերենը մնա առանցքային լեզուն: Հայրենիքը միշտ օգնել է դասագրքերի և ուսումնական այլ նյութերի մատակարարման հարցում, և վերջին տարիներին այդ խնդիրը ստանձնել է ՀՀ դեսպանատունը»:*

Դպրոցում հայոց լեզու են սովորել մի քանի տասնյակ հայ աղջիկներ ու տղաներ: Դպրոցը նպաստել է հայ պատանիների միջև կապերի ստեղծմանը, համայնքային միջոցառումներում հայ երեխաների ընդգրկմանը: Դասավանդում են հայոց լեզու, գրականություն, մասամբ՝ պատմություն, նաև հայկական պար ու երգ:

Տարբեր տարիներին այս դպրոցում աշխատել են **Լարիսա Գրիգորյանը, Ալլա Եսայանը, Աննա Կարապետյանը, Հռիփսիմե Նալբանդյանը, Կարինե Ֆարյանը, Գնել Նալբանդյանը, Անժելա Դադայանը, Սիրանույշ Տոնյանը, Սիրանույշ Մկրտչյանը, Մարիամ Ղարիբյանը, Աշոտ Սողոմոնյանը** և այլք: Այսօր աշխատում են տնօրեն Արմեն Բո-

լոյանը, ուսուցչուհիներ Լարիսա Գրիգորյանը, Ծովինար Բեյբությանը, Գոհար Մելիքյանը, Լուսինե Չաղոյանը, Իրինա Սուլթանյանը, Աննա Ղազարյանը, պարուսույց Անժելա Մելքոնյանը, որի ջանքերի շնորհիվ ստեղծված պարային խումբը մասնակցում է դպրոցի հանդեսներին ու Պրահայում կազմակերպվող միջազգային փառատոներին: Դպրոցի մանկական երգչախումբը ղեկավարում է պրոֆեսիոնալ երաժիշտ Սոնա Ստեփանյանը, որը նաև երգում է հայկական եկեղեցու երգչախմբում: Բացի ծնողներից, դպրոցին ֆինանսական աջակցություն է ցույց տվել մոսկվաբնակ, նաև պրահայաբնակ գործարար Արմեն Անանիկյանը: Պրահայում մեկ տարի գործել է նաև «Չատիկ» մանկապարտեզը:

Բազմամյա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցչուհի Լարիսա Գրիգորյանն ասում է. *«Նույնիսկ այն երեխաները, որոնք եկել են Հայաստանից, արդեն հայերենով ձևավորված մտածողությամբ, հաճախելով չեխական կամ այլ դպրոցներ՝ տարեցտարի նրանց մայրենին տեղի է տալիս օտար լեզուների առաջ»:*

Հայերենի կորստի իմաստով իրոք բավականին մեծ է ուժացման վտանգը: Երեխաների մեծ մասը խոսում է չեխերեն և այլ լեզուներով, ընտանիքների մեծ մասը չի խրախուսում հայկական դպրոց հաճախելը: Նույնիսկ զլանում են բաժանորդագրվել Չեխիայի միակ հայկական մամուլը՝ «Օրեր» ամսագիրը:

2019 թվականին Պրահայի հայկական դպրոցի տնօրեն է նշանակվել ուսուցչուհիներից Գոհար Մելիքյանը:

Ի դեպ, 2000-ականներին Յիիլավա և Բոնո քաղաքներում նույնպես գործել են հայկական շաբաթօրյա դպրոցներ, սակայն դրանք մի քանի տարի գործելուց հետո փակվել են երեխաների սակավության և այլ պատճառներով:

**«Օրեր» եվրոպական ամսագիրը,  
orer.eu կայքէջը և չեխահայ մամուլը**

Չեխահայ համայնքը նոր լիցք է ստացել 1990-ականների վերջին, երբ 1999 թվականի ապրիլին լույս է տեսել «Օրեր» ամսագրի գրոյական համարը, նույեմբերին՝ 1-ին համարը՝ «Կովկաս-Արևելյան Եվրոպա» լրատվական կենտրոն հասարակական կազմակերպության հրատարակությամբ: Կենտրոնի հիմնադիրներն էին **Հակոբ Ասատրյանը, Աննա Կարապետյանը և Էդուարդ Սարգսյանը**. վերջինս մեկ տարի անց հեռացավ և գրանցեց «Հայկական տուն» կազմակերպությունը:

«Օրեր» ամսագրի հիմնադիր գլխավոր խմբագիրն է Հակոբ Ասատրյանը: Ամսագիրն անցած տարիներին դարձել է ոչ միայն չեխահայ համայնքի, այլև եվրոպահայության կարևոր մշակութային և համայնքային պարբերականներից մեկը: Ըստ էության, չեխահայ համայնքի վերջին մոտ քսան տարիների պատմությունն արձանագրված է այս ամսագրի էջերում: Ամսագիրը նպատակ ունի չսահմանափակվել միայն Չեխիայով, այլ ձգտում է դառնալ համանվիրոպական ամսագիր՝ իր գլխավոր խնդիրը դնելով նախ ներկայացնել եվրոպահայության այսօրը և հայաստանյան լուրերը, որպեսզի ապահովեն թե՛ եվրոպահայ համայնքի, թե՛ Հայաստանի հետ տեղեկատվական կապը:

«Օրեր» ամսագիրն ակտիվորեն մասնակցել է Պրահայի ինտեգրացիոն ծրագրերին, հրատարակել չեխական նոր օրենքներն ու իրավաբանական տեղեկատվություն: Ամսագրի նախաձեռնությամբ կազմակերպվել են համայնքային մշակութային միջոցառումներ, հայ նրաժիշտների ելույթներ, ինչպես նաև գրական երեկոներ: Հանդիսավորապես նշվել են ամսագրի 10, 15 և 20-ամյակները: 2015-ին ամսագիրը կազմակերպել է Հայոց ցեղասպանությանը նվիրված չեխերեն հրատարակությունների շնորհանդեսը, դարձել բազմաթիվ այլ ձեռնարկ-

ների համակազմակերպիչ: «Օրերը» տարածվում է եվրոպական գրեթե բոլոր երկրներում՝ հիմնականում բաժանորդագրության միջոցով, այն դարձել է համայնքային կյանքի կազմակերպման կարևոր գործիքներից մեկը:

2012 թվականից ակտիվացել է 2003-ից գործող [www.orcr.cz](http://www.orcr.cz) կամ [orcr.eu](http://orcr.eu) կայքէջը: Ամսագիրն ունի նաև իր ֆեյսբուքյան էջը: Կայքէջի գլխավոր խմբագիր Աննա Կարապետյանի ասելով՝ էլեկտրոնային տարբերակում դրվում են ամենօրյա լրատվություն, Հայաստանի ու Սվլյուոքի առավել կարևոր ու հետաքրքիր լուրերը, Հայաստան-Եվրամիություն հարաբերություններին նվիրված հոդվածներ, Եվրոպայի հայկական համայնքներին նվիրված հոդվածաշար, որ պատրաստում է «Օրերի» գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը՝ Կյուլպենկյան հաստատության աջակցությամբ:

Աննա Կարապետյանը, որը 12 տարի աշխատել է «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունում, հետևյալ գնահատականն է տալիս համայնքային կյանքին և իր գործունեությանը. *«Պրահայում հայտնվել եմ պատահականորեն. քանի որ «Ազատություն» ռադիոկայանը Մյունխենից տեղափոխվեց Պրահա: Երբ 1995-ին հաստատվեցի Պրահայում, այստեղ հայ համայնքի մասին խոսք չիմել չէր կարող, քանի որ հայերի թիվը խիստ սահմանափակ էր: Համայնքային կյանքի հիմնական երեք սյուներից (եկեղեցի, դպրոց, մամուլ) մեկը շուտով դարձավ «Օրեր» ամսագիրը, տարիներ անց նաև գործարկեց [www.orcr.cz](http://www.orcr.cz) կայքէջը, որի խմբագրումը ստանձնեցի, իսկ 2012-ից այն նորացվեց ու հիմնական էջը դարձավ [www.orcr.eu](http://www.orcr.eu)-ը: Այսօր արվում է առավելագույն հնարավորը գոնե Եվրոպայում ու հատկապես Չեխիայում ձևավորված հայկական համայնքների կյանքը ներկայացնելու համար: Անշուշտ, ունենք մեծ նպատակներ ու ամենակարևորը՝ կարողություն, այս հարթակը դարձնելու լուրջ լրատվական-վերլուծական անկախ հայկական-եվրոպական կայքէջ, որն ակ-*

*տիվորեն կաշխատի առնվազն Եվրոպայում հայկական հարցերի ճանաչման ու լուսաբանման ուղղությամբ. մնում է համապատասխան ֆինանսական միջոցները հայթայթել»:*

«Օրերն» ունի արտահաստիքային աշխատակիցներ ինչպես Չեխիայում (Իռա Արշակյան, Բաֆֆի Չեչճենյան), այնպես էլ Հայաստանում (Արծվի Բախչինյան), Գերմանիայում (Անահիտ Հովսեփյան), Իսպանիայում (Արթուր Ղուկասյան): Տարբեր տարիներին հայերենով կամ չեխերենով «Օրեր»-ում իրենց բանաստեղծություններն են տպագրել չեխարևակ ստեղծագործողներ **Կարեն Մխիթարյանը, Միլվա Եսայանը, Թամարա Քառյանը, Դավիթ Վանյանը:**

2002 թվականի ապրիլից «Հայկական տուն» հասարակական կազմակերպությունը (ք. Մլադա Բոլեսլավ) Էդուարդ Սարգսյանի ղեկավարությամբ հրատարակել է **«Նաիրի»** երկամսյա պարբերաթերթը, որի գլխավոր խմբագիրն էր **Մարինե Սարգսյանը:** Անսագիրը լույս է տեսել մինչև 2010 թվականը, հրատարակվել է 16 համար, ունեցել է ինտերնետային կայքէջ՝ **nairi.webnode.cz:** Կազմակերպությունը նաև իրականացրել է ինտեգրացիոն ծրագրեր, զբաղվել գաղթածների իրավական պաշտպանության հարցերով, համագործակցել է չեխական «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հետ և միգրացիոն ծրագրեր իրականացրել Հայաստանում: Մարինե Սարգսյանը և իր ամուսինը **Ֆեյսբուքում չեխերենով վարել են «Arménská Genocida - Armenian Genocide»** էջը, որը հետագայում վերափոխվել է հայերի և հույների ցեղասպանության ֆեյսբուքյան էջի:

Պրահայում է գտնվում նաև «Ազատություն-Ազատ Եվրոպա» ամենօրինյան ռադիոկայանի հայկական ծառայությունը:

2018-ին Չեխիայի հայկական ֆեյսբուքյան էջերն են՝ «Օրերը», «Հայերը Չեխիայում և Սլովակիայում», «Հայ երիտասարդներ», «Արմպրահա», «Չեխիայի հայ համայնք», արդեն նշված «Arménská Genocida», «Հայկական տուն», «Արմֆուտբոլ», «Չեխիայի

հայ երիտասարդների միություն»: Գոյություն ունի նաև «Ռադիո Երևան» ֆեյսբուքյան էջը չեխերեն, որը համայնքի հետ կապ չունի:

Առանձին թեմա է հայ-չեխական գրականությունը. միայն նշենք, որ 2013 թ. Պրահայի «Օտտովա» հրատարակչությունը լույս է ընծայել մանկավարժական գիտությունների դոկտոր **Մերի Մարգարյանի** առաջին «Հայերեն-չեխերեն, չեխերեն-հայերեն բառարանը»:

### **Հայ-չեխական հարաբերությունները նորագույն փուլում**

Համայնքային գործունեության վրա դրական ազդեցություն է ունեցել 2011-ի նոյեմբերին Պրահայում Հայաստանի դեսպանության բացումը և դեսպան Տիգրան Սեյրանյանի ժամանումը Չեխիա: Դեսպանության հետ համատեղ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, ստեղծվել է «Ապրիլ 24» կոմիտեն, որը համակարգել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի ձեռնարկները, ակտիվ աշխատանք կատարել աղյուրեջանական հակահայ քարոզչության դեմ: Վերջին տարիներին ակտիվացել են նաև հայ-չեխական միջպետական կապերը, սլաշտոնական պատվիրակություններ են եկել Հայաստանից, իսկ 2014-ից Չեխիան իր դեսպանությունն է բացել Երևանում: Երկկողմ հարաբերությունների զարգացումը նույնպես օգնում է հայ համայնքի կազմակերպման հարցերին:

Ըստ Չեխիայում Հայաստանի առաջին ռեզիդենտ դեսպան Տիգրան Սեյրանյանի՝ *«Հայ-չեխական հարաբերությունների վերջին երեք տարիներն ամենակտիվն էին մեր երկկողմ հարաբերությունների պատմության մեջ: 2014 թ. Հայաստանի նախագահը երկու այց է կատարել Չեխիա, որոնցից առաջինը՝ հունվարի 29-31-ին, հայ-չեխական հարաբերությունների պատմության մեջ առաջին երկկողմ պետական այցն էր, որի արդյունքները չափազանց դրական էին: Զաղաքական առումով կողմերը եկան գրեթե լիակատար փոխըմբռնման: 2014-ի ապրիլին Հայաստանի նախագահը ևս մեկ այց կատարեց Պրահա՝ Արևելյան գործընկերության 5-ամյակին նվիրված բարձր*

մակարդակի հանդիպմանը մասնակցելու նպատակով: Ընդհանուր առմամբ, 2014 թվականին տեղի է ունեցել ինը նշանակալից փոխադրություն: 2016-ի հունիսի 7-9-ին Չեխիայի նախագահ Միլոշ Զեմանը պետական այց կատարեց Հայաստան:

Առևտրատնտեսական հարաբերությունները հետ են մնում քաղաքական երկխոսության մակարդակից: Բայց մի քանի էական նախագծեր արդեն նախանշվել են: Ուրախ են, որ հայկական կոնյակը և գինին հաջողությամբ վաճառվում են չեխական շուկայում: Մոտ ապագայում չեխական ցանցերում կվաճառվեն նաև հայկական պահածոներ: Ներուժն առկա է, գործարարներն ավելի ակտիվ պետք է աշխատեն: Հայաստանի Արմավիրի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերը համագործակցում են Չեխիայի Մորավո-Սիլեզյան, Հրադեց Կրալովիի և Կաուլովի Վարիի երկրամասերի հետ»:

2017-ին կապեր են հաստատվել Պրահայի Վինոր ու Կրելի համայնքների և Հայաստանի Սևան ու Դիլիջան քաղաքների միջև: Այս նախագծերին նպաստել է «Ատլանտիս Դեվելոպմենթ» ընկերության նախագահ Արամ Մարությանը, որի ջանքերով 2017-ի հունիսի 14-ին Վինորում տեղի է ունեցել «Նորմա» օպերայի համերգային ներկայացումը՝ աշխարհահռչակ օպերային երգչուհի Հասմիկ Պապյանի մասնակցությամբ:

Կրթության բնագավառում հայ-չեխական կապերը նույնպես զարգանում են: Չեխիայի կառավարությունը տարեկան չորս-հինգ կրթաթոշակ է հատկացնում հայաստանցի ուսանողներին: Ինչպես արդեն նշվեց, 2014 թվականին Պրահայի Կառլովյան համալսարանում ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ վերաբացվել է հայագիտական առարկաների դասավանդումը, ընդ որում, դասախոսներից երկուսն ազգությամբ չեխեր են՝ նույն համալսարանի նախկինում գործած հայագիտության ամբիոնի շրջանավարտներ, իսկ երրորդը՝ դիրիժոր, երաժշտագետ Հայկ Յուրյունյանը:

2017 թվականի ապրիլի 27-ին Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի մասնակցությամբ Կառլովյան համալսարանի՝ փիլիսոփայության ֆակուլտետի գրադարանում բացվել է «Հայկական գրադարան», որտեղ արդեն հավաքվել էին համալսարանի բոլոր գրադարաններում առկա հայագիտական և հայերեն գրքերը:

## Հայոց ցեղասպանությունը և Չեխիան

Չեխական հասարակությունը Հայոց ցեղասպանության թեմային բացառապես է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպով, որը մեծ ազդեցություն է ունեցել չեխ հասարակական կարծիքի վրա: 2015-ին «Վիշեիրադ» հրատարակչությունը 3-րդ անգամ լույս ընծայեց վեպի երկրորդ թարգմանությունը: Ընդհանուր առմամբ, այս վեպը չեխերենով հրատարակվել է 7 անգամ: Հայ համայնքի ու Հայաստանի դեսպանության ներկայացուցիչներն ամեն տարի ավանդույթ են դարձրել ապրիլի 24-ին ծաղիկներ դնելը Պրահայում Վերֆելի ծնված և ապրած տներ: Ի հուշատախտակների մոտ:

Չեխ հայտնի տրոմբոնահար, երգահան և խմբավար **Յոժեֆ Մատեյը** (1922–1992) 1957-ին Վերֆելի վեպի հիման վրա գրել է «Մուսա լեռան 40 օրը» օպերան, որի վրա աշխատել է մոտ 20 տարի: Այս օպերայից հատվածներ են հնչել չեխական ռադիոյով, սակայն մինչ օրս չի բեմադրվել: Կոմպոզիտորը նաև Վերֆելին նվիրված գործեր է գրել, իսկ այդ օպերայում օգտագործել է հայկական և բալկանյան ֆոլկլորային երաժշտության մեղեդիներ: Ի դեպ, մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի վկայությամբ, Մատեյի կինն իրեն է հանձնել վերը նշված օպերայի պարտիտուրը, որն ինքը 1990-ականների սկզբին տարել է Հայաստան<sup>384</sup>:

<sup>384</sup> Այս օպերայի՝ երևանյան մասնակի համերգային կատարման մասին տես Դանիել Երաժիշտ. «Մուսա լեռան 40 օրը» օպերան, «Գեղարվեստ», Երևան, 1993, հունիս:

2006 թվականից հետո, երբ, ինչպես նշվել է, «Օրեր» ամսագրի նախաձեռնությամբ հրատարակվել է չեխ ճանապարհորդ Կարել Հանսայի «Արևելքի սարսափները» գիրքը, աստիճանաբար այն նույնպես դարձել է մամուլի ու քաղաքական գործիչների կողմից իբրև Հայոց ցեղասպանության մասին մեջբերվող վկայություն:

Հայոց ցեղասպանության թեմայով 2006 թվականին Չեխիայի սենատում նախկին նախագահ Վացլավ Հավելի հովանու ներքո և սենատոր **Յարոմիր Շտեռնայի** ու «Արմենիա ակումբ» կազմակերպության նախագահ Տիգրան Աբրահամյանի կազմակերպչական ջանքերով տեղի է ունեցել միջազգային գիտաժողով, որին մասնակցել են մի շարք անվանի գիտնականներ աշխարհի տարբեր երկրներից: Գիտաժողովն ուղիղ եթեր է հեռարձակել «ՉՏ–24» լրատվական ալիքը, ինչն աննախադեպ էր Չեխիայի պատմության մեջ:

Այս տարիներին չեխական մամուլում տպագրվել են Յեղասպանությանը նվիրված մեծաթիվ հոդվածներ, եթեր են հեռարձակվել ֆիլմեր ու ռադիոհաղորդումներ: 2016 թ. նոյեմբերին Չեխական հեռուստատեսությամբ ցուցադրվել է ռեժիսոր **Մարտին Մահդալի** «Յեղասպանության հավերժ վիշտը» առաջին հայ-չեխական արտադրության վավերագրական ֆիլմը: Մեկ այլ ֆիլմ էլ՝ «Հայկական եկեղեցին», 2001 թվականին նկարահանել է **Պետր Չոնոն**՝ նվիրված Հայաստանի քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, սակայն քանի որ նկարահանումները տեղի են ունեցել Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսների՝ Դեր Չոր ուխտագնացության ընթացքում, ֆիլմի գլխավոր թեմաներից մեկը դարձել էր Հայոց ցեղասպանությունը:

2017 թ. ապրիլի 25-ին Չեխիայի խորհրդարանի պատգամավորների պալատը ընդունել է բանաձև, որով ճանաչել է Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում իրականացված այլ ցեղասպանությունների շարքում: Բանաձևը ներկայացրել էր «Չեխիա-Հայաստան» միջխորհրդարանական բարեկամության խմբի նախագահ **Ռոբին Բյոնհիշը**: Բանաձևում գրված է. «Չեխիայի խորհրդարանի Պատ-

գամալորների պալատը դատապարտում է Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստների կողմից գրավված տարածքներում մարդկության դեմ գործած հանցագործությունները հրեաների, գնչուների և սլավոնների նկատմամբ, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ հայերի ցեղասպանությունը և ազգային ու կրոնական այլ փոքրամասնությունների ցեղասպանությունը Օսմանյան կայսրության տարածքում, ինչպես նաև երկրագնդի այլ տարածքներում կատարված ցեղասպանական բռնությունները, և կոչ է անում միջազգային հանրությանը արդյունավետորեն կանխելու մարդու և քաղաքացիական իրավունքների ոտնահարումները աշխարհում և վեճերի լուծումը խաղաղ միջոցներով»։ Բանաձևի օգտին քվեարկել է 104 պատգամավոր, 22-ը՝ ձեռնպահ և ոչ մի դեմ։

Մինչ այդ, 2015 թվականի ապրիլի 14-ին Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը բանաձև է ընդունել Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ։ Այս հարցում մեծ դերակատարում են ունեցել Հայ-չեխական պատգամավորական խմբի նախագահ Ռոբին Բյոհնիշը և հանձնաժողովի նախագահ **Կարել Շվարցներգը**։ Վերջինս դեռևս որպես արտգործնախարար պաշտոնավարելիս այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և այնտեղ եղևնի տնկել։ Իսկ Ռոբին Բյոհնիշը 2017-ին նաև հրատարակել է «Հայաստան՝ լեռների, վանքերի ու գինու երկիր» շքեղ պատկերազիրքը, որտեղ ներկայացրել է Հայաստանի բոլոր մարզերն ու Արցախը, նաև պատմական ակնարկ գրել հայերի պատմության կարևոր դրվագների մասին։ Նա նաև տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Հրադեց Կրալովի քաղաքի կենտրոնական գրադարանում, բացել է Հայաստանին նվիրված իր լուսանկարների ցուցահանդեսը և կազմակերպել պատկերազրքի շնորհանդեսը։

Չեխիայի նախկին նախագահներ Վացլավ Հավելը և Վացլավ Կլաուսը Հայոց ցեղասպանության մասին ուղղակի գնահատականներ չեն տվել, միայն 2006 թվականին Հավելը օգտագործել է «Հայերի,

զնչումների և հրեաների հոլոքոսթները» արտահայտությունը, իսկ 2000 թվականին նոյեմբերի 10-ին «Օրերի» հարցմանը պատասխանել է. «Օսմանյան կայսրությունում Հայերի ցեղասպանության հարցը պետք է հետաքննվի պատմական տեսանկյունից, ինչը մասնավորաբար վերաբերում է պատմաբաններին և չպետք է տեղափոխվի քաղաքական մակարդակ: Չնայած սեփական պատմությունը բացահայտելու ընթացքը հաճախ շատ ցավալի է և ինքնագնահատման մեծ կարողություն է պահանջում, դա մի գործընթաց է, որն անհրաժեշտ է ժողովրդի բարոյական միասնության պահպանման համար: Ուստի խնդրում ներառված բոլոր կողմերը պետք է պատրաստ լինեն հնարավոր դարձնելու պատմական այս իրադարձությունների գնահատումը փորձագետների կողմից»:

Իսկ Չեխիայի ներկա (2018) նախագահ **Միլոշ Զեմանը** «Հայոց ցեղասպանություն» բառակապակցությունը արտաբերել է թե՛ 2014-ին, թե՛ 2016-ին: 2014 թվականի հունվարի 29-ին Պրահայի ամրոցում Հայաստանի նախագահի հետ հանդիպումից հետո նա լրագրողներին հայտարարել է. «Ես ուրախ եմ ողջունելու Հայաստանի նախագահին Պրահայի ամրոցում: Ես ասացի նրան, որ մեր ժողովուրդների պատմությունը նման է: Հաջորդ տարի լրանում է 1915-ի Հայոց ցեղասպանության 100-րդ տարին, ինչի արդյունքում սպանվել է 1.5 միլիոն հայ: Պարոն նախագահին ասացի նաև, որ ցեղասպանությունը սպառնում էր նաև չեխ ժողովրդին, եթե Գերմանիան հաղթեր Երկրորդ Համաշխարհային պատերազմում»: «Պատվամենտնի լիստի» (Լսորհրդարանական թերթ) առցանց պարբերականին տված հարցազրույցում նա նշել է, որ Չեխիայի խորհրդարանը նույնպես պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը: «Ովքեր չեն ճանաչում Հայոց ցեղասպանությունը, նրանք վախկոտներ են», - ասել է նա Երևանում՝ հավելելով, որ ընդունել է խորհրդարանի Պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկին և խորհուրդ տվել, որպեսզի Պատգամավորների պալատը Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև քննարկի: Նախագահը նշել է, որ իր տեսակետը Հայոց ցեղասպանության

մասին նոր չէ, այն երկու տարի առաջ էլ է հայտնել: Պարոն Համաչեկն ասել է, որ պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների կոմիտեն արդեն իսկ նման բանաձև ընդունել է, և հերթը պատգամավորներինն է: Նախագահը նաև ասել է. «*Հատկապես ըստ անցկացված հարցումների, բնակչության 96 տոկոսը կողմ է Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ինչն անհավատալի է: Ու քանի որ ես պատգամավոր չեմ, սայասում եմ պատգամավորների կողմից դատապարտմանը*»:

Չեխական «Պարեսիա» գիտական ժողովածուի 2008–2009 թթ. համարում նույնպես մեծ տեղ է տրված Հայոց ցեղասպանությանը: Իսկ «Օրեր» ամսագրի աջակցությամբ չեխական գրական «Պլավ» ամսագիրը 2015 թվականի հունիսյան համարն ամբողջությամբ նվիրել է Հայոց ցեղասպանության մասին հայ գրականությանը: 2015-ին Վերֆելի վեպից բացի չեխերենով լույս է տեսել նաև ռումինահայ գրող Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյանը» վեպը: Չեխերեն թարգմանությամբ լույս են տեսել նաև օտար հեղինակների՝ Հայոց ցեղասպանության թեմային առնչվող գրքեր՝ Էդգար Հիլգենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» (2004) և Իվ Մաքիսի «Ուրցի մամակները» (2016) վեպերը:

2015-ի մարտին իրավաբան **Էլեն Ահարոնյանի** աջակցությամբ Կառլովյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետում տեղի է ունեցել միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը:

2011 թվականից ի վեր Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողովներ, ֆիլմերի ցուցադրություն և դասախոսություն-քննարկումներ է կազմակերպել Կառլովյան համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դասախոս **Շիմոն Կրքեցը**: Նրա հրավերով 2015-ին չեխ ուսանողների առջև ելույթ է ունեցել Երևանի Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը: 2015-ին Լիդիցե հուշահամալիրում Հայաստանի վարչապետի և Չեխիայի մշակույթի նախարարի ներկայությամբ բացվել է «Ընդհատված մանկություն. Հայոց ցեղասպանության զոհ մանուկները» ցուցահանդեսը:

2015-ին «Մոդեռնի դեյինի» կայքէջը հրապարակել է Հայոց ցեղասպանության մասին **Մոնիկա Հորասկովայի** հոդվածը և 15 բուպեանոց մի ֆիլմ, որտեղ հերոսներից մեկը՝ «Մառլենկա» ընկերության նախագահ **Գևորգ Ավետիսյանը**, պատմում է Յեղասպանության զոհ դարձած իր պապերի մասին: Այս կայքէջը նախատեսված է չեխական դպրոցների պատմության ուսուցիչների համար: 2016-ին այս հրատարակչությունը **Գևորգ Ավետիսյանի** հովանավորությամբ լույս է ընծայել «Հոլոքոսթը և այլ ցեղասպանությունները» գիրքը և ֆիլմի ծայներիցը, որտեղ մի թուրք գիտնականի հոդվածը նվիրված է Հայոց ցեղասպանությանը:

2013-ին ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ չեխերենով լույս է տեսել ամերիկահայ պատմաբան Մայքլ Բորեյանի «Հայաստանի երեխաները» ցեղասպանությանը նվիրված հատորը: 2018-ին լույս է տեսել **Մարեկ Յանդակի** «Հայոց ցեղասպանություն» աշխատությունը:

### **Բռնոյի հայերը**

Բռնոն Չեխիայի երկրորդ մեծ քաղաքը լինելով՝ չունի այնպիսի հայկական համայնք, որի ազդեցությունը չեխահայության համայնքային կյանքում տեսանելի լինի: Համայնքային կառույց չկա, բայց կան առանձին գործող անհատներ:

Բռնոյի բնակիչ, Չեխիայի հայ առաքելական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխական խորհրդի անդամ **Աշոտ Հովսեփյանը** 1993-ին ընտանիքով տեղափոխվել է Բռնո: Ըստ նրա՝ Բռնոյում ապրում է մոտ 60-70 հայ ընտանիք (չուրք 400 հոգի), որոնք հիմնականում զբաղված են առևտրով, ունեն սրճարաններ կամ խանութներ: Գործարար **Լևոն Մանուկյանը**, որը 1993 թվականից բնակվում է Բռնոյում, հայտնի է «Մանուկյան թխվածք» որակյալ հացաբուլկեղենի վաճառքի ցանցով, որն իր ժամանակակից դիզայնով և վաճառվող հացի որակով մեծ ճանաչում ունի քաղաքում: 1993-ից **Հասմիկ Շաքրազյանի**

պատրաստած տորթերը նույնպես մեծ ճանաչում ունեն, նա մասնակցում է մրցույթների, գրավել է առաջին տեղը: Հոգեբան **Արտաշես Իսրայելյանը** Բռնոյում է հաստատվել 1993-ից: Բացի հիմնական մասնագիտությունից, նաև զբաղվում է թարգմանությամբ, հայերեն, ռուսերեն և չեխերեն լեզուների դատական թարգմանիչ է:

Թե՛ն Բռնոյում հայկական շաբաթօրյա դպրոց չկա, բայց Հայկական փողոցում գործում է միջնակարգ դպրոց, որի կայքէջը այդպես էլ կոչվում է՝ Բռնոյի Հայկական միջնակարգ դպրոց՝ [zsarmenska2.-webnode.cz/skola/](http://zsarmenska2.-webnode.cz/skola/):

Աշոտ Հովսեփյանը նաև համայնքի ֆուտբոլի թիմի մարզիչն է: Երիտասարդները մասնակցել են Վիեննայում կազմակերպվող եվրոպական հայկական խաղերին, որտեղ 2015-ին Բռնոյի ֆուտբոլի թիմն առաջին տեղն է գրավել:

1991 թվականից Չեխիայում է ապրում և աշխատում տեխնոլոգ Հակոբ Խոջոյանը, զբաղվում է լուսանկարչական և տեսանկարահանումներով, զովագրային աշխատանքով: Առայժմ մեզ հայտնի միակ հայն է Չեխիայում, որ անդամակցում է ընդդիմադիր Օկամուրայի «Ազատ և ուղիղ դեմոկրատական շարժում» կուսակցությանը, որը դեմ է Եվրոպայի մահմեդականացմանը, և կողմ՝ քաղաքական գործիչների ավելի թափանցիկ գործունեությանը: Եղել է Չեխիայի պատգամավորների պալատի պատգամավորի օգնական:

Բռնոյի Մասսարիկի համալսարանի սոցիալական հետազոտությունների ֆակուլտետի շրջանավարտ ծրագրավորող **Արտյոմ Սողոմոնյանի** ընտանիքը 1998 թ. հաստատվել է Յիլավա քաղաքում, ապա 2003-ին տեղափոխվել է Բռնո: Իրավաբանությունից բացի նա թարգմանչական աշխատանք է կատարում փախստականների ճամբարում, որտեղ մի ժամանակ ամիսը մեկ կամ երկու հոգի հայտնվում են Հայաստանից:

Իրավաբան **Մարինե Մեքոնյանը** 1994 թվականից Չեխիայում է, 1995-ից ապրում և աշխատում է Բռնոյում՝ Փախստականների օգնութ-

յան կազմակերպությունում, 2016-ից ինտեգրացիոն ծրագրեր է իրականացնում օտարերկրացիների համար: Թարգմանություններ է կատարում հայերենից և ռուսերենից չեխերեն և հակառակը:

Բռնոյում տարբեր հաստատություններում երկար տարիներ ռուսերեն է դասավանդում բանասեր **Վարդուհի Մուրադյանը**:

Ծրագրավորող հայեր են աշխատում նաև միջազգային AT&T, Motorola, IBM և այլ ընկերություններում, ինչպես, «Սիմենսի» աշխատող ծրագրավորող **Սամվել Ղազարյանը**:

1993 թվականից Բռնոյում է բնակվում նաև գյումրեցի ինքնուսուցող, մասնագիտությամբ մանկավարժ **Սամվել Տիգրանյանը**: Բռնոյում ունի մթերային խանութ, բայց սիրում է զբաղվել նաև փայտի փորագրությամբ, երբեմն մասնակցում է խմբային ցուցահանդեսների:

### **Յիհլավայի հայերը**

Հայերը Յիհլավայում հաստատվել են 1992 թվականից, սկզբում եղել է 16 ընտանիք՝ մոտ 90 հայ: Թեև պաշտոնական գրանցում չեն ունեցել, բայց կազմակերպել են միջոցառումներ: Այս փոքրիկ համայնքի ստեղծումը կապված է պատահականության հետ: Եթե 1992 թվականին **Արամայիս Մեժլումյանը**, **Կամո Գրիգորյանը**, **Ալեքսանդր Մարգուսյանն** ու այլ հայեր չգային այստեղ իբրև շինարար աշխատելու՝ հետագայում բացելով սեփական շինարարական ընկերություններ, ապա դժվար թե այսօր այդ քաղաքում համայնք լիներ: Այդ տարիների մասին իր հուշերն է գրել **Նորայր Շահբազյանը** «Եվրոխոսպանից» վերնագրով (լույս է տեսել «Օրեր» ամսագրում)՝ մանրամասն պատմելով, թե ինչպես են հայերը հարմարվել օտար միջավայրին: Նորայրը տարիներ անց վերադարձել է Հայաստան, որտեղ 2018-ին լույս է ընծայել

մի գիրք՝ նվիրված Չեխիայում իր աշխատանքային փորձառությանը<sup>385</sup>:

Յիկավայում ակտիվ գործունեություն է ծավալել «Ուրարտու» հայ-չեխական ընկերությունը, որի նախագահ **Ալեքսանդր Սարգսյանի** ջանքերով քաղաքի կենտրոնական այգիներից մեկում 2006-ի նոյեմբերի 17-ին տեղադրվել է Չեխիայում առաջին հայկական խաչքարը (քանդակագործ՝ Հարություն Ստեփանյան): Խաչքարի վրա փորագրված է «Հանուն հայ-չեխական բարեկամության և պատմական արդարության. ի հիշատակ Հայոց մեծ ցեղասպանության անմեղ զոհերի»: Խաչքարի հարևանությամբ գտնվող Սուրբ Հոգու եկեղեցում ամեն տարի ապրիլի 24-ին նշվում է Եղեռնի զոհերի հիշատակը, բացվում է ցուցահանդես: Սարգսյանի ջանքերի շնորհիվ նաև տեղի են ունեցել հավաքներ, դասախոսություններ, մշակութային ձեռնարկներ, ինչպես՝ չեխ և հայ նկարիչ ուսանողների ցուցահանդեսներ և փոխայցեր, Կոմիտասի անվան լարային քառյակի համերգը: Ալեքսանդր Սարգսյանն ակտիվորեն համագործակցում է Պրահայի հայ համայնքի և «Ապրիլ 24» կոմիտեի հետ, աջակցում է Չեխիայի մայրաքաղաքում կազմակերպվող համայնքային միջոցառումները, ինչպես նաև մասնակցում համահայկական խորհրդածողովներին՝ ներկայացնելով Չեխիայի հայ համայնքը: 2018-ին նա աջակցել է նաև երիտասարդական սլարախմբի կազմավորմանը, բեմադրել է հայկական պարեր, որ ներկայացվել են Պրահայի կենտրոնական հրապարակներում:

Դեռևս 1998-ին փորձ է արվել ստեղծել հայկական դպրոց, որը գործել է կրկու տարի ու փակվել է: 2002-ին դպրոցը վերաբացվել է և գործել մեկ տարի:

Յիդլավայում է բնակվում նաև 40-ամյա մանկավարժական փորձառությամբ մաթեմատիկոս, կենսաբան **Մարատ Պետրոսյանը**, որն իր մանկավարժական փորձը փոխանցել է հայ երեխաներին: Այստեղ

<sup>385</sup> Տես **Շահբազյան Ն.**, Հայ «gastarbayer»-ի (խոսպանչու) օրագիր: Հուլիս «Կիրոի ուպանից», Երևան, 2018:

ժամանակին գործել է նաև պարի խումբ և «Հայուհիներ» հանույթը (կազմը՝ Քրիստինե ու Արմինե Կարախանյաններ, Տաթևիկ Սարգսյան):

*«Հայերը հիմնականում շինարարական ընկերություններ ունեն, որտեղ աշխատում են նաև հայաստանցիներ: Մեծ խնդիրներ այլևս չունենք: Եթե որևէ հայ խնդիր է ունենում, համատեղ ջանքերով լուծում ենք: Այս տարիներին համայնքի անդամներից մեծ ջանքեր պահանջվեց նաև, որպեսզի տեղացիները մեզ իբրև ռուսներ չընդունեն: Այժմ շատ լավ են տրամադրված մեր նկատմամբ»,–* ասում է Ա. Սարգսյանը:

Յիկավայում նաև արդեն ավանդույթ է դարձել ամեն տարի մայիսի 8-ին գնալ մոտակա Սազավա գյուղավան, որտեղ գտնվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ այդ գյուղը պաշտպանած 19-ամյա Արշավիր Գավիդյանի շիրիմը:

Ալեքսանդր Սարգսյանի ասելով՝ *«Համայնքային կյանքի խոչընդոտները հիմնականում տեխնիկական են, կապված են հայերի ակտիվության հետ: Ֆինանսական հարցերն ամեն մեկս իր կարողության չափով լուծում է: Որոշ հայեր մի տեսակ հեռացել են հայկականությունից, համայնքից: 2015-ին ստեղծվել է մեր միության Երիտասարդական թևը, որը դեկավարում է Հայկ Նիկոյանը: 25-28 տարեկան երիտասարդները ժամանակ առ ժամանակ կազմակերպում են հավաքներ: Գործում է նաև ֆուտբոլային թիմը, որը մասնակցում է Վիեննայում և Ամստերդամում կազմակերպվող համահայկական խաղերին: Սրանք այն երեխաներն են, որոնք ժամանակին հաճախել են հայկական դպրոց, հայկական միջոցառումներին: Դա մի անգամ ևս ասպացուցում է, որ փոքր հասակից պետք է երեխաներին պատրաստել»:*

Ալեքսանդր Սարգսյանի ջանքերով 2015 թվականին Յիկավայում հրատարակվեց Լուկաշ Լիտանի «Հայկական Հոլոբոստ» գիրքը՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը: 2008 թվականին հրատարակված «Վիսուշինայի հայրենագիտական ժողովածու» հանրագիտարանի 16-

րո՞ հատորում ընդգրկվել է **Ռուդոլֆ Շեքստայի** «Հայկական խաչ-  
քար» հոդվածը՝ անդրադառնալով Յիհլավայի հայկական խաչքարի  
տեղադրման պատմությանը և հայ համայնքին:

2010 թվականից Յիհլավայում են ապրում **Մարինե Հարություն-  
յան-Մարգիս Բրսոյան** ամուսինները: 2011-ին հիմնել են «Միասին»  
հայ-չեխական միությունը: 2012-ից Մարինեն աշխատում է «Խալուպ-  
կի» բնապահպանական կազմակերպությունում, որի հետ էլ իրակա-  
նացրել են մի շարք ծրագրեր: Կազմակերպել են հայ-չեխական ճամ-  
բար, իրականացրել փոխանակման ծրագիր, որի շրջանակներում չեխ  
երեխաները մեկնել են Երևան, իսկ հայ երեխաները եկել են Չեխիա:  
Վիսոչինայի երկրամասի թանգարանում կազմակերպել են «Ամանորը  
հայ երեխաների աչքերով» ցուցահանդեսը, իսկ տարբեր դպրոցնե-  
րում՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես:

### **Օստրավայի հայերը**

Չեխիայի երրորդ մեծ քաղաքում հայերը հաստատվել են 1990  
թվականից: Այսօր այդ քաղաքում և հարակից գյուղերում ապրում է  
մոտ 55 հայկական ընտանիք՝ 300 հոգի: Չեխիայում հաստատվելու  
առաջին տարիներին հայերը զբաղվել են առևտրով և շինարարու-  
թյամբ, բացել են խանութներ և ռեստորան, այնուհետև ընդլայնել են  
բիզնեսի շրջանակները, աշխատանքներ ծավալել տարբեր ոլորտնե-  
րում: Ըստ «Էռնեքս ինվեսթ» ընկերության նախագահ **Արայիկ Աբաջ-  
յանի**՝ թեև համայնքային կառույց չկա, բայց իրենք կարողանում են  
անհրաժեշտության դեպքում համախմբվել ու կազմակերպել տեղի  
հայերի հավաքներ: «Էռնեքս ինվեսթ» ընկերությունն զբաղվում է բեռ-  
նափոխադրումներով, նաև Մորավիայում ունի 15 բեռնալցակայան-  
ներ, համագործակցում են հայտնի «Շել» ու «ՕՄՖ» ընկերությունների  
հետ: Արայիկ Աբաջյանն ու իր համախոհները նաև մասնակցում են  
քրիստոնեական ավետարանական եկեղեցու աշխատանքներին, Բե-  
նեշովի շրջանում ստեղծել են սոցիալական վերականգնողական

կենտրոն, որտեղ բուժվում են թմրամուլները, ակոսիոլիզմով և այլ կախ-վածություններից տառապողները: 2016 թվականին «Նոյ» քրիստո-նեական ալիքով Արայիկ Աբաջյանը խոսել է հայ եկեղեցու և Հայոց ցեղասպանության, ընտանեկան ամուր հիմքի և ընտանիքի դերակա-տարության, հայ-չեխական բարեկամության մասին:

Օստրավայում են աշխատում նաև գործարարներ **Վլոդյա Զա-քարյանը, Արթուր Մարտիրոսյանը, Սամվել Պողոսյանը, Նիկոլ Մար-տիրոսյանը** և այլք, 2007–2017 թթ.՝ լուսանկարիչ-խեցեգործ **Վահան Պողոսյանը**, որն ակտիվորեն մասնակցում է համայնքային միջոցա-ռումներին, լուսանկարում հայկական ձեռնարկները:

«Էռնեսթ ինվեսթ» ընկերության հովանավորությամբ 2003 թվակա-նին **Պրահայում** լույս է տեսել Աննա Էլիզաբեթ Ռեդգեյթի «Հայերը» գիրքը՝ Վացլավ Չեռնիի թարգմանությամբ, իսկ 2002-ին կազմակերպ-վել է հայտնի դուդուկահար **Զիվան Գասպարյանի** համերգը:

Օստրավայից ոչ հեռու գտնվող Չելադնա քաղաքում որպես Ֆիզիո-թերապևտ է աշխատում ծնունդով երևանցի **Զարուհի Վարդանյանը**:

### **Ուստի նաղ Լաբենի հայերը**

Մոտ 25 ընտանիք է ապրում Հյուսիսային Չեխիայի Ուստի նաղ Լաբեն քաղաքում: 1993 թվականից այստեղ է հաստատվել **Վլոդյա Մանուկյանը**, որը Երևանում խանութի տնօրեն է եղել, իսկ Չեխիայում անցել է ազատ ձեռներեցության: Ըստ նրա՝ *«Ուստի նաղ Լաբեն և Տեպլիցե քաղաքների հայերը շատ են կապված, շփվում են, միմյանց օգնում են ամենուր՝ թե՛ շինարարության, թե՛ աշխատանք գտնելու կամ սլեռական մարմիններում աջակցելու հարցերում: Մեր քաղաքում հա-յերին հարգում են: Ընտանիքում սպասիսանում ենք մեր ավանդույթնե-րը: Տղայիս չեխ կինը այնպես է հայերեն խոսում, որ բոլորը զարմա-նում են: Հայաստանից այբբենաբան ենք բերել և սովորեցրել հայոց*

*լեզու և հայրենասիրական ոգով ենք դաստիարակում: Շատ ընտանիքներ են ինտեգրվել չեխական հասարակությանը, բայց տանը շարունակում են հայերեն խոսել»:*

Այս քաղաքում շատերն ունեն արագ սննդի սպասարկման կետեր, ռեստորաններ: Հայտնի է նաև Տեպլիցե քաղաքի բնակիչ, ազատ ձեռներեց **Ստեփան Բոքսյանի** կահույքի խանութը:

Ի դեպ, 2011-ի փետրվարին, Ուստի նաղ Լաբենի օպերային թատրոնում բեմադրվել է Արամ Խաչատրյանի «Գայանե» քալետը՝ բոլորովին նոր լիբրետոյով, որ գրել էր բեմադրիչ Վլադիմիր Նեչասը: «Գայանեի» այս բեմադրության ցնցող հատվածն այն էր, որ «Սրերով պարը» սյուիտը պարում էին շաղրա հագած աղջիկներ՝ սրերի փոխարեն ձեռքերում պահելով Կալաշնիկովի ավտոմատները:

Ուստի նաղ Լաբենը հայտնի է նաև իր հայ մարզիկներով: Այստեղ է աշխատում մարզիչ, բռնցքամարտի Չեխիայի տասնակի չեմպիոն **Արայիկ Շահբազյանը**, նրա եղբորորդին՝ **Արթուր Շահբազյանը**, որը 5 անգամ դարձել է բռնցքամարտի Չեխիայի չեմպիոն: Ծնունդով արարատցի **Վիկտոր Աղաթեյանը** մանուկ հասակից զբաղվել է բռնցքամարտով ու ֆուտբոլով, յոթ անգամ դարձել է բռնցքամարտի Չեխիայի չեմպիոն, իսկ նրա եղբայր **Էրիկ Աղաթեյանը** 4 անգամ նվաճել է Չեխիայի չեմպիոնի տիտղոսը: Այժմ էլ եղբայրները շարունակում են մարզումները և մասնակցում տարբեր մրցաշարերի<sup>386</sup>: 2016-ի մայիսին Էրիկը հաղթել է Ուստի նաղ Լաբենի Գրան Պրի մրցաշարում՝ արժանանալով ոսկե մեդալի, իսկ 2017-ին ճանաչվել է Չեխիայի լավագույն բռնցքամարտիկ՝ profiboxing.cz կայքէջի անցկացրած հարցման արդյունքում: Պլզենում 2017-ին կայացած ըմբշամարտի մրցաշարում Հավլիչկով Բրոդ քաղաքում բնակվող 13-ամյա **Արթուր Սարգսյանը** դարձել է Չեխիայի չեմպիոն:

---

<sup>386</sup> Տե՛ս Արծվի Բախչինյանի հարցազրույցը նրանց հետ՝ **Bakhchinyan A., Boxers 'King' and 'Chosenboy' from Czech Republic: Interview with Viktor and Erik Agateljans.** "The Armenian Mirror-Spectator," Boston, 12.01.2021:

## Մշակութային դեմքերը

Անցած քսան տարիների ընթացքում չելսահայ համայնքում կազմակերպվել են բազմաթիվ մշակութային ձեռնարկներ՝ համերգներ, ցուցահանդեսներ, ֆիլմերի ցուցադրություն կամ հայկական դպրոցում՝ քատերական փոքրիկ բեմադրություններ: Հայ երեխաներն ակտիվորեն մասնակցել են Պրահայի և Չեխիայի տարբեր քաղաքներում կազմակերպվող բազմամշակութային փառատոներին:

Նկարիչ-վերականգնող **Կարինե Արթունին** հարգված դեմք է Չեխիայի գեղարվեստի շրջանակներում: 1958 թվականին թեիրանահայ տնտեսագետ **Ռուբեն Տեր-Չախարյանի** ընտանիքը Իրանից տեղափոխվել է Չեխոսլովակիա: Նախ Սլովակիայում, ապա չեխական Մարիենսկե Լազնիում բուժվելուց հետո նա այլևս Թեիրան չի վերադարձել: Չեխիայում են մնացել նաև նրա կինը՝ **Եվգենյա Արթունին** և աղջիկները՝ **Կարինեն** ու **Արմինեն**: Գիտությունների թեկնածու Ռուբեն Տեր-Չախարյանը դասավանդել է տնտեսագիտական ինստիտուտում: Դուստրը՝ Կարինեն, ավարտել է չեխական գիմնազիան ու մեկնել Երևան՝ սովորելու: Երկու տարի հայերեն է սովորել Երևանի մանկավարժական ինստիտուտում, ապա չորս տարի՝ Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: Այնուհետև ամուսնացել է նկարիչ Տիգրան Աբրահամյանի հետ ու երկուսով վերադարձել են Պրահա: Այստեղ էլ ծնվել է նրանց որդին՝ **Անդրանը**: Պրահայում Կարինեն ուսանել է Գեղարվեստի ակադեմիայում, այնուհետև զբաղվել նկարչությամբ: Յոթ տարի անց լիովին տրվել է նկարիչ-վերականգնողի մասնագիտությանը: Այս տարիներին թե քանի քանդակ ու կտավ է վերանորոգել Կարինե Արթունին՝ ինքն էլ չի հիշում, բայց թվարկում է կարևորներից մի քանիսը. հայտնի քանդակագործներ Բրոկոֆի և

Բրաունի՝ 17-18-րդ դարերի քանդակները, Չեխիայի արտգործնախարարության (Տոկանսկի պալատ) և խորհրդարանի՝ (Վաշտենցկի պալատ) շենքերի, Սուրբ Վորշիլա եկեղեցու, Ազգային պատկերասրահի նկարները, Տիմսկի տաճարի որմնանկարները, 15-րդ դարի Սուրբ Կատարինայի քանդակն ու Ֆոտիշովի կուսանոցի առաստաղը: 2007-2009 թթ. վերանորոգել է Կառլշտեյն թագավորական պալատի որմնանկարներն ու նկարները, 2010-ին՝ Պրահայի Ստրահովի վանքի փիլիսոփայական դահլիճի առաստաղի որմնանկարները: 2014 թվականին արժանացել է «Ժառանգությունը ապագայի համար» պատվավոր մրցանակին, որը շնորհել է Չեխիայի Ազգային ժառանգության ինստիտուտը: Կարինեն 2015 թ. նաև վերականգնել է Կլեմենտինում Ազգային գրադարանի յուղաներկ աշխատանքները, ինչպես նաև 2018-ին՝ Ստարոմեստկա կենտրոնական հրապարակի աշտարակի 19 գերբերը:

Կարինեի քույրը՝ լրագրող Արմինե Արթունին (ծն. 1961, Պրահա), աշխատել է Չեխիայի կարևորագույն լրատվամիջոցներում: 1983 թվականին ավարտել է Կառլովյան համալսարանի լրագրության բաժինը, աշխատել Չեխական ռադիոյի արտասահամայնյան հաղորդումների խմբագրությունում, չեխական ՉՏԿ լրատվական գործակալությունում, «Մլադա Ֆրոնտա Դնես» հայտնի օրաթերթում, «24 ժամ» և այլ թերթերում: 2011 թվականից աշխատում է Չեխիայի գյուղատնտեսության նախարարության մամուլի ծառայությունում: Արմինեն համարվում է չեխերենի քաջ գիտակ, մույնիսկ օրաթերթում աշխատելիս, չեխերենի սրբագրական աշխատանքը վստահել էին իրեն: Ծառշատերը նրանից են չեխերեն սովորել: *«Չեխերենը դարձել է իմ կյանքի գործը: Ուսանողները երբ գալիս էին պրակտիկայի, ասում էի «Չե՞ք ամաչում, հայր ձեզ պետք է չեխերեն սովորեցնի»:* Ազատ խոսում և կարդում է նաև հայերեն: Արմինեն Հայոց ցեղասպանությանը նվիրված հոդվածներով հաճախ հանդես է եկել «ՄՖ Դնես» հայտնի օրաթերթում:

Դիրիժոր և հայագետ, սարկավագ **Հայկ Յուքյուճյանը (Իսփիճեան)** 1998 թվականից ապրում է Չեխիայում: Նա ծնվել է Կիպրոսում, ուսանել Մեծ Բրիտանիայում, ղեկավարում է Պրահայի Կառլովյան համալսարանի երգչախումբն ու նվագախումբը, որը հիմնել է 2000 թվականին: Ղեկավարում է նաև Բերոուն քաղաքի երգչախումբը, տարբեր տարիներին ղեկավարել է նաև Լիբերեցի օպերայի նվագախումբը, համերգներով հանդես եկել Հայաստանի, Կիպրոսի ֆիլիարմոնիկ նվագախմբերի հետ: Հայկ Յուքյուճյանը իբրև հրավիրյալ խմբավար ելույթներ է ունենում եվրոպական ամենատարբեր նվագախմբերի ու երգչախմբերի հետ: Նա ակտիվորեն մասնակցում է Պրահայում անցկացվող մշակութային ձեռնարկներին, այդ թվում՝ պետական միջոցառումներին: Հատկանշական է, որ Հոռնի Բենեդիկտոս 16-րդ պապի համար մատուցած Յուքյուճյանի ղեկավարած երգչախումբն ու նվագախումբը կատարել են նաև հայկական ժողովրդական և հոգևոր երգեր, ինչն աննախադեպ է Կառլովյան համալսարանի՝ միայն չեխերից կազմված երաժշտախմբի համար: Անուրանալի է նաև Հայկ Յուքյուճյանի կատարած քանասիրական աշխատանքը: Ինչպես նշվեց, նա պրոֆեսոր Կինդլերի հետ չեխերեն է թարգմանել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գործը՝ աստիճանաբար հրատարակելով չեխական գիտական ամսագրերում: «Գրաբարի ներածություն», «Հայ գրականություն և էոզևոր ժառանգություն» է դասավանդում Կառլովյան համալսարանի հայագիտական դասընթացների շրջանակում, իբրև ձեռնադրյալ սարկավագ մասնակցում է հայ եկեղեցու պատարագներին:

1999-ից Պրահայում է բնակվում երգահան **Մարատ Խաչատրյանը** (Խաչատուրով, ծն. 1964, Կալինինգրադ): Հայրը՝ Արամ Խաչատուրովը, արմատներով Արցախից է: Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրում, դասավանդել երաժշտական դպրոցում: Բնակվել է

Գերմանիայում, Ավստրիայում, Կանադայում: 2019-ին թողարկել է առաջին ձայներիզը<sup>387</sup>:

Կինոբեմադրիչ և կենսաբան Անդրան Աբրահամյանը (ծն. 1985, Պրահա) նկարիչ Տիգրան Աբրահամյանի և նկարիչ-վերականգնող Կարինե Արթունի որդին է: Ուսանել է Չեխիայի կինոակադեմիայում և Կառլովյան համալսարանի կենսաբանության բաժնում: Տասնյակ ֆիլմերի հեղինակ է, պաշտպանել է նաև դոկտորական թեզ կենսաբանության գծով: 2018-ին նրա «Կայսրության կերտողները» ֆիլմն արժանացել է ՖամուՖեստ կինոփառատոնի «Լավագույն վավերագրություն» մրցանակին եւ Չեխիայի ռեժիսորների եւ սցենարիստների ասոցիացիայի «Լավագույն ֆիլմ» տարվա մրցանակին:

*«Պրահան իմ ծննդավայրն է, հետևապես ինձ այստեղ երբեք օտար չեմ զգացել: Մանուկ հասակից մեծացել եմ չեխերի շրջապատում, իսկ այդ տարիքում երեխաներն իրար ընդունում են՝ անկախ ազգային պատկանելությունից: Այդ տարիներին այստեղ գրեթե հայ չկար, և ես շփվում էի միայն չեխերի հետ: Գրել-կարդալ հայրս ու տատիկս են սովորեցրել: Հայրս հայկական այբուբենը նկարել և փակցրել էր պատին, որ մշտապես իմ աչքի առաջ լինի: Այսպիսով, հայերեն խոսում եմ ազատ, բայց փոքր-ինչ չեխական առոգանությամբ, իսկ կրթությունը ստացել եմ չեխերենով,– ասում է նա:– Ես ինձ կարող եմ համարել սփյուռքահայ: Սփյուռքի ինքնությունը հատուկ կատեգորիա է, երբ մարդը երկու ինքնություն ունի: Ես մտածում եմ չեխերեն, բայց արմատներով, ընտանիքով, պատմական հիշողությամբ ինձ զգում եմ հայ: Զգում եմ ուժեղ կապ Հայաստանի հետ»:*

Չեխիայում կարևոր աշխատանք է կատարում «Ֆոտոարտ» ամսագրի գլխավոր խմբագիր Գարիկ Ավանեսյանը, որին Լուսանկարչական արվեստի միջազգային դաշնության (FIAP) 2012-ին Լյուքսեմբուրգում կայացած ժողովում միաձայն շնորհվել է Լուսանկարչական արվեստի վարպետի կոչում: Նա առաջին հայն է, որն արժանացել է

<sup>387</sup> Բացահայտում. չեխաբնակ կոմպոզիտոր Մարատ Խաչատրյան, «Օրեր», Պրահա, 2019, p. 5-8, էջ 56:

այդ բարձրագույն կոչմանը: Ժյուրին բարձր է գնահատել նրա՝ Հայ առաքելական եկեղեցուն նվիրված լուսանկարների շարքը: Գարիկ Ավանեսյանը ծնվել է Բաքվում, հակահայկական դեպքերից հետո տեղափոխվել է Չեխիա, 2006-ին հիմնել է «Ֆոտոարտ» ամսագիրը, որը լույս է տեսել մինչև 2008-ը: Որոշ ժամանակ հանդես է եկել Գարի Ռոսս անունով: Ամեն տարի լույս է ընծայում «Աշխարհի լավագույն լուսանկարիչները» պատկերագիրքը, համակարգում է Photoart.cz կայքէջը, կազմակերպում միջազգային լուսանկարչական ճամփորդություններ տարբեր մայրցամաքներ և դրանք հրատարակում առանձին գրքերով ու բացում ցուցահանդեսներ: Նա նաև Չեխիայի լուսանկարիչների ֆեդերացիայի հիմնադիր նախագահն է, մի շարք միջազգային լուսանկարչական մրցույթների դափնետեր: Մոտ 100 չեխ և օտար լուսանկարիչների է բերել Հայաստան և Արցախ, կազմակերպել նրանց ցուցահանդեսները, հրատարակել մի քանի պատկերագիրք՝ նվիրված Հայաստանին ու Արցախին: Այսօր էլ նա ակտիվորեն շարունակում է կազմակերպել լուսանկարչական միջազգային սալոններ, այդ թվում՝ աջակցել Անդրկովկասում առաջինը Երևանում նման սալոնի անցկացմանը:

Սոսյրանո Վարինե Սկրտչյանը (ծն. 1994, Մոսկվա) ուսումնասիրել է Չեխիայում, երաժշտական գիմնազիան ավարտելուց հետո ընդունվել է Պրահայի կատարողական արվեստների ակադեմիա: 2013-ին թողարկել է իր առաջին ձայներիզը: Մասնակցել է մի շարք չեխական և միջազգային փառատոների, արժանացել միջազգային մրցանակների, այդ թվում՝ «Պրահայի երգիչ» փառատոնում, Բոհուսլավ Մարտինուի երգի միջազգային մրցույթում: 2014-ին Երևանում հանդես է եկել մենահամերգով: «*Ես ծնվել եմ հասակ եմ առել երաժշտական ընտանիքում, որտեղ ամեն ինչ կապված է եղել հայ ազգային մշակույթի և երաժշտության հետ: Ռ-ուսական մշակույթը նույնպես ազդել է իմ՝ իբրև անհատի ձևավորման վրա, բայց ես շատ եմ սիրում հայ-*

*կական մշակույթն ու երաժշտությունը: Միաժամանակ նաև հարգանքով են վերաբերում չեխ ժողովրդին ու նրա մշակույթին»,-* ասում է Վարիներն:

2001-ից Հրադեց Կրալովե քաղաքում է ապրում երգչուհի **Ալվինա Ադաջանյանը**, որն աշխատում է կաթոլիկ բարեգործական կազմակերպությունում որպես երաժշտական մասի պատասխանատու: Ավարտել է Երևանի Բաբաջանյանի անվան երաժշտական ուսումնաբանի խմբավարական բաժինը, եղել է Հայաստանի ռադիոյի «Արևիկ» մանկապատանեկան անսամբլի մեներգչուհի: Հաճախ հանդես է գալիս համայնքային մշակութային միջոցառումներում:

1993 թվականից Պրահայում են բնակվում և աշխատում ջութակահարներ **Արմեն Սարգսյանը** և **Աննա Համբարձումյանը**: Նրանք ավարտել են Երևանի պետական կոնսերվատորիան, աշխատել Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբում: Տեղափոխվելով Չեխիա՝ Արմենն աշխատել է Կառլովի Վարիի սիմֆոնիկ նվագախմբում, որոշ ժամանակ նաև՝ Եգիպտոսի և Իսլանդիայի սիմֆոնիկ նվագախմբերում: Աննան աշխատել է Հարավային Չեխիայի կամերային նվագախմբում: Արմենն ու Աննան համագործակցում են Չեխիայի ազգային սիմֆոնիկ նվագախմբի հետ, բազմիցս ելույթներ են ունեցել նաև համայնքային ձեռնարկներում:

Դաշնակահարուհի **Քրիստինե Այվազյանը** 2012-ին Բոնոյում անցկացված Մոցարտի անվան «Ամադեուս» միջազգային մրցույթում ստացել է զլխավոր մրցանակը և Չեխիայի կողմից «Լավագույն մասնակցի համար» նախատեսված մրցանակը, իսկ Ուստի մադ Լաբեմում Պատանի վիրտուոզ դաշնակահարների 45-րդ միջազգային մրցույթում նույնպես արժանացել է «Գրան Պրիի»: 2013-ին Ամերիկայի Գեդարվեստի փառատոնի հրավերով ելույթ է ունեցել Քարնեգի հոլում, 2014-ին Մոցարտի դաշնամուրային կոնցերտի կատարմամբ յոթ համերգով հանդես եկել Չեխիայի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

Պարի ուսուցչուհի **Նելլի Քոչարյանը** Չեխիայում է ապրում 1996 թվականից: Միջնակարգ կրթությունն ստացել է առողջապահական

թեքումով դպրոցում, հետագայում ավարտել է Պրահայի Հյուրանոցա-  
յին կառավարման բարձրագույն դպրոցը: Երաժշտության բնագավա-  
ռում նախնական կրթությունն ստացել է Երևանում, այնուհետև՝ Պրա-  
հայում: Ունի պարի դպրոց, որտեղ ֆլամենկո է ուսուցանում երեխա-  
ներին: 1999-ին Նելլի Քոչարյանը հոր՝ **Սարգիս Քոչարյանի** հետ նկա-  
րահանվել է Յան Հրժեքեյկի և Պետր Յարխոսկու «Պետք է օգնենք»  
կինոնկարում՝ Վիներ հրեա ընտանիքի հոր և դստեր դերերում: *«Առիթ  
եմ ունեցել կոմիտասյան որոշ ստեղծագործություններ մշակել ու  
ներգրավել ֆլամենկո պարարվեստի մեջ ու այդպիսով ստեղծել նոր ու  
հետաքրքիր ոճ, որն, ի վերջո, մեկ տարի առաջ, ինձ հաջողվեց ներկա-  
յացնել չեխ հանդիսատեսին «Կանտո դել ավմա» նախագծի ընթաց-  
քում: Դուստրս նույնպես զբաղվում է ֆլամենկոյով: Գիտի հայկական  
չատ երգեր, ոտանավորներ ու հեքիաթներ: Խոսում է մաքուր և պարզ  
հայերենով՝ չնայած այն հանգամանքին, որ ծնվել է Չեխիայում և հայ-  
րը ազգությամբ չեխ է»*,– ասում է Նելլին:

2000–2001 թթ. Չեխիայի Բոնո քաղաքում է ապրել ու ստեղծագոր-  
ծել դերասան և բեմադրիչ **Արտաշես Ալեքսանյանը**՝ Արտուշ Էրզրում-  
ցի բեմական անունով: Այդ տարիներին նա բեմադրել է «Մակբեթ»,  
«Ռեկվոր» և այլ պիեսներ:

Հայ-չեխական արմատներ ունի կինոյի և թատրոնի ճանաչված դե-  
րասան **Բոհումիլ Կլեպլը** (ծն. 1958, Մոսկվա): Նրա հայրը չեխ է, մայ-  
րը՝ հայ: Հայաստան կատարած այցից հետո նա սկսել է հաճախել  
հայկական մշակութային ձեռնարկներին, աջակցում է Հայ եկեղեցա-  
կան համայնքին: Կլեպլը համարվում է չեխական թատրոնի ու կինոյի  
ամենապահանջված դերասաններից մեկը, խաղում է նաև սերիալնե-  
րում, հատկապես՝ կատակերգություններում: Ժամանակին հիմնադ-  
րել է Կլեպլների տիկնիկային թատրոնը:

2007-ին գործարար **Արթուր Աղասարյանի** աջակցությամբ թողարկ-  
վել է «Հայկական ավանդական երաժշտություն» ձայներիզը, որտեղ  
ընդգրկվել են ժողովրդական 16 երգերի կատարումներ:

Չեխական մամուլում, հատկապես «Էքսպրես» թերթում հայտնի հոդվածագիր է **Կարեն Մխիթարյանը**, որը ծնվել է Հայաստանում, դպրոց է հաճախել չեխական Մոստ քաղաքում: Մասնակցել է նաև հեռուստատեսային ծրագրերի:

1998-ից Պրահայում է բնակվում ռուսագիր բանաստեղծ և երգիչ **Գեորգի Առուստամյանը** (ծն. 1986, Նալչիկ): 2001-ին Պրահայում լույս է տեսել նրա բանաստեղծական երրորդ ժողովածուն՝ «Երրորդ քայլը»:

Գրքերի վերանորոգման վարպետ է **Վիկտոր Տեր-Ակոպովը**:

Երևանում ծնված, Պրահայում և Մոնդոլիայում ուսանած **Արևիկ Խաչատրյանը** չեխերեն աշխատություն է գրել 1930–1990 թթ. մոնոլոգական կինոյի մասին:

Հայաստանից արտագաղթած **Վահե Հակոբյանը**, ծնված 1983-ին, Պրահայի էստրադային պարի սիրահարների շրջանում հայտնի է որպես պարող, պարուսույց, պարադիր և «Դիսքո սաթելայթ» պարախմբի անդամ: Մասնակցել է հիփ-հոփ պարերի մրցույթների, շահել մրցանակներ, նկարահանվել տեսահոլովակներում, Չեխիան ներկայացրել Լեհաստանում և Ֆրանսիայում: Դասավանդել է Պրահայի BDS պարի դպրոցում, ապա՝ «Դիվիզե» ստեղծագործական խմբում:

2015 թվականից Չեխիայի համացանցի աշխարհում հայտնի դարձավ **Միքայել Հովհաննիսյանը** (ծն. 1997), որը հանդես է գալիս Mike Je Pan (Մայքը տղամարդ է) չեխերեն անունով: Հայրը գործարար **Կարեն Հովհաննիսյանն** է, մայրը՝ «Միթի» բանկի փոխնախագահ **Հովիտիմե (Իռա) Նալբանդյանը**: Դեռևս 17 տարեկանից աշխատել է իբրև «OVB» ընկերության ֆինանսական խորհրդատու: Նա հայտնի յութուբեր է և ապահովագրական գործակալության հիմնադիր: 2015 թվականի դեկտեմբերի 23-ին YouTube-ում բացել է իր ալիքը, որտեղ տեսանյութեր է տեղադրում այն մասին, թե ինչպես է դիտավորյալ խախտում երթևեկության կանոնները և կոնֆլիկտային իրավիճակներ հրահրում ոստիկանության հետ: 2018 թվականին YouTube-ի նրա ալիքը արգե-

լափակվել է ընկերության կանոնները խախտելու պատճառով: Յուրօրում ունի 300 հազար հետևորդ, Ինստագրամում՝ 142 հազար. Ֆեյսբուքում՝ 45 հազար: Պետր Կոցուրեկի հետ բացել է pojisteninapokuty.cz, իսկ 2016-ից՝ AntiEET.cz ընկերությունները, Nebudmestak.cz համացանցային խանութի կայքէջը: Միքայելը եղել է նաև չեխական հեռուստատեսության «Ոսկե երիտասարդություն» ծրագրի երկրորդ եթերաշրջանի հինգ մասնակիցներից մեկը:

Չեխիայում են ապրում և ստեղծագործում քսանից ավելի հայ նկարիչներ, որոնք այստեղ են հաստատվել անկախությունից հետո: Նրանցից շատերն ունեցել են իրենց պատկերասրահները, մասնակցել են տարբեր ցուցահանդեսների և ակցիաների: 2014-ի նոյեմբերին Հայաստանի ու Չեխիայի մշակույթի նախարարությունների կազմակերպմամբ Պրահայում բացվել է Չեխիայում ստեղծագործող հայ նկարիչների ցուցահանդեսը և հրատարակվել պատկերագիրք: Ըստ այս հատորի՝ Չեխիայում ապրում և ստեղծագործում են նկարիչներ Տիգրան Աբրահամյանը, Աշուր Առաքելյանը, Արթուր Ասատրյանը, Գոռ Ավետիսյանը, Թամարա Բախշինյանը, Գոհար Էդիգարյանը, Էդուարդ Էդիգարյանը, Արմենակ Կարապետյանը, Հարություն Հովհաննիսյանը, Նորայր Հովհաննիսյանը, Հրայր Ղարիբյանը, Մարիամ Ղարիբյանը, Գագիկ Մանուկյանը, Մուրադ Մարտիրոսյանը, Հայկ Մնացականյանը, Հովիկ Մուրադյանը, Շավարշ Մուրադյանը, Տիգրան Մուքիսայանը, Գագիկ Տոնյանը, Ռեմ Փիրումովը: Չեխական Վրասիմով քաղաքում է ապրում և ստեղծագործում նկարիչ-գրափիլ Բաֆֆի Չեչճենյանը, Պրահայում՝ ռուսահայ Ավդեյ Տեր-Օհանյանը:

Այս նկարիչներից շատերը Հայաստանից հեռացել են հիմնականում տնտեսական ծանր կացությունից ելնելով, երբ չէին կարողանում վաճառել իրենց նկարները, իսկ Պրահայում ապրելով և ստեղծագործելով՝ նրանք դուրս են եկել եվրոպական մշակութային ասպարեզ և ցուցահանդեսներ են բացում նաև Եվրոպայի տարբեր երկրներում:

Գեղանկարիչ **Էդուարդ Էդիգարյանը** 1993-ից եկել է Պրահա, մասնակցել է բազմաթիվ եվրոպական ցուցահանդեսների: Նրա զավակները՝ **Գոհարն ու Արմենը**, նույնպես ստեղծագործում են և հոր հետ երբեմն մասնակցում են ցուցահանդեսների:

Նկարիչներ **Հրայր և Մարիամ Ղարիբյանները** Պրահայում բնակվել են 1995-1996 թթ: Մարիամը նաև ասեղնագործող է և հագուստի մոդելավորող: Ղարիբյանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի Նկարիչների ֆեդերացիայի անդամ են: Ունեցել են ցուցասրահ, որտեղ կազմակերպել են հայ և օտար նկարիչների ցուցահանդեսներ: Մարիամն այժմ բնակվում է Երևանում:

**Հովիկ Մուրադյանը** Չեխիայում է հաստատվել 1992 թվականին, բազմաթիվ եվրոպական ցուցահանդեսների է մասնակցել, ստացել մրցանակներ: Չեխիայի նկարիչների միության անդամ է: Հովիկը ներկայացված է նաև Չեխիայի և Սլովակիայի արվեստի հանրագիտարանի 1952-2002 թթ. հատորում: Հայրը՝ գեղանկարիչ **Շավարշ Մուրադյանը**, ստեղծագործում է Պրահայում. որդին՝ **Դավիթը**, նույնպես նկարում է:

Քանդակագործ և նկարիչ **Գոռ Ավետիսյանը** 1992 թվականից ապրում է Պրահայում: 1998-ին ունեցել է առաջին ցուցահանդեսը, որին հաջորդել է սեփական ցուցասրահի՝ «Inter Art Gallery Gor»-ի բացումը Հուսովա փողոցում: Չորս միջազգային մրցանակի դափնեկիր է: Տարբեր տարիների նրա ցուցասրահում են կազմակերպվել Պրահայի հայ նկարիչների համատեղ ցուցահանդեսները: Այդ երեկոներին, ինչպես նաև համայնքային ձեռնարկներին հաճախ ելույթներ են ունեցել նրա որդիները՝ կիթառահարներ **Միքրանն ու Արմանը**: Կինը՝ **Թամարա Բախշինյանը**, նույնպես ստեղծագործում է և մասնակցում ցուցահանդեսների:

Չեխիայում է բնակվում մոսկովյան ավանգարդի հայտնի ներկայացուցիչ, նկարիչ **Ավդեյ Տեր-Օհանյանը**, որը քաղաքական հետապնդումների պատճառով 1999 թ. Մոսկվայից տեղափոխվել է Չեխիա: 2013 թվականին Պրահայի «Transit Display» ցուցասրահում բացված

նրա ցուցահանդեսը 1980–2013 թվականների աշխատանքների հանրագումարն էր:

1992 թվականից **Պրահայում է ապրում և ստեղծագործում քանդակագործ, նկարիչ Մուրազ Մարտիրոսյանը** (ծն. 1957, Մեղրի): Բազմաթիվ քանդակների հեղինակ է թե՛ Հայաստանում, և թե՛ նրա սահմաններից դուրս: Չեխական Լիբովիցե գյուղում Առաջին համաշխարհային պատերազմի հերոսներին նվիրած մի քանդակ է կազմեցրել Հարություն Հովհաննիսյանի հետ և նվիրել գյուղին: Ստեղծել է նաև այդ գյուղի հրապարակի հարթաքանդակը:

1989 թվականից **Չեխիայի Հռոմի Նեմչի գյուղավանում է բնակվում Արցախի վաստակավոր նկարիչ, պատմաբան Աշոտ Առաքելյանը**: Նա ոչ միայն Հայաստանի ու Արցախի, այլև Չեխիայի նկարիչների միության անդամ է: Հանդես է գալիս անհատական ցուցահանդեսներով, տպագրվում **Չեխիայի և Սլովակիայի մամուլում՝ ներկայացնելով Հայոց ցեղասպանությունն ու հայ ժողովրդի պատմությունը**:

**Գագիկ Մանուկյանը** նույնպես ունի իր ցուցասրահը Պրահայում: Համագործակցում է «Միրո» պատկերասրահի հետ, ցուցադրվում է եվրոպական տարբեր երկրներում:

**Տիգրան Սուքիասյանի** նկարներն ու քանդակները 1990-ականներին ցուցադրվել են Ռուսաստանի հայտնի պատկերասրահներում: Վեց տարի աշխատել է Համբուրգի գունային թերապիայի ինստիտուտում: Մասնակցել է մի շարք միջազգային ցուցահանդեսների և արվեստի համաժողովների:

Ծնունդով եգիպտահայ նկարիչ, գրաֆիկ-դիզայներ **Բաֆֆի Չեչճենյանը** (Չեչենյան) բնակվում է Օստրավայում: *«Երբ եկա, այստեղ նոր էին սկսել համակարգչային գրաֆիկան ուսումնասիրել, չորս մասնավոր ընկերությունների աշխատակիցների եմ ուսուցանել: Չեխական միջավայրին ինտեգրվելը դյուրին էր, միակ դժվարությունը լեզուն էր: 2010-ին Օստրավայի տրանսպորտի տարբերանշանի դիզայնը շահեցի»*, - ասում է նա:

Չեխիայում ստեղծագործել են նաև այլ նկարիչներ, որոնք տարբեր տարիների վերադարձել են Հայաստան կամ տեղափոխվել այլ երկրներ:

Առկա են մշակութային համագործակցության տարբեր օրինակներ հայերի և չեխերի միջև: Երևանցի կինոբեմադրիչ **Միքայել Դովլաթյանը** «Բարանդոլ» ստուդիայի մի կինոալմանախում նկարահանել է «Ոչ կուզիկի սիրավեպը» (1994) նովելը: 1999-ին սիրիահայ բանաստեղծ **Հարութ Վարդանյանը** գրել է «Չեք-ո՛-Սլովաքիա» բանաստեղծությունը<sup>388</sup>: 2003-ին չեխական «Մոստ» կինոնկարը բեմադել է ամերիկահայ **Բորի Կարապետյանը**: 2007-ին Պրահայի Վիոլա թատրոնում բեմադրվել է Սպիտակի երկրաշարժին նվիրված՝ գրող, հրապարակախոս, սենատոր, այժմ Եվրոպական խորհրդարանի անդամ Յարոմիր Շտեռնիմայի «Հրաշքների դարը» պատմվածքը: 2007-ին Երևանում լույս է տեսել Հայաստանում և Վրաստանում Չեխիայի հյուպատոս **Յան Պոլախի** բանաստեղծությունների հայերեն գիրքը՝ **Ալլա Հարությունյանի** թարգմանությամբ: 2011-ին Բրիտանական խորհրդի դիպլոմատների նախագծին մասնակցել և համատեղ զգեստներ են ստեղծել հայուհի **Քրիստինե Ավետիսյանը** և չեխ **Պավել Իվանչիչը**: 2011 և 2015 թթ. Հայաստանն սուաջին անգամ մասնակցել է Պրահայի ժամանակակից արվեստի Քվադրենալին մի քանի նախագծերով, որոնց հեղինակներն էին **Նելլի Բարսեղյանը** և **Լիլիթ Ստեփանյանը**: 2015-ի ցուցադրությունը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցին: 2015-ին Հայաստանում լուսանկարչական շարք է ստեղծել չեխ լուսանկարիչ **Մարտին Հովիչը**: 2018-ին նկարահանվել է **Լևոն Վյակրյանի** «Ես մնում եմ» կարճամետրաժ կինոնկարը չեխական Սլանի քաղաքի մասին և այլն:

<sup>388</sup> Վարդանյան Յ., Եռանկիւն արեւ, Հալեպ, 2000 (ստանց էջաթվերի):

Այստեղ նշենք նաև, որ 2017 թվականին Երևանում բացվել է Սարգիս Սահակյանի՝ Պրահային նվիրված գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը, իսկ 2018-ին լուսանկարչուհի Տաթև Մնացականյանի՝ Պրահային նվիրված լուսանկարչական ցուցահանդեսը:

## **Այլ մասնագիտությունների անձինք**

Չեխիայում հաջողությունների են հասել ամենատարբեր մասնագիտությունների հայ անձինք ևս: Կան նաև հաջողակ հայեր, որոնք աշխատում են չեխական տարբեր ընկերություններում, բանկային համակարգում կամ փաստաբանական գրասենյակներում:

Բժշկական գիտությունների դոկտոր **Արեգ Տեր-Ղազարյանը** 1993 թվականին տեղափոխվել է Չեխիա, աշխատել է տարբեր հիվանդանոցներում, 2006 թվականից Բերունի Մեդիցենտրում կլինիկայի գլխավոր վիրաբույժն է: Նրա դուստրը և որդին ավարտել են միջազգային հարաբերությունների բաժինը: **Լևոն Տեր-Ղազարյանը** դիպլոմային աշխատանք է գրել պանթյուրբիզմի վերաբերյալ: Չեխական «Ochrana & Bezpečnost» (Պաշտպանություն և անվտանգություն) հանդեսում հրատարակել է 1923–1994 թթ. Արցախի ժողովրդագրության վերաբերյալ ուսումնասիրություն (2016, թիվ 5):

Չլինի շրջանում է ապրում ուռուղոգ **Բորիս Թերմեջյանը**:

Ռսկերչի մասնագիտություն ստացած **Հայկ Ներսիսյանը** Կոալուպե քաղաքից 2002-ի սեպտեմբերին շահել է Չեխիայի երիտասարդ ոսկերիչների հանրապետական մրցույթի 2-րդ մրցանակը:

2013 թվականին Պրահայի նորածնության շաբաթին է մասնակցել **Աննա Ավագյանը** (ծն. 1989), որը ներկայացրել է կանանց զգեստներ:

Ակտիվ փաստաբանական աշխատանք են կատարում երիտասարդ իրավաբաններ **Բագրատ Վերոյանը**, **Սիմոն Մեսրոպյանը**, **Էլեն Ահարոնյանը** և այլք:

Նոր սերունդը նաև մասնագիտացել է արհեստների մեջ: Պրահայում աշխատում են մեծ թվով հայ վարսավիրներ, նաև կաշեգործներ,

ոսկերիչներ, դերձակներ, խոհարարներ ու վարպետ հրուշակագործներ, որոնք ընդունում են անհատական պատվերներ: Պրահայում իրենց ռուսական կրթական կենտրոնն են բացել Մոսկվայից տեղափոխված **Տատյանա և Վիկտորյա Նազարբեկովա** քույրերը՝ գեներալ Նազարբեկովի շառավիղները:

Կառուվի Վարիից երիտասարդ գիտնական 18-ամյա **Կարինա Մովսեսյանն** արժանացել է Եվրոմիության «Լավագույն երիտասարդ գիտնական» մրցանակին: Ընտանիքը Չեխիա է տեղափոխվել Դրոգուտամից: Նա սովորում է Բռնոյի Մասարիկի անվան համալսարանում, կենսաբանության ֆակուլտետում ուսումնասիրում է RAD 51 սպիտակուցի մոտագիան: Նա բացահայտել է այն մեխանիզմը, որը կարող է հանգեցնել քաղցկեղի առաջացմանը և զարգացմանը: Արժանացել է Միաջյալ Նահանգներում կազմակերպված «Intel ISEF» մրցույթի գլխավոր մրցանակին, 17 տարեկանում՝ «Չեխական գլուխ» մրցանակին, որը ստացել է 21 տարեկան երիտասարդ գիտնականներին:

Քաղաքագիտության դոկտոր **Էմիլ Սուլեյմանովը**, որը ստորագրում է Էմիլ Ասլան (մայրը՝ հայուհի, հայրը՝ Հայաստանի աղբրեջանցի, ծն. 1978, Երևան), բազմաթիվ քաղաքագիտական և տարածաշրջանային հակամարտություններին նվիրված մենագրությունների և հոդվածների հեղինակ: 2018 թվականին ընտրվել է Պրահայի Միջազգային հարաբերությունների ինստիտուտի տնօրեն: Հաճախ է հարցազրույցներով և հոդվածներով հանդես գալիս չեխական մամուլում և հեռուստատեսությանը:

Չեխիայում կան մասնաշաղկապական ընտանիքներ, որոնք նույնպես տվել են տաղանդավոր երեխաներ: Թարգմանիչներ, հայուհի **Մարգարիտա Նովոտնայի** և չեխ Վլադիմիր Կովտոնիի աղջիկը՝ **Հելենան**, Չեխիայում անցկացված ճապոներենի մրցույթում գրավել է առաջին տեղը և մեկ տարով մեկնել Դապոնիա՝ ուսանելու:

Անցած մոտ 20 տարիների ընթացքում Չեխիայում նախապես հայկական ռեստորաններ են բացվել, որոնք փակվել են - -

կամ երկու տարի աշխատելուց հետո: Փոխարենը հայերն ունեն չե-  
խական կամ միջազգային խոհանոցով ռեստորաններ՝ **Արմեն Անա-  
նիկյանի** «Կոլկովնան», **Դավիթ Չավարյանի** «Գուրմետ Հաուզը» եւ  
«The Pub»-ը: Հայ ռեստորանատերեր կան նաև Կառլովի Վարիում,  
Պլզենում, Պարդուբիցեում և այլուր:

Հայերն ընդգրկված են նաև Չեխիայի անշարժ գույքի շուկայում:  
**Նորայր Չավուրցյանն** ապրում և աշխատում է Պրահայում: 10 տարի  
աշխատում է անշարժ գույքի առքուվաճառքի բնագավառում, նաև  
ձևակերպում է «հիպոտեկներ»՝ համագործակցելով 12 չեխական բան-  
կերի հետ: Այդ ոլորտում են աշխատում նաև **Սվետլանա Քամալյանը**  
և **Մարինա Այդինյանը**:

Չեխիայում հայտնի են **Կարեն Մարգսյանի** համադեկավարութ-  
յանը «Արաքս» ընկերության արտադրանքը, հավերի մթերման «Կա-  
րապետյան» ընկերությունը, սոլարիումների ցանց ունեն **Արթուր և Էմ-  
մա Լազարյանները** և այլն:

Հայաստանի ու Ռուսաստանի բազմաթիվ մեծահարուստ հայեր,  
նախկին ու ներկա պաշտոնյաներ Չեխիայում գնել են հողատարածք-  
ներ, հյուրանոցներ, անշարժ գույք, բացել են խաղատներ ու այլ բիզ-  
նեսներ, այդ թվում շինարարական, բայց աշխատում են մնալ սովե-  
րում և որևէ կապ հայ համայնքի հետ չեն պահպանում:

Պրահայում բացված յուրահատուկ «Գեներալ» հյուրանոցով  
հայտնի է դարձել գործարար **Աղասի Չավարյանը**, որը հետաքրքիր  
ձևավորում և բովանդակություն է հաղորդել իր հյուրանոցին: Ղա-  
զախստանում գործարանի սեփականատեր Չավարյանը 2004 թվա-  
կանին է տեղափոխվել Չեխիա: «Գեներալ» հյուրանոցի սենյակները  
կրում են աշխարհի տարբեր գորավարների անունները և նրանց մեծ  
դիմանկարները զարդարում են ոչ միայն հյուրանոցի նախասրահը,  
այլև 20 սենյակները: Այս դիմանկարների հեղինակներն են հայր և որ-  
դի Շավարշ և Հովիկ Մուրադյանները: Հյուրանոցը գործել է մինչև 2017  
թ: Որդին՝ **Դավիթ Չավարյանը** (ծն. 1991), 2004 թվականին 13 տարե-  
կանում ֆուդոկան ավանդական կարատեի Չեխիայի ֆեդերացիայի

մրցաշարում գրավել է առաջին տեղը և արժանացել ոսկե մեդալի: Հետագայում ավարտելով Շվեյցարիայի և Մեծ Բրիտանիայի համալսարանները՝ վերադարձել է Պրահա և, ինչպես նշվեց, զբաղվում է ռեստորանային ցանցի ղեկավարությամբ:

Գործարար Արամայիս Մեժլումյանը 1992 թվականից Վանաձորից գալով Չեխիա՝ որպես ինժեներ-շինարար նախ Յիլլավայում զբաղվել է շինարարությամբ, ստեղծել իր շինարարական ընկերությունը, ապա 2006-ին Վելկե Մեզլիթիցիում հիմնել «Տրի Պիրամիդի» (Երեք բուրգ) ընկերությունը, որը զբաղվում է տանիքածածկ սալիկների արտադրությամբ:

2016-ից Պրահայում է գործում նաև գործարար Արամ Մարտիքյանի «Atlantis Development» ընկերությունը, որը մեծ նախագծեր է իրականացնում Պրահայում: Նա նաև Հայաստանում Ավստրիայի պատվավոր հյուպատոսն է: Պրահայում է գործում նաև Վլադիմիր Գալուստյանի «Galstian & Galstian Invest sro» շինարարական ընկերությունը:

## Մարզիկները

Չեխիայի հայ պատանիներն աննախադեպ հաջողություններով աչքի են ընկնում մարզական բնագավառում:

1990-ականների վերջին Չեխիայի թիվ մեկ շախմատիստը օլիմպիական չեմպիոն Մերգեյ Մովսեսյանն էր, որն այնուհետ դարձավ Սլովակիայի թիմի անդամ: Հանդես է գալիս նաև Հայաստանի շախմատի հավաքականի կազմում: «1994 թվականից մեր ընտանիքը տեղափոխվել է Պարդուբիցե (Չեխիա): 1997–2001 եղել են Չեխիայի թիվ մեկ շախմատիստը, 2001–2011 թթ.՝ Սլովակիայի, իսկ 2011-ից Հայաստանի ազգային հավաքականի անդամ են», – պատմում է Մերգեյը:

Արա Մարտիրոսյանը շախմատով սկսել է զբաղվել 5 տարեկանից, 2008-ից Չեխիայում է: 2014 թվականին դարձել է մինչև 12 տարեկանների Չեխիայի չեմպիոն՝ որանից արագ երկու անգամ գրավելով 2-րդ

տեղը: 2016-ին Չեխիայի դաբրոցականների օլիմպիադայում գրավել է 3-րդ տեղը:

2009 և 2010 թթ. 75 կգ քաշային կարգում բռնցքամարտի Չեխիայի չեմպիոն է դարձել **Վարդան Բետալյանը**: 2002 և 2003 թթ. նա ճանաչվել էր Չեխիայի բռնցքամարտի պատանիների չեմպիոն:

Բռնոյի հայտնի մարզիկներից է Չեխիայի եռակի չեմպիոն, բռնցքամարտիկ **Համո Ապերյանը**, որը մասնակցել է Եվրոպայի առաջնությանը: 2009–2010 թթ. ճանաչվել է էքստրալիգայի լավագույն բռնցքամարտիկ:

Բռնոյում է ապրում նաև կուլտուրիստ **Արսեն Կիզողլյանը** (ծն. 1974, Չարենցավան), որը 2008 թվականին դարձել է Չեխիայի կուլտուրիզմի չեմպիոն: 1995-ին Չեխիա տեղափոխված Արսենն այժմ զբաղվում է նաև մարզչական աշխատանքով:

Կան հաջողակ հայ պատանիներ հատկապես քիբբոքսինգ մարզաձևում: Ամենահայտնին քիբբոքսինգի աշխարհի և Չեխիայի չեմպիոն **Անատոլի Հունանյանն** է: Նա դեկավարում է «Տոլյա ջիմ» մարզական ակումբը: Հունանյանների ընտանիքը Չեխիա է տեղափոխվել ընտանիքի հոր՝ **Յուրա Հունանյանի** գլխավորությամբ, որը Հայաստանի սպորտի վարպետ է, ծովային բազմամարտի ու կիրառական բազմամարտի վարպետ: Նա Չեխիայում ևս զբաղվել է ակտիվ մարզչական գործունեությամբ, մարզել քիբբոքսինգի և բռնցքամարտի սիրահարներին: Ավագ որդին՝ **Անատոլի Հունանյանը**, նույնպես զբաղվում է մարզչական գործունեությամբ, 30 անգամ դարձել է քիբբոքսինգի Կ1 մարզաձևի Չեխիայի չեմպիոն, աշխարհի եռակի չեմպիոն, նաև պրոֆեսիոնալ բռնցքամարտի չեմպիոն: Դուստրը՝ **Մարինան**, դեռևս 1995–1996 թթ. դարձել է Հայաստանի և ԱՊՀ քիբբոքսինգի չեմպիոն, 2003–2004 թթ. Չեխիայի բաց միջազգային մրցաշարում գրավել է 2-րդ և 3րդ տեղերը: Կրտսեր որդին՝ **Դավիթը**, 2012 թվականին գրավել է Չեխիայի բռնցքամարտի առաջնության 2-րդ, 2013-ին՝ 3-րդ տեղը: 2014 թվականին չեխահայ բռնցքամարտիկ **Գոռ Հարությունյանի** հետ տարբեր քաշային կարգերում դարձել են Չեխիայի բաց միջազգային

մրցաշարի հաղթողներ, իսկ 2017-ին Գոռ Հարությունյանը դարձել է քիբբոնցքամարտի Եվրոպայի չեմպիոն:

**Տիգրան Մովսիսյանը** Քիբբոքսինգի համաշխարհային ֆեդերացիայի գծով աշխարհի կրկնակի չեմպիոն է (2012 և 2014 թթ.), Եվրոպայի չեմպիոն՝ 2014-ին, Չեխիայի չեմպիոն սիրողական քիբբոքսինգում՝ 2011, 2012 թթ. և Չեխիայի պատանիների բոնցքամարտի բրոնզե մեդալակիր՝ 2010 թ.: 2000-ից յոթ տարեկանում Գյումրիից ընտանիքով տեղափոխվել է չեխական Կուրիմ քաղաք և հասել նման արդյունքների: 2016-ի ապրիլի 9-ին Քիշնևում կայացած քիբբոքսինգի միջազգային մրցույթում Տիգրան Մովսիսյանը հռչակվել է մրցաշարի չեմպիոն:

Քիբբոքսինգի Չեխիայի չեմպիոններ են եղել կամ առաջնություններ են շահել նաև **Հայկ Սկրաշյանը**, **Վլադիմիր և Դավիթ Հալարյանները**, **Դավիթ Մուրադյանը**: Չեխիայի կարատեի հնգակի չեմպիոն է **Արամայիս Թոխյանը**, բոնցքամարտի աշխարհի և Չեխիայի բազմակի չեմպիոն՝ **Արայիկ Շահբազյանը**, Բռնոյից՝ գեղասահքի Եվրոպայի պատանիների առաջնության արծաթե մեդալակիր **Մոնիկա Հարությունյանը**: Թենիսում չեխական առաջնության հաղթող է դարձել **Նարեկ Նիկողոսյանը**:

Հայ պատանի մարզիկները միայն սպորտով չեն բավարարվում: Այսպես, **Արամայիս Թոխյանը** կարատեի Չեխիայի հնգակի չեմպիոն է, բայց նաև հաջողություններ է գրանցել գրաֆիկայի ասպարեզում և 2008-ին մրցանակ է շահել ամերիկյան արագ սննդի հայտնի ցանցի տարբերանշանի ստեղծման մրցույթում:

### **Գևորգ Ավետիսյանը և «Մառլենկայի» հրաշքը**

Կան հայ գործարարներ, որոնք արդեն հայտնի են դարձել ոչ միայն Չեխիայում, այլև Եվրոպայում: Հատկապես պետք է նշել Ֆրիդեկ-Միստեկ քաղաքի բնակիչ, «Մառլենկա» հայտնի տորթի արտադրող, «Մառլենկա» ընկերության նախագահ **Գևորգ Ավետիսյանին**, որը

հայկական մեղրով տորթի համբավը տարածել է ողջ Եվրոպայում, հիմնել է ոչ միայն Չեխիայի, այլև Եվրոպայի ամեահայտնի լավագույն մեղրով տորթի արտադրությունը: 1995-ին Չեխիա տեղափոխված դիզայներ-ճարտարապետ Գևորգ Ավետիսյանը քրոջ՝ **Հասմիկի** հետ 2003 թ. տաճն խոհանոցում է սկսել թխվածքի պատրաստումն ու իրացումը: Այսօր Ավետիսյանին իր աշխատանքում օգնում են ոչ միայն քույրն ու նրա որդին ու դուստրը՝ **Միքայելը** և **Նելլին**, այնպես էլ իր որդին՝ **Նշանը**: Ընկերությունն իր հայտնի թխվածքատեսակներն արտահանում է աշխարհի 45-ից ավելի երկրներ: Այն դարձել է Ֆրիդել-Միստեկի խորհրդանիշը և Չեխիայի արտադրական պոտենցիալի կարևոր բաղադրիչներից մեկը: 265 աշխատող ունեցող ընկերությունը տալիս է մոտ 30 տեսակի արտադրանք: Հատկանշական է, որ թխվածքի տուփի վրա նշված է «*ըստ հին հայկական բաղադրատոմսի*» և պատմական զուգահեռ է տարվում չեխ-հայկական կապերի վերաբերյալ, այնպես որ Եվրոպայում տարածում գտած այդ ապրանքատեսակը գնողները ոչ միայն տուփի վրա տեսնում են Արարատ լեռը և Խոր Վիրապը, այլև չեխերեն և անգլերեն գրությունից տեղեկանում են, որ «*1704 թվականին հայ Գեորգիոս Դեոդատոս Դամասկենուսը՝ Պրահայում հիմնեց առաջին չեխական սրճարանը՝ «Ոսկե օձի մոտ»-ը (Ռիզերի կրթական բառարան, 1862, երկրորդ հրատարակություն): Երեք հարյուր տարի անց, 2003 թվականին հայ Գևորգ Ավետիսյանը և իր քույրը հիմնեցին «Միկո ինթերնեշնլըր» չեխական ընկերությունը, որն արտադրում է ոչ միայն «Մառլենկա» մեղրով տորթը, այլև «Մառլենկա» մեղրով թխվածքները՝ ըստ հին հայկական ընտանեկան բաղադրատոմսի: ...«Մառլենկան» դարձել է ավանդական չեխական բաղադր համադամ յուրաքանչյուր չեխական ընտանիքում: Հայաստանում «Մառլենկան» կոչվում է «մեղրով հրաշք»: Դու նույնպես կարող ես փորձել «Մառլենկայի» արտադրության յուրօրինակ համը»: Թեև առաջին հայացքից կապ կարող է չլինել 18-րդ դարի սկզբին հիմնված սրճարանի և մեր օրերում ստեղծված արտադրության հետ (բացի հիմ-*

նադիր հայերի անունների նույնությունից), սակայն միանգամայն արդարացված է հայ գործարարի քայլը՝ ցույց տալով, որ հայերը Չեխիայում նոր չեն, ունեն որոշակի ավանդույթ և շարունակվող ներկայություն:

Գևորգ Ավետիսյանն ապրելով մայրաքաղաքից հեռու՝ միաժամանակ ակտիվ մասնակցություն է ունենում Չեխիայի հայ համայնքի միջոցառումներին, նպաստում հայ-չեխական կապերի զարգացմանը: 2014-ին և 2015-ին երկու տարի անընդմեջ նա ճանաչվել է «Չեխիայի լավագույն գործարար» Մորավո-Սիլեզյան տարածաշրջանում: Ոչ մի ուրիշ հայի հետ չեխական մամուլը և հեռուստակայաններն այդքան հարցազրույցներ չեն հրատարակել կամ հեռարձակել, որքան Գևորգ Ավետիսյանի հետ: Կարևոր է, որ ցանկացած հարցազրույցի ընթացքում նա նշում է ոչ միայն իր արմատների, այլև Հայոց ցեղասպանության ու հայ ժողովրդի սպառնության եւ մշակույթի մասին:

### **Համայնքի ապագան. երիտասարդությունը, լեզուն և ինքնությունը**

Չեխահայ նոր սերունդը ձգտում է սովորել համալսարաններում, տիրապետում է մի քանի լեզուների: Մեծ թիվ են կազմում խառն ամուսնությունները, և այդ իմաստով հայերը թերևս ամենախնտեզրված ազգային փոքրամասնություններից են, թեև պաշտոնապես ազգային փոքրամասնություն չեն համարվում:

Լրագրող, հրապարակախոս **Շուշան Ղազարյանի** կարծիքով. «Չեխիայի հայ համայնքը հուսալի ապագա ունի, քանի որ իր գոյության օրից միավորվելու, համախմբվելու, լեզուն, մշակույթը պահպանելու խնդիր է դրել իր առաջ ու իր կարճ կենսազրույթյան համեմատ հասել է մեծ արդյունքների: Արտագաղթելուց ընդամենը 4-5 տարի անց, արդեն կազմակերպվեց հայկական համայնքը, բացվեց Պրահայի հայկական շաբաթօրյա դպրոցը՝ այն առաջին ու հիմնական կառույցը, որը մեծ դեր խաղաց նաև հայությանը համախմբելու, միմյանց ճանաչելի

դարձնելու, հայկական փոքրիկ մշակութային միջավայր ստեղծելու հարցում: Ստեղծվեց «Օրեր» համանկրոպական անկախ պարբերականը, որը լրատվության արժեքավոր միջոց լինելուց բացի, մի տեսակ եկրոպահայության լրատվության մայրաքաղաք է ինձ հիշեցնում, ինչպես Բրյուսելը Եվրոմիության համար: Մեծ հաջողություն եմ համարում, որ ամսագրի խմբագրությունը Պրահայում է: Ավելի ուշ սկսեցին գործել հայ առաքելական եկեղեցին, Հայաստանի դեսպանությունը, որն անկեղծորեն կանգնեց արդեն կայացած համայնքի կառույցների թիկունքին ու ակտիվորեն առաջ տարավ հայության ու մեր երկու երկրների քաղաքական ու տնտեսական համագործակցության առաջնահերթությունները: Այսինքն, այսօր հայկական փոքրիկ համայնքն արդեն ունի իր բնակահոն զարգացման համար այն ամենը, ինչը կարող են երազել նույնիսկ հարյուրամյակների կենսագրություն ունեցող գաղթօջախները: Եվ ամենակարևորը՝ այս կառույցները գործում են համերաշխ ներդաշնակության մեջ՝ կարևորելով մի հիմնական խնդիր՝ հայերը, պահպանելով իրենց գենետիկ առանձնահատկությունն ու մշակույթը, պետք է ինտեգրվեն Չեխիայի պետական ու տնտեսական բարձրագույն կառույցներում՝ ի փառս այդ երկրի ու Հայաստանի բարօրության»:

Շուշան Ղազարյանի դուստրը՝ լրագրող Մարիամ Բուլջանը, ավարտել է Պրահայի անգլիական միջազգային դպրոցը, աշխատում է որպես լրագրող Լոնդոնում: Պրահայի շաբաթօրյա հայկական դպրոցի շրջանավարտ է: «Կանոնավոր կարդում եմ բոլոր հայկական թերթերը, նայում եմ հայկական ֆիլմերը, առհասարակ հայ մշակութային ու քաղաքական անցուդարձերը, քանի որ հայերենս բավական վարժ եմ», – ասում է նա:

Չեխիայի գյուղատնտեսության նախարարության ավագ մասնագետ Անի Հակոբյանը ավարտել է Բոնոյի Մասարիկի անվան համալսարանի գերմանական բաժինը և Պրահայի Մետրոպոլիտեն համալսարանի միջազգային հարաբերությունների բաժինը: «Չեխական հա-

սարակությանը համակերպվելը մի փոքր դժվար էր, կոնկրետ իմ դեպքում, որովհետև մեծացել եմ մի հրաշալի հայկական ընտանիքում, որտեղ ծնողներս միշտ ներարկել են այն գիտակցությունը, որ պետք է պահենք մեր հայ ազգի ավանդույթները»: Հայկական ինքնության պահպանման հարցում նրա կյանքում մեծ դեր են խաղացել ծնողները, սովորեցրել են հայկական այբուբենը, հայերեն գրել-կարդալ: «Անընդհատ սովորում եմ: Համարյա թե ամեն օր հայկական մամուլն եմ կարդում: Այդ ամենն ինձ օգնում է պահել հայկական ինքնությունը ու նաև գիտելիքներս», – ասում է Անին:

Իրավաբան **Էլեն Ահարոնյանը** 1993 թվականին ընտանիքով տեղափոխվել է Չեխիա, ավարտել է Տնտեսագիտական բարձրագույն համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիվանագիտության բաժինը, ապա՝ Կառլովյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Էլենի ջանքերով, 2015 թվականի մարտին այդ ֆակուլտետում կազմակերպվել է Հայոց ցեղասպանությանը նվիրված միջազգային զիտաժողով: «Զանի որ 11 տարեկանից եմ տեղափոխվել Չեխիա, ինտեգրման ընթացքը շատ սահուն է եղել ինձ համար: Ոչ մի բացասական փորձառություն չեմ ունեցել: Հայկական ինքնության պահպանումը տեղի է ունեցել մեծավ մասամբ ծնողներիս շնորհիվ, որոնք մեր մեջ սերմանել են հայ ազգի ու մեր ավանդույթների նկատմամբ հարգանք ու սեր, կարևորել այդ ավանդույթների պահպանման նշանակությունը: Ես մշակութային բազմազանության կողմնակից եմ և կողմ եմ, որ պետք է ինտեգրվել այնպես, որ ոչ թե մոռանաս քո ազգայինը, այլ ուսումնասիրելով այլ ազգի մշակույթը, ավելի հարստանաս՝ փորձելով շողկապել այդ երկու մշակույթները: Հայերը Չեխիայում ունեն բոլոր նպաստավոր պայմանները սովորելու, աշխատելու, հոգալու իրենց ընտանիքի առօրյա հոգսերը: Նրանք պատկանում են «օգտակար» փոքրամասնությունների թվին, և չեխերն էլ պետք է գնահատեն աշխատասեր, ընտանիքին նվիրված մարդկանց, որոնք ամրապնդում են սոցիալական կայունությունը»:

Մարտա Մեծլուսյանը սովորում է Կառլովյան համալսարանի մագիստրատուրայում՝ էթնոլոգիայի բաժնի միջազգային հարաբերությունների բաժնում: «Գրելու և կարդալու համար շնորհակալ եմ մայրիկիս: Ծնվել եմ Չեխիայում, հատուկ հարմարվելու դժվարություն չեմ ունեցել: Իհարկե, ես հայ եմ, հայ ծնողներ ունեմ, բայց Չեխիան է իմ տունը: Վերջին տարիներին բավականին մեծ աշխուժություն եմ զգում հայ համայնքում»,– ասում է Մարտան: Ապագան կապում է Չեխիայի հետ, քանի որ Հայաստանում չի ապրել:

Լուսանկարիչ Մարինա Տեր-Ղազարյանը 1993 թվականից ընտանիքով տեղափոխվել է Չեխիա, ավարտել է Կառլովյան համալսարանի միջազգային հարաբերությունների բաժինը: Պրահայի կենտրոնում բացել է պատմական զգեստներով նկարահանվելու լուսանկարչատուն: Մի քանի մեծ լուսանկարչական անհատական ցուցահանդես է ունեցել Պրահայում: «Տեղի կյանքին հարմարվելու դժվարություններ չկային, քանի որ ընտանիքով արդեն ապրել էինք Ռուսաստանում և Արգենտինայում, սովորել էի օտար միջավայրին: Չեխիան մյուսների հետ համեմատած, ամենահանգիստն էր, նաև սովորելու տեսակետից ինձ համար շատ հեշտ էր: Ինձ բվում է՝ բոլոր հայերը շատ հեշտ սովորել են, հարմարվել են և հետո շարունակել իրենց ուսումը: 10 տարի առաջ ես սկսեցի մտնել հայկական միջավայր, շփվել հայերի հետ, նույնիսկ հայկական դպրոց որոշեցի հաճախել, որ հայերեն խոսեմ: Մի տարի շարունակ հայ երիտասարդների հավաքներ էի կազմակերպում»,– ասում է Մարինան:

Դիվանագետ, Հայաստանում Չեխիայի փոխդեսպան, հյուպատոս Անի Ծախինյանը ծնվել է Երևանում, բարձրագույն կրթությունը ստացել է Չեխիայում: Միակ հայն է, որը Չեխիայում դիվանագիտության ոլորտում հասել է փոխդեսպան-հյուպատոսի դիվանագիտական աստիճանին: Հայաստանում Չեխիայի դեսպանությունում աշխատում է 2013 թվականից: «Թե՛ աշխատանքի բերումով և թե՛ միջպետական հարաբերությունների հարթակում ձգտում եմ անել հնարավորը, որ

հայ և չեխ ժողովուրդների բարեկամությունը զնայով էլ ավելի ամրապնդվի», - ասում է նա: Երեխաներին հայ պահելու խնդրի մասին ունի հետևյալ կարծիքը. «Որքան վերահսկողություն և հետևողականություն է պահանջվում, որ հայը որտեղ էլ որ լինի, հայ մնա: Ի պատիվ ծնողներին՝ երեխաներս հայերեն թե՛ գրում են, թե՛ խոսում են անսխալ: Կարևորն այն է, որ նրանք գիտակցում են, որ իրենք արմատներով հայ են և այդ մասին բարձրաձայնում են հպարտությամբ»:

Ծրագրավորող և լուսանկարիչ Միքայել Բարթիլյանն աշխատում է Պրահայի բանկերից մեկում, միաժամանակ ակտիվորեն զբաղվում է լուսանկարչությամբ: «Չեխիայում ինտեգրվել են. չեխ ընկերներ ունեն, հիմնականում աշխատանքային ընկերներն են: Միշտ էլ լավ վերաբերմունքի են արժանացել չեխերի կողմից, միշտ հետաքրքրվել են հայերով, Հայաստանով: Շատերի մոտ զարմանք է առաջացնում, որ իրենց լեզվին տիրապետում են»:

Ապագա ճարտարապետ Ռուզաննա Նավոյանը Պրահա է եկել 2013-ի սեպտեմբերին, Մոսկվայից: Ճարտարապետական բուլեջում է սովորել: Հիմնադրել է «Արմպրահա» երիտասարդական ֆեյսբուքյան խումբը: Այսօր արդեն մեծ թվով երիտասարդներ են միացել այս խմբին: Անցած տարիներին խումբը կազմակերպել է հայ երիտասարդների տոնական հավաքներ, հայկական ֆիլմերի դիտումներ: «Շատ երիտասարդներ կապեր են հաստատել, որ մինչև այդ չգիտեին նույնիսկ հայերի գոյության մասին: Երիտասարդները մինչև վերջ չգիտեն ի՞նչ է հայ լինելը, շատերը չեն հասկանում, որ մենք իրոք ունենք ինչ-որ պարտականություններ, որ չնայած զբաղվածությամբ, պետք է ամեն ինչ անենք, որ մեր ազգը պահպանենք: Ես կարծում եմ, որ բացի Հայաստանի հետ կապված հարցերից, նոր սերնդի համար պետք է ստեղծենք ինչ-որ պայմաններ, որ նրանք ավելի ակտիվ ու հայրենասեր լինեն և հետաքրքրվեն հայկական հարցերով: Ապագայի հետ կապված մեծ հույսեր կան, բայց ամեն ինչ մեզանից է կախված: Ինքս որոշել եմ այստեղ ապրել, իմ երեխաները այստեղ պետք է ապրեն: Ուստի ուզում եմ, որ նրանք այդ հպարտությունը զգան, որ հայկական

դպրոցը ոչ թե ստիպողական լինի, այլ իրենց կյանքի մի մասը դառնա», – ասում է Ռուզաննան:

**Սուրեն Վարդանյանը** ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիան: 2011-ին Երևանից եկել է Պրահա և սովորում է ամերիկյան CERGE-EI ինստիտուտում: «Ակտիվ մասնակցում եմ երիտասարդական ծրագրերին: Առաջին հերթին պետք է մի բան անենք, եթե ուզում ենք փոփոխություն լինի այստեղ կամ Հայաստանում: Խնդիրն այն է, որ մեծ մասը ցանկություն ունի անելու, բայց չեն անում, կամ վատահոբյություն չունեն, կամ իրար չեն ճանաչում: Երիտասարդության համախմբմանը կնպաստի «Արմպրահան»:

2018-ին երիտասարդների մի մասը համախմբվեց և ստեղծեց Չեխիայի Հայ երիտասարդների միությունը:

**Գեղեցիկ Աֆունցը** ավարտել է Երևանի պետհամալսարանի բակալավրիատը, 2014-ից ուսանել Կառլովյան համալսարանի տնտեսագիտության բաժնի դոկտորանտուրայում: «Հիմնական խնդիրը երիտասարդների տեղեկացվածությունն է: Շատերը չգիտեն Հայաստանի պատմություն, հայրենասիրական երգեր, այդ ամենը պետք է իմանան, որ հասկանան՝ ի՞նչ են ուզում և ինչի՞ համար են ուզում պայքարել: Չգում ես, որ հայրենասիրական երգեր կատարելիս երիտասարդների աչքերում կայծեր են երևում, զգում ես, որ այդ ներուժը կա: Պետք է շատ աշխատել այդ ուղղությամբ»:

**Արգիշտ և Արզամ Ալավերդյան** եղբայրները 2001-ին իրենց տարիքային խմբում դարձել են շախմատի Չեխիայի չեմպիոններ: Նրանց հայրը՝ նկարիչ-վերականգնող **Տիգրան Ալավերդյանը**, 1993 թ. ընտանիքով տեղափոխվել է Չեխիա՝ Մորավիայի փախստականների ճամբար: Արգիշտը (ծն. 1991, Չարենցավան) ավարտել է Կռալուպի-նադ-Վլտավոյի դպրոցը, ապա՝ Վացլավ Հավելի անվան արվեստի միջնակարգ դպրոցը: 2011-ին ընդունվել է Պրահայի գեղարվեստի ակադեմիա: Ունի իր կայքէջը՝ [www.Alavcrdyan.cz](http://www.Alavcrdyan.cz): Իսկ **Արզամ Ալավերդյանը** (ծն. 1992, Չարենցավան) ավարտել է Կռալուպի-նադ-Վլտավոյի գիմնազիան: Ուսանել է Կառլովյան համալսարանի կենսաբանության

Ֆակուլտետում: «Մեր հայերենը միայն խոսակցական է, որովհետև տանն ենք միայն օգտագործել: Ես իմ հայությունը Չեխիայում երկու տարբեր մշակույթների մեջ եմ տեսնում: Արևմուտքի և Արևելքի մտածումներն իմ մեջ եմ համեմատում, թե ինչն է ճիշտ ու սխալ իմ էության մեջ, ուստի այդ երկու մշակույթների կրող եմ, բայց ինձ միշտ հայ եմ համարում»,– ասում է Արզամը: Արզիշտի կարծիքով հայկական ինքնության պահպանումը դժվար հարց է. «Հավատում եմ, որ ելք նկարում եմ, իմ նկարների մեջ արտահայտվում է նաև իմ հայությունը: Հայկական մանրանկարչությունն եմ շատ սիրում: Համայնքի մեջ չեմ մտնում: Ուզում եմ չեխերի նման մտածել, ուզում եմ ինտեգրվել, չեմ ուզում միայն հայերի հետ շփվել ու հայկական թեմաներով խոսել: Չեմ ուզում փակվել համայնքի մեջ: Երբ հարցնում են, թե իմ տունը որտեղ է, ասում եմ՝ Հայաստանում: Բայց ամբողջ կյանքս Չեխիայում եմ ապրել, չեմ կարող առանց Չեխիայի: Ես իբրև նկարիչ ինձ այստեղ ավելի ազատ եմ զգում, քան Հայաստանում»:

2014 թվականից Պրահայում «Անդերգրաունդ քոմեդի» ակումբի ներկայացումներին է մասնակցում դերասան Տիգրան Հովակիմյանը (ծն. 1989, Դիլիջան): 1996-ին ընտանիքով տեղափոխվել է Չեխիա: Մայրը հրուշակեղենի հայտնի ձևավորող Արփիհնե Նազարյանն է: Թատերական ներկայացումներին զուգահեռ, նաև աշխատում է ավտոդպրոցում իբրև ուսուցիչ: Նրա ասելով. «Առաջին կես տարին Չեխիայում շատ բարդ էր: Լեզուն արագ սովորեցի, շատ լավ հասկանում եմ չեխական մտածելակերպը: Հայերեն խոսելիս այլ կերպ եմ պահում ինձ, չեխերեն՝ այլ: Համոզված եմ, որ հայությունս չի կորչի: Ծնողներս միշտ ստիպել են ինձ ու քրոջս հայերեն խոսել: Լավ կլինի, որ երիտասարդների շատ հանդիպումներ լինեն: Այստեղ կան հայ մտավորականներ և գործարարներ, որոնց դժվար է մի հարթակի վրա բերել: Բայց պետք է այդ խմբերին միավորել և սովորել նրանցից»:

Երիտասարդության ապագայի մասին գործարար Ալեքսանդր Սարգսյանի կարծիքով. «Երբ նայում եմ այսօրվա երիտասարդներին, Արմալոսիա կազմակերպությանը, տեսնում նրանց նվիրվածությունը.

մտահոգությունը մեր երկրի ու հայկական հարցերի նկատմամբ, մեծ հույսեր են կապում: Համոզված են, որ հայերն այստեղ պետք է ավելի համախմբվեն: Պետք է լավ հիմք դնենք այսօր, որ այդ երիտասարդները շարունակեն: Ցավալի է, որ ոչ բոլոր հայերն են դրան ձգտում: Կան մեծ պոտենցիալ ունեցող հայեր, բայց բացարձակապես չեն ուզում շարժվել այդ ուղղությամբ: Այսօր զարգանում է հայ համայնքը, նաև հայերի ձեռնարկատիրական գործունեությունը, բայց համայնքն այսօր գոմար չունի, հետագայում երևի պետք է ստեղծել հիմնադրամ և դրա շուրջը համախմբվեր»:

«Չեխիայի համայնքի հույսը երկրորդ սերունդն է: Նրանք պետք է ամենալավ ուսումը ստանան: Նոր սերունդը Եվրոպայում պետք է ուժեղանա և աջակցի Հայաստանին և Հայ Դատին: Բաղաբականության դպրոցի մեջ թույլ ենք, մանավանդ Եվրոպայում: Մենք պետք է հուշենք մեր երեխաներին ստրատեգիական գործերի մեջ մտնել»,- ասում է նկարիչ-գրաֆիկ Բաֆֆի Չեչճենյանը:

Չեխիայում հայերի ապագայի հարցում կինոբեմադրիչ Անդրան Աբրահամյանի կարծիքը հետևյալն է. «Ոչ որ չգիտի ի՞նչ ապագա կունենան: Ինձ թվում է, մի քանի տարբեր սցենար կարող է լինել: Այստեղ ապրողների երեխաները կծուվեն չեխերին, կամուսնանան. բայց իրենց երեխաներին հայկական անուններ կտան: Ինչպես հրեաների մի մասն այստեղ ծուլվեց և միայն ազգանունով ենք գլխի ընկնում, որ հրեա են: Միզուցե այլ երկրներ կտեղափոխվեն: Չի բացառվում նաև վերադառնան Հայաստան: Բայց դա ընդամենը ենթադրություն է»:

Ամփոփելով կարելի է ասել, որ Չեխիայի հայ համայնքը մեծ պոտենցիալ ունի: Ինքնակազմակերպման ընթացքն արդեն հասունացել է: Դրա համար անհրաժեշտ է համայնքային կենտրոն, որտեղ մարդիկ կարողանան հավաքվել և քննարկել իրենց հուզող խնդիրները: Իսկ դրանք հիմնականում կապված են տեխնիկական ու ֆինանսական խնդիրների հետ

Չեխիայի հայ համայնքը չունի ազգային փոքրամասնության կարգավիճակ, ինչպես, ասենք, ռումինահայ կամ հունգարահայ համայնքները, քանի որ Չեխոսլովակիայի հանրապետության օրոք այստեղ գրանցված բնիկ ազգային փոքրամասնություններն են միայն ստացել նման կարգավիճակ (բուլղարները, գնչուները, ռուսները, ուկրաինացիները, լեհերը և այլք): Թեև կա եկեղեցի, որը թույլ է տալիս ազգային-եկեղեցական համայնք ստեղծել, բայց չեխահայության համայնքային կյանքի կազմակերպման լավագույն տարբերակը կլինի բոլոր կազմակերպությունները համադրող կենտրոնի ստեղծումը, որը ժողովրդավարական հիմունքներով կիրականացնի համայնքային կյանքի ղեկավարումը: Արդեն իսկ չեխահայության իբրև համայնք, կազմավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել եկեղեցին, դպրոցը և «Օրեր» ամսագիրը, իսկ վերջին տարիներին՝ նաև դեսպանությունը: Ընդհանրապես, թե իր մտավոր, և թե՛ երիտասարդ ուժերով, Չեխիայի հայ համայնքը Կենտրոնական Եվրոպայի մեծ պոտենցիալ ունեցող համայնքներից մեկն է:

Համայնքի կայացման հարցում մեծ նշանակություն ունի նաև հայ-չեխական հարաբերությունների զարգացումը, որն ուղղակի խթան կարող է լինել մշակութային և տնտեսական ծրագրերի համար:

Երիտասարդությունն իր սպազան տեսնում է հիմնականում Չեխիայում: Նրանք, ովքեր ծնվել են Չեխիայում, լիովին ինտեգրված են այդ հասարակությանը, իրենց զգում են այդ երկրի լիարժեք քաղաքացիներ ու նաև հակված են պահպանելու իրենց հայկական ինքնությունը: Նրանց հետ շփումները ցույց են տալիս, որ հայոց լեզուն և հայկական մշակույթը պահպանել են ոչ միայն դպրոցի, այլ հատկապես ծնողների ջանքերի շնորհիվ, այսինքն՝ հայ ընտանիքն է հայության պահպանության հիմնական սյունը: Հետևաբար, թե ինչպիսիսի կլինի նոր սերնդի ապագան, կախված է նաև ծնողներից:

## ՀԱՅԵՐԸ ՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ

Սլովակիայում նույնպես երբեք ավանդական հայկական համայնք չի եղել: Մինչև անկախության հռչակումը 1992 թ. դեկտեմբերի 31-ին, հայերի թիվը չի անցել 100-ից: Սակայն հնարավոր է, որ հայերը Սլովակիայում հաստատվել են դեռևս 16-րդ դարի կեսին, երբ երկրի մեծ մասը գավթել էր Օսմանյան կայսրությունը, մնացած մասն անցել էր Ավստրիային, իսկ ավստրո-թուրքական պատերազմից հետո Ավստրիային էր միացվել նաև Հարավային Սլովակիան: Ըստ «Հայ Սփյուռք» հանրագիտարանի՝ Սլովակիայում առաջին հայ ընտանիքները հաստատվել են 17-րդ դարի կեսին: Նրանք եղել են Մոլդովայից կամ այն տարիներին՝ Բեսարաբիայից տեղափոխված մանր առևտրականներ<sup>389</sup>: Ինչպես նշվեց, 1936 թվականին Չեխոսլովակիայի հայ բնակիչներից ոմանք բնակվել են նաև Բրատիսլավայում<sup>390</sup>: Ինչպես կերևա հետագա շարադրանքում, որոշ սլովակներ (Կոշիցեի արքեպիսկոպոս Գեորգին, երգիչ Տոմաշ Պալոնդերը) տեղյակ են իրենց տոհմաձառերում հայ նախատատերի մասին:

Սլովակահայ **Խոսրով Հայրունյանի** վկայությամբ, հին հայեր եղել են 1945 թվականի պատերազմից հետո, որոնց թիվը հասել է 40-ի, բայց 20-րդ դարի վերջին նրանք այլևս չկային: Նրանց թվում էր նաև հնչյունային ռեժիսոր **Գրիգոր Մակարյանը** (մահ. 2005), որն աշխատել է Սլովակիայի հանրային հեռուստատեսությունում<sup>391</sup>:

<sup>389</sup> Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 535:

<sup>390</sup> Տե՛ս **Sopp. Ն. Մ.**, Փրակայի հայ ուսանողները....

<sup>391</sup> Մույն գրքի հեղինակներից Արծվի Բախչինյանը, 1999 թ. հուլիսին Բրատիսլավայում հեռախոսազույց է ունեցել Մակարյանի հետ: Վերջինս խոսում էր ռուսերեն, ասաց, որ սլովակ մոր դաստիարակության պատճառով չի տիրապետում հայերենին, սակայն իրեն միշտ հայ է համարում:

1990-ականին Հայաստանից և ԽՍՀՄ նախկին հանրապետություններից Սլովակիա է գաղթել շուրջ 400 հայ: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ այսօր Սլովակիայում բնակվում է 700-1000 հայ: Նրանք հիմնականում բնակվում են մայրաքաղաք Բրատիսլավայում, ինչպես նաև Կոշիցեում, Պրիևիժայում, Տրեբիշովում, Ժիլինայում, Զվոլենում, Սլադկովիչովոյում, Մարտինում, Բանսկա Բիստրիցայում և այլ քաղաքներում՝ հիմնականում զբաղվելով առևտրով ու արհեստներով, իսկ նոր սերունդը՝ նաև տեխնիկական գիտություններով:

Դասական իմաստով հայկական համայնք այդպես էլ չի ձևավորվել: 1999-ից արդեն կազմակերպչական աշխատանքներ են կատարվել, իսկ 2002-ին գրանցվել է հասարակական կազմակերպություն՝ «Սլովակիայի հայ համայնք» անվանումով: Այն ղեկավարել է «Արմես» ընկերության նախագահ, գործարար Աշոտ Գրիգորյանը: Սկզբնական շրջանում նրա ջանքերով Բրատիսլավայում կազմակերպվել են նաև մշակութային միջոցառումներ, տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների այցեր, հայ-սլովակյան գործարար համաժողովներ, հատկապես խթանել են Սլովակիայի և Հայաստանի միջև իրավական և տնտեսական կապերի զարգացումը: «Նորավանք» կայքէջին տված հարցազրույցում, Աշոտ Գրիգորյանը մասնավորապես նշել է. «Կազմակերպվել են նաև հայկական կոնյակի համտեսումներ, համատեղ մոդա-շոու և այլ միջոցառումներ: Մեզ համար, օրինակ, պատմական օր էր, երբ 1995 թ. առաջին անգամ Սլովակիայի նախագահին իր տիկնոջ հետ այցելեց մեր միջոցառմանը: Համայնքը մի քանի հիմնական նպատակ է հետապնդել՝ Սլովակիայում ներկայացնել հայ մշակույթը, նպաստել հայ-սլովակյան տնտեսական, քաղաքական հարաբերությունների զարգացմանը և հասնել Յեղասպանության ճանաչմանը: Հատուկ միջոցառումներ ենք կազմակերպել Յեղասպանության զոհերի հիշատակը նշելու համար»: 2000 թ. «Օրերին» տված հարցազրույցում Գրիգորյանն անել է. «Հայ համայնքն այստեղ փոքրաթիվ է և

կազմավորված: Մակայն սա այն դեպքն է, երբ ասում են՝ «քիչ է, բայց փրակով»: Նկատի ունեն, որ թեև համայնքը սակավաթիվ է, բայց կան «այտնի գործարարներ, մշակույթի գործիչներ, լավ արհեստավորներ, յոնք իրենց ազնիվ, քրտնաջան աշխատանքի շնորհիվ արժանացել են տեղացիների հարգանքին»: Կարելի է ասել, որ 21 տարի անց էլ մեծ փոփոխություն չի եղել:

Ըստ Չելսիայում և Սլովակիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Տիգրան Սեյրանյանի՝ հայերը մեծ մասամբ ապրում են Սլովակիայի արևմտյան մասում, Բրատիսլավայում, իսկ մոտ 100-ը՝ արևելքում: «Բրատիսլավայում 2005 թվականին խաչքար տեղադրվեց «Նիզ-Ապարան» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ և Աշոտ Գրիգորյանի կազմակերպչական ջանքերով: Հայերը բավականին ինտեգրված են: Կան պետական ոլորտում աշխատող անձինք՝ գործարարներ, մշակույթի, արվեստի գործիչներ, շինարարներ: Համայնքը համախմբված չէ, դպրոց չկա: Մեր կողմից փորձ արվեց կիրակնօրյա դպրոց բացել, սակայն համայնքի կողմից ցանկության բացակայության պայմաններում այն չիրականացավ: Թեև համայնքը փոքր է, բայց սպազայում երևի հայտության դիրքերը կամրապնդվեն»:

### Սլովակիան և Հայոց ցեղասպանությունը

2004 թ. նոյեմբերի 30-ին Սլովակիայի Ազգային խորհուրդն ընդունել է Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևը: Ի նշան այդ փաստի՝ 2005 թ. Բրատիսլավայի կենտրոնում տեղադրվել է հայկական խաչքար-կոթող, որի վրա գրված է. «Ի հիշատակ 1915 թվականի հայերի Յեղասպանության 1 500 000 զոհերի»: Ազգային խորհրդի բանաձևի տեքստում գրված է. «Սլովակիայի Հանրապետության Ազգային խորհուրդը (ԱԽ) հաստատում է 1915 թ. հայերի ցեղասպանությունը, որի արդյունքում կոտորվել են Օսմանյան կայսրությունում ապրող հարյուր հազարավոր հայեր և

այդ փաստը համարում է համայն մարդկության դեմ ուղղված ոճիլ»: Այս բանաձևը ներկայացվել էր Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության անդամ Ֆրանաիշեկ Միկլոշկոյի կողմից, իսկ կուսակցության նախագահին այդ պահին Ազգային ժողովի նախագահ Պավոլ Հրուշովսկին էր, որը 2015-ին Երևանում մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի պաշտոնական միջոցառումներին:

«Այսպես, մինչև 2004 թ. մենք զբաղվել ենք Յեղասպանության ճանաչման, հետո՝ Յեղասպանության բանաձևի հետևանքների հարցով», – ասում է Աշոտ Գրիգորյանը: Նա 2008 թվականից զլխավորել է նաև Եվրոպահայ միությունների ֆորումը, անցկացրել հանդիպումներ, հրապարակել մամուլի հաղորդագրություններ, որոշակի աշխատանք կատարել լոբբիստական ոլորտում:

«2004-ին Հայոց ցեղասպանության ճանաչումը Ազգային խորհրդի կողմից, ինչպես նաև 2009-ի սեպտեմբերին և 2011-ին Սլովակիայի Ազգային խորհրդի ընդունած նոր հողվածները՝ քրեական օրենսգրքում ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող հոդվածների հավելումը, բարենապաստ մթնոլորտ են ստեղծում վեր հարաբերությունների համար», – ասում է Սլովակիայում ՀՀ դեսպան Տիգրան Սեյրանյանը: Ըստ դեսպանի՝ հատկանշական է, որ 2015-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, ձեռնարկներ եղան նաև Սլովակիայում՝ երկրի մշակույթի նախարարության աջակցությամբ: Երկու ցուցահանդեսներից մեկը տեղի ունեցավ Բրատիսլավայում՝ մշակույթի նախարարության շենքում, իսկ մյուսը՝ Բանակա Բիստրիցա քաղաքի Սլովակիայի Ազգային ապստամբության բանգարանում: 2015-ի ապրիլի 23-ին Բրատիսլավայի քաղաքապետարանում տեղի ունեցավ մշակութային-քաղաքական մեծ ձեռնարկ՝ ներկայացվեցին լրագրող Վախրամ Շուդուրյանի «Հարյուր տարվա լուսություն» պովակերեն մենագրությունը, ինչպես նաև հայկական երգ ու երաժշտություն: Այս գրքում առաջին անգամ

սլովակերենով ամփոփվել է Հայոց ցեղասպանության պատմությունը, ներառված են նաև բացառիկ պատմական լուսանկարներ: Չեռնարկին ներկա էին շուրջ 200 հոգի, այդ թվում՝ Սլովակիայի բարձրաստիճան պաշտոնյաներ, մշակույթի ու կրթության, հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ: Ելույթներ ունեցան մարդիկ, ովքեր ժամանակին նպաստել են Ցեղասպանության բանաձևի ընդունմանը՝ նախաձեռնող պատգամավոր Միկլոշկոն, նախկին գլխավոր դատախազ և արդարադատության նախկին նախարար Հարաբինը և այլք:

### **Միջպետական հարաբերությունները**

Հայաստանի և Սլովակիայի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1993 թվականին: Ժամանակ առ ժամանակ Սլովակիայում Հայաստանը ներկայացնում են Վիեննայում և Պրահայում հավատարմագրված դեսպանները: Մինչև 2013 թվականը Սլովակիայում Հայաստանը ներկայացնում էր Վիեննայում Հայաստանի դեսպանությունը: 2013-ի մարտից մինչև 2018-ի դեկտեմբերը Չեխիայում Հայաստանի դեսպանը հավատարմագրված էր նաև Սլովակիայում:

Ըստ Չեխիայում և Սլովակիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Տիգրան Սեյրանյանի՝ *«Չեխոսլովակիայի խաղաղ ապահարգանից հետո ունեցել ենք դիմամիկ զարգացող հարաբերություններ: 2013 թվականի մարտի 20-ից հավատարմագրերը հանձնեցի Սլովակիայի նախագահ Իվան Գաշպարովիչին և այժմ մեր սլովակ գործընկերների հետ Պրահայից ենք աշխատում: Իհարկե, քանի որ Բրատիսլավայում չկա դեսպանություն, հարաբերություններն այդքան ինտենսիվ չեն, որքան Չեխիայում: Բայց աշխատում են ամիսը մեկ անգամ լինել Սլովակիայում, հանդիպումներ ունենալ, մեր տեսակետները ներկայացնել արցախյան կարգավորման վերաբերյալ, ինչպես նաև*

երկկողմ հարաբերությունների առումով: Հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակում, կա կատարյալ փոխըմբռնում, շատ հարցերում մենք համագործակցում ենք նաև միջազգային կազմակերպություններում: Սլովակիան հավասարակշռված մոտեցում է ցույց տալիս արցախյան խնդրի առնչությամբ: Սլովակները բազմիցս արտահայտվել են ԵԱՀԿ հովանու ներքո կոնֆլիկտի խաղաղ կարգավորման օգտին»:

Դեռևս Հայաստանի դեսպանի հավատարմագրերի հանձնման ժամանակ Սլովակիայի նախագահն ընդգծել էր, որ Սլովակիան հետաքրքրված է հիդրոէլեկտրաէներգիայի, միջուկային էներգետիկայի և ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նախագծերով:

Հայաստանում Սլովակիայի պատվավոր հյուպատոս է գործարար Գագիկ Մարտիրոսյանը, այժմ (2020)՝ Բագրատ Հակոբյանը:

### Հայերը և եկեղեցին

Բարսեղ վարդապետ Փիլավչյանը Սլովակիայում հոգևոր ծառայության է անցել 2005-ին, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգադրությամբ գործուղվել է Հունգարիայի, Սլովակիայի և Չեխիայի հայկական համայնքներ: 2001-ից Հունգարիայի հոգևոր հովիվն է, իսկ 2005 թվականից՝ նաև Չեխիայի և Սլովակիայի (նստավայրը՝ Պրահա): Նրա պատմելով, «Թեև 2005-ին ստանձնեցի Սլովակիայի հայ համայնքի հովվությունը, սակայն երկար ժամանակ հնարավորություն չկար պատարագ մատուցելու, քանի որ եկեղեցի չունեինք: Համայնքից տեղեկություն չունեինք, հետազայում ճանաչեցի պարոն Աշոտ Գրիգորյանին, որի հետ համագործակցության արդյունքում 2013-ից Բրատիսլավայում ունեցանք Սուրբ Կատարինա եկեղեցին (Միխայլևա փողոց): Արդեն հինգ տարի է՝ երկու ամիսը մեկ անգամ ժամերգություններ ենք անցկացնում, որոնց 20-30 հոգի է գալիս: Ժամանակի ընթացքում, հուսամ, այդ թիվը մեծանա: Եկեղեցին, ի տարբերություն Չեխիայի,

*չենք կարող գրանցել, քանի որ գրանցման դիմում ներկայացնելիս, ըստ օրենքի, 20 հազար հոգու անդամակցություն է պետք»:*

Բրատիսլավայի հնագույն կաթոլիկ եկեղեցիներից մեկը՝ Սուրբ Կատարինան, հիմնադրվել է 14-րդ դարի սկզբին: 2013 թ. հունվարի 30-ին Սլովակիայի կաթոլիկ եկեղեցու ղեկավարությունը, նորին սրբություն Ջվոլենսկու գլխավորությամբ, «Սլովակիայի հայ համայնք» հասարակական կազմակերպության նախագահ Աշոտ Գրիգորյանի հետ ստորագրել է պայմանագիր և որպես սեփականություն փոխանցել՝ այն հայկական ծեսով օծելու ու 99 տարի ժամկետով օգտագործելու նպատակով, հետագայում նաև՝ երկարացնելու հնարավորությամբ: Աշոտ Գրիգորյանը պարտավորվել է հոգալ եկեղեցու ծախսերը, ակտիվորեն կազմակերպել բազմաբնույթ հոգևոր միջոցառումներ, այդ թվում նաև՝ էկումենիկ պատարագներ: Անդրադառնալով հայ համայնքին՝ հայր Բարսեղը նշում է, որ փոքրիկ համայնքներն ունեն հաղորդակցության խնդիրներ: *«Փոքրիկ համայնքները շուտ են ծուլվում, խնդիրներ ունեն, և շուտ են ուժացվում: Եթե մտերիմ լինեն, հայկականության շուրջ միավորվելն ավելի արագ կլինի: Այստեղ երիտասարդներ կան, որոնք համալսարաններում հաջողությամբ սովորում են: Միություններ չկան, որ նրանց միավորեն, իսկ անհատների շուրջը դժվար են միավորվում: Անճանական խնդիրները պետք է թողնեն և միավորվեն մեկ դրոշի տակ: Այլ տարբերակ չկա»:*

### **Համայնքային դեմքերը**

Արդեն մի քանի անգամ հիշատակված գործարար Աշոտ Գրիգորյանը, որն անկախության տարիներին ակտիվորեն մասնակցել է հայ համայնքի համախմբմանը, տարիներ շարունակ կազմակերպել է մշակութային միջոցառումներ, գործարար համաժողովներ, նաև Եվրոպահայ միությունների ֆորումի հովանու

ներքո: Նրա կինը՝ դաշնակահարուհի Համիկ Գաբրիելյանը, նույնպես հանդես է եկել համերգային ծրագրերով ու ելույթներով: Նրանց դուստրը՝ **Տաթևիկ Գրիգորյանը**, իրավաբանություն է ուսանել Լոնդոնում և այժմ աշխատում է Լոնդոնի իրավաբանական գրասենյակներից մեկում: Նա հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակել է «Մշակութային ցեղասպանությունը» հետազոտությունը՝ նվիրված Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հայկական մշակութային արժեքների ոչնչացմանը, որը 2008-ին պաշտպանել է իբրև գիտական ատենախոսություն:

**Արթուր Գևորգյանը** նոր տեխնոլոգիաներով աշխատող մետաղափուշու արտադրության «Գևորգյան» ընկերության հիմնադիր տնօրենն է: Սլովակիայում է 1996 թվականից: Ուսանել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում և Խարկովի ռազմական ուսումնարանում, ստացել ռազմական ճարտարագետի կրթություն: 1988-ին վերադարձել է Երևան, ցանկացել է արտադրություն հիմնել, սակայն Խորհրդային Միության փլուզման և շրջափակման պայմաններում Հայաստանում ոչինչ չի կարողացել անել, վերադարձել է Ուկրաինա, որտեղ հիմնել է մետաղների մշակման փոքրիկ արտադրություն: Ժամանակի ընթացքում այնտեղ էլ՝ զարգանալու հնարավորությունները սահմանափակվել են, ուստի տեղափոխվել է Սլովակիա: Այստեղ նախ հիմնել է փոքրիկ արտադրություն, որը ժամանակի ընթացքում ընդլայնվել է: Այժմ Բանսկա Բիստրիցա քաղաքից 7 կմ հեռավորության վրա գործում է «Գևորգյան» ընկերությունը՝ Վլկանովա բիզնես ավանում: Հայ գործարարը կարողացել է գրոյից ստեղծել եվրոպական բարձր մակարդակի գործարան, որը ճանաչվել է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ լավագույն արտադրությունը Եվրոպայում: Արթուր Գևորգյանը «Էռնստ Էնդ Յանգ» ընկերության կողմից երկու անգամ՝ 2011-ին և 2012-ին, ճանաչվել է Սլովակիայի «Տարվա լավագույն գործարար»՝ մասնակցելով նաև Մոնակոյում կայացած Եվրոպայի

լավագույն գործարարների հավաքին: 2011-ին ստացել է նաև «Fachmetall QM» կազմակերպության Բարձր որակի մրցանակը, 2012-ին՝ «Սլովակիայի բիզնեսի ադամանդ» մրցանակը: 2015-ին ճանաչվել է որպես «աշխատատեղ ապահովող լավագույն ընկերություն», դարձել «Register of Solvent Companies» ընկերության անդամ, իսկ նրա ընկերությունը «Fraunhofer» ինստիտուտի կողմից ճանաչվել է Տարվա գործարան՝ լավագույն նորարարությունների համար: Արթուր Գևորգյանի կինը ռուս է, զավակները ծնվել են Ուկրաինայում: Որդին՝ **Ռոբերտ Գևորգյանը**, աշխատում է իր ընկերությունում, իսկ դուստրն ռուսանում է Ֆրանսիայում: Չավակները հայերեն մի քանի բառ գիտեն, ավելի խոսում են ռուսերեն և սլովակերեն: *«Հայերի նկատմամբ վերաբերմունքն այստեղ շատ ջերմ է, հայերը լավ ապագա ունեն այստեղ: Այն սլովակները, որոնք երբևէ չփում են ունեցել հայերի հետ, շատ ջերմ են արտահայտվում: Իսկ նրանք, ովքեր չգիտեն հայերին, փոխարենը պատմում են «Ռադիո Երևանի» անեկդոտները»*, – պատմում է Արթուր Գևորգյանը:

Գործարար **Ժորա ճապուրյանը** բնակվում է Սլովակիայի երկրորդ մեծ քաղաք Կոշիցեում: 1980-ականներին Երևանից մեկնել է Ռուսաստան, իսկ 1990-ին տեղափոխվել Սլովակիա: Կոշիցեում բացել է «Դավիթ» բիզնես կենտրոնը, որտեղ նաև վարձով տարածքներ է տրամադրում: Կենտրոնի տարածքում գործում է գինու գործարան և 70 այլ ֆիրմաներ: Հայ գործարարի ջանքերով կառուցվել են նաև «Դավիթ» հյուրանոցն ու «Գլադիատոր» ռեստորանը: 2012-ի հունվարին կառուցել է Սուրբ Սարգիս մատուռը: *«Կոշիցեում հայերը խնդիրներ չունեն, լավ ենք զգում: Ով աշխատանք ունի, նորմալ ապրում է: Սլովակները մեզ հետ շատ մոտ են, լավ հարաբերություններ ունենք քաղաքի ղեկավարության հետ: Ամեն տարի կազմակերպում ենք հավաք: Հայերեն խոսում ենք երեխաների հետ: Որդիս՝ Դավիթը, հայերեն հասկանում է, բայց լավ չի խոսում: Ամեն տարի Հայաստան են տանում, որ կապը հայրենիքի հետ չկտրվի, հայերենը կատարելագործի»*:

Կոշիցեում ապրում է մոտ 100 հայ՝ 30 ընտանիք, որոնք աշխատում են տարբեր ոլորտներում, ունեն վարսավիրանոց, կահույքի սրահ, ավտոդպրոց, հացթուխ են, խոհարար և այլն: Այստեղ գործող ասեղնաբուծության կենտրոնը ղեկավարում են **Արթուր Շալջյանը** և իր կինը՝ **Թամարա Ճուղոյանը**: Նախկինում կենտրոնը ղեկավարում էր Թամարայի մայրը՝ **Լիլյա Մանասյանը**, որն այժմ մնան կենտրոն է բացել Բրատիսլավայում:

2016-ի հունվարի 31-ին Կոշիցեի Սուրբ Յան Միլոստիվիի ուղղափառ տաճարում տեղի է ունեցել պատարագ, որը մատուցել են Չեխիայի և Սլովակիայի ուղղափառ եկեղեցու միտրոպոլիտ Ռաստիսլավը, Միխալովցեի և Կոշիցեի արքեպիսկոպոս Յուրայ Ստրանսկին: Պատարագին հետևել է եկեղեցու բակում տեղադրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարի (հեղինակ՝ Արտակ Համբարձումյան) օծման կարգը: Խաչքարի տեղադրմանն աջակցել է Սանկտ-Պետերբուրգից բարերար Հրաչյա Պողոսյանը: Խաչքարի տեղադրման գաղափարը ծագել է 2015-ի ապրիլին Երևանում՝ ԵՊՀ աստվածաբանական ֆակուլտետի դեկան Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի ու Միխայելովիցեի և Կոշիցեի արքեպիսկոպոս Գեորգիի (Յուրայի) հանդիպման ժամանակ: Ի դեպ, պարզվել է, որ հայր Գեորգիի մոր տատը հայուհի է եղել:

### **Հայերը սլովակյան մշակույթում**

Սլովակիայի ամենահայտնի մշակութային հայ գործիչներից է տենոր **Գուրգեն Հովսեփյանը** (ծն. 1955, Միսիան): Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական ուսումնարանն ավարտելուց հետո նա ուսանել է Մոսկվայում Գնեսինների անվան երաժշտական մանկավարժական ինստիտուտում, որն ավարտելուց հետո վեց տարի աշխատել է Մարատովի օպերային թատրոնում, հյուրախաղերով հանդես եկել Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում: 1991

թ. առաջին անգամ եկել է Սլովակիա՝ մասնակցելու Բանակա Բիստրիցայի պետական թատրոնի փառատոնին: Դոնիցետիի «Լա Ֆավորիտա» ներկայացմանը գլխավոր՝ Ֆեռնանդոյի դերերգը կատարելուց հետո, հաջորդ ներկայացումներին երգելու հրավեր է ստացել: 1993-ից սկսյալ 10 տարի շարունակ նաև Պրահայի ազգային թատրոնում երգել է Վերդիի փառատոների ժամանակ: Գուրգեն Հովսեփյանը օպերային թատրոնում դասավանդում է ձայնի վարպետություն, աշխատում է նաև իբրև ներկայացումների խորհրդատու, իսկ կոնսերվատորիայում դասավանդում է օպերային վոկալ:

Գուրգեն Հովսեփյանի ավագ որդին՝ **Ալեքսեյը**, Մոսկվայում նորածնության նկարիչ է, կրտսերը՝ **Վիլյամը**, Բրատիսլավայում ավարտել է միջազգային հարաբերությունների համալսարանը, աշխատում է Ռուսաստանի և Ղազախստանի հետ համատեղ ծրագրերով:

Հովսեփյանի աշակերտներից շատերն այսօր երգում են եվրոպական տարբեր օպերաների բեմերում: Պրոֆեսիոնալ երգիչները են գալիս իր մոտ խորհրդատվության: *«Մեր բոլոր համերգներին իմ սլովակ ուսանողները որևէ հայկական երգ են կատարում: Ամռանը վարպետության դասերի ժամանակ սովորեցրի, և հունգարացի ուսանողներիցս մեկը մաքուր հայերենով երգեց: Ռոման Կոչկոյի գլխավորությամբ երեք ուսանողներ 2012-ին Կոչիցեում ստեղծեցին «Հովսեփյանովցի» դասական վոկալ անսամբլը: Այս խումբը, որի կազմում են հունգար և սլովակ երիտասարդներ, բազմաթիվ համերգներ է ունեցել»*,– պատմում է երգիչը:

Գեղանկարիչ **Վարուժան Աղամյանը** (ծն. 1957, Երևան) բնակվում է Կոչիցեում: Ավարտել է Երևանի մանկավարժական համալսարանի նկարչա-գծագրական բաժինը, ուսանել Ղուկաս Չուբարյանի, Հովհաննես Չարդարյանի և Լևոն Կոջոյանի մոտ: 1988–1990 թթ. ապրել է Չեխիայի Օստրավա քաղաքում, այնուհետև Մոսկվա

մեկնելու ճանապարհին, երբ գնացքը կանգնել է սլովակյան Կոշիցե քաղաքում, որոշել է մնալ այնտեղ: 1993–1999 թթ. աշխատել է Լեհաստանում: Բազմաթիվ ցուցահանդեսների է մասնակցել Կոշիցեում, Բրատիսլավայում, Պրահայում, Ութրեխտում (Նիդեռլանդներ): Աշխատել է Կոշիցեի մենեջերական դպրոցում իբրև դիզայներ: Այժմ ազատ նկարիչ է: 1985-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է, 1989-ից ՅՈՒՆԵՍԿՕ-ի արվեստագետների միության անդամ, ակադեմիական նկարիչ:

Հայաստանի վաստակավոր արտիստ, Սպենդիարյանի օպերային և բալետի թատրոնի երբեմնի գլխավոր բալետմայստեր, պարուսույց-մանկավարժ Ռաֆայել Ավնիկյանը (ծն. 1952, Թբիլիսի) և նրա կինը՝ պարուսույց-մանկավարժ Կարինե Ալավերդյանը 1991 թվականից ապրում և աշխատում են Սլովակիայում: Ժամանակին համարվել են Սլովակիայի բալետի ամենաազդեցիկ ու հեղինակավոր զույգը: «Մենք Սլովակիայում հայտնվել ենք աշխատանքի հրավերով: Բալետային շատ ներկայացումներ բեմադրեցինք՝ «Կարապի լիճ», «Իզուր զգուշավորություն», «Դոն Կիխոտ», «Պախիտա», «Ժիգեր», «Բայադերա» և ոչ միայն Սլովակիայում, այլև Չեխիայում, Սլովենիայում, Իտալիայում, Շվեյցարիայում»: 1991-ին Ավնիկյանը ստանձնել է գլխավոր բալետմայստերի պաշտոնը, իսկ 1995 թ. դարձել ավագ պարուսույց: Դասավանդել է նաև Սլովակիայի ժողովրդական գեղարվեստական համույթում, համագործակցել Բրատիսլավայի պարի թատրոնի հետ: 2015 թվականի սեպտեմբերից Ռաֆայել Ավնիկյանը դասավանդում է նաև Վիեննայի պետական օպերայի բալետի ակադեմիայում: Կարինե Ալավերդյանը դասավանդել է խորեոգրաֆիկ ուսումնառանում, նրա ուսանողները Եվրոպայի առաջնակարգ բեմերում մենակատարներ են, այդ թվում՝ չեխական Ուտի նադ Լաբեմ և Պլզեն քաղաքներում, Շտուտգարդում, Հելսինկյում: Նրանց մասին նկարահանվել է «Ռաֆայելի տեսլականը» ու ևս երկու ֆիլմ, ուր ներկայացված են նաև հայ մշակույթն ու ավանդույթները: 2005-ին Բրատիսլավայի Ռուսական

բարեգործական հիմնադրամը Ռաֆայել Ավնիկյան-Կարինե Ավսերոյան զույգին պարգևատրել է «Ռուսական մշակույթի աջակցման և զարգացման համար» շքանշանով և Աննա Պավլովայի անվան մեդալով, իսկ 2018-ին՝ Ռուսաստանի նախագահի հրամանով՝ Պուշկինի անվան բարձրագույն մեդալով:

Նրանց դուստրը՝ **Տաթևիկը**, ավարտել է համալսարանի քարգմանական (ռուսերեն, անգլերեն) և արվեստագիտության բաժինները:

Երաժիշտ, դաշնակահար և երգչուհի **Կարինե Սարգսյանը** 1993 թվականից հաստատվել է Սլովակիայում: Աշխատել է որպես նվագակցող Բրատիսլավայի պարի ուսումնարանում, ապա՝ Մարտին քաղաքի երաժշտական դպրոցում: Ջբաղվում է նաև վոկալով, հանդես գալիս ժողովրդական երգերի մշակամբ: Ապրում է հայ ամուսնու և որդիների՝ **Միքայելի** և **Ալեքսանդրի** հետ:

1999-ին Սլովակիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Մեքսիկայի և Չեխիայի կինեմատոգրաֆիստների համագործակցությամբ էկրան է բարձրացել «Ժլատը» ֆիլմը (թեմադրիչ՝ Անտոնիո Բըրդ), որի մակագրերում որպես քարգմանիչ նշվում է **Մարտինա Տեր-Ակոպովայի** անունը:

Սլովակիայի մշակույթի նախարարության աշխատակից **Լյուդմիլա Պալոնդերովան** ծնվել է Մոսկվայում, ծնունդով արցախցի բժիշկ Արտաշես Մովսիսյանի ընտանիքում: Սլովակիայում բնակվում է 1981-ից՝ ամուսնացած լինելով ռեժիսոր Ֆրանտիշեկ Պալոնդերի հետ: Լյուդմիլան աշխատում է Սլովակիայի մշակույթի նախարարության միջազգային հարաբերությունների բաժնում: Կազմակերպել է մշակութային միջոցառումներ Սլովակիայում և Հայաստանում՝ ցուցահանդեսներ, սլովակ երգիչների համերգը Երևանում, «Շողակն» համույթի ելույթը Սլովակիայի ֆուլկլորային փառատոնում և այլն: *«Այն շրջանակում, որտեղ ես եմ աշխատում, շատ լավ գիտեն Հայաստանի և հայերի մասին, որ մեծ մշակութային*

*ժառանգության տեր ազգ ենք: Հետևաբար, շատ են գնահատում հայկական քրիստոնեական ժառանգությունը: Ե՛վ սիրում են, և՛ հարգում են, գիտեն ինչ երկիր է, ինչ հարուստ մշակույթ ունենք»,– պատմում է նա:*

Նրա որդին է Սլովակիայում հայտնի դերասան և երաժիշտ Տոմաշ Պալոնդեբը (ծն. 1980, Մոսկվա): Հանդես է գալիս «Արեմա», «Գունագու», «Տեատրո Վյուստենրոտ», «Լա Կոմիկա» թատրոններում և «Լավ ֆոր մանի» փանք ռոք խմբում: Երեք տարի ապրել է Անգլիայում և ԱՄՆ-ում: Նրա դեկավարած «Բրունո Բենետոն» համույթը ժամանակին շատ սիրված է եղել երիտասարդության շրջանում: «Մայրս հայուհի է, հայրս՝ սլովակ, բայց հենտ պարզեցինք, որ իմ հայրական տատիկիս տատը նույնպես հայ է եղել՝ Մալվյան ազգանունով, փախստականներ էին Օսմանյան կայսրությունից: Նրա մայրը հունգարական մետրիկայում տեսել է հայերեն գրված ծննդյան վկայականը: Ես շատ հարգանքով եմ վերաբերում հայոց մշակույթին և պատմությանը, միշտ նոր հողվածներ եմ կարդում»:

Դուրովսահար Արտյոմ Մարտիրոսյանը Սլովակիայում է 2010-ից: Ավարտել է երաժշտական քոլեջը: Աշխատել է երաժշտական դպրոցում որպես ուսուցիչ: «Սլովակիա տեղափոխվեցի, քանի որ մայրս՝ ու եղբայրս արդեն այստեղ էին: Սլադկովիչովո քաղաքում ենք ապրում: 10 տարի է՝ դուրով եմ նվագում: Հայ համայնքը շատ փոքր է, ելույթ ունենալու հնարավորությունները սահմանափակ են: Իսկ սլովակները դուրուկը դժվար են ընդունում, բայց եղել են մարդիկ, որոնք մեծ տպավորություն են ստացել»,– ասում է նա:

### **Համայնքային այլ գործիչներ**

Կրչիցեից ոչ հեռու գտնվող Տրեբիշով փոքրիկ քաղաքում է ապրում Բաբկեն Խաչարյանը, որը քաղաքային խորհրդի պատգամավոր է:

Գործարար **Բագրատ Հակոբյանը** 1997-ին Սլովակիա է տեղափոխվել Վանաձորից: Նրա «BHM Invest» ընկերությունը խորհրդատվություն է տալիս ընկերությունների ստրատեգիաների հետ կապված, հատկապես արտասահմանյան ֆիրմաների մասնաճյուղերի համար:

**Մարինե Բաղդասյանը** և **Խոսրով Հայրունյանը** 1990-ին եկել են Սլովակիա, նախ՝ իբրև զբոսաշրջիկ, իսկ 1993-ից՝ մշտապես բնակության: Ամուսինները բացել են անտիկ իրերի խանութ, որը հետագայում վերածել են գրասենյակի: Որդիները՝ **Գևորգն** ու **Գրիգորը**, իրավաբաններ են:

Գործարար **Գագիկ Սարգսյանը** Բրատիսլավայում ունի աճալիստ գույքի առքուվաճառքի ընկերություն: Ավագ որդին՝ **Դավիթ Սարգսյանը**, ծրագրավորող է աշխատում Պրահայում, համակարգչային խաղերի ֆիրմայում, մյուս որդին աշխատում է հեռուստատեսությունում:

Ազատ ձեռներեց **Վահե Հովհաննիսյանը** եղել է Սլովակիայում թեքվանդոյի չեմպիոն, իսկ նրա քույրը՝ **Աննա Ամիրխանյանը**, հրուշակագործ է և ունի սեփական սրճարան: Սլովակիայում հաստատվել են 1990 թվականին: Աննան Սլովակիայի հրուշակագործների մրցույթում շահել է Արծաթե մրցանակ «Խոհարարական արտիստիզմ» անվանակարգում:

Բժիշկ **Աշոտ Կարապետյանը** 1993-ից ընտանիքով ապրում է Սլովակիայում, Չվոլեն քաղաքում ունի ներլուծիչայի և ասեղնաբուժության սեփական կլինիկա: Իսկ Բրատիսլավայում բժշկուհի **Լիլյա Մանասյանը** ղեկավարում է «Երիկոս» ասեղնաբուժության կենտրոնը: Նրա որդին՝ **Վահրամ Ծուղուրյանը**, Սլովակիայում հայտնի հեռուստալրագրող է, նաև հայերենի, ռուսերենի և սլովակերենի դատական թարգմանիչ: Նրա մասին սկսեցին խոսել այն բանից հետո, երբ որպես Սլովակիայի հեռուստատեսության թղթակից հարցազրույց է վարել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, իսկ վերջինս Բրատիսլավա

կատարած այցի ժամանակ մամուլի ասուլիսից հետո հատուկ մոտեցել է Վահրամյին և ձեռքով բարևել ու հրավիրել է Մոսկվա: Ծուղուրյանը Սլովակիայի Բանակա Բիստրիցա քաղաքում ուսանել է համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության բաժնում: 2000–2008 թթ. աշխատել է Սլովակիայի հեռուստատեսությունում որպես թղթակից, դրան օգնել է նաև հինգ լեզվի իմացությունը: Շրջել է աշխարհով մեկ, լուսաբանել տարբեր հեղափոխություններ, ընտրություններ, Սլովակիայի պատվիրակությունների հետ եղել Աֆղանստանում, Լիբիայում, մինչև անգամ՝ Քադաֆիի հայտնի վրանում: Այնուհետև Ծուղուրյանը ղեկավարել է էկոնոմիկայի մախարարության մամուլի ծառայությունը, աշխատել «Տրանզիտ նավթ» զագային ընկերությունում, «Eustream» ընկերությունում որպես մամուլի քարտուղար: Ըստ նրա՝ «Սլովակիայում հայ համայնք գոյություն չունի: Ամեն հայ իր համար է ապրում: Միգրացիոն տանհիքներով շփվում են, սակայն համայնքային կառույց չկա, որ բոլորին միավորի: 10 հայի իրար գլխի հավաքելը շատ դժվար է: Հիմնականում Հայաստանից եկած հայեր են, մեծ մասը նաև մանր առևտրով է զբաղվում: Հայերի քիչ մասն է մտավորականություն, ինտեգրված են և ապրում են նորմալ: Նրանց համար ազգության հարց չի դրվում, շատ լավ տիրապետում են լեզուների: Ավելի շատ են խառը ամուսնությունները: Բոլորը խոսում են սլովակերեն, քանի որ այդ միջավայրում են՝ դպրոցում, բակում, հարազատների շրջանում: Հույս ունեն, որ մեր երեխաների մեջ գոնե հայրենիքի նկատմամբ սերը կմնա: Չեն ուզում ծնել, իրենց մեջ կա այդ հայրենասիրությունը: Կարծում են, որ նոր սերունդը մեծանա, կցանկանան իրար հանդիպել: Իսկ հիմա մեկը մյուսից նեղացած ապրում է »:

Հայոց լեզվի պահպանության հարցի վերաբերյալ Ծուղուրյանն ասում է. «Ես շատ ուրախ եմ, որ իմ սլովակ կինն աջակցում է, որպեսզի երեխաները հայերեն խոսեն: Ինքը սովորել է, ամեն ինչ հասկանում է: Ցավոք, հայկական դպրոց չկա: Երեխաները միայն բանավոր խոսքին

են տիրապետում, գրավորին չեն հասցրել ծանոթացնել: 12 տարեկանում տղաս մասնակցեց «Արի տուն» ծրագրին: Միայնակ գնաց Հայաստան: Մենք բարեկամներ ունենք, բայց ես շատ ուզեցի, որ անծանոթ ընտանիք մտներ, այլ ավանդույթներ տեսներ: Հայրենասեր ընտանիք ընկավ, շատ լավ մարդիկ էին՝ ՕՄՆՆ-ի հրամանատարներից Գուրգեն Գևորգյանի ընտանիքը: Տղաս հիացած էր Հայաստանով: Նա շատ հայրենասեր է: Դպրոցում բոլորին պատմում է մեր մշակույթի ու Հայաստանի մասին»:

Դուդուկահար Արսյոն Մարտիրոսյանի եղբայրը՝ բնօրհանարտիկ Վարուժան Մարտիրոսյանը, Սլովակիայում է 2006 թվականից: Բռնցքամարտով սկսել է զբաղվել 2007 թվականից, Գալանտա քաղաքում: 2008-ին արդեն դարձել է սիրողական բռնցքամարտի Սլովակիայի բրոնզե մեդալակիր: 2009-ին ճանաչվել է քաղաքի լավագույն մարզիկ, 2010-ին՝ «Գալանտա» բռնցքամարտի ակումբի առաջատար մարզիկ, 2011–2012 թթ. մասնակցել է բազմաթիվ միջազգային մրցույթների, իսկ 2013-ից արդեն մտել է պրոֆեսիոնալ բռնցքամարտի ասպարեզ: Միակ հայն է Սլովակիայում, որը մեծ սպորտում է:

### **Երիտասարդները և համայնքի ապագան**

Սլովակիայում բնակվող հայ երիտասարդները լիովին ինտեգրված են: Նրանք իրենց ավելի եվրոպացի են զգում, իսկ Հայաստանում ծնվածները չեն բաժանվում հայ լինելու իրողությունից: Նրանց առաջադեմ մասը ստացել է բարձրագույն կրթություն և լիովին պատկերացնում է, թե ապագայում ինչ է ուզում անել:

**Արեգ Շալջյանը** աշխատում է հեռուստատեսությունում, մոնտաժի մասնագետ է: «Բրատիսլավայում ապրելով՝ ես ինձ միշտ հայ եմ զգացել: Հայրս ասել է՝ հայ պետք է մնաս: Երբ ասում եմ՝ գնում եմ տուն, բոլոր ընկերներս գիտեն, որ Հայաստանը նկատի ունեն: Սլովակ ընկերներս շատ լավ են վերաբերում, իմ շրջապատի մարդիկ էլ նորմալ

են: Հայ ընկերներ շատ չունեն: Երբեմն ընտանիքներով հավաքվում ենք, բայց ամեն մեկն իր կյանքով է ապրում»:

Նրա ավագ եղբայրը **Լևոն Շալջյանը**, միջնակարգ դպրոցից հետո ավարտել է համալսարանի տնտեսագիտության բաժինը, աշխատում է բանկում: «Սլովակիայում դժվարություն չեն ունեցել, դպրոցում շատ հանգիստ սովորել եմ, լավ էին վերաբերվում, միշտ հարցնում էին Հայաստանը որտեղ է: Իհարկե, աշխատում եմ բացատրել, թե ինչ մշակույթ ունենք և Յեղասպանության հարցին ծանոթացնել: Շատ մարդիկ նույնիսկ չգիտեն, որ Սլովակիան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը»: Կինը սլովակ է, բայց հայերեն խոսում է, նաև երեխայի հետ են հայերեն խոսում:

**Վիլյամ Հովսեփյանը** հայտնի երգիչ Գուրգեն Հովսեփյանի որդին, ավարտել է Բրատիսլավայի տնտեսական համալսարանի դիվանագիտության բաժինը: «Երբ եկանք Սլովակիա, փոքր էի, հայերենը սովորեցի, քանի որ հայրիկի հետ ամեն օր հայերեն էինք խոսում: Իմ բոլոր սլովակ ընկերները լավ էին վերաբերում ինձ: Հայաստանը Սլովակիայում մեծ քարոզչություն չունի, պետք է մեծացնել: Շատ էի ուզում գնալ Հայաստան, ճանաչել և Հայաստանը քերել Սլովակիա: Այժմ աշխատում եմ համալսարանի Միջազգային բաժնում, ուզում ենք կապեր հաստատել հայկական համալսարանների հետ, որ հայ ուսանողները գան Սլովակիա, սովորեն և ճանաչեն»:

**Գրիգոր Հայրումյանը** «Wezeo» համակարգչային ընկերության տնօրենն է: «Իբրև հայ, Բրատիսլավայում խնդիր չեն ունեցել, միայն անուհից են հասկացել, որ հայ ենք, այլապես մանկուց այստեղ եմ մեծացել, և չեն զգացել, որ սլովակ չեմ: Սլովակերեն երբ խոսում եմ, չեն հասկանում, որ հայ եմ: Ապագայիս մասին դեռ շատ չեմ մտածել: Ավելի շատ մտածում եմ իբրև եվրոպացի, քան իբրև հայ: Հայերի հետ շատ չեմ շփվում, շատ ժամանակ չունեմ: Թերևս հետաքրքրությունների ընդհանուր շրջանակ չունենք: Հայաստանի հետ շատ կապված չեմ: Երևանում հասկացա, որ շատ բան արդեն չեմ

*հասկանում: Սլովակիայում մշակույթը այլ է, այլ կերպ են մտածում, այլ կերպ են աշխատում: Աշխատանք առաջարկեցի հայաստանցիներին, չկարողացան անել: Ցավոք, աստիճանաբար հայերենն են մոռանում»:*

Սլովակիայում մեր հանդիպումները ցույց տվեցին, որ թեև հայերը թվով քիչ են, բայց կան կրթված, տարբեր մասնագիտությունների մեջ առաջ զնացած հայեր, որոնք լիովին ապրում են հայկական խնդիրներով ու հոգսերով: Նրանք կայացել են իրենց բնագավառներում, դարձել սլովակյան մշակույթի կամ բիզնեսի երևելի դեմքեր: Նույնիսկ տեղական՝ քաղաքային խորհրդում պատգամավոր ունենք:

Խնդիր է, որ Սլովակիայում հայերը միասնական չեն, քանի որ չկա միավորող կառույց: Շատերն են նշում պառակտվածության մասին, խիստ զբաղվածության մասին, որը թույլ չի տալիս հայկական հարցերով կամ համայնքով զբաղվել, ինչն էլ խանգարում է նրանց միջև կապերի ամրապնդմանը: Սլովակահայերի մեծ մասի կարծիքով՝ նաև շատ քիչ է Սլովակիայում Հայաստանի ու հայկական մշակույթի մասին տեղեկատվությունը:

Հայապահպանության հարցը դրված է ընտանիքների ուսերին: Այն ընտանիքներում, որտեղ ծնողները մտածում են հայերենը պահպանելու մասին, մինչև անգամ երեխաներին ամեն կիրակի Սլովակիայից հասցնում են Ավստրիա՝ հայկական դպրոց, այդ զավակները հայերեն խոսում են և հայ են մեծանում: Այն ընտանիքներում, որտեղ հայերենը միայն օգտագործվում է կենցաղում՝ բանավոր խոսքում, երեխաները աստիճանաբար մոռանում են և անցնում սլովակերենի կամ ռուսերենի: Շատ են խառնամուսնությունները, թեև հաճախ նման ընտանիքներում ավելի զգալուն են լեզվի նկատմամբ, և ամուսինները խոսում են նաև հայերեն: Ընդ որում, հայ-սլովակ ընտանիքներում հայերենն ավելի լավ վիճակում է, քան հայ-ռուսական ընտանիքներում:

Երիտասարդները լիովին ինտեգրվել են, որևէ խտրականության դրսևորում չեն զգում և իրենց զգում են լիարժեք եվրոպացիներ, հասկապես նրանք, ովքեր ծնվել են Սլովակիայում: Հնարավոր է՝ ապագայում, երբորդ սերնդի ներկայացուցիչները մտածեն հայկական դպրոց բացելու մասին, եթե, իհարկե, նման ցանկություն և հնարավորություն առաջանա:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱԴԹՅՈՒՐՆԵՐ ԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 111
2. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 596::
3. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5258:
4. ՀԱԱ, ֆ. 430, ց 1, գ. 1245:
5. ՀԱԱ, ֆ. 709, ց. 3, գ. 178:
6. Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ կամ Յարընչութիւնք Հայոց և Վենետագ ի ԺԳ-ԺԴ և ԺԵ-ԺԶ դարս, Վենետիկ, 1896:
7. Մարտիրոս Սասունցի, Սեւ օրագիր, Պէյրութ, 1957:
8. Մարութեան Մ., Բեմական ընկերներս, Անթիլիաս, 1986:
9. Մարութեան Մ., Ի՞նչ է պատահում բեմի վրայ, բեմի ետեւ և բեմից դուրս, Անթիլիաս, 1986:
10. Մարութեան Մ., Երբ իջնում է վարագոյրը, Թեհրան, 1972:
11. Մօզեան Լ., կազմ., Ամենուն հասցէն, 1932, Փարիզ:
12. Վարդիվառեան Յ., Հանդիպումներ. գաղութները իրենց հայութեամբ, 4, Նիւ Ճրրզի, 2009:
13. De Schweinitz Edmund, History of the Church Known as the Unitas Fratrum or the Unity of the Brethren 1885, 2003.
14. Hovannisian Richard G., The Republic of Armenia, vol. III, 1996
15. Kabátník Martin, Cesta z Čech do Jerusalema a Kaira r. 1491-92, J. Otto, 1894, s. 35, 38, 85-86.
16. Karel, Biografický slovník českých, moravských a slezských archeologů a jejich spolupracovníků z příbuzných oborů, Nakladatelství libri, 2005.
17. Kolenati F. A., Die Bereisung Hocharmeniens und Elisabethopols, der Schekinschen Provinz und des Kasbek im Central – Kaukasus, Dresden, 1858.

18. Bohemia in History, ed. Mikulas Teich, Cambridge University Press, 1998, p. 107.

19. **Kuchař Karel**, Naše mapy odedávna do dneška, Nakl. Československé akademie věd, 1958, s. 115. **Sklenář**

20. **Obolensky Dimitri**, The Bogomils: A Study in Balkan Neo-Manichaeism, 2004.

21. **Sumlenny Sergey**, Czech Armenians: A Small Community with a Strong Potential, "21st Century," No 1, 2007, pp. 77-90.

22. **Кишкин Л. С.**, Чешский писатель на армянской земле, «Պատմաբանասիրական հանդես», 1984, Թ. 4Է

23. **Серapiroнoвa E. П.**, Российские эмигранты в Чехословакии в межвоенные годы, «Вопросы истории», 1997, но 5.

24. **Серapiroнoвa E. П.**, Российская эмиграция в Чехословацкой Республике (20-30-е годы), Москва, 1995.

25. **Постников С. П.**, ред., Русские в Праге, 1918-1928 гг., Прага, 1928.

# ARTSVI BAKHCHINYAN HAKOB ASATRYAN

## Arméni v Česku a na Slovensku (od začátku až dodneška)

### Shrnutí

Ze všech národů východní Evropy měli Arméni nejméně kulturních vazeb s Čechy a Slováky, a tyto vazby až dodnes zůstávají do značné míry neznámé i historikům. Tato práce je jedním z prvních kroků k vyplnění této mezery, představuje historii vzniku komunit v Česku a na Slovensku v posledních desetiletích, i vytvoření česko-arménských mezistátních vztahů.

Dnešní počet Arménů v Česku a na Slovensku se zvýšil kvůli velkému odlivu Arménů z Arménie a Společenství nezávislých států (SNS) v 90. letech 20. století.

Za posledních třicet let dokázali čeští Arméni zaujmout své místo v rodině evropských arménských komunit. Mnozí Arméni usazení v Česku se dokázali integrovat do české společnosti, a lekteří již hrají významnou roli v hospodářském, kulturním nebo sportovním životě země.

Tento článek shrnuje fakta rozptýlená v arménském tisku a literatuře o arménském obyvatelstvu Československa, zmiňuje již období středověku, ale zachycuje zejména dobu od první poloviny 20. století do století 21. ve snaze podat co nejúplnější obraz neznámé části arménské historie vystěhovalectví.

Podle Jirího Bečky, českého orientalisty a iránisty, se nejstarší doklad o arménsko-českých vazbách datuje do 9. století, kdy si český šlechtic pozval z Neapole arménského lékaře, aby mu vyléčil nohy.

Pcté existují svědectví o tom, že armenští obchodníci dodávali na Moravu transylvánskou sůl a také řemeslné výrobky z Malé Asie.

Za zmínku stojí i to, že první pražskou kavárnu otevřel v roce 1707 (podle jiných zdrojů r. 1714) Gevorg Astvacaturyan (Jiří Deodat) z Damasku, který je také autorem 7 teologických a etických děl. Před příchodem Gevorga Deodata do Prahy se káva prodávala v lékárnách. Otevřel tehdy dvě kavárny, v domě U Zlatého hada a v domě U Tří pštrošů, které dodnes fungují pod stejnými jmény, ale již nepatří Armenům.

Po vzniku nezávislé Arménie v roce 1918 udělil český prezident Masaryk stipendia 50 arménským studentům, kteří pak studovali na různých fakultách pražské univerzity. Poté, co se Arménie stala součástí sovětského impéria, se už nemohli vrátit do své vlasti a rozlétli se do různých zemí v Evropě i Americe. Další důležitou událostí těchto let bylo vydání knihy „Hrůzy východu“ českého cestovatele a spisovatele Karla Hansy, v níž se autor poprvé dotkl arménské historie, kultury, a hlavně genocidy Arménů v Osmanské říši.

Díky časopisu ORER byla tato kniha znovu vydána v roce 2006 a věnována zástupcům české politické a kulturní elity.

Během druhé světové války se několik tisíc Arménů účastnilo osvobození Československa, mnoho z nich uteklo z koncentračních táborů a účastnilo se partyzánského hnutí. Jen za osvobození Prahy bylo 500 arménských bojovníků oceněno sovětskými a českými medailemi.

Během let trvání Sovětského svazu došlo k posílení kulturních vazeb mezi Arménií a Československem.

Značného rozmachu dosáhla také armenistika. Díky obětavé práci kaukazologa Jaromíra Jedličky vyrostla nová generace armenistů, nejznámějšími byli Ludmila Motalová, Václav Černý, Ladislav Křehla, Bohuslav Palek, Bohumil Bareš a další.

Až na začátku 21. století se objevili zástupci nové generace armenistů: Petra Kohoutková-Košťálová, Milada Kiliánová, Anna Sochová,

Veronika Maršíková a další. Zvláště vynikající jsou zásluhy muzikologa, teologa, profesora Evžena Kindlera, vedoucího souboru „Musica Poetica“, který udělal mnoho pro zviditelnění arménské duchovní hudby, a nejen, že o ní psal na muzikologická pojednání, ale také překládal Řehoře z Nareku.

Nejznámějším českým Arménem 20. století byl Nišan Mardirossian, který v roce 1927 založil obor armenologie na pražské univerzitě. Byl renomovaným lingvistou, armenistou a orientalistou. Jeho synem je filmový scénárista Haig Mardirossian.

Během dvacátého století v České republice nikdy neexistovala organizovaná arménská komunita. V dřívějších staletích se Arméni v Česku neusadili, což lze zdůvodnit místními zákony, které nebyly pro cizince příznivé. Na rozdíl od tradičních arménských komunit zde nikdy nepůsobily arménské politické strany ani kluby. Za posledních 25 let se však mnoho arménských osob výtečně integrovalo do české společnosti a mnoho z nich hraje významnou roli v hospodářském, kulturním či sportovním životě země.

Od roku 1993 dosáhl počet Arménů žijících v Česku 8–10 tisíc, ale toto číslo se neustále mění, protože mnozí z České republiky odcházejí do jiných evropských zemí nebo Spojených států. Podle oficiálních zdrojů je v České republice usazeno kolem 2 500 arménských občanů, ale v tomto počtu nejsou zahrnuti Arméni z jiných zemí, ani Arméni, kteří již mají české občanství.

V 90. letech byly v České republice založeny různé arménské organizace: v roce 1990 byla založena organizace Armenia Club (prezident Tigran Abramjan), v roce 1997 pražská arménská sobotní škola (ředitel Armen Koloyan), od roku 1999 vychází nezávislý evropský časopis „ORER“ (šéfredaktor Hakob Asatryan, šéfredaktorkou internetového portálu orer.eu je Anna Karapetyan).

V roce 2005 zahájil svou duchovní službu v Česku otec Barsegh Pilavchyan jako archimandrit Arménské apoštolské církve pro Českou

republiku, Slovensko a Maďarsko. Po jeho jmenování se v Česku zintenzivnil komunitní a církevní život, bohoslužby se konají pravidelně každý týden, a navíc se mše slouží také o církevních svátcích.

Velkou změnu v životě českých Arménů přineslo také otevření arménského velvyslanectví v Praze(2011), kdy velvyslanec Tigran Seirarian nejen spojil síly komunity, ale také podnítil nové vztahy na vysoké úrovni mezi Arménii a Českou republikou.

V roce 2014 byl založen výbor „24. dubna“, který se stal pořadatelem všech významných komunitních akcí a shromáždění, v jehož čele stojí společně velvyslanec a duchovní vůdce.

V těchto letech zesílil i proces uznání arménské genocidy, výsledkem čehož český parlament přijal usnesení odsuzující arménskou genocidu v první světové válce dne 25. dubna 2017. V tomto sehrál zásadní roli tehdejší poslanec sociální demokracie, předseda meziparlamentní skupiny přátelství Česko-Arménie Robin Böhnisch.

Dne 11. října 2015 bylo na základě rozhodnutí hlavy české katolické církve kardinála Dominika Duky uděleno arménské komunitě právo užívání pražského kostela sv. Ducha ze 14. století, a to na dobu 25 let.

Církev Svätého Řehoře Osvětitele, což je název české komunity věřících Arménské apoštolské církve, byla oficiálně zaregistrována na Ministerstvu kultury České republiky 27. března 2013. Dne 25. dubna 2014 pak byl vztyčen chačkhar, který arménské komunitě poslal k této příležitosti darem katolikos všech Arménů Garegin II.

Dalším městem, kde jsou čeští Arméni dobře organizováni, je Jihlava, kde velmi aktivně působí Arménsko-Česká společnost URARTU (předseda Aleksandr Sargsyan). Organizuje nejen mnohé kulturní akce, výstavy, koncerty, ale 17. listopadu 2006 také v jednom z hlavních jihlavských parků slavnostně umístili první arménský chačkhar v Česku. V roce 2018 také vytvořili s Asociací arménské mládeže v České republice taneční soubor Kilikia (vedoucí Aleksandr Sargsyan), který úspěšně vystupoval na hlavních pražských náměstích i slavných sálech.

Arméni v Česku žijí také v Brně, Ústí nad Labem, Ostravě, Karlových Varech a dalších městech. Dort Marlenka se stal známou značkou nejen v Česku, ale i v Evropě a ve světě, a vzniká ve Frýdku Místku, ve stejnojmenné společnosti, kterou založil Gevorg Avetisyan. Mezi další významné Armény patří zakladatel a šéfdirigent Sboru a Orchestru Univerzity Karlovy v Praze, armenolog Haig Utidjian, nebo Garik Avanesian, známý fotograf a předseda České federace fotografického umění. Dále v Česku žije mnoho arménských malířů, umělců a sportovců, hudebníků, podnikatelů a stavitelů.

Na Slovensku je Arménů méně, žije jich tam sotva tisíc. První arménské rodiny na Slovensku jsou potvrzeny v polovině 17. století, šlo o potomky obchodníků, kteří se přistěhovali z Moldavska nebo Besarábie. Po roce 1915 žilo na Slovensku Arménů padesát, a od 90. let se zde usadilo asi 1 000 Arménů. Žijí především v hlavním městě Bratislavě, Košicích, Prievidzi, Trebišově, Žilíně, Banské Bystrici i jinde. Ani tam nikdy nevznikla arménská komunita v klasickém smyslu. V roce 2002 podnikatel Ašot Grigorjan zaregistroval organizaci s názvem Arménská komunita Slovenska, ale nedokázal spojit všechny Armény. Pořádali kulturní akce, obchodní fóra a propagovali rozvoj právních a ekonomických vztahů mezi Arménií a Slovenskem. V roce 2005 byl v Bratislavě s organizační pomocí Ašota Grigorjana a za finanční podpory neziskové organizace Nig Aparan vztyčen chačkhar.

Dne 30. listopadu 2004 přijala Národní rada Slovenska usnesení o uznání arménské genocidy, které předložil František Mikloško, člen Křesťansko-demokratické strany. Dne 30. ledna 2013 předalo vedení Slovenské katolické církve na dobu 99 let arménské komunitě kostel sv. Kateřiny ze 14. století, kde otec Barsegh Pilavchyan jednou měsíčně vede bohoslužbu.

Mezi známé Armény na Slovensku patří operní pěvec, tenorista Gurgen Ovsepjan, baletní mistr Rafael Avnikjan, mladý herec arménského původu Tomáš Palonder a podnikatel, zakladatel a ředitel

společnosti Gevorkyan s.r.o. Artur Gevorkyan. A díky úsilí podnikatele Žory Čopurjana byla v Košicích otevřena kaple svatého Sarkise.

Arménské komunity v Česku a na Slovensku dnes potřebují funkční organizační struktury, a i když v České republice existuje několik organizací a také farní rada, absence komunitního kulturního centra neumožňuje účinnější organizaci komunitního života.

Z arménštiny přeložila Milada Kiliánová

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ\*

- Ա. Զօրի 77  
Աբաջյան Արայիկ 171-172  
Աբգար Դ-իանա 35  
Աբգարյան Գագիկ 148  
Աբովյան Խաչատուր 20-21  
Աբրահամյան Անդրան 177, 200  
Աբրահամյան Մեդեա 130  
Աբրահամյան Տիգրան 20, 79, 146-147, 152, 162, 174, 182  
Ադամյան, օրիորդ 68  
Ադամյան Լ. 68  
Ադամյան Վ. 68  
Ազիզյան Հակոբ 67  
Աթաբեկյան Իվան 41-42  
Աթանասյան Հրաչյա 66  
Ալավերդյան Արգամ 198-199  
Ալավերդյան Արգիշտ 198-199  
Ալավերդյան Կարինե 213  
Ալավերդյան Տիգրան 198  
Ալեքսանդր 214  
Ալեքսանյան Արտաշես (Արտուշ Էրզրումցի) 180  
Ալիխանյան Միքայել 66  
Ալոիսիե 102  
Ալիևյան Հովհաննես 66, 79, 89-90  
Ալիևյան Ներսես 89  
Ահարոնյան Ավետիս 42, 60, 81-82  
Ահարոնյան Էլեն 165, 185, 195  
Աղաթեյան Էրիկ 173  
Աղաթեյան Վիկտոր 173  
Ադամյան Վարուժան 212  
Աղաջանյան Ալվինա 197  
Աղաջանովա Նինա 53  
Աղապալյան (Սասունցի) Մարտիրոս 68, 100-103  
Աղասարյան Արթուր 180  
Աճառյան Հրաչյա 49, 123  
Ամատունի Գեղամ 42  
Ամիրխանյան Աննա 216  
Այդինյան Մարինա 188  
Այոլոյ 75  
Այվազյան Քրիստինե 179  
Անանիկյան Արմեն 155, 188  
Առյամա Միցուկո 45  
Ապերյան Համո 190  
Առաքելյան 40  
Առաքելյան Աշոտ 182, 184  
Առաքելյան Բագրատ 150  
Առաքելյան Համբարձում 29  
Առաքելյան Սուրեն 27  
Առուստամյան Գեորգի 181  
Ասատրյան Արթուր 182  
Ասատրյան Գարեգին 68

\* Տրված են միայն անմիջական կապ ունեցող անձանց անունները:

- Ասատրյան Հակոբ 7, 61, 156-157
- Ասատրյան Հայկ 91, 100
- Ասլանյան Արմենակ 50, 74
- Ասլանով Նիկոլայ 52
- Աստվածատուրյան Գևորգ տեն Դեռդատ Յիրժի
- Ավանեսյան Արտաշես 141
- Ավանեսյան Գարիկ 177-178
- Ավանովա Սոֆյա 52
- Ավետիսյան Աննա 144
- Ավետիսյան Արման 183
- Ավետիսյան Գոռ 182-183
- Ավետիսյան Գևորգ 18, 191-193, 212-213
- Ավետիսյան Հասմիկ 192
- Ավետիսյան Միհրան 183
- Ավետիսյան Մինաս 140
- Ավետիսյան Միքայել 192
- Ավետիսյան Նելլի 192
- Ավետիսյան Նշան 192
- Ավետիսյան Քրիստինե 185
- Ավնիկյան Ռաֆայել 213
- Ավնիկյան Տաթևիկ 214
- Արամյան Ս. 79
- Արարատյան Գ. 100
- Արթին Էմիլ 51
- Արթունի Արմինե 175
- Արթունի Եվգենյա 174
- Արթունի Կարինե 174-175
- Արմեն Գարո (Գարեգին Փաստրմաճյան) 85
- Արշակյան Իռա 143, 158
- Արսլանյան Արթին 50, 60, 105
- Արսլանյան Լուիզա 106, 128
- Արսլանյան Լևոն 50
- Արուսյան Հովհաննես 66
- Աֆրիկյան Հարություն 67
- Աֆունց Գեղեցիկ 198
- Բաբախյան Սուրեն 65, 75
- Բաբայան Արթուր 118
- Բագրատունի Արսեն Կոմիտաս 20
- Բաղալյան Նիկոլ 66, 76, 79-80, 82, 91, 105
- Բախշինյան Թամարա 182-183
- Բախշինյան Արծվի 6-7, 158, 173, 202
- Բաղդագույան Մարինե 216
- Բաղդասարյան Բաղդասար 67
- Բավարուս (Բայտարիուս) 8-9
- Բարեշ Բոհումիլ 123
- Բարիկյան 74
- Բարթիկյան Միքայել 197
- Բարսեղյան Մարտիրոս 66
- Բարսեղյան Նելլի 185
- Բեդիրբեկ 55
- Բեզդիչեկ Յոժեֆ 115
- Բեյբության Ծովինար 155
- Բենեդիկտոս 16-րդ 176
- Բենեշ (Պենեշ) 72
- Բենեշ Էդվարդ 44, 90
- Բեչկա Յիրժի 6, 8, 127
- Բեսայան Վարդան 190
- Բերբերովա Նինա 53
- Բիլեր Մաքսիմ 141
- Բիլեր Ռադա 141
- Բլեհա 55
- Բյոհնիշ Ռոբին 162-163
- Բոհեմ (Բոհեմունդ) 8-9
- Բոուշկովա Մարցելա 124
- Բոքսյան Ստեփան 173

Բրսոյան Սարգիս 171  
Բուդակյան Մաքս 12-16  
Գաբրիելյան Հասմիկ 208  
Գալիկյան Բարիկ 45-46  
Գալուստյան Վլադիմիր 189  
Գասպարյան Երվանդ 114  
Գարեգին Բ 152  
Գեքաուերովա Էվա 130  
Գեորգուս Դեոդատուս  
Դամասկենուս տե՛ս Դեոդատ  
Յիրժի  
Գեղամ Շողակաթ տե՛ս  
Քյոսեյան Գեղամ  
Գլըճյան Հարություն 65  
Գիլանյանց Խաչատուր 25  
Գորալիկ 123  
Գորգոս Հաթալահ էլ Դեմշի  
տե՛ս Դեոդատ Յիրժի  
Գրեգոր Արմենիեր ֆոն  
Կոնստանտինոպէլ տե՛ս  
Դեոդատ Յիրժի  
Գրիգորյան Աշոտ 203-204,  
207-208  
Գրիգորյան Լարիսա 154-155  
Գրիգորյան Կամո 168  
Գրիգորյան Համբարձում 68  
Գրիգորյան Մ. 79  
Գրիգորյան Սերգեյ 148  
Գրիգորյան Տաթևիկ 209  
Գրին Էլդա 146  
Գրինֆիլդ Ջեյմս 43  
Գրյուներտ Մաքս 112  
Գունտրաճյան Անտոն 52  
Գուրգենյան Ռուբեն 66, 69, 78,  
105  
Գուրկիչ 81

Գևորգ տե՛ս Դեոդատ Յիրժի  
Գևորգյան Արթուր 209-210  
Գևորգյան Ռոբերտ 210  
Դ. Ա. 77  
Դադայան Անժելա 154  
Դամայան Դեոդատուս տե՛ս  
Դեոդատ Յիրժի  
Դավթյան Դավիթ 26  
Դավիդյան Արշավիր 170  
Դեոդատ Յիրժի 4, 12-18, 192  
Դոմանասկիչ Ադամ 9  
Դովլաթյան Միքայել 185  
Դվորժակ Ռուդոլֆ 55  
Դուկա Դոմինիկ 152  
Դուսար 55  
Դուրյան Եղիշէ 46-47  
Դեեջյան Սեդա 88, 98  
Եղլիչկա Յարոմիր 49, 107-108,  
122-123  
Եղլիչկա Յարմիլա 62  
Ելանյան Ֆրունզե 137  
Ելինեկ 129  
Եհեն Կառլ-Հայնց 138  
Եղիյան Արմեն 146  
Ենգիբարյան Լեոնիդ 141  
Եսայան Ալլա 154  
Եսայան Սիլվա 158  
Երեցյան Գարեգին 68, 79, 82,  
100, 105  
Երևանցի Դավիթ 138  
Չադոյան Լուսինե 155  
Չախեր Պետեր 138  
Չաստուխովա Նունե 148  
Չավարյան Ադասի 188  
Չավարյան Դավիթ 188  
Չավրիե Հակոբ 37

- Չատեյան Չարեհ 52  
 Չարաֆյան Լ. 39  
 Չաքարիա վարդապետ 10  
 Չաքարյան Հ. 68  
 Չաքարյան Ջանջիկ 67-68  
 Չաքարյան Վոլոդյա 172  
 Չեղմիցկի Վ. 45  
 Չեման Միլոշ 160, 164  
 Չելեր Յուլիուս 23  
 Չոնո Պետր 162  
 Չվոլենսկի 208  
 Չուրատի Յոզեֆ 111  
 Էդիգարյան Արմեն 182-183  
 Էդիգարյան Գոհար 182-183  
 Էդիգարյան Էդուարդ 183  
 Էկինյան Սարգիս 51  
 Էվոյան Անդրանիկ 119  
 Թամրազյան Մուշեղ 66, 75, 91  
 Թարխանյան Կուռո 68, 87, 91  
 Թեկիլիյան Սողոմոն 94  
 Թերքմեջյան Բորիս 186  
 Թոխյան Արամայիս 191  
 Թոռլաքյան Միսակ 99  
 Թովմասյան Ներսես 65, 103  
 Թորոսյան Սարգիս 66, 69, 75, 91  
 Թոքաթյան Արման 109  
 Թումանյան Մարիամ 25  
 Թուրմայեր Յոհան 9  
 Ժամկոչյան Անուշավան 211  
 Ժաչեկ Յիրժի 129  
 Ժինկուվա Աննա 14  
 Իգնիստիոս Պետրոս 13  
 Ինգրամ 8  
 Իսահակ դե Լուկա (Սահակ Լուկաշ) 13  
 Իսահակյան Աշոտ 66  
 Իսահակյան Ավետիք 25, 153  
 Իսահակյան Վասիլ 68, 100  
 Իսրայելյան Արտաշես 167  
 Իվանչիչ Պավել 185  
 Իտամար Բեն Ավի 32  
 Իտլիլիպ Ֆր. 38  
 Լադա Յոզեֆ 50  
 Լազարյան Արթուր 188  
 Լազարյան Էմմա 188  
 Լազարևա Աննա 45  
 Լեոպոլդ 16  
 Լեսնի 110  
 Լիոտան Լուկաշ 170  
 Լյուդմիլա 14  
 Լորիկյան Հ. 68, 89  
 Լոուկոտկա Չեստմիր 122  
 Խաժակ Արաքսի 66  
 Խաչատրյան Արամ 49, 140  
 Խաչատրյան Արևիկ 200  
 Խաչատրյան Մարատ 176  
 Խաչատրյան Միքայել 25  
 Խաչատրուով Արամ 176  
 Խաչարյան Բարկեն 215  
 Խատիսյան Ալեքսանդր 64-65, 70, 74  
 Խոջոյան Հակոբ 167  
 Կաբատնիկ Մարտին 9  
 Կալոուսեկ Հենրի 44  
 Կապուտիկյան (Չապկովա) Աննա 116-117  
 Կապուտիկյան Մանվել 116-117  
 Կապուտիկյան Մոննա Լիզա 116-117  
 Կապուտիկյան Սիլվա 117

Կառլ Վեցերորդ 16, 18  
 Կարախանյան Արմինե 170  
 Կարախանյան Քրիստինե 170  
 Կարապետյան Աննա 55, 60-62, 154, 156-157, 182,  
 Կարապետյան Աշոտ 216  
 Կարապետյան Արմենակ 182  
 Կարապետյան Բոբի 185  
 Կարապյան Ռ. 77  
 Կարակ Հովհաննես 67  
 Կարոլոս 55  
 Կիզողյան Արսեն 190  
 Կիլյանովա Միլադա 134  
 Կիմոլեր Էվժեն 131-133, 154, 176  
 Կիրզա 64  
 Կլաուս Վացլավ 163  
 Կլեպլ Բոհումիլ 180  
 Կյուլենսերյան Վաղարշակ 68, 121  
 Կյումյուշկերտան Լևոն 43  
 Կյուտենյան Հայկ 27  
 Կշիցա Միրոսլավ 127  
 Կոլենատի Ֆրիդրիխ Աուգուստ Ռուդոլֆ 20  
 Կոկանյան Եդիա 52  
 Կոհոուսկովա (Կոշտալովա) Պետրա 133  
 Կովարժիկ Պետր 129  
 Կորժենակի Յոժեֆ 23-24  
 Կոցուրեկ Պետր 182  
 Կրասիլնիկյան Սարգիս 107  
 Կրբեց Շիմոն 165  
 Կրժեհլա Լադիսլավ 123, 129  
 Կրժեհլա Նարեկ 129  
 Կրժիժովա Կվետա 45  
 Կրիվոնոս Ն. 9  
 Կուբա Լյուդվիգ 14  
 Կուբեյիկ Յան 26-27  
 Կուբիշտա Լյուդեկ 129  
 Կուդելկա Ալոիս 24  
 Կուն Յարոսլավ 39-40  
 Հալաբյան Դավիթ 191  
 Հալաբյան Վլադիմիր 191  
 Հալամկովա Բարբորա 141  
 Հալամկովա Յարմիլա 141  
 Հակոբյան Անի 194  
 Հակոբյան Բագրատ 230, 239  
 Հակոբյան Հովհաննես 34  
 Հակոբյան Վահե 181  
 Հակոբյան Վարդգես 81, 100, 105, 114  
 Հախնազարյան Հովհաննես 66, 76, 82, 92, 105, 115  
 Հախնազարյան Վանուշ 68, 100  
 Հաճյան Ա. 77  
 Համաչեկ Յան 164  
 Համբարձումյան Աննա 179  
 Համբարձումյան Արտակ 211  
 Համբարձումյան Ծովակ 137  
 Հայրապետյան Երվանդ 65  
 Հայրումյան Գրիգոր 216, 219  
 Հայրումյան Գևորգ 216  
 Հայրումյան Խոսրով 202, 216  
 Հանգլիկ 137  
 Հանսա Յոզեֆինա 62  
 Հանսա Կարել 45, 55-62, 70, 179  
 Հանսա Մարիա 62  
 Հաշեկ Յարոսլավ 50-51  
 Հավել Վացլավ 162-163

- Հավլասա Բոհումիլ 21  
 Հարաբին 206  
 Հարությունյան Ալլա 185  
 Հարությունյան Գոռ 190-191  
 Հարությունյան Հ. 79  
 Հարությունյան Հովհաննես 6, 12, 138  
 Հարությունյան Մարիամ 138  
 Հարությունյան Մարինե 171  
 Հարությունյան Մոնիկա 191  
 Հեյդուկ Ադոլֆ 23  
 Հոյի Յան 19  
 Հոլիկ Մարտին 185  
 Հովակիմյան Տիգրան 199  
 Հովհաննես Դեոդատ 13  
 Հովհաննիսյան Արգար 28  
 Հովհաննիսյան Անահիտ 129  
 Հովհաննիսյան Կարեն 181  
 Հովհաննիսյան Հարություն 184  
 Հովհաննիսյան Միքայել 181  
 Հովհաննիսյան Նորայր 182  
 Հովհաննիսյան Վահե 216  
 Հովհաննիսյան Վարդան 66  
 Հովսեփյան Ալեքսեյ 212  
 Հովսեփյան Անահիտ 158  
 Հովսեփյան Աշոտ 166-167  
 Հովսեփյան Գուրգեն 211-212  
 Հովսեփյան Վարդան 20  
 Հովսեփյան Վիլյամ 212, 219  
 Հորսակովա Մոնիկա 166  
 Հրժեբեյկ Յան 180  
 Հրժիմալի Իվան 26  
 Հրոզնի Բեդրժիխ 47-48, 136  
 Հույեր Օլբրիխ 112  
 Հունանյան Անատոլի 190  
 Հունանյան Դավիթ 190  
 Հունանյան Մարինա 190  
 Հունանյան Յուրա 190  
 Զամոյան Գրիգոր 42  
 Ղազարյան Աննա 155  
 Ղազարյան Շուշան 138  
 Ղազարյան Սամվել 168  
 Ղարազյոզյան Վարդան 66  
 Ղարիբյան Հարություն 66, 69, 78, 82  
 Ղարիբյան Հրայր 201  
 Ղարիբյան Մարիամ 154  
 Ղարիբյան Միհրան 66-67  
 Ղուկասյան Արթուր 158  
 Ծերմակյան Բաղդասար 68, 100, 105  
 Ծերմակյան Մարտիրոս 105  
 Ծոպուրյան Ժորա 210  
 Ծոտուրյան Թամարա 211  
 Ծոտուրյան Վահրամ 205, 216-217  
 Մագոմաև 81  
 Մազալովա Դանա 146  
 Մակարյան Գրիգոր 202  
 Մակարյան Հովսեփ 66  
 Մակարյան Շավարշ 66, 69, 92-93  
 Մահդալ Մարտին 162  
 Մաղաքյան 73  
 Մամիկոնյան Սարգիս 67  
 Մալիյան Անտոն 28  
 Մանասյան Լիլյա 211, 216  
 Մանուկյան Գագիկ 182, 184  
 Մանուկյան Լևոն 166  
 Մանուկյան Վոլոդյա 172

Մասարիկ Տոմաշ Գարրիզ 30-  
33, 41, 54, 64, 84-85, 90, 106,  
108  
Մատեյ Յոժեֆ 161  
Մարգարյան Ամոնեցի Հակոբ  
(Ակոբ Էրեցս Համբեցի) 10  
Մարիմյան Անտոն 66  
Մարշիկովա Վերոնիկա 134  
Մարտուշեկ Յարոսլավ 138  
Մարտիրոսյան Արա 189  
Մարտիրոսյան Արթուր 172  
Մարտիրոսյան Արտյոմ 215,  
218  
Մարտիրոսյան Արուսյակ 49,  
130  
Մարտիրոսյան Բորիս 118  
Մարտիրոսյան Գագիկ 207  
Մարտիրոսյան Հայկ 139-140  
Մարտիրոսյան Հայկուհի 119  
Մարտիրոսյան Մուրազ 182,  
184  
Մարտիրոսյան Նիկոլ 172  
Մարտիրոսյան Նշան 5, 11, 32,  
46-49, 65, 100, 104, 107, 110-  
116, 119, 121, 129-130, 139  
Մարտիրոսյան Սարգիս 117-  
118  
Մարտիրոսյան Վարուժան 218  
Մարտիրոսյան Քրիստինա 140  
Մարտիքյան Արամ 160, 189  
Մարտիքյան Մանվել 66, 69, 71,  
81, 86, 93, 95-96, 103  
Մեժլումյան Արամայիս 168,  
189  
Մեժլումյան Մարտա 196

Մելիք-Դադայան Դավիթ 66,  
90, 105  
Մելիք-Դադայան Լևոն 63, 77,  
80  
Մելիքյան Գոհար 155  
Մելիքյան Վահան 59  
Մելքոնյան Անժելա 155  
Մելքոնյան Մարինե 167  
Մեարոպ Պ. 141  
Մեսրոպյան Սիմոն 138, 186  
Միկլոշկո Ֆրանտիշեկ 204  
Միհայիկ Վոյտեխ 137  
Մյնախորյան Վահան 68, 75,  
82, 88, 93, 105  
Մյնասյան Բաղդասար  
(Բաղդիկ) 68, 86, 94  
Միրիմանովա Մարգարիտա  
109  
Միրբայել 214  
Մլեյնկովա Վլաստա 130  
Մխիթարյան Գրիգոր 66  
Մխիթարյան Կարեն 158, 181  
Մխիթարյան Օննիկ 68, 77, 79,  
94, 103  
Մխիթարյաններ 19, 20, 24, 59,  
108, 114  
Մկրտչյան Հայկ 191  
Մկրտչյան Սիրանույշ 154  
Մկրտչյան Վարինե 178-179  
Մյուլլեր 22  
Մնացականյան Հայկ 182  
Մնացականյան Տաթև 186  
Մովսեսյան Աղեքսանդր 67  
Մովսեսյան Կարինա 187  
Մովսեսյան Սերգեյ 189  
Մովսիսյան Արտաշես 214

- Մովսիսյան Տիգրան 191  
 Մոտալովա Լուդմիլա 4, 102,  
 123, 125-127, 139  
 Մուզիլ Ալոիզ 110  
 Մուսիմյան Թադևոս 66  
 Մուրադյան Դավիթ 183  
 Մուրադյան Հովիկ 182-183  
 Մուրադյան Շավարշ 182-183  
 Մուրադյան Վարդուհի 168  
 Մուրատյան Մ. 120  
 Յանդակ Մարեկ 166  
 Յարայլան Էմմանուել 67  
 Յարխովսկի Պետր 180  
 Յիրժիլ Բոհդան Դամաշսկի  
 տե՛ս Դեոդատ Յիրժի  
 Յոզեֆ Առաջին 14  
 Յուրյունյան Հայկ 130, 134,  
 153, 160, 176  
 Նազարբեկովա Վիկտորյա 187  
 Նազարբեկովա Տատյանա 187  
 Նազարյան 120  
 Նազարյան Արփիմե 199  
 Նազարյանց Լիսյարիտ 37-38,  
 90, 95  
 Նալբանդյան Գնել 154  
 Նալբանդյան Հռիփսիմե (Իռա)  
 154  
 Նակաշիձե Գ. Մ. 75  
 Նապրաստեկ Վոյտա (Վոյտեխ)  
 22  
 Նավասարդյան Ստեփան 60,  
 66, 69  
 Նավոյան Ռուզաննա 197-198  
 Նեմիլովիչ-Դանչենկո Վասիլի  
 52  
 Նեյելլի Ջոենեկ 109  
 Ներսիսյան Հայկ 186  
 Ներսիսյան Հրաչյա 129  
 Նիկողաու Ստանիսլավ 23  
 Նիկողոսյան Արարատ 147-148  
 Նիկողոսյան Նարեկ 191  
 Նիկողոսյան Վ. 68, 99  
 Նժդեհ Գարեգին 91  
 Նոսեկ Յիրժի 126  
 Նովակ Պետր 133  
 Նովակ Վիտեզլավ 27  
 Նովոտնա Հելենա 187  
 Նովոտնա Մարգարիտա 187  
 Նովոտնի Վլադիմիր 187  
 Շաթիրյան 39  
 Շալջյան Արեգ 218  
 Շալջյան Արթուր 211  
 Շալջյան Լևոն 219  
 Շահբազյան Արայիկ 173  
 Շահբազյան Արթուր 173  
 Շահբազյան Հասմիկ 166  
 Շահբազյան Նորայր 198  
 Շահինյան Անի 196  
 Շահինյան Մարիետա 49  
 Շահինյան Վաղարշակ 147-  
 148  
 Շահխաթունի Աշո 91  
 Շանթ Լևոն 39  
 Շաֆար Կարել 110  
 Շաֆարիկ Պավել Յոժեֆ 19-20  
 Շապավալ 81  
 Շեքետա Ռուդոլֆ 171  
 Շեյդեր Օտտո 135  
 Շիկանյան Դիմիտրի 67  
 Շիկանյան Ռաֆայել 67  
 Շիրազ Հովհաննես 140  
 Շմեյկալ 81

Շմերալ Բոհումիր 104  
Շմերալ Յան 104  
Շմերալ Սոֆյա 104  
Շմոլից Յոզեֆ 130  
Շմոկ Պավել 137  
Շվարցենբերգ Կարել 163  
Շտալիկովա Մարին 103  
Շտեպանովա Շտեպանկա 130  
Շտեպինա Յարոմիր 162, 185  
Շտեֆեկ 137  
Շտրոբլովա Յանա 124  
Շեչիկ 20  
Շեչիկ Օտակար 26  
Չարգճյան, տիկին 52  
Չարգճյան Նուպար 52  
Չեխ Սվատոպլուկ 22, 29  
Չեռչիա 81  
Չեչճենյան Բաֆֆի 158, 182,  
184, 200  
Չեռնի Վացլավ 123, 128, 134,  
148, 172  
Չեռնով Վիկտոր 75, 80  
Չմշկյան Գևորգ 29  
Չոպանյան Արշակ 43  
Պաժմանովա (Պրաժակովա)  
Մարիա 136  
Պալեկ Բոհումիր 123, 148  
Պալոմդեր Տոմաշ 202, 215  
Պալոմդեր Ֆրանտիշեկ 214  
Պալոմդերովա Լյուդմիլա 214  
Պանեկ Շիմոն 146  
Պանտեկ 57  
Պասյան Հասմիկ 160  
Պասլովյան Սուրեն 67  
Պավելկա Ֆրանցիշեկ 113  
Պարալ 60

Պարիկյան Ադ. 105  
Պարիկյան Հակոբ 54  
Պարոնիկյան Արմենակ 61  
Պեխ Կառլ 130  
Պեխաչեկ Օտակար Մետոդ 6,  
10  
Պեկ Ալբերտ 130  
Պետր Ստանիսլավ 12  
Պետրոսյան Արտեմ 118  
Պետրոսյան Մարատ 169  
Պերոզովա Ջորա 49  
Պիկ 115  
Պիչմանովա Մարտինա 131  
Պիսա Ա. Մ. 23  
Պոլաչեկ Կարել 112  
Պողոսյան Հրաչյա 211  
Պողոսյան Սամվել 172  
Պողոսյան Վահան 172  
Պոպեր Պետր 141  
Պրոխասկա 55  
Պուլսմայեր Անտոնին  
Յարոսլավ 19  
Պուչա Պավել 112  
Պուտին Վլադիմիր 216  
Ջամալյան Արշակ 83  
Ջավուրցյան Նորայր 188  
Ջորջոս Հատալախ իլ  
Դամաշսկի տե'ս Դեոդատ  
Յիրժի  
Ռայզլի Ս. 130  
Ռաշմաճյան Աստղիկ 139  
Ռաշմաճյան Բաբկեն 138-139  
Ռաշմաճյան Ջավեն 139  
Ռաստիսլավ 211  
Ռաֆայել 60  
Ռժոռտիլ Միխալ 133

- Ռիբկա Յան 49  
 Ռիիտա 137  
 Ռոսս Գարրի տե՛ս Ավանեսյան  
 Գարիկ  
 Ռուդոլֆ 73  
 Ռուժիչկա Ռուդոլֆ 111  
 Սադեցկի Պետր 129  
 Սալվյան 215  
 Սապահ-Գյուլյան Ս. 35  
 Սահակյան Սարգիս 186  
 Սահակյան Սուրեն 66, 76, 87  
 Սահակյան Տիգրան 50, 53, 60  
 Սալո Վազյալ 114  
 Սարաջև Կոնստանտին 26, 109  
 Սարգիսբեգյան Գարեգին 65  
 Սարգսյան Ալեքսանդր 150,  
 168, 199  
 Սարգսյան Արամ 150  
 Սարգսյան Արմեն 179  
 Սարգսյան Արթուր 173  
 Սարգսյան Գագիկ 216  
 Սարգսյան Գուրգեն 66, 69, 96-  
 97  
 Սարգսյան Դավիթ 216  
 Սարգսյան Եփրեմ 65, 97  
 Սարգսյան Էդուարդ 156, 158  
 Սարգսյան Կարեն 188  
 Սարգսյան Կարինե 214  
 Սարգսյան Հրանտ 143  
 Սարգսյան Մարինե 158  
 Սարգսյան Մերի 159  
 Սարգսյան Տաթևիկ 170  
 Սարոյան Վիլյամ 140  
 Սեմերճյան Հակոբ 54  
 Սեյրանյան Տիգրան 144-145,  
 159, 204-206  
 Սիկորա Բոհումիլ 28  
 Սիմոնյան Արամ (ՀՀ) 161  
 Սիմոնյան Արամ (Չեխիա) 141  
 Սիմոնյան Մեսրոպ 119  
 Սիրպո Բորիս 27  
 Սլավինսկի Մ. Ա. 75  
 Սլեզակ 39-40  
 Սկալիչկա Վլադիմիր 123  
 Սկոտեցկի Օտտո 136  
 Սոխովա Աննա 134  
 Սողոմյան Մարտո 149  
 Սողոմոնյան Աշոտ 154  
 Սողոմոնյան Արտյոմ 167  
 Մայենդիարյան Սուրեն 51  
 Մտախո Չալատոնայ 116  
 Մտեփանյան Լիլիթ 185  
 Մտեփանյան Հարություն 169  
 Մտեփանյան Սեպուհ 44  
 Մտեփանյան Սոնա 155  
 Մտրանսկի Յուրայ 211  
 Մուդիկ 123  
 Մուլեյմանով Էմիլ (Էմիլ  
 Լևլան) 187  
 Մուլբանյան Իրինա 155  
 Մուկուպ Ֆրանտիշեկ 90  
 Մուրեմյան Չենոբ 33  
 Մուքիասյան Տիգրան 182, 184  
 Սևակ Պարույր 140  
 Վ. Մտեղի 77  
 Վազներ 81  
 Վազգեն Ա 140  
 Վալդեր Գերհարդ 144  
 Վանյան Դավիթ 150, 158  
 Վանցյան Ա. 40  
 Վարդանյան Չարոտի 172  
 Վարդանյան Հարութ 185

- Վարդանյան Ռուբեն (Ռեն) 57,  
 65, 82-84, 87, 97  
 Վարդանյան Սոնա 150  
 Վարդանյան Սուրեն 198  
 Վարժապետյան Արամ  
 Էմիրխան 110  
 Վեռներ Սամուել 113  
 Վետտի Օ. Ս. տե՛ս Կուդելկա  
 Ալոիս  
 Վերա 102  
 Վերոյան Բագրատ 186  
 Վերֆել Ֆրանց 49  
 Վիկտորյա 14  
 Վիտ 14  
 Վիտերման 114  
 Վիսկրյան Լևոն 185  
 Վոչաղլու Վիլիելմ 111  
 Վոչաղլու Օտակար 111  
 Վունչ Յոզեֆ 22  
 Տատուրյան Ահարոն 65, 86, 97  
 Տառսիկ Վիլիելմ 115  
 Տեր-Ակոպով Վիկտոր 181  
 Տեր-Ակոպովա Մարտինա 214  
 Տեր-Առաքելյան Վահան 51  
 Տեր-Աստվածատրյան  
 Արշալույս 68, 75, 97  
 Տեր-Աստվածատրյան Պետրոս  
 27  
 Տեր-Չախարյան Ռուբեն 174  
 Տեր-Թովմասյան Սահակ 65  
 Տեր-Մանվելյանց Անտոնին  
 104  
 Տեր-Ղազարյան Արեգ 186  
 Տեր-Ղազարյան Լևոն 186  
 Տեր-Ղազարյան Մարինա 196  
 Տեր-Պետրոսյան Գ. 42  
 Տեր-Պողոսյան Արշալույս 67  
 Տեր-Օհանյան Անդրեյ 87, 98  
 Տերտերյան Հ. 39  
 Տիգրանյան Սամվել 168  
 Տոնյան Գագիկ 148, 182  
 Տոնյան Սիրանույշ 154  
 Տոտոմյանց Վահան 106  
 Տրոցկի 37  
 Տունկլ Կարել 60-61  
 Տունկլովա Լուիզա 60-61  
 Տևեճյան Հրանտ 66, 88, 97  
 Րևազյան Սուրեն 67  
 Ցալիկով Աիմեդ Տ. 75  
 Փարաջանով Սերգեյ 140  
 Փափազյան Լուսիան 151  
 Փափազյան Վալենտին (հայր)  
 151  
 Փափազյան Վալենտին (որդի)  
 151  
 Փիլավյան Բարսեղ 133, 145,  
 152, 207  
 Փիրզատե Ղափանցի 10  
 Փիրումյան Ռուբինա 94, 86  
 Փիրումով Ռեն 182  
 Քամայան Սվետլանա 188  
 Քառյան Թամարա 158  
 Քյոսեյան Գեղամ 68, 82, 98,  
 105  
 Քոլոյան Արմեն 154-155  
 Քոլոյան Մարիամ 194  
 Քոչարյան Արսեն 138, 148  
 Քոչարյան Նելլի 179-180  
 Քոչարյան Մարգիս 180  
 Քոչյան Երվանդ 56-57, 68, 72,  
 80, 87, 101

Քուղենհով-Կալերգի, կոմսուհի  
 46  
 Քուղենհով-Կալերգի Հայնրիխ  
 ֆոն 45-46  
 Քուղենհով-Կալերգի Ռուդոլֆ  
 ֆոն 46  
 Օ. Ա. 81  
 Օհանջանյան Համո 39  
 Օփենհեյմեր Դավիթ Բեն  
 Աբրահամ 16  
 Ֆայտ Էմանուել 23  
 Ֆարյան Կարինե 154  
 Ֆրնտրքյան Երվանդ 65, 78, 99  
 Ֆիլեր 55  
 Ֆինկե 139  
 Ֆիշեր Օտակար 112

### ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ\*

Աթենք 45, 56, 65, 67, 88, 94  
 Ալաջա 21  
 Ալեքսանդրապոլ 21, 69, 96  
 Ամերիկա, ԱՄՆ 22, 27, 31, 34-  
 37, 56, 97, 99, 179, 214  
 Անդրկարպատյան Ռուսիա 30  
 Ավստրիա 43, 55, 65, 86, 88,  
 177, 189, 202, 220  
 Ավստրո-Հունգարիա 5, 24, 45,  
 71  
 Արարատ 22  
 Արզենտինա 45, 54, 196

Արմաշ 101  
 Արմավիրի մարզ 160  
 Արցախ 20, 134, 149, 151, 163,  
 176, 178, 184, 186  
 Բալկաններ 8, 28  
 Բաղդադ 69, 95, 103  
 Բանսկա Բիստրիցա 203, 205,  
 209, 212, 217  
 Բաքու 28, 38, 69, 178  
 Բելգրադ 93, 97  
 Բեյրութ 56, 59, 69, 92, 95, 98,  
 101-102  
 Բենեշով 171  
 Բեռլին 38, 83, 92, 107, 119  
 Բերոուն 57, 176, 186  
 Բոհեմիա 8-10, 12, 16, 19, 28  
 Բոնոն 17, 24, 46, 107, 115, 118,  
 127, 144-145, 151, 155, 166-168,  
 179-180, 187, 190-191, 194  
 Բրատիսլավա 107, 137, 202-  
 208, 211-214, 216, 218-219  
 Բուենոս Այրես 97  
 Բուլղարիա 4, 8, 23, 65, 88, 91,  
 95  
 Գալանտա 218  
 Գանձակ 80, 93  
 Գերմանիա 10, 17, 43, 50-51,  
 61, 65, 91, 140, 158, 164, 177  
 Գրյունվալդ 9  
 Դիլիջան 21  
 Դոմաժիցե 119  
 Եգիպտոս 9, 47, 65, 179  
 Եվպատորիա 51

\* Բառացանկում չեն ընդգրկվել գրեթե  
 ամեն էջում հանդիպող Հայաստան,

Չեխիա (Չեխոսլովակիա), Սլովակիա,  
 և Պրահա ամունները:

Երիզա 98  
 Երուսաղեմ 10, 16, 102  
 Երևան 11, 13, 18, 22, 25-26, 38-41, 49, 65, 69, 94-95, 97, 102, 116, 119, 122-123, 127, 135-136, 140, 146, 159, 161, 164, 171-172, 174, 178-180, 186-187, 196, 198, 205, 209-212, 214, 219  
 Զլին 144, 186  
 Զնյունիա 51  
 Զնոյմո 144  
 Զվոլեն 203, 208, 216  
 Էջմիածին 22, 95  
 Էսկեշեհիր 11  
 Էրզրում 22  
 Թավրիզ 68, 98  
 Թեհրան 92, 94-96, 98, 104, 130, 174  
 Թիֆլիս, Թբիլիսի 20, 29, 38, 41, 52, 94, 135-136, 213  
 Թուրքիա 47, 58-60, 62, 65  
 Ժիլինա 203  
 Իգդիր 69, 82, 92  
 Իսլամոդիա 179  
 Իրան, Պարսկաստան 24, 27, 38, 65, 69, 94, 98, 105, 174  
 Իրաք 65, 102  
 Լայպցիգ 17  
 Լեհաստան 4, 9, 28, 36, 43, 181, 213  
 Լիբանան 57, 60  
 Լիբերեց 139, 176  
 Լիբովիցե 184  
 Լիդիցե 137-138, 165  
 Լոզան 59  
 Լոնդոն 194, 209  
 Խարբերոյ 25, 45-46  
 Խարբին 42  
 Խարկով 209  
 Խորհրդային Միություն, ԽՍՀՄ 90, 117, 135, 142-143, 202, 209, 211  
 Խոունավիլ 45-46, 130  
 Կահիրե 13, 116  
 Կաղզվան 40  
 Կառլովի Վարի (Կառլսբուդ) 25, 109, 144, 160, 179, 187-188  
 Կարս 40, 69, 96  
 Կիլիկիա 9  
 Կիպրոս 176  
 Կիև 9, 118  
 Կլադնո 111, 144, 151  
 Կոմառնո 119  
 Կոշիցե 202-203, 210-213  
 Կոստանդնուպոլիս 8, 14, 47, 53, 89, 98, 101, 105  
 Կովկաս 20-21, 23, 37-38, 60, 67, 75, 81, 99  
 Կորֆու 105  
 Կոալուպի-Մադ-Վլաավոյ 186, 198  
 Կուրիմ 191  
 Հալեսլ 13, 59, 62, 69, 95  
 Համբուրգ 184  
 Հավիլչկով Բրոդ 173  
 Հարավսլավիա 4, 94  
 Հեռավոր Արևելք 37, 41  
 Հնդկաստան 65  
 Հոռնի Նեմչի 184  
 Հոռն 10, 13  
 Հրադեց Կրալովե 144, 160, 163, 179

- Հունաստան 65, 103  
 Հունգարիա 4, 10, 43, 152, 207  
 Հազախստան 94, 188, 212  
 Հարադադ 94  
 Հրզրթաբա 21  
 Դրին 4, 51  
 Դրոզստան 187  
 Ծապոնիա 35, 45, 187  
 Մալաթիա 22  
 Մավա 82  
 Մարտին 203, 214  
 Մեծ Արմտան 98  
 Մեծ Բրիտանիա 189  
 Մեդրի 184  
 Մերձավոր Արևելք, Միջին  
 Արևելք 11, 16, 60, 69  
 Միխայելովիցն 211  
 Մլադա Բոլեսլավ 117, 143, 158  
 Մոսկվա 26, 37, 39, 52, 91, 136,  
 178, 180, 183, 187, 197, 211-  
 212, 214-215, 217  
 Մոսսո 107, 144  
 Մորավիա 8-9, 11, 19, 45, 118,  
 171, 198  
 Մորավո-Միլեզյան երկրամաս  
 160  
 Յիհլավա 45, 144, 155, 167-171  
 Նեապոլ 8  
 Նիժեգորոդսկ 21  
 Նիկոմեդիա 97  
 Նյու Յորք 109  
 Նովն Բենասկի 72, 101  
 Նովի Սադ 20  
 Նորիլսկ 94  
 Շիրակ 40  
 Շվեյցարիա 189, 213  
 Չարենցավան 190, 198  
 Չեխոսլովակիա 172  
 Չեխոսլովակիա Կամենիցե 144  
 Չեխոսլովակիա Բուդեյովիցե 55-56, 62,  
 117, 144  
 Պարոուրիցե 144, 188-189  
 Պլզեն 12, 109, 144, 173, 188,  
 213  
 Պրիկիձա 203  
 Ռեյնիցա 83  
 Ռոբվալ 51  
 Ռոնսպերգ 46  
 Ռումինիա 4, 65, 88, 96-97, 151  
 Ռուսաստան, Ռուսական  
 կայսրություն 5, 20, 22, 37, 65,  
 67, 75, 81, 141, 184, 188, 196,  
 210, 212, 214, 216  
 Սան Ֆրանցիսկո 99  
 Սերբիա 36  
 Սիբիր 91-92, 94, 96, 103, 139  
 Սիլեզիա 8  
 Սիսիան 211  
 Սիրիա 57, 59, 60, 65, 88, 102  
 Սլավոկովիչովո 203, 215  
 Սլանի 185  
 Սոկոլով 119  
 Ստրոբնից 51  
 Սևան 160  
 Վայոց Չորի մարզ 160  
 Վան 22, 65, 93-94, 97  
 Վանաձոր 189, 216  
 Վելկե Մեզիրժիցի 104, 189  
 Վիննա 13, 19, 22, 24, 33, 42,  
 51, 54-55, 67, 93, 95, 101, 108-  
 109, 114, 151, 167, 170, 206, 213  
 Վիզին 21

Վիտալինա 170-171  
Վլկանովա 209  
Վրաստան 185  
Վրոցլավ 118  
Տավուշի մարզ 160  
Տեպլիցե 144, 172-173  
Տրապիզոն 99  
Տրեբիշով 203, 215  
Տրիպոլիս 13  
Տրշեբիչ 143  
Ուաշինկերն (Վաշինգտոն) 31  
Ուկրաինա 75, 209  
Ուստի նաղ Լաբեն 107, 144,  
213, 172-173, 179, 213  
Ուրֆա 62

Փոքր Ասիա 8, 10, 24, 48, 58,  
110  
Քանաքեռ 97  
Քասախ 20  
Քիչնև 191  
Օլոմոուց 17  
Օմսկ 42  
Օստրավա 139, 144, 171-172,  
184, 212  
Օվաճրգ 97  
Ֆիլադելֆիա 32, 96  
Ֆրանսիա 47, 65, 78, 88, 90, 95,  
101, 104, 110, 116, 120, 181, 210  
Ֆրանտիշկովի Լագնե  
(Ֆրանցիներադ) 25  
Ֆրիդեկ Միստեկ 144, 191-192

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	4
ՍԱՍ Ա	
ՀԱՅ-ՉԵԽԱԿԱՆ ԿԱՊԵՐ. ՍԿՁԲԻՅ ՄԻՆՉԵՎ 1990-ԱԿԱՆՆԵՐ	
Միջնադար և 19-րդ դար .....	8
Հարաբերություններ երկու նորանկախ հանրապետությունների միջև .....	30
Առաջին հայերը Չեխիայում: Կարել Հանսա.....	45
Պրահայի հայ ուսանողները .....	55
Ուշագրավ դեմքեր Պրահայի հայ ուսանողներից .....	89
Համայնքը և հայ-չեխական կապերը 1930-ական թթ.....	103
Հայերը Չեխոսլովակիայում 1940-ական թթ.....	117
Հայագիտությունը սոցիալիստական Չեխոսլովակիայում և Չեխիայում .....	122
Հայերը սոցիալիստական Չեխոսլովակիայում և հայ-չեխոսլովակյան կապերը .....	135
ՍԱՍ Բ	
ՉԵԽՈՒՍՅԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԸ .....	142
ՊՐԱՀԱՅԻ ՀԱՅԵՐԸ .....	146
«Արմենիա ակումբը».....	146
«Հայ-չեխական ընկերությունը» և այլ միությունները .....	147
Հայ առաքելական եկեղեցին Չեխիայում .....	151
Հայկական դպրոցը.....	154
«Օրեր» եվրոպական ամսագիրը, orer.eu կայքէջը և չեխահայ մամուլը .....	156
Հայ-չեխական հարաբերությունները նորագույն փուլում .....	159
Հայոց ցեղասպանությունը և Չեխիան .....	161

Բռնոյի հայերը .....	166
Յիկլավայի հայերը .....	168
Օստրավայի հայերը.....	171
Ուստի նաղ Լաբենի հայերը .....	172
Մշակութային դեմքերը .....	174
Այլ մասնագիտությունների անձինք .....	186
Մարզիկները.....	189
Գևորգ Ավետիսյանը և «Մառլենկայի» հրաշքը.....	191
Համայնքի ապագան. երիտասարդությունը, լեզուն և ինքնությունը.....	193
<b>ՍՍՍ Գ</b>	
<b>ՀԱՅԵՐԸ ՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ.....</b>	<b>202</b>
Սլովակիան և Հայոց ցեղասպանությունը .....	204
Միջպետական հարաբերությունները.....	206
Հայերը և եկեղեցին .....	207
Համայնքային դեմքերը .....	208
Հայերը սլովակյան մշակույթում .....	211
Համայնքային այլ գործիչներ .....	215
Երիտասարդները և համայնքի ապագան .....	218
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>222</b>
Arméni v Česku a na Slovensku (od začátku až dodneška)	
Shrnutí.....	224
<b>ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ.....</b>	<b>230</b>
<b>ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ .....</b>	<b>230</b>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ  
ՀԱԿՈՒ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ՉԵԽՎՅՈՒՄ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ  
(սկզբից մինչև մեր օրերը)

Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
INSTITUTE OF HISTORY OF NAS RA  
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan, RA  
РА, 0019, Ереван. пр. Маршала Баграмяна 24/4

<http://www.academh:story.am>



{ 2500,

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



51 0683863

Մ  
112169



Արծվի Բախչինյանը ծնվել է 1971 թվականին, Երևանում: Ավարտել է Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1996-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի կոչում: 2009-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայկական գաղթավայրերի և սփյուռքի բաժնում: Հայ իրականության տարբեր կողմերի վերաբերյալ տասնյակ աշխատությունների հեղինակ, խմբագիր և թարգմանիչ է:



Հակոբ Ասատրյանը ծնվել է 1967 թվականին, Վանաձորում: Ավարտել է Մոսկվայի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Աշխատել է «Ազգ» օրաթերթի հիմնադիր կազմում իբրև քաղաքական մեկնաբան, թղթակցել է «Ազատություն» ռադիոկայանի ռուսական ծառայությանը, «Նուվել դ'Արմենի» և «AIM» ամսագրերին: 1999 թվականից մինչ օրս «Օրեր» եվրոպական ամսագրի հիմնադիր գլխավոր խմբագիրն է: Հեղինակ է Եվրոպայի հայկական համայնքների պատմությանն ու ներկայիս նվիրված շարքի, որը հրատարակվում է ամսագրում: